

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

300

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГАГИК Х. САРКИСЯН

# ИСТОРИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Составление и редакция  
ПАРУЙРА М. МУРАДЯНА

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН 2006

9(47.925)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ

Ո-25


ԳԱԳԻԿ Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմեց և խմբագրեց  
ՊԱՐՈՒՅՐ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

3522

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2006



**ՄԵՐ ԱՐԳՅՈՒՆԱՇԱՏ ՊԱՏԱԲԱՆԸ**

Երկու պարագա մեծապես ծանրացնում են պատմաբանի աշխատանքը՝ մեկը, երբ նրան վիճակված է Հայթայթել ուսումնասիրության հուսալի սկզբնաղբյուր, ստանձնելով նրա վերծանության դժվարությունը, և մյուսը՝ երբ գիտության նախորդող դասականները առձեռն նյութի Հիման վրա արդեն ժամանակագրություն են մշակել և ամփոփիչ եզրակացություն կատարել: Ն.Ադոնցից, Հ.Մանանդյանից և Ս.Երեմյանից հետո ճիշտ այդ դժվարությունն առճակատվեցին մեր պատմաբաններից երեքը՝ Գագիկ Սարգսյանը, Անահիտ Փերիխանյանը և Գևորգ Տիրացյանը:

Ուշ բաբելոնյան շրջանի Հին արևելյան քաղաքի, նրա սոցիալական կազմի, հողատիրության, վարչական կառուցվածքի, համայնքի ու նրա իրավասու-թյունների և հարակից այլ խնդիրների ուսումնասիրությունն է նվիրված Գ.Սարգսյանի աշխատությունների մի նշանակալի մասը: Գատեթով հետազո-տություն ու հրատարակման ժամանակագրությունից (առաջինը՝ 1952թ., վերջինը՝ 1992թ.), Հարցի նկատմամբ գիտնականի ունեցած հետաքրքրությունը տևական է և պայմանավորված երկու Հանգամանքով՝ աղբյուրագիտական բազայի ընդարձակումը նորանոր արձարձումների հնարավորություն է ընձեռում, և ապա՝ բացահայտվում են իրողություններ, որոնք առանձնակի կարևորություն ունեն հեղինիստական դարաշրջանի արևելյան քաղաքակրթությունների հետազոտման համար: Այսպես, օրինակ, Գ.Սարգսյանը բացահայտեց ու գիտականորեն բնութագրեց Հին արևելյան քաղաքային համայնքի մի նոր տիպ, որ նա կոչեց (և այժմ էլ արևելագիտական գրականության մեջ կոչվում է) տաճարա-քաղա-քացիական համայնք: Վերջինս ձևավորվել է տաճարական անձնակազմի և լիբրավ բաղադրանքների ի մի ձուլումով՝ առաջ բերելով անտեսական ու իրավական նկատելի փոփոխություններ:

Գ.Սարգսյանի աշխատությունները գերազանցապես հիմնված են սեպագիր և պատմողական աղբյուրների համադիր ուսումնասիրության վրա: Նա իր մասնագիտական պատրաստության թելադրանքով (օգտվում էր Հին ու նոր մեկ տասնյակ լեզուներից ու նրանցով եղած աղբյուրներից ու գրականությունից) և պատմաբանասիրական աշխատանք կատարելու հմտության բերումով՝ չորս տասնամյակ շարունակաբար զբաղված էր սեպագիր վավերագրերի վերծանմամբ ու հետազոտությամբ: Դեռևս 1955թ. երիտասարդ գիտնականը Հրատարակեց էքզիստաժում պահվող սելեկյան շրջանի մասնավոր գործարքներին վերաբերող սեպագիր վավերագրերը, իսկ 1975-ին՝ Բեռլինի Առաջավորասիական թանգարանի նմանօրինակ բնագրերը: Հետագայում Գ.Սարգսյանը ձեռնամուխ եղավ Բեռլինի, Փարիզի և այլ քաղաքներին հնադարաններում գտնվող սեպագիր աղբյուրների վերծանությունը, թարգմանությունն ու քննությունը, գերմանացի մասնագետների հեղինակակցությամբ տպագրություն պատրաստելով երկհատոր հիմնարար մի աշխատություն՝ «Հեղինիստական դարաշրջանի Միջագետքի

Ս 259 **Սարգսյան Գ. Խ.**  
«Պատմագիտական հետազոտություններ», Եր., «Գիտություն» հրատ., 2006  
- 260 էջ:

Ակադ. Գագիկ Սարգսյանի աշխատությունների այս ժողովածուն ամփոփում է բացառիկ ընդգրկուն պատրաստություն և պրպտիլու կարողություն ունեցող գիտնականի վաստակի մեկ մասը՝ սեպագիր ու անտիկ աղբյուրներից մինչև Խորհրդային «Հայոց պատմությունը»՝ քննության առած պատմաբանի ու բանասերի զույգ հմտությունը: Հեղինակը կրողն է ճիշտ այն կարողությունների և մտացիություն, որոնց հավաստումը նա փնտրում ու գտնում է Ն.Ադոնցի գլուխգործոցում:

Ս 0503020913—2006 թ.  
703 (02)—2006

ԳՄԴ 63.3 (22)

ISBN 5 – 8080 – 0647 – 3

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2006 թ.



սոցիալ-սնտեսական պատմություն սեպագիր վավերագրերի դիվան»։ Զուգահեռաբար Գ.Սարգսյանը Հայրենական ու արտասահմանյան մասնազետ ընթերցողներին ներկայացրեց Միջազգային սեպագիր քաղաքակրթություն և Հեյլենիզմի շփոթումներին ու առնչակցություններին վերաբերող հոդվածաշար։ Գազելի Սարգսյանի այս և մյուս աշխատությունների հիմնական առանձնահատկություններից մեկը սկզբնաղբյուրների բանասիրական մշակման և աղբյուրագիտական քննություն համուս համատեղումն է, որ նախորդում է պատմաբանի վերլուծությունը։

Առաջավոր Ասիայի Հեյլենիստական դարաշրջանի քաղաքների ու քաղաքային համայնքների ուսումնասիրությունը Գ.Սարգսյանին բերեց Հին Հայաստանի քաղաքների ուսումնասիրմանը՝ Տիգրանակերտի օրինակով, որի հիմնադրություն և շուրջ 500-ամյա գոյությունը պատմությունը բնութագրական է Հայոց անցյալի կարևոր մի փուլ հետազոտելու և պարբերացնելու համար։ Գլխունականը այն իրականացրեց «Тигранакерт. Из истории древнеармянских городов» (М., 1960) աշխատությունը։ Անտիկ շրջանի պատմագրական աղբյուրների տեղեկությունները, Հայաստանում պահպանված հուշարձան արձանագրություններն ու հայ պատմիչների հաղորդումները հնարավորություն էին ընձեռում արծարծելու չորս հիմնական հարց՝ նոր քաղաքների հիմնադրության շարժառիթները, այլազգիներ վերաբնակեցնելու նպատակը, քաղաքային համայնքի կազմն ու կառուցվածքը և սոցիալ-սնտեսական բնույթն ու ստրկատիրական կացութեան խնդիրը Հայաստանում։

Ի հակադրություն ավանդական պնդումների՝ Գ.Սարգսյանը Տիգրանակերտի օրինակով ցույց տվեց, որ Հեյլենիստական քաղաք հասկացությունը ամենևին նույնական չէ Հեյլենիստիկին, և այս պարագան իր կնիքն է դնում քաղաքային համայնքի թե՛ կենտրոնական նկարագրի, թե՛ անտեսական գործունեության վրա։ Հեղինակը հետազոտում է առավելագույն տարբերություններ բացահայտելուն, որը և հնարավորություն է տալիս նկատելու և ուսումնասիրելու Հայկական հասարակության առանձնահատկությունները։

Տիգրանակերտին նվիրված մենագրությունը միաժամանակ նախապատրաստություն էր անցում կատարելու կարևոր մի հարցի՝ Հին Հայաստանի սոցիալ-սնտեսական կառուցվածքի քննությունը։ Գ.Սարգսյանը այստեղ ևս ունի արժանավոր նախորդներ, բայց այժմ անհրաժեշտ էր առանձին տերմինների քննությունից անցնել հասարակության ամբողջական բնութագրությունը, որով միաժամանակ կբացահայտվեին ավատատիրության սկզբնավորման առանձնահատկությունները մեզանում։ 1962թ. երևանում լույս տեսած «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիները մասին» գիրքը մասնավորապես հարցադրումն ամփոփող և ընդհանրացնող մենագրական ուսումնասիրությունն է Հայագիտության մեջ։

1960-ական թթ. սկսած Գ.Սարգսյանի աշխատությունների խորագրերում հաճախակի երևում է Մովսես Խորենացու անունը։ Սկզբնապես այդ պայմանավորված էր Հին Հայաստանի քաղաքական ու մշակութային պատմության առանձին հարցերի վերաբերյալ Խորենացու հաղորդումների գնահատությունը և վերլուծությունը (աղբյուրներից օգտվելու համակարգը, ժամանակագրական վկայությունները, նախնայաց պաշտամունքի արձագանքները և այլն)։

Հարցադրումների աստիճանական ընդլայնումն ու խորացումը Հեղինակին հնարավորություն ընձեռեցին ստեղծելու «Մովսես Խորենացու «Հայոց պատմության ժամանակագրական համակարգը» (1965թ.) և «Հեյլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966թ.) մենագրությունները։ Ավանդական Հայագիտությունը Խորենացու տեղեկությունների արժանահավատությունը ստուգում էր պերագանցապես արտաքին աղբյուրներով, բավականաչափ ուշադիր չլինելով պատմագրերու Հեղինակային սկզբունքին և համաժամանակյա ցանկերի ստեղծման ելակետային իրողություններին։ Գ.Սարգսյանը առաջին աշխատությունն մեջ որդեգրեց Խորենացու «Պատմությունն» իբրև ինքնին համակարգ գիտելու սկզբունք, ամենևին չբացառելով արտաքին տվյալների կարևորությունը, և հասավ պատմագիտական-աղբյուրագիտական համոզիչ արդյունքների։ Երկրորդ գիրքն արդեն այլ բնույթի էր, այստեղ թե Խորենացու երկն է Հեյլենիստական Հայաստանի պատմության աղբյուր ծառայում և թե Հեյլենիզմի դարաշրջանի ստուգապես հետազոտված պատմությունը Խորենացու պատմագրական մեթոդը գնահատելու հնարավորություն տալիս։ Թե որքան արդյունավետ է նման մոտեցումը՝ կարելի է հավատարմանով «Հայ ժողովրդի պատմության» սկզբնապահան հրատարակության առաջին հատորի (1971թ.) «Հայաստանը Հեյլենիստական ժամանակաշրջանում» բաժինը կարդալով, որի հիմնական մասի հեղինակը Գ.Սարգսյանն է։

Գ.Սարգսյանի աշխատություններում կան Հայոց պատմագրություն սկզբնավորմանը, դպրություն խնդիրներին ու մշակութային հարցերին վերաբերող բազմաթիվ գիտարկումներ, որոնք նորովի են լուսաբանում տեսականորեն արձաթված շատ խնդիրներ։ Հայագետները (Մ.Աբելյան, Ն.Մանասյան, Գ.Խալիբյան) արդեն պարզել էին, որ Երվանդյանները ու Արտաշեսյանների պատմությունը կերտելիս Խորենացին հիմնականում զիմել է ավանդություններին։ Գ.Սարգսյանը ցույց տվեց, որ Պատմահոր մոտ պնդումներն իր կան պատմական հիմք ունեցող այնպիսի դրվագներ, որոնք չեն հանդում գիտությունը Հայտնի հունական աղբյուրների հաղորդումներին ու Հայկական սոցիալական ավանդություններին։ Դրանք, ըստ գիտնականի եզրահանգման, քաղված են մեզանում գոյություն ունեցող մեհենական պատմություններից, որպիսին և եղել է Ողյուծոյ բուրմի մեղ չհասած, բայց Խորենացու համար աղբյուր ծառայած երկը։ Ուստի հետազոտողի գնահատությունը, մեհենական այդ պատմությունը «դառնում է նախաքրիտոնեսական շրջանի հայ պատմագրության փաստ, և որպես այդպիսին իր պատշաճ տեղը պիտի զբաղի հայ գրականության պատմության մեջ»։

Հայագիտության մեջ տեսականորեն բնեարկվել է նախամատուցյան գրի և գրականության գոյության հարցը։ Հիբալի, դժվար է ենթադրել, թե քրիստոնեության քարոզությունը շուրջ մեկ Հայրուբանյակ կարող էր օտարակալել լինել։ Գ.Սարգսյանի կողմից առաջադրվեց տեսական հիմք և գործնական նշանակություն ունեցող մի հիմնադրույթ, ըստ որի Սուրբ Գրոց թարգմանությունը նախորդել է Հայոց լեզվի ու տերմինաբանության այսպես կոչված «հետադարձ լեզվաբանության» շրջան։ Սա փաստորեն բանավոր թարգմանություն, տերմինների ստեղծման ու կայունացման, գրական լեզվի մշակման շրջան է եղել, լիովին նախապատրաստելով «ոսկեդարյան Հայերենի» երևան գալը։ Դրույթը հիբալի կենսունակ է, և այժմ այն բացատրության նախադրույթ է նաև վրացագիտության



Համար (նկատի ունենք Թ.Գամդրելիձեի վերջերս երկիրս կատարած կիրառումը):

Գազիկ Սարգսյանը բնագրագիտական-աղբյուրագիտական աշխատանքի ոչ միայն կազմակերպող, այլ նաև կատարող էր: Նրան ենք պարտական խորենացու «Պատմություն» ռուսերեն նոր թարգմանություն համար, որը փաստորեն ամփոփեց խորենացիագիտության նորագույն նվաճումները: Այստեղ քիչ չեն և սեփական կառուցումները: խորենացու և Դավիթ Անհաղթի երկերի բնագրական սանդուղցի վերաբերող մի հոդվածում նա արդեն ապացուցել է, որ Անհաղթը բառական քաղվածք է անում «Հայոց պատմությունից», հետևաբար խորենացու ժամանակը Հաստատող նոր կրվան է բացահայտվում:

Գ.Սարգսյանը թարգմանական կամ ինքնուրույն ոչ քիչ բնագրերի հրատարակության պատասխանատու խմբագիր էր, այդ բնագրավառում մասնագիտացող երիտասարդներից շատերի գիտական ղեկավարը կամ խորհրդատուն:

Գիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ Գազիկ Սարգսյանը մշտապես զբաղված էր գիտակազմակերպչական աշխատանքով: 1971-1994թթ. նա վարում էր ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Հիմնադիր անօրենի պաշտոնը: Արևելագիտության ավանդական ուղղություններին զուգընթաց (իրանագիտություն, թուրքագիտություն, արաբագիտություն) նրա գործուն մասնակցությամբ ստեղծվեցին ակադեմիական գիտություն նոր օղակներ (Հին Արևելք, կովկասագիտություն, արևելյան աղբյուրագիտություն), Հիմնվեցին մատենաշարային նոր հրատարակություններ («Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Խուրիններ և ուրարտներ»), որոնք ճանաչում գտան ներսի ու դրսի գիտական լայն շրջաններում:

Գ.Սարգսյանը կոլեկտիվ կամ ընդհանրացնող շատ աշխատությունների համահեղինակ էր, խմբագիր ու կազմակերպող: Նրա գլխավորությամբ Հայ գիտնականները հաջողությամբ մասնակցում էին միութենական և համաշխարհային գիտական կոնֆերանսներին, գիտաժողովներին ու քննարկումներին: Գ. Սարգսյանին ենք պարտական Հայագիտության երևելի ներկայացուցիչներ Թադ. Ավդաբեդյանի և Երվանդ Տեր-Մինասյանի աշխատությունների մեկական հատորներին խնամալ Հրատարակություն համար՝ խմբագրի կարճառոտ առաջաբաններով:

ԳԱԱ փորձախառնակ և հունանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պետական մրցանակի դափնեկիր, տաղանդավոր գիտնական Գազիկ Սարգսյանը իր կյանքը բոլորեց գիտական ու գիտակազմակերպչական ծանրակշիռ վաստակներով և ծրագրային նախանշումներով, որոնց իրականացումը Հայրենական գիտության նոր նվաճումներ կապմանավորի:

Պ.Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Տ Ա Ս Ն Ա Մ Յ Ա Կ Ն Ե Ր Խ Ո Ր Ե Ն Ա Յ ՈՒ Ի Հ Ե Տ

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Միջնադարի Հայ մեծ պատմիչ Մովսես Խորենացու դարաշրջանը յուրօրինակ ջրբաժան է մեր ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Մինչ այդ Հայ ժողովուրդն ապրել էր էթնիկական ու սոցիալ-տնտեսական զարգացման, Հզոր պետականության կազմավորման ու արդյունավետ գործառնության, մշակութային արժեքների աստիճանական կուտակման երկար ու ճիգ դարեր: Այնուհետև ծայր է առնում քաղաքական Հզորության տեղատվությունը, պետականության թուլացումը, բայց միաժամանակ և սղգային մշակույթի Հզոր ու Հաստատուն վերելքը, Հարևան երկրների վրա նրա քաղաքակրթիչ ազդեցության տարածումը:

Ավատատիրական Հասարակարգի Հաստատումը, որի հետ էլ, վերջին հաշվով, կապված էին Հիշյալ երևույթները, IV դարում – V դարի սկզբում Հասցրեց թագավորական իշխանության և նախարարների Հարաբերությունների ծայրահեղ սրման, երբեմն նաև՝ արյունահեղ ընդհարումների: Մյուս կողմից, իրանահոսմական դարավոր առճակատումը, որ Հաճախ երկու Հզոր տերությունների միջև ընկած Հայաստանի տարածքում էր ծավալվում, առավել ահեղ ու վտանգավոր կերպարանք էր ընդունում: Այս ներքին ու արտաքին Հանգամանքներն էլ, ամբողջությամբ վերցրած, Հանգեցրին Հազարամյա պատմություն ունեցող Հին Հայկական պետության տրոհմանն ու անկմանը: 387 թվականին Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև: Ընդ որում նրա արևմտյան, փոքր Հատվածը շուտով ընդգրկվեց Հռոմեական վարչական Համակարգի մեջ, իսկ արևելյան, Հիմնական մասը, ընդհուպ մինչև 428 թվականը, մնաց Հայ Արշակունիների տնվանական իշխանության ներքո՝ այնուհետև վերածվելով պարսկական մարզպանության: Անկախ պետականության կորուստով մեր ժողովուրդը չորս Հարյուրամյակից ավելի ժամանակաշրջանի ընթացքում զրկված էր օտար նվաճողների դեմ պայքարի գլխավոր միջոցից:

Միաժամանակ, V դարի սկզբում ստեղծվեցին Հայոց գրերը: Այս իրադարձությունը պայմանավորված էր բազում պարագաներով: Ամենից առաջ, Հայաստանում, որպես զոց լեզուներ, դարերի ընթացքում գործում էին արամեերենը և հունարենը, ապա ասորերենը և պարսկերենը: Ժողովրդի Հիշողության մեջ կուտակվել էին բանավոր ստեղծագործության զանազան նմուշներ՝ երգեր, ստապեղներ, ավանդույթներ և այլն: Բացի այդ, բարձր զարգացման էր Հասել այդ ամենի կողմը՝ Հայոց լեզուն: Որոշակի նվաճումներ էին ձեռք բերվել բնութային և Հասարակության երևույթների գիտափիլիսոփայական ընկալման բնագավառում: Վերջապես, քրիստոնեությունը, IV դարի սկզբում Հայաստանում պետական կրոն դառնալով, ուղիներ էր փնտրում իր հոգևոր սնունդը ժողովրդին հասցնելու համար: Այս բոլոր նախադրյալները, ընդ որում վերջինը որպես անմիջական զրդապատճառ, հիմք ծառայեցին Մեսրոպ Մաշտոցի գյուտի Համար:



Հայերենի վերածուևը բանավոր լեզվից գրավորի հանդեպից Հայ մատենագրության բուռն հորձանքի սկզբնավորմանը, արդասավորից մշակույթի և արվեստի մնացյալ բոլոր բնագավառները: Այն յուրօրինակ բունկիչի դեր կատարեց մշակութային հուշիկու «պայթյունի» համար: Այդ «պայթյունի» արդյունքներից, թիրևս, ամենանշանակալիցը Հայ պատմագրության արտասովոր ծաղկումն էր: Իրոք, V դարի Հայ պատմագրական միտքը բացառիկ երևույթ է Հայոց ազգային մշակույթի պատմության մեջ, ինչպես նաև Համաշխարհային Հին ու միջնադարյան պատմագրության համակարգում: Այդ հարյուրամյակը միաժամանակ և՛ Հայ պատմագրության ծագման, և՛ նրա բարձրագույն գարգացման վկան դարձավ, համընկավ նաև Հունա-Հռոմեական պատմագրության սնկման և բյուզանդականի սկզբնավորման հետ: Հանգամանք, որն այդ ժամանակահատվածում Հայ պատմագրության վաստուրեն համաշխարհային պատմական մտքի կիզակետ դարձրեց:

V դարի Հայ պատմական միտքը արտացոլված է Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշիի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու գործերում: Այս համաստեղության մեջ առանձնահատուկ տեղ ունի Մովսես Խորենացին, որը վստահել է «Հայոց պատմահայր» պատվանունը:

Ո՞րն է նրա երկի բուն արժեքը, ինչո՞ւ է նա առանձնանում V դարի պատմիչների շարքում: Թվարկված մատենագիրներին մենք պարտական ենք IV-V դարերի Հայոց պատմության վերաբերյալ անընդմեջ ու հավաստի տեղեկությունների, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի երեք կարևորագույն իրադարձությունների՝ Հայոց դարձի (քրիստոնեությունից ընդունման), գրերի գյուտի և Վարդանանց պատերազմի մասին պատկերավոր ու հանգամանալից պատումների համար: Մովսես Խորենացու աշխատությունը այսուհանդերձ V դարի Հայ պատմագրության մեջ նոր որակ է. նա առաջինը հղացավ և իրագործեց սեփական ժողովրդի ամբողջական պատմությունը՝ ի սկզբանե մինչև իր օրերը շարադրելու գաղափարը: Գործ, որ իր նշանակությունը անմիջականորեն հաջորդում է Մեսրոպ Մաշտոցի գարակազմիկ սխրանքին:

Մեսրոպ Մաշտոցը օժտեց իր ժողովրդին սեփական մշակույթի և ազգային ինքնագիտակցության պահպանման հզոր գեներով, հնարավորություն ընձեռելով բանավոր խոսքի երկրուն վիճակից գրավոր խոսքի հաստատուն հենքի վրա փոխադրելու և առավել եռանդուն գարգացնելու անցյալի հոգևոր ժառանգությունը: Մովսես Խորենացին վեր հանեց իր ժողովրդի համապարփակ պատմական կերպարը՝ բացահայտելով նրա սկունքները, զրվատելով անցյալի փառապանծ էջերը և վեհ գործիչներին, նրան ուժ ու փառհույսով հաղորդեց՝ կարծես կանխատեսելով պատմության ծանր քառուղիները:

Ավանդությունը, բացի «Հայոց պատմությունից», Մովսես Խորենացուն է փերագրում նաև հետևյալ երկերը՝ «Թուղթ առ Սահակ Արժրունի», «Ճառ Վարդավառի», «Հոխիսիմյանց պատմություն», «Գիրք պիտոյից», «Աշխարհացույց»: Հետադրոտողները պարզել են, որ վերջին աշխատությունը Պատմահոր բացին չի պատկանում, մնացյալների հեղինակային պատկանելությունը հարցը լրացուցիչ պրպտումների կարիք է գգում: Ավանդաբար նա նաև մի շարք շարականների հեղինակ է համարվում: Բացի այդ, քիչ հավանական տեղեկություններ գոյություն ունեն «Հայոց պատմության» մեջ չհասած չորրորդ գրքի

մասին, ուր պատումը իբրև թե հասցվել է մինչև Ջենոն կայսեր (474-491) ժամանակները:

Այսպես թե այնպես, Մովսես Խորենացու որպես պատմիչի, մատնոյի, մշակութային գործիչ կերպարը առ այսօր լիովին հիմնվում է նրա Պատմության տվյալների վրա: Այս աղբյուրից են բխում նաև այն հատուկներտ կենսագրական տեղեկությունները, որոնք լրացվում են այլ հեղինակների մի քանի հիշատակումներով, սովանդություններով: Ըստ առկա տվյալների՝ Պատմահայրը ծնվել է շուրջ 410 թվականին: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մոտ նախնական կրթություն ստանալուց հետո նա 20-25 տարեկան հասակում, դիտելիքները խորացնելու նպատակով, աշակերտների մի խմբի հետ ուղևորվում է դեպի Հին աշխարհի կրթական խոշորագույն կենտրոններից մեկը՝ Ալեքսանդրիա: Ծանոսպարհին նրանք այցելում են ասորական եղեսիա (Ուռհա) քաղաքը և ծանոթանում նրա հարուստ դիվանի հետ: Մի քանի տարի անց, Ալեքսանդրիայում ուսումնալարակուց հետո, Մովսես Խորենացին ուղևորվում է Հայերևիք: Ծանոսպարհին ծովային փոթորիկը նստի ուղղում է դեպի Իտալիա, այնտեղից էլ, Հունաստանի և Փոքր Ասիայի վրայով, նա, վերջապես, հասնում է Հայաստան: Այդ տեղի է ունենում 440 թվականից հետո, երբ նրա ուսուցիչներ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը կնքել էին իրենց մահկանացուն:

Ինչպես երևում է, Հայոց գրերի գյուտի հարուցած ողևորությունն արդեն բավական մարել էր, և նրան սառն ընդունելություն էր սպասում: Հունական մշակույթը խորապես յուրացրած, նրա երկրպագու երիտասարդ մտավորական այրերը հակակրանքով ընդունվեցին ասորական հույժոր ժառանգության հետ կապված, պորսից իշխանությունների հովանավորությունը վայելող հոգևորականության կողմից: Չնայած ծանր պայմաններին, Մովսես Խորենացին լայն լուսավորչական գործունեություն ծավալեց. գրադրվում էր թարգմանչական աշխատանքով, գրում ինքնուրույն գործեր:

«Հայոց պատմությունը», Սահակ Բագրատունի իշխանի պատվերով, նա սկսեց շարադրել արդեն առաջացած տարիքում և ավարտեց այն, հավանաբար, մահվանից քիչ առաջ (ըստ XII դարի ժամանակագիր Սամվել Անեցու, նա վախճանվել է 492 թվականին): «Փրկիստոս Մովսեսը», ինչպես կոչում է նրան ժամանակակից Ղազար Փարպեցին, մինչև մահ չազատվեց հոգևորականության տգետ մասի հարածանքներից: Մահվան նախօրեին, հարորդում է Ղազար Փարպեցին, նա դառնացած նդովեց բարձրատիրձան հոգևորականներին: Այդ տուղեր մեզ, հավանաբար, հասել են «Հայոց պատմությունը» եզրափակող նշանավոր «Ողբում». «Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամող, սնափառ, պատվասեր, բան աստվածասեր: Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկխոստ, ծուլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևատուր և կատակերգություններ սիրող» (111, 68):

Հայոց պատմությունը ի սկզբանե մինչև իր օրերը շարադրելու աննախադեպ գաղափարը Մովսես Խորենացուն նույնքան աննախադեպ գծավորությունների առև էր կանգնեցնելու համապատասխան աղբյուրների առումով: V դարի մնացյալ պատմիչների համար սկզբնաղբյուրներ ինդրը անհամեմատ դյուրին էր. նրանք ժամանակագրական առումով իրենց մերձ պատմական հատվածներ էին նկարագրում: Նրանց երկերը Պատմահոր համար կարող էին աղբյուր ծառայել



IV-V դարերի, մասամբ նաև III դարի անցքերը պլանդելիս, սակայն ի՞նչ աղբյուրների կարող էր նա դիմել նախընթաց դարերի, իրենից 500,1000 տարի առաջ և նույնիսկ ավելի վաղ տեղի ունեցած իրադարձությունները, երևույթները լուսարանելիս: Այդ ժամանակների Հայոց պատմությունն արձանագրված է՛ր Հայաբեզու սկզբնաղբյուրներում: Ավելին, այն տարանջատված էր Պատմահոր ժամանակի այնպիսի պատմեղով, ինչպիսին IV դարի սկզբում քրիստոնեության, որպես պետական կրոնի, ընդունումն էր: Հանրահայտ է, որ այդ իրադարձությունը, անվերապահորեն զրական արդյունքների Հետ մեկտեղ, ունեցավ նաև բացասական հետևանքներ: Դրանցից կարևորագույնը մշակութային ավանդների խախտումն էր, հեթանոսական հնադարից ժառանգած նյութական և, հատկապես, հոգևոր մշակութային արժեքների անբաժանալի կորուստը: Այսուհանդերձ, Մովսես Խորենացուն էր վիճակված պատուել լուսնյան վարադուրը և հենց Հայոց հողի վրա փնտրել ու գտնել իր Հիմնական սղբյուրները:

Ի՞նչ սկզբնաղբյուրներ են հիմք ծառայել «Հայոց պատմություն» ստեղծման համար: Պատմահայրը հաճախ է մատնանշում իր աղբյուրները, սակայն նրա հղումների համակարգը հատուկ քննություն է պահանջում, և այդ խնդրին մենք դեռ կանգարդառանանք: Առայժմ պարզարանենք նրա օգտագործած աղբյուրների տեսակները:

Նախ դիմենք գրավոր պատմողական աղբյուրներին: Արդեն ասվեց IV-V դարերի պատմությունն ավանդելիս Հայ պատմիչների երկերի օգտագործման մասին: Ինչպիսին է կացությունն անտիկ, հունա-հռոմեական պատմագրության օգտագործման առումով: Հարկ է ընդունել, որ հին Հայաստանի պատմության վերականգնման համար այսօր փաստական հիմք ծառայող գլխավոր աղբյուրները իրենց կարևոր նմուշներով (Բանեփոնի, Պոլիբիոսի, Ստրաբոնի, Տակիտոսի, Դիոն Կասիոսի, Պլուտարքոսի, Ապպիանոսի, Ամմիանոս Մարկելլինոսի գործերը) դուրս են մնացել Մովսես Խորենացու տեսողաշուրից: Դրանք չկան ո՛չ իր իսկ կողմից առատորեն հիշատակվող աղբյուրների թվում, ո՛չ էլ ավել ևս զրանց լռելյայն օգտագործման հետքեր: Միակ բացառությունը Հովսեփոս Փլավիոսն է: Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու օգտագործած ծավալուն հունա-հռոմեական մատենագրությունը (անկախ այն հանգամանքից՝ թարգմանություն՝ մեր, թե՞ բնագրով, հիշատակելով, թե՞ լուսնյան մատնելով), ապա Հայոց պատմության Հայեցակետից այն երկրորդական նշանակություն է ունեցել: Ստորև կանդրադառանք նաև այդ հարցին, իսկ առայժմ նշենք, որ այս առումով բացառություն է նաև Աստվածատուհայն: Իհարկե, փոխարենը նա բազում տեղեկություններ է ժողովել Համաշխարհային պատմության վերաբերյալ: Այս պարագան իր կնիքն է դրել նրա պատմահայեցողության վրա, ավել է աշխատության բառացիորեն ամեն մի էջում, հանդեպը է Հայոց պատմության՝ մնացյալ աշխարհի պատմության համախորրի վրա դիտարկմանը:

Առանձնահատուկ բնույթ է կրում Մովսես Խորենացու հիշատակած երեք պատմողական աղբյուրի՝ Մար Աբաս Կատինայի աշխատության, չորս մասից բաղկացած, Հավանաբար, «Հյուստումն պիտոյից» կոչված երկի և «Մեհենական պատմությունների» խնդիրը: Դրանց զոյությունը որոշ հետազոտողների կողմից կասկածներ է հարուցել և անգամ իսպառ ժխտվել է: Թեև այսօր էլ մնում են զրանց Հետ կապված թեկական խնդիրներ ու կնճռոտ հարցեր, փաստորը վկայում

են զրանց զոյություն մասին, ինչպես և համոզում են, որ դրանք հիրավի աղբյուր են ծառայել Մովսես Խորենացու համար:

Մար Աբաս Կատինայի աշխատությունը, օրինակ, օգտագործված է նաև VII դարի պատմիչ Սեբեոսի Պատմությանը համակցված Անանունի երկում: Այստեղ Մար Աբաս Կատինան հանդես է գալիս որպես Մարաբա Մծուրնացի: Բացի այդ, այս աշխատությունից օգտվել է նաև VI դարի բյուզանդական հեղինակ Պրոկոպիոս Կեսարացին: Մծուրնացի մատենագիրը է՛ր կարող սպրել մ.թ.ա. II դարում, ինչպես կարծում է Մովսես Խորենացին, այլ, ամենայն հավանա-կանությունը, մ.թ. III-IV դարերի հեղինակ է: Լինելով ծագումով ասորի, ինչպես այդ երևում է նրա անունից, և անկասկած պետևալով մայրենի լեզուն, նա եղել է հայկական Մծուրք քաղաքի բնակիչ, ուրեմն՝ դիտակ նաև Հայերենի: Այսու-հանդերձ, նա իր աշխատությունը, Հավանաբար, գրել է հունարեն: Մար Աբասի երկը պարունակել է հին Հայոց առասպելների գրառումներ, Հիմնված է եղել նաև գրավոր աղբյուրների (այդ թվում և վավերագրերի) վրա, որոնցից էլ հեղինակը տեղեկություններ է քաղել պարթև և Հայ Արշակունիների մասին:

Քառամասն «Հյուստումն պիտոյից» աշխատությունից, որի հեղինակի անունը Մովսես Խորենացին չի հիշատակում՝ այն հանրահայտ համարելով, նա, հավանաբար, հիմնականում քաղել է Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55) ներքոյանը՝ հորինված հունական ներքոյաղբյուրության կանոններով: Անտիկ աղբյուրներից Հայասին է, որ Տիգրան Մեծի Պատմություններ են գրվել գեղեկ նրա կենդանության օրոք: Արքունի միջավայրում դրանք, ամենայն հավանականությամբ, շարադրվել են ներքոյական ոգով: Դրանց հեղինակներն են եղել Հայոց արքունիքում ապաստանած երկու հույներ՝ Մեսարպոսոս Կեփոսացին և Ամփիկրատես Աթենացին: Դժվար է ասել՝ «Հյուստումն պիտոյիցը» այդ երկերից որևէ մեկի կամ մեկ այլ աշխատության հետավոր արձագանքն է, թե՞ Տիգրան Մեծի մասին ժողովրդական երկերի ճարտասանական ոգով մշակումը: Նշենք, որ Հայաստանում վաղ միջնադարում տարածված էր Տիգրան Մեծի ներքոյանը, որից մի քանի սուղ պահպանվել է:

Ինքը՝ Մովսես Խորենացին, սակայն, «Հյուստումն պիտոյից» քաղած տվյալները վերագրում է ոչ թե Տիգրան Մեծին, որի իրական մեծություն մասին նա պատկերացում չի ունեցել (Տիգրան II-ին նա բավական զուսպ ուժով նկարագրում է Պատմության երկրորդ գրքում), այլ մ.թ.ա. VI դարի Հայոց արքա Տիգրան Երվանդյանին: Ընդ որում, այդ տվյալները միահյուսված են ուրիշ աղբյուրներից քաղված և հիրավի վերջինիս վերաբերող տեղեկությունների հետ:

Վերջապես, «Մեհենական պատմությունների» մասին: Ըստ Մովսես Խորենացու, զրանց հրկու մասերից առաջինի հեղինակը Եփրատի ափին գտնվող Անի ամրոցի Արամազդ աստծո տաճարի Օլյուսայ (Օլյուսայոս) քուրմն էր, կրկրորդին՝ քարոզչական առաքելությանը Հայաստան (Անի) այցելած ասորի մատենագիր Բարդաժանը (II-III դարեր): Պարզ չէ, թե ի՞նչ լեզվով են գրվել այդ պատմությունները և չափազանց դժվար է պատկերացնել, թե ինչպես են դրանք Հայաստանի Մովսես Խորենացու տեսողաշուում: Հավանաբար, այստեղ որոշակի դեր է խաղացել այն հանգամանքը, որ Անի ամրոցը, Հայ Արշակունիների տոհմական հանգստարանը, շարունակել էր այգպիսին մտալ նաև Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո: Թեև դրա շնորհիվ է, որ տաճարական դիվանը և



այնտեղ պահվող «Մեհենական պատմությունները» փրկվել են ոչնչացումից:

Այսպես թե այնպես, «Մեհենական պատմությունները» և Հատկապես դրանց առաջին մասի գոյություն փաստը Հաստատվում է այն Հարազատություններով, որ ավել է, մի կողմից, Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160) մասին գրանցում պահպանված տեղեկությունների և, մյուս կողմից, այդ արքայի արձաններին սահմանաբարների, Հունա-Հռոմեական հեղինակների, և առանձնապես Ստրաբոնի, հաղորդած ստույգ տվյալների միջև:

Օղյուճպի և Ստրաբոնի մի քանի տվյալների նմանության աստիճանն այնքան ակնհայտ է, որ որոշակի հիմք է տալիս ենթադրել, թե դրանք ծագում են, թեև միջնորդված ձևով, մի ընդհանուր աղբյուրից, ինչպիսին կարող էր լինել, օրինակ, Հայոց արքա Արտավազդ II-ի (մ.թ.ա. 55-34) գրած Պատմությունը:

Այստեղ ևս Մովսես Խորենացին միաշյուշ է ժամանակադրական առումով դանազանիպ տեղեկություններ: Հավաստի տվյալները մեր թվականությունից առաջ II դարից տեղաշարժվել են մեր թվականության առաջին դար և միաձուլվել Արշակունյաց Հարստության Հիմնադիր Տրդատ I-ի (54-80) շուրջ Հյուսիսային ժողովրդական ավանդությունների հետ:

Այն Հանգամանքը, որ Պատմահորը, երկեսային տվյալների սակավության պատճառով, չի հաջողվել ճիշտ թվագրել աղբյուրները կամ դրանցում արտացոլված անցքերը, ամենևին չի նվազեցնում նրա վստասիկ այդ ամենի պահպանության ու գալիք սերունդներին փոխանցելու գործում: Դրանք անկյունաքարի նշանակություն ունեն «Հայոց պատմության» համար, իսկ մեզ համար սնդանահաստի են որպես Հին Հայոց քաղաքակրթության բեկորներ:

Ընդհանուր դեժերով այսպիսին է «Հայոց պատմության» պատմողական աղբյուրների համապատկերը: Ավարտենք Պատմահոր գրավոր աղբյուրների մասին մեր ասելիքը՝ անդրադառնալով նաև վավերագրական նյութերին: Այդպիսին են դանազան լեզուներով գրված այն վիմագիր հուշարձանները, որոնք գտնվել են հեղինակի տեսադաշտում: Մովսես Խորենացին բացառիկ հետաքրքրություն է դրսևորել վիմագիր արձանագրությունների նկատմամբ՝ և՛ երբ ըմբռնել է դրանց բովանդակությունը, և՛ երբ անգամ չի կարողացել վերծանել դրանք: Որպես առաջինի օրինակ նշենք Գառնիի՝ Տրդատ արքայի հուշարձան արձանագրությունը, որն ընթերցվել է նկարագրվել է Պատմահոր կողմից: Իբրև երկրորդի նմուշ կարող են ծառայել Վանի ու բարսաղական սեպագիր արձանագրությունները, որոնք Հանգամանորեն նկարագրված են և ավանդության Համաձայն վերագրված Ատրեսատանի թագուհի Շամիրամին: Վավերագրերի շարքին պետք է դասել Հայ Արշակունիների զահամակները, որոնցում, ըստ իրենց հղորություն և աղբյուրության, հերթականորեն թվարկվում էին բոլոր նախարարական տոհմերը: Պատմահայրը լայնորեն օգտագործել է այս տոհմացանկերը նախարարական տների պատմությունը շարադրելիս:

«Հայոց պատմության» էջերում մեջբերված բազմաթիվ նամակները, թագավորների և այլևայլ գործիչների ուղերձներն ու ճառերը վավերագրեր չեն: Պատմության շարադրման այդ սուր բավականաչափ տարածված է եղել հին և միջնադարյան պատմագրության մեջ, թեև հարկ չկա բացառել, որ այդպիսի նամակները երբևի՜ իրական փաստաթղթերի արձագանք են ներկայացնում:

Անդրադառնալով «Հայոց պատմության» աղբյուրների մյուս տեսակներին: Գրավոր աղբյուրներին հաջորդում են բանավորները: Խոսքը գլխավորապես վերաբերում է այն ժողովրդական ստեղծագործություններին, սրոնց հեղինակն անձամբ ակնհայտ է եղել: Կարելի է սարբերակել բանավոր աղբյուրների երեք խումբ: Առաջինն առասպելներն են, որոնցից մեզ է հասել Վահագն աստծո ծնունդին նվիրված հիմնից մի հատված, երկրորդը՝ պատմական ավանդությունները: «Վիպասանների երգերը», «Թվեյաց երգերը», որոնք ավելի մեծ թիվ են կազմում: Այստեղ միաշյուշված են պատմական և առասպելականը: Հատվածներ են պահպանվել «Արտաշես և Սաթենիկ» վիպական շարքից, Արգավան վիշապի, Արտավազդի, Վարդգես մանկան մասին ստեղծագործություններից: Երրորդը տոհմական առքերն են, որոնք երգվում կամ պատմվում էին նախարարական տոհմերում, անընդից սերունդ հետզհետե Հարստանալով ու դուժադարձվելով: Դրանցում հիշատակվում էին տոհմի ծագումը, նրա նշանավոր ներկայացուցիչների լավ կամ վատ գործերը և այլն: Այդպիսի տոհմական սուր է, օրինակ, Չինաստանից Մամիկոնյան տոհմի նախնիների գալստյան մասին ավանդությունը: Մովսես Խորենացին լայնորեն օգտագործել է ժողովրդական ստեղծագործության երեք ձևն էլ, սակայն քննադատաբար է մոտեցել դրանց: Նա առասպելական տարրերը որպես այլաբանություն է ընկալել և ձգտել է վերլուծություն միջոցով բացահայտել դրանց բանական հիմքերը: Օրինակ, նա մեջբերում է Արտաշեսի և Սաթենիկի Հարսանիքի մասին ժողովրդական ավանդության խոսքերը. «Ոսկի տեղ էր տեղում Արտաշեսի փեսայության ժամանակ, մարգարիտ էր տեղում Սաթենիկի Հարսանության ժամանակ» և ավելացնում. «Որովհետև մեր թագավորները սովորություն ունեին՝ իբրև փեսա դահլիճի դուռը Համնիկոս դրամներ չալ տալ Հոտմայեցիների Հյուսիսաստաններին նման: Նույնպես և թագուհիները առագաստի սեղանում մարգարիտ: Երգի իսկական իմաստն այս է»: Այսպես է նա վարվում նաև բազում այլ դեպքերում:

Աղբյուրների այլ տիպ են ներկայացնում նյութական մշակույթի հուշարձանները, քաղաքները, ամրոցները, տաճարները, բնակավայրերը, ջրանցքները և այլն: Պատմահայրը ուշադիր ուսումնասիրել է դրանք կամ դրանց ավերակները, հավաքել է Համապատասխան ավանդությունները: Այսպիսի հետադրությունները են «Հայոց պատմության» մեջ էական տեղ զբաղիլ նկարագրությունները: Մի շարք դեպքերում պատմիչն, անհավասար, պետք է մոտոփ վերականգնել քաղաքների և այլ հուշարձանների ավերակները՝ Հարյուրամյակներ առաջ ունեցած տեսքով նկարագրելու, հիմնադրման և կառուցման պատմությունն ու հանգամանքները շարադրելու նպատակով: Կարելի է որպես օրինակ բերել Տիգրանակերտի, Երվանդաշատի նկարագրությունները, Երվանդակերտի, Թեոդոսիոպոլիսի, ուրիշ քաղաքների ու բնակավայրերի դուժադեղ պատկերումները: Հասկանալի է նաև շատ քանդակներ, կոթողներ, սահմանաքարեր, ընդ որում այս ամենն ինքնանպատակ չէ, այլ Համաձույլ է Պատմությանը: Երևում նա օգնություն է կոչել այս կամ այն քաղաքի ու բնակավայրի անվանումը՝ դրա ստուգաբանության միջոցով ձգտելով պատմության ճշգրտություն բացահայտել:

Այս վերջին երևույթի հիշատակմամբ մոտենում ենք «Հայոց պատմության» աղբյուրների ևս մեկ տեսակին՝ լեզվին: Բոլոր նկարագրված աղբյուրները, ինչպիսի



տարաբնույթի և բազմաթիվ նյութերով էլ որ ապահովին ՊատմաՏորը, այնուամենայնիվ բավարար էջին նրա վիթխարի ծրագրերը՝ Հայաստանի պատմությունը ամբողջական ու համակարգված շարադրումը, իրագործելու համար: Նրան նորանոր փաստեր էին անհրաժեշտ այդ խնդիրը լուծելու համար: Եվ ահա, նա լրացուցիչ աղբյուր է ձեռք բերել, դիմելով բառագանձի և հատկապես հատուկ անունների՝ պատմական կամ իրեն ժամանակակից տեղանունների, անձնանունների, սոհձանունների ստուգաբանական վերլուծությանը: Արդյունքները նշանակալից են եղել և հնարավորություն են ընձեռել նոր պատմական դրվագներով էսպես Հարսոտցնի «Հայոց պատմությունը»:

Հարկ է մի քանի օրինակներով բացորոշել Մովսես Խորենացու ստուգաբանական եղանակները և դրանց Հիման վրա կատարած եզրահանգումների բնույթը: Իրեն ժամանակակից Երվանդավան քաղաքանունը, որ, անշուշտ, նշանակում է «Երվանդի բնակավայր» (Երվանդ-ավան, ինչպես որ Հայտնի են այլ տեղանուններ՝ Զարհ-ավան, Վաղարշ-ավան, Արշակ-ավան), նա մեկնաբանում է որպես «վանեց Երվանդին»՝ «Երվանդա-վան»: Նա դիմում է անգամ տառի փոփոխության՝ (վ-ի փոխարեն) և եզրակացնում, որ այստեղ է Արտաշես թագավորը վանել բանապետ Երվանդի գործը: Նույն կերպ է նա վարվում նաև անձնանունների հետ: Այսպես, օրինակ, իրանական ծագում ունեցող Սանաարուվ անունը նա իմաստավորում է Հայերեն՝ «Սանտա տուրք» - «Սանտոի նվեր», պարզաբանելով, որ մասնակ Հասակում թագավորին մահից փրկել է նրա ստնտու Սանտուր: Բազմաթիվ են սոհձանունների ստուգաբանությունները: Օրինակ, «Իմաքսյան» սոհձանունը Մովսես Խորենացին ըմբռնում է որպես «դիմաց կէս», այսինքն՝ «դեմքի կես» և առաջարկում (կամ՝ սոհձանական ասքից մեջբերում) մի դրվագ, թե ինչպես է այդ սոհձի նախնին մարտում կորցրել դեմքի կեսը: «Արծրունի» սոհձանունը նա մեկնաբանում է որպես «արծուի ունի», այսինքն՝ «արծիվ է բռնում» և բացատրում, որ այդ սոհձի ներկայացուցիչների իրավունքն ու պարտականությունն էր թագավորի առջևից արծիվ (կամ արծվադրոջ) կրելը: Զբավարարվելով Հայերենի բառաբանման, նա երբեմն դիմում է և պարսկերենին: Այսպես, «Կամաբական» սոհձանունը, «Իմաքսյանի» ստուգաբանությունը ուղով, նա մեկնաբանում է որպես՝ «կամ քիչ», «սար-գլուխ», պարզաբանելով, թե այս սոհձի նահապետը մարտում կորցրել էր գլխի մի մասը, «Մարմետ» տեղանունը ևս մեկնվում է պարսկերեն՝ «մար ամատ»՝ «մարը հիտով», և արվում են համապատասխան հետևություններ: Ժամանակակից լեզվաբանություն մեջ նման ստուգաբանությունը կոչվում է ժողովրդական կամ կեղծ: Մովսես Խորենացու համար, լեզվի կառուցվածքի՝ իր ժամանակին բնորոշ ընկալման տեսանկյունից, այդ վերլուծությունը նույնքան Հավաստի էր, որքան ժամանակակից լեզվաբանի՝ համար՝ գիտական ստուգաբանությունը, որի վրա հաճախ հենվում են պատմաբանները: Ավելացնենք, որ մեր օրերում անգամ հաճախ ժողովրդական ստուգաբանություններ են հանդիպում «լուրջ» պատմական գրվածքներում:

Սկզբնաղբյուրների խնդիրը սպառելու համար խոսենք նաև Մովսես Խորենացու «գրական աղբյուրների» մասին, որոնք, սակայն, ծառայել են այլ նպատակի, քան վերը թվարկվածները: Այս կամ այն իրադարձություն ավանդելիս պատմիչը մերթ ընդ մերթ դիմում է, այսպես ասած, «ոճական նյութի»: Նա սուսանձին արտահայտություններ, դարձվածքներ և նույնիսկ ամբողջական նախադա-

սություններ է մեջբերում ոճական առումով իր նախասիրած որևէ ստեղծագործությունից, որոնք անմիջական առնչություն չունեն նկարագրվող դեպքերի հետ: Հավանական է, որ պատմիչի կարծիքով այսպիսի ստեղծագործական եղանակը հնարավորություն էր ընձեռում առավելագույն հմայք հարորդի շարադրանքին: Չփոխելով պատմածի էությունը, այդ թույլ էր տալիս ավելի մեծ արտահայտչականության հասնել, քան ինքը կհավակնեի անել սեփական խոսքերով: Բերենք այսպիսի օրինակ: Նկարագրելով պարսից արքա Շապուհի կողմից Հայոց Տիրամանկերտ քաղաքի պաշարումը՝ ՊատմաՏայրը բերում է թագավորի ուղղակի խոսքը քաղաքացիներին. «Ո՛վ քաջ Հայեր, որ ինքնեղ ձեզ արգելել փակել եք Տիրամանկերտի պարիսպների հետև, և ներսից սպառնալիքներ եք արձակում: Քաջ տղամարդիկ կուլում են արձակ դաշտում և ազատ տեղում. կանայք են, որ փակվում են, կռվից վախենալով»: Ընդգծված տեղերը բառացի վերցված են Կեղծ-Կալիսթենեսի «Աղեքսանդրի պատմության» Հայերեն թարգմանությունից, որտեղ դրանք փյունիկյան Տյուրոս քաղաքի բնակիչներին ուղղված Ալեքսանդր Մակեդոնացու դիմումի տարրերից են: Ավելացնենք, որ Մովսես Խորենացին, հավանաբար, այդ աշխատության Հայերեն թարգմանիչն է, որով և բացատրվում է նրա նախասիրությունը որպես ոճական աղբյուր ընտրելիս:

Ընդհանուր Հայացք նետելով Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրների կազմին՝ կարելի է վարմանալ, թե որքան բազմազան ու տարաբնույթ են դրանք եղել: Դեռևս V դարում նա պրպոսի և «Հայոց պատմության» մեջ օգտագործել է սկզբնաղբյուրների ըստ էության այն բոլոր տեսակները, որոնց վրա հիմնվում են ժամանակակից պատմաբանները: Հիրավի, նա չի անտեսել դրավոր աղբյուրները և ոչ մի տարատեսակ, ընդգրկելով նաև վիմագրերը: Քննախույզ Հայացքով հետազոտել և իր նպատակին է ծառայեցրել բանավոր աղբյուրները: Ուժերի ներածին չափով դիմել է նյութական աղբյուրներին: Վերջապես, որպես սկզբնաղբյուր է օգտագործել իրեն հայտնի լեզուները՝ հետևելով ժամանակի լեզվաբանական պատկերացումներին ու հետազոտական եղանակներին:

Այս ամենն ինքնին դուրս են բերում ՊատմաՏորը մեզ համար սովորական «պատմիչ» բնույթագրման, ինչպես նաև միջնադարյան Հայ Հեղինակները, չրջանակներից և նրա հոսնար պատմավոր տեղ ապահովում համաշխարհային մշակութի գործիչների շարքում: «Հայոց պատմություն» հեղինակի գիտական-հետազոտական կերպարն առավել ցցում է դառնում, երբ ծանոթանում ենք նյութերի անկման և վերլուծման խորենացիական եղանակներին:

Զարմանալի հակադրություն գոյություն ունի, մի կողմից, «Հայոց պատմության» բացառիկ սահուն, ներքին հակասություններից զուրկ, հետևողական ու կուս շարադրանքի, մյուս կողմից՝ տարաբնույթ և իրարամերձ տեղեկությունների այն դանդաղ միջև, որ հասած պետք է լինեի հեղինակին բազմազան ու հակասական աղբյուրներից: Եվ ակամա հարց է ծագում. ինչպե՞ս կարող էր նման պակասավոր ու խայտաբղետ նյութից կերտվել «Հայոց պատմության» այդքան կատարյալ ու սղցիկ կառույցը:

Այդ առեղծվածը հասկանալու համար պետք է խորամուխ լինել ՊատմաՏոր ստեղծագործական աշխատանքի հետ կապված խնդիրների մեջ: Պատմությունը

3522



չարադրելիս նա ունեցել է երկու ելակետ, առաջին՝ աղբյուրներից քաղած տեղեկությունների հանրադրամարը, երկրորդ՝ պատմական - արամաբանական, տեսական պատկերացում այն մասին, թե ինչ է պատմությունը: Առաջին ելակետի մասին վերը ասվածը բավական է, իսկ երկրորդը հետևյալն է. պատմությունն անցյալի իրադարձությունների և երևույթների ճշմարտացի ու հավաստի վերարտադրություն է: Սակայն եթե այդպես է, ապա նրա մեջ չպետք է լինի որևէ հակասություն, անհետևողականություն և անարամարանվածություն: Ամեն ինչ պետք է լինի փոխկապակցված և միմյանցից բխող: Պատմության շարադրանքում հեղինակը բազմիցս այս ոգով է արտահայտվում:

Այսուհանդերձ ակնբախ է, որ Մովսես Խորենացին, պարզապես ժամանակագրական կարգով դասավորելով առձեռն նյութը, չէր հասնի ստեղծագործական հաջողության նման բարձրակետի: Պատմահայրը նախ պետք է համապատասխան մշակման ենթարկեր հում, երբեմն հակասական նյութը, որպեսզի այնուհետև կարողանար ստեղծել ցանկալի կուռ համակարգը: Ընդ որում նյութն անհրաժեշտ էր մշակել սրտչակի եղանակներ կիրառելով:

Ինչպես ցույց է տալիս «Հայոց պատմություն» բնագրի համապատասխան վերլուծությունը, հեղինակն առձեռն նյութը մշակման է ենթարկել երկու աստիճանով կամ մակարդակով:

1. Առաջին աստիճանը կարելի է կոչել համադրման, ընտրության և նախնական մշակման աստիճան: Համարվել են, բնականաբար, նույն իրադարձությանը կամ երևույթին վերաբերող փաստերը: Որոշ չափով պարզեցնելով Պատմահոր առջև ծառայած խնդիրը, կարելի է պատկերել երեք հնարավոր իրավիճակ. փաստերը իրարամերժ են, մասամբ հակասում են իրար, փաստերը հաստատում կամ լրացնում են միմյանց: Առաջին երկու իրավիճակում անհրաժեշտ էր ընտրություն կատարել, իսկ ընտրության համար՝ չափանիշներ որդեգրել: Դատելով պատմության խորենացիական ըմբռնումից, նրա համար այլ չափանիշ չէր կարող գոյություն ունենալ, քան տվյալ փաստի հավաստիությունը. բնականաբար, իր հայեցակետից: Սակայն հավաստիության աստիճանի պարզաբանումն էլ, իր հերթին, պահանջում էր զնահաստման յուրահատուկ սանդղակ, որը հնարավորություն կընձեռներ որոշել՝ ո՞ր փաստն է հավաստի, ո՞րն է նվազ հավաստի, և ո՞րն է ընդհանրապես անհավաստի: Իհարկե, մի այնպիսի սխալ մտածող, ինչպիսին էր Մովսես Խորենացին, որպես զլխավոր չափանիշ, չէր կարող չունենալ առողջ դատողության սկզբունքը: «Հայոց պատմություն» համապատասխան ուսումնասիրության ենթարկելու պարագայում տեսանելի են դառնում Պատմահոր զնահաստման սանդղակի նաև ուրիշ, ավելի մանրամասնեցված կետեր: Օրինակ, նրա համար հուսանելի աղբյուրների տվյալները նախընտրելի են քաղղեական և պարսկական վկայություններից, գրավոր սկզբնաղբյուրներին նա ավելի է վստահում, քան բանավորներին: Այլ զեպքերում նրա ընտրությունը կարող էր պայմանավորված լինել հուզական մղումներով: Միանգամայն բնական է, որ նա հայ ժողովրդին և գործիչներին մեծարող փաստերը բացահայտորեն պերպասում էր հակառակ բնույթի փաստերից: Գնահատման չափանիշների մի մասն էլ անհասկանալի կամ առայժմ անբացատրելի է մնում մեզ համար, սակայն անկասկած է, որ դրանք եղել են, և Մովսես Խորենացին հետևել է դրանց: Իհարկե, ընտրության ժամանակ դրանք անոխալակստություն չէին երաշխավորում, բայց նպա-

տակառւղււմ էին փաստերի ամբողջ զանգվածից միայն ու միայն հավաստի փաստերի ընտրությունը: Այս աշխատանքը, կատարված միասնական, հստակ հայեցակետով, հանգեցրել է ընտրված փաստերի համակուռության և դրանով իսկ՝ շարադրանքի սպաշխության:

Բնութագրական օրինակներ բերենք վերը թվարկված երեք իրավիճակների համար: Ահա մի դրվագ, որը վերաբերում է առաջին իրավիճակին և հատկանշվում է փաստերի իրարամերժությամբ: Հայոց նահապետ Հրաչյան խնդրում է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքայից՝ իրեն հանձնել Հրեական գրերի առաջնորդներից Շամբատին և բնակեցնում է նրան Հայաստանում: Նրանից է ծագում, Մար Աբաս Կատինայից օգտվելով պատմում է Մովսես Խորենացին, Բագրատունիների սոհմը: Ապա Պատմահայրն այնպես է. «Մի քանի անվստահելի մարդիկ ասում են, ըստ իրենց ենթադրության, բայց ոչ ճշմարտությանը, իբր թե Բագրատունիների թագադիր ցեղը ծագում է Հայկից: Ուստի ես ասում եմ. այսպիսի հիմար խոսքերի մի՛ հավատար, որովհետև ոչ մի հետք կամ սպասույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը» (1, 22, ընդգծումը մերն է. - Գ. Ս.): Այստեղ իրարամերժ տեղեկություններից մեկը հրապարակավ հերքվում է: Ուրիշ զեպքերում դա կարող էր լույսայն կատարվել, և այդ մասին մենք չէինք իմանա: Հասկանալի է և այն հանգամանքը, որ Պատմահայրն անհրաժեշտ էր համարել անվանել հակառակ կարծիքի հեղինակին: Ընտրության չափանիշը ճշմարտացիությունն է, ստուգությունը:

Երկրորդ՝ երկու տեղեկությունների միջև մասնակի հակասությունների իրավիճակի սոխիվ օրինակ բերենք Պատմության ժամանակագրական համակարգից: Մովսես Խորենացու և Սեբեոսի Պատմությանը համակցված Անանունի երկերում պահպանված պարսից Սասանյան արքաների ցանկերի և ժամանակագրության համեմատությունը ցույց է տալիս, որ պատմիչներն ընդհանուր աղբյուր են ունեցել: Ընդ որում, այդ սկզբնաղբյուրի տվյալները, թերևս, բավականին ճշգրիտ են արտացոլված Անանունի ցանկերում: Ակնհայտ է նաև, որ Մովսես Խորենացին ունեցել է առայժմ մեզ անհայտ, զուգահեռ աղբյուր: Այն, հավանաբար, պարունակել է Սասանյան Հարստության արքաների շարքի այն մասի կառավարման ընդհանուր տարեբանակը, որը տեղաբաշխվում է «Հայոց պատմության» ժամանակագրական շրջանակներում: Ինչպե՞ս է վարվել Պատմահայրը այս երկու տեղեկությունների հետ: Պատասխանն ակնբախ է ստորև բերվող աղյուսակից: Վերջինս ընդգրկում է հերթականորեն, Սասանյան բոլոր արքաների տարեբանակները՝ Արտաշիլ I-ից (226-240) մինչև Վրամ V (431-439), որի անվան հիշատակմամբ ավարտվում է «Հայոց պատմությունում» Սասանյանների շարքը, եթե նկատի չառնենք արդեն սուսանց տարեբանակի հիշատակված Հագիերա II-ին: Թագավորների անուններն աղյուսակում բաց են թողնված, իսկ վերջում բերված են Հանրագումարային տարեբանակները՝

Ա՝	15	32	1	3	16	1	9	7	70	4	5	11	21	19	214		
Բ՝	40	46	-	-	-	-	-	-	9	3	70	4	-	10	11	21	214
Գ՝	50	73	-	-	-	-	-	-	9	3	73	4	-	11	21	22	246

\* Ա՝ գլխական ժամանակագրություն, Բ՝ Մովսես Խորենացու ժամանակագրություն, Գ՝ Անանունի ժամանակագրություն:



Միևնույն արքաների անունների բացակայությունը թե՛ Մովսես Խորենացու և թե՛ Անանունի ցանկերում, ինչպես նաև մի շարք տարեքանակների համընկնումը վկայում են ընդհանուր աղբյուրի գոյություն մասին: Մյուս կողմից, Մովսես Խորենացին հաղորդում է հանրագումարային այն տարեքանակը (214), որը ճշգրիտ է գիտական ժամանակադրության տեսանկյունից: Այն բացակայում է Անանունի երկում և, հետևաբար, բխում է երկու պատմիչների ընդհանուր աղբյուրից տարբեր ակունքից: Ի՞նչ է արել Պատմահայրը: Նա գերադասություն է ընծայել է երկրորդ սկզբնաղբյուրին և նախընտրել ժամանակագրության հիմքում դնել հանրագումարային տարեքանակը: Ուստի նա նվազեցրել է գումարելիների մի մասը, որպեսզի գումարը ստացվի ճիշտ և ճիշտ 214: Ընդ որում նվազեցումների մի մասը տարեքանակները մոտեցրել է հավաստի ժամանակագրության տվյալներին, իսկ նշանավոր Շապուհ II-ի 70-ամյա կառավարման պարտադրում առհասարակ հանգեցրել է լրակատար հավաստիության: Միաժամանակ, այդ գործողությունների հետևանքով աղյուսակը եզրավակող արքաներից կրկնորդի և երրորդի կառավարման տարեքանակները հեռացել են իրականից համապատասխանաբար 10 և 1 տարով: Այս ամենը, սակայն, նեմանում է Պատմահոր ձեռք բերած վերջնական արդյունքի առջև: Նրան հաջողվել է երկու հակասական փաստերի միջև ճիշտ ընտրություն կատարելով ճշգրտորեն և սուույգ տեղավորել Սասանյան արքաների շարքը բացարձակ ժամանակագրության մեջ: Պատմահոր գործադրած եղանակն այստեղ լիովին արդարացրել է իրեն: Այն է՝ հեղինակն ընտրել է իրեն հավաստի ներկայացող փաստը և օգտագործել սկզբունքորեն մերժած փաստի այն տվյալները, որոնք չեն հակասել ընտրված փաստին, այսինքն՝ երկրորդ փաստի տվյալները անցկացվել են առաջինի «քուրայով»: Ստորև մենք կանդրադարձանք այս բնույթի ևս մեկ, ընդ որում խիստ կարևոր դեպքի:

Երրորդ, երբ երկու փաստերը լրացնում են իրար, իրավիճակն առավել սարաձված է «Հայոց պատմությունում»: Պարզաբանինք այն հետևյալ օրինակով: Կոստանդիանոս Մեծը (306-337) հիվանդանում է. «Արևիդական կախարհները և մարտիկյան բժիշկները չկարողացան բժշկել, ուստի Տրդատին խնդրեց՝ Պարսկաստանից և Հնդկաստանից խմորողներ ուղարկել, բայց նրանք էլ օգուտ չբերեցին» (II, 83): Այս տեղեկությունը, իհարկե առանց Տրդատի անվան հեշտակության, քաղված է «Սուրբ Սեղբնարոսի վարքի» ճուշտորեն բնագրից (առաջին փաստ): Պատմահոր համար երկրորդ փաստ է ծառայել երկու տերակալների՝ Կոստանդիանոսի և Տրդատ Մեծի մտերմության մասին տեղեկությունը: Մովսես Խորենացին համազրել է երկու փաստերը և եզրակացրել, որ Կոստանդիանոսը արևելյան արքաներից պիմած պիտի լինի Հենց Տրդատին: Այս բաղադրյալ փաստը նա մատուցել է որպես միասնական, համակուռ փաստ (փաստ + փաստ + եզրակացություն = փաստ): Կարելի է եզրակացնել, որ «Հայոց պատմության» փաստերը երբեմն ներկայացված լինելով որպես միևնույն աղբյուրից ծաղող միասնական ու համակուռ փաստի՝ իրականում բաղադրյալ են: Դրանք բխեցված են այլևայլ աղբյուրներից քաղված երկու, երեք ու ավելի մեծ թվով տեղեկություններից և օժտված են համակուռություն հաղորդող արամաբանական կամընկերներով ու եզրակացություններով: Այս հասկանչական հանգամանքը խիստ դժվարացնում է Մովսես Խորենացու աշխատության աղբյուրագիտական վերլուծությունը, բայց մեզ մնում է միայն հաշտվել դրա հետ:

Ասվածից կարելի է անել ևս մեկ եզրակացություն, որը հաստատվում է այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է «Հայոց պատմության» տվյալները սուու-վել այլ աղբյուրներով: Այդ եզրակացությունը հետևյալն է. «Հայոց պատմության» ոչ մի փաստ նրա հեղինակի երևակայության արդատիք չէ: Յուրաքանչյուրն առարկայական հիմք ունի Պատմահոր աղբյուրներում, լինի դա մեզ համար ընդու-նելի որևէ հավաստի հաղորդում, թե իր իսկ՝ Մովսես Խորենացու եզրակացու-թյունը՝ արված որևէ հասուկ անվան ժողովրդական ստուգաբանության հիման վրա և այսօր անընդունելի:

2. Նյութի մշակման երկրորդ աստիճանը կարելի է անվանել համակարգման աստիճան: Պատմահայրը գործողության մեջ է դրել առաջին աստիճանում մշակված (իր տեսանկյունից՝ հավաստի) փաստերը ու դրանք միավորել մեծ ու փոքր համա-կարգերի մեջ: Այդ մեծ ու փոքր համակարգերի հատկանշական գիծը յուրաքանչ-յուրում ընդգրկված փաստերի համապարփակ փոխհամաձայնությունն է: Թվաբ-կենք «Հայոց պատմության» համակարգերից մի քանիսը. առավել ակնառուն՝ ժամանակագրականը, այնուհետև աղբյուրների հիշատակման (այդ մասին մանրա-մասն խոքը կլինի ստորև) համակարգը, նախարարական տոհմերի զարգացման, հայոց տիրակալների՝ Հայկ նահապետից մինչև Արտաշես Արշակունի, Հայաս-տանին հարևան երկրների պատմության՝ հայոց անցյալին առնչվող դրվագների համակարգերը:

«Հայոց պատմության» մեծ ու փոքր համակարգերից դիտարկենք մեկական օրինակ: Նախարարական տոհմերի զարգացման համակարգը բազմապիսի է հինգ-տասնյակի համող յուրօրինակ եմթահամակարգերից: Այստեղ առանձին իշխանա-կան տները զարգացման ծիրերը միահյուսվելով բարդ պատկեր են կազմում: Ամեն մի տոհմի զարգացման գիծը պրպտելիս Պատմահայրը որոշակի հարցերի շրջանակ է ընդգրկել: Նա ձգտել է պարզել այլալ ստհմի ծագումը, տիրությունների տեղադ-րությունը, իրավունքներն ու պարտականությունները արբունիքում, նշանավոր տոհմակիցների բարի ու վատ գործերը, Հայոց արքաներին մատուցած ծառայու-թյունները, վերելքի և անկման (չնորհազրկման) ժամանակաշրջանները: Իզուր չէ, որ Մովսես Խորենացուն երբեմն անվանում են «հայ նախարարության պատ-մաբան»: Հասկանալի է, որ յուրաքանչյուր նախարարական տան հետ կապված բոլոր հարցերը լուսաբանելու համար նա բավարար նյութ չի ունեցել: Որոշ տոհմերի պատմությունը հագեցված է, մտայնալիները աղոտ է ուրվազծված: Առավել հարուստը, բնականաբար, Մովսես Խորենացու մեկենաս Սահակ Բագրատունու տոհմակից Բագրատունիների պատմությունն է, որը առանձին դեպքերում իր հագեցվածությունը կարող է մրցել նույնիսկ հայոց արքաներին վերաբերող հատվածների հետ:

Նախարարական տոհմերի զարգացման համակարգը, որը ամենախոշոր-ներից է «Հայոց պատմության» մեջ, թափանցում է նրա բոլոր անկյունները, բաշխված է գործնականում աշխատության բոլոր գլուխների մեջ: Փոքր համա-կարգի օրինակ է, դիցուք, Հայաստանում թագավորների նախնիների պաշտա-մունքի պատմության շարադրանքը: Մովսես Խորենացին այդ հարցին անդրա-բանում է ընդամենը յոթ անգամ, ընդ որում միմիայն երկրորդ գրքում: Նա պատմում է Արամվիրում այդ պաշտամունքի հաստատման, Արտաշես I-ի կողմից նվաճված Փոքր Ասիայից և Հունաստանից այդտեղի մեհյանի համար աստված-



ների արձանների առաքման, նրա որդի Տիգրան Միջինի կողմից այդ արձանների կանդենցման, «թագավորների կուռքերին» երկրպագելուց հրաժարված Բագրատունիներին պատմելու, Երվանդ արքայի վրդմից մեհենական ամբողջ համալիր՝ գեպի նոր հիմնադրված Բագրատնի տաճարական քաղաքը փոխադրելու, Արտաշես Միջինի կողմից Արտաշատ նոր մայրաքաղաք վերափոխադրելու, և, վերջապես, Հայաստանը նվաճած զրադաշտական Արտաշի Սասանյանի կողմից այդ մեհյանը ոչնչացնելու մասին: Այս պատմությունը բազմամաս շարժանկար է հիշեցնում, որի յուրաքանչյուր հերթական մասում գործողությունները զարգացման ընթացքը շարունակվում է ճիշտ այն պահից, ուր գործողությունները ընդհատվել էին նախորդ մասերում: Ընդհանրապես, Պատմահայրը, ինչ-որ իրադարձությունների կամ երևույթների նկարագրության ձեռնամուխ լինելով, միշտ ավարտին է հասցնում սկսածը:

«Հայոց պատմությունը», լինելով մեծ ու փոքր համակարգերի միահյուսում և նույնիսկ համաձուլում՝ այդպիսով յուրօրինակ գերհամակարգ է ներկայացնում: Զարմանալի է, որ նյութի վերջը բնութագրված երկատիճան մշակման վրա հեցած՝ Պատմությունն աչքի է ընկնում պաշխուրդով, ամբողջականությամբ և ներդաշնակությամբ: Այս առումով այն համեմատելի է արվեստի կատարյալ ստեղծագործության՝ արձանի կամ ճարտարապետական կառույցի հետ:

Այստեղից կարևոր գործնական եզրակացություն է հետևում. «Հայոց պատմություն» պարունակված փաստերը օգտագործելիս անհրաժեշտ է նկատի ունենալ զրանց տեղը և դերը նրա համակարգում:

Ամբողջ ասվածը, հարկավ, չի նշանակում, որ նման ներդաշնակություն գոյություն ունի նաև «Հայոց պատմություն» և հավաստի պատմության միջև, եթե վերջինս ընկալվեք որպես մեզ հասած աղբյուրների ամբողջության հիման վրա. գիտություն հնարավորության սահմաններում ստույգ վերականգնվող պատմական պրոցես: Մովսես Խորենացու ձեռքի տակ եղած աղբյուրների պարագայում, որքան էլ որ նա ջանար դրանք առավելագույնս գործարդել և օգտագործել, այդ բացարձակապես անհնարին կլինեք: Ուստի տարօրինակը ոչ թե այն է, որ «Հայոց պատմությունը» այժմյան «հավաստի» պատմությունից չեղումներ է պարունակում, այլ արտառուց կլինեք, եթե այդպիսի չեղումներ չլինեին: Այսպիսի իրատեսական մոտեցումը, սակայն, Մովսես Խորենացու աշխատության նկատմամբ կազմավորվել է ոչ այնքան վաղուց: Մինչև XIX դարի կեսերը, սակավ բացառություններով, գերակշռում էր «Հայոց պատմություն» նկատմամբ վաղ միջնադարի վերջում IX-X դարերում ծագած անքննադատ ակնածանքը: Նրա Պատմությունը վերածվել էր ձեռնարկի, ընդօրինակման համար կատարելատիպի, միջնադարյան Հայաստանում հետադարձ շարադրված բոլոր պատմական երկերի համապատասխան մասերի հիմքի և սկզբնաղբյուրի: Մովսես Կաղանկատուցին, Ուխտանեսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը, Թովմա Արծրունին և մյուս Հայ պատմիչները ընդհուպ մինչև XVIII դար շարունակում էին կրկնել Մովսես Խորենացու դասերը: XVIII դարում սկսվեց (եթե նկատի ունենանք Մովսես Խորենացու գործունեությունը, սույն կարելի է ասել՝ վերականգնվեց) Հին Հայաստանի պատմությունը հետազոտելիս օտարալիզու աղբյուրների օգտագործումը: Այս հանգամանքը թեև որոշակի քննադատական տարր առաջ բերեց Պատմահայր

նկատմամբ, երկար ժամանակ նրա համարումը անսասան էր մնում:

XIX դարի 70-ական թվականներին դրությունը փոխվում է: Այդ դարավերջը և ներկա հայրերային սկիզբը դասական բանասիրության մեջ գերբնագատության տարածման ժամանակաշրջան էին, որից հանրապի տուժեցին բազմաթիվ հունահունական հեղինակներ: Գերքննադատությունը տատանեց նաև Մովսես Խորենացու Պատմության հեղինակությունը: Քննադատության տեղիք տվեցին այն ակնհայտ հակասությունները, որ գոյություն ունեին, մի կողմից մինչ այդ արդեն լավ ուսումնասիրված հունահունական աղբյուրների, մյուս կողմից՝ Մովսես Խորենացու հաղորդումների միջև: Գերադասությունը, բնականաբար, տրվում էր անտիկ հեղինակներին, որոնք նկարագրված իրադարձությունների անմիջական կամ մեթոդիկ ժամանակակիցներ էին: «Հայոց պատմության» տվյալները անհավաստի հուշակիցներ (Ա. Գուտշմիդ), իսկ այնուհետև հաջորդեցին կեղծարարության մեղադրանքները: «Հայոց պատմության» մեջ հայտնաբերվեցին հատվածներ, որոնք, քննադատների կարծիքով, կարող էին գրվել միմիայն VI, VII և հաջորդ դարերի աղբյուրների ու իրադարձությունների հիման վրա: Սկսեցին պնդել, որ Մովսես Խորենացին, ներկայանալով որպես V դարի պատմիչ, թաքցրել է իր իսկական ժամանակը (Ա. Կարիեր): Մեղադրանքները ուժեղանում էին բարձունքից գլորվող ձնազնդի նման և իրենց բարձրակետին հասան XIX-XX դարերի սահմանագծում. «Հայոց պատմությունը» սկզբից մինչև վերջ կեղծիք հայտարարվեց: Մեղադրանքներ հնչեցին առ այն, որ Մովսես Խորենացին որպես աղբյուր հիշատակում է այնպիսի հեղինակներ, որոնց գործերին նա ծանոթ չի եղել և ընդհակառակն լուծության է մասնում անուններ, որոնց աշխատություններից նա իրականում օգտվել է: Իրեր թե նա իր աղբյուրներին վերադրում է այն, ինչն իրականում չկա, հնարում է գոյություն չունեցող աղբյուրներ, Հայաստանի պատմությանն է վերադրում որևէ կապ չունեցող իրադարձություններ և դեմքեր, նրա մեջբերած ժողովրդական երգերն իսկ կեղծիք են և այլն (Գր. Խալաթյանց):

Վերջ թվարկված ելույթներին, չնայած զրանց ծայրահեղությանը, հարկ չկա միանշանակ բացասական գնահատական տալ: Դրանք բերեցին նաև իրենց օգուտը՝ վեր հանելով Մովսես Խորենացու աշխատության բազմաթիվ հետաքրքրական ու հատկանշական մանրամասներ, բացահայտելով այն ամենն, ինչը կարելի է դասել չեղումների, ժամանակագրական վրիպումների, մակաշերտումների թվին: Հետազոտողները, տարվելով քննադատությամբ, չկարողացան հաղթահարել իրենց իսկ կուտակած արժեքավոր փաստական նյութը, ի վիճակի չեղան ընթանելու այդ նյութի իրական դերը «Հայոց պատմության» մեջ և իսկական թափանցել հեղինակի ստեղծագործական աշխատանքը, մեկնաբանել փաստերը Պատմության համակարգային կառուցվածքի հայեցակետից, առանց որի անհնարին է հասկանալ և գնահատել այդ աշխատությունը: Ողջ ուշադրությունը սեռելով Պատմության չեղումներին և քամահրանքով վերաբերելով արժեքավոր նյութերին՝ քննադատությունը տառապող հետազոտողները բացահայտ չափազանցությունների մեջ էին ընկնում: Մի խոսքով, նրանք շատ հեռու էին այդ հուշարձանի էությունից մեջ խորամուխ լինելուց, կանգնած էին նրա քննական յուրացման ստակ առաջին աստիճանին:



Քննական յուրացման հաջորդ փուլը բնութագրվում է քննադատամտությունից հրամարտմով: Տեղի ունեցավ միամանկան խնդրի գիտական երկատում, Պատմահոր ժամանակի հարցը առանձնացվեց նրա աշխատության պատմագիտական արժեքի խնդրից: Սրանք հարկավ, փոխկապակցված լինելով, ունեին նաև ինքնուրույն նշանակություն: Մի շարք հետազոտողներ, հիմնավորապես փաստարկելով իրենց տեսակետը, պաշտպանում էին Մովսես Խորենացու աշխատության ավանդական թվագրումը V դարով (Ն. Բյուզանդացի, Ֆ. Կոնիբեր, Մ. Աբրեղյան, Ստ. Մալխասյան, Թ. Ալիաթեքյան), մյուսները տեղաշարժում էին Մովսես Խորենացուն VII, VIII և նույնիսկ IX դար (Ն. Մառ, Յ. Մարիփարտ, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան), թեև համաձայն էին «Հայոց պատմության», որպես պատմական աղբյուրի, բացառիկ կարևորություն ընդունման հարցում: Անհրաժեշտ է ընդգծել հետազոտողների երկրորդ խմբի տեսակետի հատուկ նշանակությունը սովորական դարձած և այսօր էլ առկա պարզունակացման պարագաներում, երբ «Հայոց պատմության» խնդիրը հանգեցվում է սակ Մովսես Խորենացու ժամանակի հարցին: Այս հարցն անչափ կարևոր է, սակայն ոչ միայն չի սպառում խնդիրը, այլև նրա բուն էությունն իսկ չի կազմում: Անհամեմատ ավելի կարևոր է պարզաբանել, որ Մովսես Խորենացու երկը պատմական արժեքավոր աղբյուր է՝ Հին Հայաստանի պատմության հետազոտության համար կարևորագույններից մեկը: Ահա թե ինչ էր գրում իր գլխավոր, «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունում ականավոր պատմաբան Ն. Ադոնցը. «Մենք ցանկացել ենք կատարել այն աշխատանքը, որը ժամանակին արվել է հայ պատմիչի կողմից: Ուշագրավ է մեր եզրակացությունների համեմատությունը այն հետևությունների հետ, որոնց, սովյալ հարցի կապակցությամբ, հանդի է Մովսես Խորենացին: Դա մասամբ կծառայի մեր հայացքների ստուգման նպատակին»: Ապա նա ավելացնում է. «Մեթոդաբանական առումով մեր հետազոտությունը ընդհանրություն ունի Խորենացու երկի հետ: Ելնելով այն իրականությունից, որը պատկերված է մինչխորենացիական Հուլարձաններում, մենք ձգտել ենք թափանցել անցյալի խորքը մեզ հետաքրքրող երևույթների հիմքերը հայտնաբերելու համար: Ընդ որում, մեզ համար իրական նեցուկ է եղել նախարարական կենցաղի և անվանաբանության (նուննկլատուրա) առավել բնութագրական տերմինների ստուգաբանական վերլուծությունը: Մեր հետազոտությունների արդյունքները են որոշ իմաստով նման են» (ՍՊԲ, 1908, էջ 408-409): Հ. Մանանդյանը, որը Մովսես Խորենացուն IX դարի հեղինակ էր համարում, այսուհանդերձ, իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատությունում (1944թ.) Հայաստանի Հին ու հնագույն պատմության ամենաչափան, հանդուցալին խնդիրները ուսումնասիրելիս հենվում էր նաև «Հայոց պատմության» տվյալների վրա:

Հետադարձ, արդեն վերջին տասնամյակների ընթացքում, «Հայոց պատմության» քննական հետազոտության մեջ նշմարվում է յուրացման երրորդ աստիճանը. Մովսես Խորենացու տեղեկությունները հանգամանորեն ուսումնասիրվում են դրանց պատմական հավաստիության աստիճանի որոշման տեսանկյունից: Այս աշխատանքին մասնակցել են տասնյակ հետազոտողներ, այդ թվում՝ Հ. Ա. Օրբելին, Ս. Տ. Տրեյանյան, Բ. Ն. Առաքելյանը, Լ. Ս. Խաչիկյանը, Գ. Բ. Զահեկյանը, Բ. Բ. Պետրոսյանը, Կ. Վ. Տրեյանյան, Ի. Մ. Դյակոնովը, Ա. Յա. Բորիսովը, Գ. Ա. Տիրացյանը, Ա. Գ. Փերիխանյանը, Հ. Մ. Բարթիկյանը, Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, Ս. Մ.

Կրկաշարյանը: Կարելի է նշել և այլ անուններ, որոնք ավանդ են ներդրել այս գործում:

Այս ուսումնասիրողները ջանքերը հաջողությամբ են պսակվել, և հատուկ է են «Հայոց պատմության» տասնյակ այնպիսի տեղեկություններ, որոնք մինչ այդ անհիմն կամ կասկածելի էին համարվում: Այդ հաջողությունը պայմանավորված է հետազոտական ճիշտ եղանակներով. նախ՝ ըստ էության նկատի են առնվում նախկինում արված քննադատական գիտողությունները, ապա՝ յուրաքանչյուր փաստի հավաստիությունն ապացուցելիս Մովսես Խորենացու տվյալները համակողմանիորեն ստուգվում են սեպագիր ու հունահռոմեական աղբյուրներով, հնագիտական, փիմագրական, ազգագրական և լիզվաբանական նյութով: Ուշագրավ է, որ հնագիտական գրեթե ամեն մի հայտնագործություն հաստատում է «Հայոց պատմության» որևէ տեղեկություն:

Տպերիս հեղինակը արդեն որոշակի աշխատանք է տարել և հիշյալ ուղղությամբ կատարված ընդհանրացնելու առումով: Ընդ որում խնդիր է դրված եղել հայտնաբերել և հետազոտել այն կոնկրետ ուղիները, որոնցով բազմադարյան, հազարամյա պատմության անցքերի մասին տեղեկությունները կարող էին հասնել մինչև V դարի հայ մատենագրություն և արտացոլել «Հայոց պատմությունում»: Գնալով ակնհայտ է դառնում, որ անհնարին է հավաստի տեղեկությունների բազմապատկությունը բացատրել միայն և միայն բանավոր ավանդություններով, ժողովրդական հիշողության տարողունակությամբ և կայունությամբ: Այդ ամենը կարևոր դեր է կատարել, բայց դրանց տրամադրած հնարավորությունները անսահման լինել չէին կարող:

Բացի այդ, ժողովրդական ավանդություններում պահպանված նյութը յուրահատուկ բնույթ ունի, կրում է ժողովրդական ստեղծողություն կնիքը, որը դյուրությամբ ճանաչելի է, և կարելի է վստահորեն ասել՝ բացակայում է մեր թվականությունից առաջ I հազարամյակի, մեր թվականության առաջին դարերի իրադարձությունների ու երևույթների մասին խորենացիական շատ վկայություններում: Բացի բանավոր ավանդություններից արդեն հաստատված ուրվագծվում են և այլ ուղիներ, որոնցով Մովսես Խորենացուն տեղեկություններ են հասել: Այդ թվում են հայոց արքունիքում և Հայաստանի հիմնադրման մեհյաններում գարգացող պատմագրությունը և ահհասարակ մեհյանական գրավոր ավանդությունը:

Այս ամենի կոնախորքի վրա վերջերս, 1978 թվականին, փորձ արվեց փրակենդանացնել «Հայոց պատմության» նկատմամբ գերքննադատական հայեցակետը՝ նրա բոլոր ծայրահեղություններով հանդերձ: Ամերիկացի գիտնական Ռ. Թոմսոնը, իրականացնելով Պատմության անգլերեն թարգմանության շնորհակալ դործը, կից առաջաբանում կրկնում և նույնիսկ ուռձացնում է Գր. Խաչատրյանի դրույթները՝ մտամբ նորոգելով միայն ավանդաբար բերվող օրինակների հավաքածուն: Ռ. Թոմսոնի հանդես գալը դժվար է այլ կերպ, քան ուշացած և ժամանակավրեպ բնութագրելը:

Դժբախտություն չէ, որ նա Մովսես Խորենացուն համարում է VIII և ոչ թե V դարի հեղինակ: Քանի դեռ բանասերները վերջնականապես չեն ապացուցել, որ Պատմության մեզ հասած տեքստի որոշ հատվածներ (որոնք հանրագումարի է բերել Կ. Թոմսոնովը, որին երկրորդում է Ռ. Թոմսոնը) հետագայում արված ընդմիջարկություններ են և խմբագրական աշխատանքի հետևանք՝ միշտ էլ



կղանվին Հետազոտողներ, որոնք կասկածելի կհամարեն V դարով թվագրումը: Թեև այդպիսի բանասերներին չի հաջողվել և չի հաջողվի պայմանավորվածություն հասնել Մովսես Խորենացուն VII, VIII կամ IX դար տեղաշարժելու հարցում: Եվ այդ այն պատճառով, որ Պատմահայրը ոչ մի կերպ չի տեղափոխում այդ դարերից որևէ մեկի շրջանակներում, երբ գործի դասում և խորանում էր կրոնական դոգմատիկայի ազդեցությունը, աստիճանաբար տեղի էր տալիս անտիկ աշխարհիկ ուղին: Բավական է Մովսես Խորենացուն Համեմատել Հենց այդ դարերում ապրած՝ Սեբեոսի, Աեոնդի կամ Հովհաննես Դրասխանակերպոս Հևո: Իր ազատամտությունները, Հեթանոսական Հեղինակներին պատարեն դիմելու հանդամանքով, պատմական իրադարձությունները և հրեությունները բացատրելիս աստվածային նախաինամություն գործնի գրեթե լրիվ բացառմամբ, հոգևորականություն սուր քննադատություն, պատմության և կյանքի հարցերին բանական մոտեցմամբ, Հիլլենիստական դարաշրջանի (Հայաստանում այն որպես Հետհելլենիստական շարունակվեց և մեր թվականության տառջին դարերում) ուսցիսնալիստական ոգով առաջնորդելի և գրեցներին մեկնաբանմամբ, Մովսես Խորենացին ուղղակի անհարժիր է VII-IX դարերի պատմաճակտեթային միջնորդարին: Աշխարհընկալմամբ նրան անհամեմատ հարստացում է, չնայած նրանց երկերի նկարագրի վիթխարի տարբերությունը, անկաշկանդ, անմիջական, ճնախսպաշարված, սպաստիստ Փափաստ Բուզանդը: Մովսես Խորենացին V դարի պատմիչ է և՛ ըստ սեփական խոստովանության, և՛ ըստ հայ գրավոր պատմագետի: Այս թվագրումները անհարժիր սակավաթիվ Հատվածները արդեն այս հիմքերով անհրաժեշտ էր Հետամտու ընդմիջարկություններ համարել, եթե նույնիսկ բանասերական կղանակներով դեռևս մինչև վերջ չի ապացուցվել դրանց խմբագրական և ոչ թե հեղինակային ծագումը:

Յտվալին, կրկնում եմ, այդ է, այլ որ Ռ. Թոմսոնն անտեսել է նույնիսկ ամենաակնհայտ փաստերը, նախորդ Հետազոտողների տքնաշան աշխատանքի որդուներն: Այս առումով խոսում օրինակ է Հետևյալը: Ժամանակին Գր. Խալաթյանը գրում էր, որ Արտաշեսական սահմանաքարերի մասին Մովսես Խորենացու պատմածը քաղված է Ազաթանգեղոսի աշխատության այն հատվածից, ուր ասվում է, թե պարսից արքա Արտաշիր Սասանյանը նվաճելով Հայաստանը՝ «կոչեց այդ տեղերը իր անունով» և պարսիկները «փոսեր փորելով սահման հաստատեցին»: Գաղանիք է, որ ինչպես այս դրվագը, այնպես էլ Ազաթանգեղոսի ամբողջ երկը, Հայտնի է եղել Մովսես Խորենացուն:՝ Սակայն Ազաթանգեղոսի խոսքերի Հիման վրա ուղղակի անհնարին է տալ Արտաշեսական սահմանաքարերի այն նկարագրությունը, որ կա Մովսես Խորենացու մոտ: Ահա այն. «Սահմանների համար նա նշաններ սահմանեց այսպես. Հրամայեց տաշել

<sup>1</sup> Հայտնի է նաև, որ Պատմահայրը յուրօրինակ կերպով արձագանքել է այս տեղեկությունը: Նա գրում է. «Սրա վրա նախանձելով՝ Պարսից Արտաշիր (թագավորը), Սասանդղին, հրամայում է Պարսկաստանում էլ նրանց տեսակ անել և իր անունով կոչել, որպեսզի Արտաշեսի անունը չհիշվի» (II, 56) և այնուհետև ավելացնում. «Նաև Արտաշեսի Հաստատած սահմանները, դեսնի մեջ քարեր կանգնեցնելով, նա նորոգեց և իր անունով կոչեց Արտաշիրական» (II, 77):

քառակուսի ձևով քարեր, մեջերը պնակի նման փոսցնել և թագի հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ դեսնից քիչ բարձր» (II, 56):

Գր. Խալաթյանը գրում էր այս ամենի մասին 1896 թվականին, իսկ արդեն 10 տարի անց Հայաստանում Հայտնաբերվեց Արտաշեսական առաջին սահմանաքարը: Երկրորդը գտնվեց 1932 թվականին, իսկ այսօր դրանց ընդհանուր թիվը հասնում է չուրջ մեկ տասնյակի: Սահմանաքարերի միջին բարձրությունը 70 սմ է, լայնությունը՝ 30 սմ, հաստությունը՝ 20 սմ: Նրանք ունեն քառանկյուն աշտարակների տեսք և պատկված են երեք բարձրակ ստամբերով, ամրացվել են պատվանդանների մեջ մտնող հատուկ երևոտի միջոցով: Այսպիսով, Մովսես Խորենացու նկարագրության նմանությունը տվնհայտ է: Դրանց արամեերեն միօրինակ արձանագրություններից Հայտնի է նաև, որ դրանք իրոք սահմանաքարեր են և գրվել են Արտաշես արքայի հրամանով: Առավել համառոտ վիմագրում ասվում է «Արտաշես արքա Զարեհի որդի Երվանդական, բաժանեց Հողը գյուղերի միջև»: Պարզ է, որ Արտաշեսական սահմանաքարերի նկարագրության համար Մովսես Խորենացուն աղբյուր են ծառայել իրենք՝ սահմանաքարերը: Ինչպես այդ երևում է Համապատասխան գլխի ծանոթագրությունից, Ռ. Թոմսոնին այս ամենը, անշուշտ, Հայտնի է, բայց այսուհանդերձ նա համառոտեն պաշտպանում է Գր. Խալաթյանի տեսակետը:

Այնուհետև Ռ. Թոմսոնը շարունակում է Մովսես Խորենացուն «մերկացնել» գործը, մեղադրելով Հայաստանի պատմության Հետ իրականում կապ չունեցող անձանց և իրադարձություններ նրան վերագրելու մեջ: Նրան առանձնապես Հուզել են դեպի Պաղեստին պարթևական արշավանքի պատիվը Հայոց արքա Տրգրան Միջինին վերագրելու և Ասորիքի թագավոր Աբգարին Հայոց տիրակալ Հռչակելու փաստերը: Բննարկելնք առաջին իրողությունը: Հովսեփոս Փլավիոսը հանդամանորեն պատմում է այն մասին, թե ինչպես է պարթևական թագավորը Բարգավրանես սատրապի գլխավորությամբ Ասորիք և Պաղեստին ուղարկում իր զորքերը: Պաղեստինում պարթևները միջամտում են տեղական երկպառակություններին: Նրանք մեծ կաշառքի դիմաց օգնում են Հյուսիսային քահանայապետի պաշտոնի հավակնորդ Անտիոքոսին ստապակու Հյուսիսային և գերեվարելով վերջինիս բնակեցնում են այդքամ պարթևներին պատկանող Բարկոտում: Մովսես Խորենացին ամենայն մանրամասնությամբ ավանդում է Հովսեփոս Փլավիոսի պատմածը, սակայն նրա տեղեկությունների համաձայն՝ արշավանքը նախաձեռնել էր Հայոց արքա Տրգրան Միջինը, զորքերը եղել են Հայ-պարթևական, իսկ Հյուսիսային այլ գերեզներ Հետ միասին ուղարկել են ոչ թե Պարթևաստան, այլ Հայաստան: Առաջին Հայացքից քննադատամոյսերի վրդովմունքը տեղին է թվում, բայց հարցն այն է, որ անհրաժեշտ է վերականգնել պատմական արդարությունը և պարթևներին վերադարձնել նրանցից «խլված» արշավանքը: Այլևի կարևոր է ճշտել՝ արդյոք Մովսես Խորենացին Հիմք ունեցե՞լ է ուղղույն վարվելու համար, թե՞ նա իրոք ամեն ինչ հնարել է: Պարզվում է, որ նա հիմքեր ունեցել է: Տվյալ դեպքում մենք գործ ունենք նյութի մշակման այն եղանակի Հետ, որը Պատմահայրը կիրառել է, երբ ձեռքի տակ ունեցել է երկու հակասական, բայց լիովին իրոր չբացառող փաստ: Ինչպես Հիշում ենք, նա սկզբունքորեն մերժում փաստի մանրամասնություններն անցկացրել է Հավաստի համարած փաստի «քուբրայով»: Ներկա դեպքում Հովսեփոս Փլավիոսին հակադրվել է



Մովսես Խորենացու համար կարևորագույն նշանակություն ունեցող մի տեղեկություն:

V դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը, պատմելով IV դարի կեսերին պարսից արքա Շապուհի կողմից հայկական քաղաքների բնակչության, այդ թվում նաև հրեաների բռնադադթեցման մասին, հատուկ նշում է, որ նրանք այն հրեաների ժառանգներն էին, որոնց Հյուսիսային քաղաքային հետ միասին Պարսաստանից բերել և հայկական քաղաքներում բնակեցրել էր դեռևս Տրպան արքան: Մովսես Խորենացին, կրկնելով իր որդեգրած չափանիշներից, հարցը շատ պարզ էր վճռելու և նախապատվությունը տալու էր Փավստոս Բուզանդի վարկածին: Հովսեփոս Փրավիոսի պատումի «Հայկականացումը» արդեն, ինչպես ասում են, տեխնիկայի հարց էր: Կրկնում ենք, այստեղ կարևորն այն է, թե Մովսես Խորենացու մեկնաբանությունը արդյո՞ք համապատասխանում էր պատմական ճշմարտությանը, այլ այն, որ նա սենցիլ է թե ոչ առարկայական, արտաքին հիմք՝ որևէ աղբյուրի տեղեկություն: Եվ պարզվում է, որ նա իրոք ունեցել է այդպիսի հիմք:

Նշենք, որ եթե բանասեր Ռ. Թոմսոնը նաև պատմաբան լինելը, ապա նրան էլք կարող է մոտատանջիլ այն հարցը, թե որտեղի՞ց է Փավստոս Բուզանդի մոտ, որին ոչ ոք դեռևս չի կասկածել կեղծարարության մեջ, հայտնվել Տրպան արքայի և Հյուսիսային քաղաքային մասին տեղեկությունը: Արդյոք Տրպան II-ի կողմից Հայաստան տեղափոխված հրեաների միջավայրում գոյություն էի՞ր ունեցել համապատասխան ավանդություն, թեև տեղեկան հանրապետության: «Մանրագրերը» չպետք է արհամարհվեն հին շրջանի մասնագետի կողմից, այլապես նա հրեք է փնտրել չի լինի շարադրել իր հրկերը:

Ճիշտ այսպես կարելի էր մոտահոգվել Մովսես Խորենացու կողմից Ասորիքի Արքայի արքայի «Հայկականացման» պատմական աստատի կապակցությունը, որպիսի հարցը քննված է առկա պատմական գրականության մեջ:

Ապա Ռ. Թոմսոնը հարուցել է տվիլ քննադատամունքների դատապարտողական փերաբերմունքին նաև Մովսես Խորենացու կիրառած՝ աղբյուրների հղման եղանակների հարցում: Ծանոթանանք այդ եղանակների հետ: Իր համակարգերի թվում Պատմահայրն ունեցել է նաև հղումնային հատուկ համակարգ, որի մասին արդեն խոսք եղավ վերևում: Այն ընդգրկում է «Հայոց պատմության» առաջին երկու գրքերը, իսկ երրորդը յուրօրինակ ձևով է մտնում այդ համակարգի մեջ, այստեղ հղումներն ընդհանրապես բացակայում են, և միակ աղբյուրն ինքը Մովսես Խորենացին է, որպես իրադարձություններին մերձ կամ ժամանակակից Հեղինակ:

Հղումնային համակարգը բաղկացած է երկու մակարդակից՝ Հիմնական և օժանդակ աղբյուրներից: Հիմնական սկզբնաղբյուրներն են՝ Աստվածաշունչը (սկզբնական պոլիստիկից 7-րդ պոլիստ ներառյալ), Մար Աբաս Կաստինայի աշխատությունը (առաջին գրքի 8-րդ պոլիստ երկրորդ գրքի 9-րդ պոլիստ), Ափրիկանոսը (երկրորդ գրքի 10-25-րդ պոլիստներ), Ղերուբան (երկրորդ գրքի 26-36-րդ պոլիստներ), Օղյուսմալ քրմի և Բարդաթանի «Մեհենական պատմությունները» (երկրորդ գրքի 36-66-րդ պոլիստներ), Աբաթանգեղոսը (երկրորդ գրքի 67-92-րդ պոլիստներ): Այս հիմնական աղբյուրները Մովսես Խորենացին գրեթե ամենուր կապում է դիվանների հետ, որոնց մասին խոսք կլինի ստորև:

Բացի հիմնական աղբյուրներից, Պատմահայրը հիշատակում է բազմաթիվ օժանդակ, ամեն մի հիմնական սկզբնաղբյուրի ոլորտի համար մոտավորապես

մեկ տասնյակ աղբյուրներ: Այսպես, օրինակ, Աստվածաշնչի ոլորտի համար որպես օժանդակ աղբյուրներ անվանվում են Բերոսոսը, Ազեբասդը Բագմավելը, Աբյուզենոսը, Հովսեփոս Փրավիոսը, Կեփադոնը, ոմն Առիոս, Օլիմպիոդորոսը, Սիրիլան, Եպիփան Կիպրացին, ինչպես նաև բանավոր երգերը: Համանման իրավիճակ է նաև մյուս ոլորտներում:

Թվում է՝ ամեն ինչ պարզ է ու հստակ, բայց այդ այդպես չէ: Նախ սկսենք նրանից, որ ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, Մովսես Խորենացին հիշատակում է իր ամենկին էլ ոչ բոլոր աղբյուրները, իսկ մի տեղում անվանած սկզբնաղբյուրը չի հիշատակում այլ հատվածներում օգտագործելիս: Այնուհետև պարզվում է, որ նրա հիշատակած ոչ բոլոր աղբյուրներն են իրոք անմիջականորեն օգտագործվել, ինչպես այդ կարող է թվալ «Հայոց պատմության» շարադրանքից: Մի շարք աղբյուրների հետ Պատմահայրը ծանոթությունը միջնորդված է եղել: Վերջապես, հետադարձները փակուղու առաջ են կանգնում, երբ Մովսես Խորենացին ինչ-որ փաստեր է վերագրում որևէ աղբյուրի, որոնք իրականում այնտեղ բացակայում են:

Խորագնա և ի մոտո քննությունից երևում է, սակայն, որ այդ երևույթները ևս ենթարկվում են որոշակի օրինաչափությունների, հստակ կանոնների, որոնց անշեղորեն հետևել է Մովսես Խորենացին: Կարելի է նույնիսկ ասել, որ աղբյուրների հիշատակման համակարգին սուղահետ Պատմությունում դործում է աղբյուրների չհիշատակման ինքնատիպ համակարգ: Հայտնի է, չունեն այս ամենը, մոտենալ «Հայոց պատմության» հղումների դրվածքին արդիական պահանջների տեսանկյունից, ինչպես վարվում է Ռ. Թոմսոնը, նշանակում է կոպիտ սխալ կատարել:

Այսպես, որոշ աղբյուրներ, որոնցից առատորեն օգտվել է Մովսես Խորենացին, լուրջյան մասնելը բացատրվում է, անշուշտ, այն հանգամանքով, որ այդ աղբյուրները ընկալվել են որպես յուրօրինակ տեղեկատուներ, հանրագիտարաններ, որոնք հիշատակելը այսօր էլ պարսպաղի չէ: Նրա համար այդպիսի ձեռնարկներ են եղել Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և «Եկեղեցական պատմությունը», IV դարի Հեղինակ Գրիգոր Նազիանզացու երկերը, V դարի պատմիչ Սոկրատի «Եկեղեցական պատմությունը» և ուրիշ:

Այլ դեպքերում աղբյուրը չհիշատակելը պատճառաբանվում է Մովսես Խորենացու որդեգրած կամ մշակած կանոնով, որի համաձայն ընթերցողին է հրամայվում միմիայն սկզբնաղբյուրը: Միջանկյալ աշխատությունը, որից անմիջականորեն քաղվում է տվյալ տեղեկությունը, լուրջյան է մասնավոր օրպես Հեղինակի և ընթերցողների համար անկարևոր մանրամասնություն:

Գլխավորապես երրորդ գրքում (թեև ոչ միայն այդտեղ), երբ սկզբնաղբյուրը Պատմահայրը ժամանակագրական առումով խիստ մերձ է եղել, նա հարկ չի համարել այն հիշատակել: Այսպես, նա չի հիշատակում Կորյունին (թեև չի մոտանում նրան Մաշտոցի աշակերտներին թվարկելիս) և Փավստոս Բուզանդին, որոնցից շատ բան է փոխառում: Հավանաբար, նա հետևել է և այլ կանոնների, դիցուք, չի հիշատակել մերժվող ու հերքվող տեղեկությունների Հեղինակներին և այսպես շարունակ:

Բազմաթիվ դեպքերում, երբ թվում է, թե Պատմահայրը հիշատակած աղբյուրներում տվյալ տեղեկությունը բացակայում է, պարզապես սխալ է



մեկնաբանվում Պատմության քննադիրը: Հոռոմեական գործարար Պոմպեոսը, զբոսում է Մովսես Խորենացին, Պիղատոս Պոնտացու Հոր միջոցով թունամարում է Միհրդատին, ինչը վկայում է նաև Հովսեպոս Փլավիոսը, որը պատմելով բայասանի մասին, ասում է «Երկրորդ մոտ Պոմպեոսին Հասնում է Միհրդատի մահվան ավետավոր լուրը» (II, 15):

Մի՞թե այստեղ Պատմաճայրը Հովսեպոս Փլավիոսին է վերագրում Պոմպեոսի կողմից Միհրդատին սպանելու մասին տեղեկությունը, առավել ևս «Պիղատոս Պոնտացու Հոր միջոցով» (այդ մասին Հովսեպոս Փլավիոսի մոտ բառ անդամ չկա), ինչպես կարծում է Ռ. Թոմսոնը: Բոլորովին էլ ո՛չ: «Վկայում է» բառը, ինչպես ցույց է տալիս նրա՝ խորենացիական կոնստեքստների քննությունը, նույնպես է թյուրիմացություն տեղիք տա: Այն ամենը, որ Պատմաճայրը վերագրում է Հովսեպոս Փլավիոսին, հանդում է «Հրեական պատերազմներից» բառացի քաղված արտահայտությունը և, անշուշտ, Հենց այդ պատճառով է Մովսես Խորենացին մեջբերում այն: Մնացյալը ուրիշ աղբյուր ունի, թեև Հիմնված է Պիղատոսի «Պոնտոս» տոհմանվան ստուգաբանության վրա: Հավանաբար Մովսես Խորենացին այն մեկնաբանել է որպես «Պոնտացի» և կապ է դրտել «Պոնտացու» Հոր և Միհրդատ Պոնտացու սպանություն միջև: Պոմպեոսի ստղծանքի մասին տեղեկությունը, հնարավոր է, հիմնված է Հովսեպոս Փլավիոսի այն վկայության վրա, որի համաձայն Միհրդատի սպանության մասին լուրը «ավետավոր» է համարվել Պոմպեոսի համար: Այսպիսով, տվյալ դեպքում գործ ունենք բավական տարածված սովորական իրադրություն հետ, երբ փաստն ու եզրակացությունը անքակտելի ամբողջություն են կազմում և որի մասին խոսք եղավ վերևում:

Ահա ևս մեկ հնարավոր օրինակ: «Արշակը,- գրում է Պատմաճայրը,- տիրում է աշխարհին մի երրորդ մասին, ինչպես կարելի է սովորել Հերոդոտոսի պատմության չորրորդ գրքից, որտեղ աշխարհը բաժանված է երեք մասի, և կոչված են՝ մեկը Եվրոպե, մեկը Լիբիա և մեկը Ասիա, որին և տիրեց Արշակը» (II, 2): Հարավոր է առնվազն նախապաշարված լինել, պնդելու համար, թե Պատմաճայրը Հերոդոտոսին (մ.թ.ա. V դար) տեղեկություն է վերագրում աշխարհի երրորդ մասում Արշակի (մ.թ.ա. II դար) իշխելու մասին: Պարզ է, որ խոսքն այլ իրողություն մասին է: Հերոդոտոսին է վերագրվում բնդամենն աշխարհը երեք մասի, որոնցից մեկն Ասիան էր, բաժանված լինելու դրույթը:

Մովսես Խորենացու նման Հղումները, սովորաբար, կոչված են որևէ հայտնի աղբյուրի հեղինակությունը հաստատելու ինչ-որ տեղեկության կամ ընդհանուր բովանդակությունը կամ էլ, ընդհակառակն, նրա որևէից մանրամասնությունը: Այդ Հղումները չեն վերաբերում ամբողջ տեղեկությանը, ինչպես որ այդ կարող է թվալ սուսջին հայացքից:

Որոշ այդ օրինակ իրողություններ, որոնք վերաբերում են, օրինակ, Աբյուզիանոսին, Աբիրիկանոսին, Փերմելիանոսին, առայժմ գծվար է բացատրել: Սակայն միայն այս իրողությունների վրա չէ, որ հիմնվում է Ռ. Թոմսոնը: Նա առհասարակ հաշվի չի առնում այն հանգամանքը, որ Հին ու միջնադարյան հեղինակները կարող էին ունենալ աղբյուրների հիշատակության իրենց, ժամանակակից գրական էթիկայի նորմերից տարբերվող, կանոնները: Ինչ վերաբերում է Մովսես Խորենացուն, ապա այդ ինքնատիպ հեղինակը ի հավելումն ունեցել է նաև սեկսական կանոններ: Այս ամենն անհրաժեշտ էր գիտենալ, նկատի ունենալով

թեկուզև Հերոդոտոսին, որը, օրինակ, օգտագործելով նախորդ և ժամանակակից լոգոգրափոսների երկերը, հիշատակում է նրանցից միայն Հեկատոսյոսին, այն էլ, նրա նյութներն առատորեն օգտագործելով հանգերձ, խիստ հազվադեպ: Այնպես որ Մովսես Խորենացին բոլորովին էլ բացառություն չէ:

Ռ. Թոմսոնին առանձնակի խոսվք է պատճառել Մովսես Խորենացու հիշատակած արքունի դիվանների հարցը: Հետևելով Գր. Խաթաթյանցին, նա զբանք համարել է հեղինակի հնարածը: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձնենք խորենացիական դիվանների համակարգին (որպեսին նույնպես գոյություն ունի) և նշենք, որ փաստորեն խոսքը ոչ թե բազում արքունի դիվանների, այլ ըստ էություն մեկ՝ Երեսխայի դիվանի մասին է: Մովսես Խորենացու ներկայացմամբ այդ դիվանը, նրա հիշատակած մյուս դիվանների համեմատությամբ, ունի երկու առանձնահատկություն: Առաջին՝ այն կիզակետ է մնացած բոլոր դիվաններից եկող տեղեկատվական ճառագայթագծերի համար. ա) Մար Աբաս Կառնինոս պարթևական թագավորների Նինվեի դիվանից քաղած նյութը թողնում է Մծբինի արքունի դիվանում, որտեղից այն ընկնում է Երեսխայի դիվան, բ) Մծբինի արքունի դիվանն ամբողջովին տեղափոխում են Երեսխայի դիվան, և տեղափոխում նաև Պոնտոսյան Մինոպի մեհենական դիվանը, գ) նույնիսկ «Մեհենական պատմությունների» պահոցը՝ Անի ամբոցը, որը Պատմաճայրը դիվան չի անվանում, նույնպես կապվում է Երեսխայի հետ այդ պատմություններից մեկի հեղինակ Բարդաժանի միջոցով: Անի այցելած Բարդաժանը, ինչպես այդ մասին հիշատակում է Մովսես Խորենացին, Երեսխայի բնակիչ էր: Երկրորդ՝ Երեսխայի միակ դիվանն է, որի մասին Պատմաճայրը գրում է, թե տեսել է այն և ծանոթացել նյութերի հետ: Բացի այդ, նա նշում է, որ այդ դիվանը հիշատակվում է Եվաբեիտ Կեսարացու «Եկեղեցական պատմությունում» (այդ հիշատակությունն իրոք առկա է): Կարելի է եզրակացնել, որ այդ դիվանն իրականում գոյություն է ունեցել, և Մովսես Խորենացին եղել է այնտեղ: Ի միջի այլոց, ասորագիտության մեջ ընդունված է, որ Հենց այդ դիվանի նյութերն են ընկած մ.թ. VI դարում կազմված «Երեսխայի ժամանակագրության» հիմքում: Այս ամենից կարելի է նաև եզրակացնել, որ մյուս դիվանների (Նինվեի, Մծբինի, Մինոպի) մասին տեղեկություններն նա Երեսխայում է ծանոթացել, երբ նրան տեղեկացրել են տեղական դիվանի կազմավորման պատմությունը: Այսպիսով, Մովսես Խորենացուն հնարավոր է մեղադրել սուկ գյուրահավաստության, բայց ոչ գոյություն չունեցող դիվանների մասին հնարովի տեղեկություններ քաղողը երև մեջ:

Ռ. Թոմսոնը Մովսես Խորենացու հորինած աղբյուրների թվին է դասում «Մեհենական պատմությունները», դրանց հեղինակի՝ Օղյուսայ քրմի հետ միասին (երկրորդ հեղինակը՝ Բարդաժանը, հայտնի պատմական դեմք է): Վերը մենք արդեն առիթ ունեցանք նշելու, որ Օղյուսայի Պատմության բովանդակությունը, ինչպես որ այն ներկայացված է «Հայոց պատմությունում», հավաստության աստիճանով (վկա՝ Արտաշես արքայի մասին անտիկ հեղինակների տեղեկությունները և նրա իսկ թողած արամեերեն արձանագրությունները) իրական փաստարկ է Հօգուտ այն գրույթի, որ այդպիսի աշխատություն իրոք եղել է Մովսես Խորենացու աղբյուրների թվում: Սակայն Ռ. Թոմսոնը ընդհանրապես հաշվի չի առնում բովանդակության գործոնը որպես այդպիսին: Նրա համար կարևոր է միայն այն,



որ Օղյունպին, բացի Մովսես Խորենացուց, ոչ ոք այլևս չի Հիշատակում: Այս Հանգամանքը Ռ.Թոմասնի Համար միանգամայն բավական է նման ազդյուրի դոյուլթյունն ընդհանրապես ժխտելու համար: Անվարան կարելի է ասել, որ, օրինակ, Մար Աբաս Կատինայի աշխատությունը, կիսաճանաչման արժանանալով Գր. Խալաթյանցի և Ռ. Թոմասնի կողմից, նույնպես լիովին կմերժվեր, եթե պատահաբար մեզ հասած չլիներ այն եղակի ձևապիրը, ուր պահպանվել է Սերետի Պատմությունը Համակցված Անանուհի երկր՝ Մար Աբաս Կատինայի (Մարաբա Մծուրնացու) անվան Հիշատակությունը:

Ռ. Թոմասը մեղադրում է Պատմահորը «կեղծարարություն» մեջ այն բանի համար, որ նա «Հայոց պատմություն» այլևայլ դրվագներ և անգամ սեփական կենսագրություն պատկերավորությունն ու արտահայտչականությունը ուժեղացնելու համար, որպես գրական, ոճական նյութ, առանձին արտահայտություններ և ամբողջական նախադասություններ է փոխանակել իր նախապիւրած հեղինակների գործերից: Պետք էր բմբռնել, որ այդ եղանակը, ինչպես որ երևաց վերը բերված օրինակից (դրանց թիվը կարելի էր սասանապատկել), չի նվազեցնում նկարագրված իրադարձությունների Հավաստիությունը. ի վերջո այն ընդունված էր Հին ու միջնադարյան բազմաթիվ հեղինակների կողմից: Սակայն բովանդակությունը դարձյալ չի հետաքրքրում Ռ. Թոմասին, նա շարունակում է Հավատարիմ մնալ իր որդեգրած սկզբունքներին, այն է՝ միջնադարյան հեղինակի վրա տարածում է ժամանակակից գիտական էթիկայի չափանիշները:

Կարելի է ավելացնել Ռ. Թոմասնի առաջ քաշած մեղադրանքների թիվը, Հիշատակելով Մովսես Խորենացուն ուղղված նախատինքները՝ Բագրատունիներին առաջին տեղը Հատկացնելու և միտումնավոր ներբողելու, Հայաստանի վերը միջազգային ասպարեզում և համաշխարհային պատմության մեջ չափազանցանելու և այլնի համար: Սակայն այս ամենը արդյոք սխտը է դարձնանայի՞ Համարել, եթե նույնիսկ Պատմահայրը այդպես էլ վարվել է: Մի՞թե հույն պատմիչները Հանգես չեն եկել որպես Հայրենի քաղաքի և ընդհանրապես հունական աշխարհի, այդ թիվում նրա քաղաքական նորմերի, մշակույթի ջատագույններ, Հակագրելով այդ ամենը «բարբարոսական» երկրներին ու ժողովուրդներին: Եվ մի՞թե նրանք այդ դեպքերում անաչառ են եղել: Հայտնի է, օրինակ, որ Պլուտարքոսը Պարսկաստանում ապրատանած Թեմիստոկլեսի մահվան մասին երևու վարկածից (թունափորել է իրեն՝ չցանկանալով մասնակցել հույները դեմ արշավանքին, պարսից արքայի հովանու ներքո ապրել է մինչև ձերբակալություն), Հայրենասիրական գլխացումներին տուրք տալով բնորդ է առաջին, բացահայտորեն կեղծ տարբերակը: Արդյոք նույն կերպ չէի՞ր վարվում հուստիական պատմիչները: Կամ մի՞թե Պոլիբիոսը հուստիական աշխարհակարություն մոլի ջատագույլ էր: Եվ եթե հունահուստիական հեղինակները միևնույն ժամանակ Հանդես էին գալիս նաև իրենց իսկ կարգերի և գործիչների քննադատությունը, ապա Մովսես Խորենացին ավելի հեռուն էր գնում՝ խտրորեն դատապարտելով Հայոց արքայներին ու հուստիականներից շատերի բարբերն ու սովորյալները: Ուստի խիտ աչառու լինելու պարագայում միայն կարելի է պարտավելի Համարել Պատմահոր դիրքորոշումը:

«Հայոց պատմություն» հեղինակի նկատմամբ Ռ. Թոմասնի աչառու վերաբերմունքը զգացվում է միանգամայն որոշակիորեն: Այդ աչառությունը չէ՞ր արդյոք պատմահոր անձնավորությունը վերաբերող մի քանի Հատվածների

տարվադրված ընկալման պատճառը: Այսպես, կոծելով Սահակ Հայրապետի մահը, Մովսես Խորենացին «Ողբում» գրում է. «Ո՞վ այսուհետև պիտի Հարգե մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իմ աշակերտի առաջադիմությունը, ո՞վ Հայրական զվարճությունը պիտի արտահայտե՞ մասամբ իր որդուցս Հաղթիկյով: Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապետություն հակառակ զուրս եկողների Հանդգնությունը ... նրանք ... իրենց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ մարդկանց: Ո՞վ պետք է նրանց պապանձեցնե սաստելով և մեզ սիրտի գովելով և չափ դեռ խոսքի և լուսության» (111, 68): Ռ. Թոմասը այսպես է մեկնաբանում այս տողերը. Մովսես Խորենացին «ավելի կարգացած լինելու և հետորոտակ արվեստով ուսուցիչներին գերազանցելու հավանություն է ունեցել, որի համար էլ ծաղրի է ենթարկվել նրանց գործը շարունակողների (ընդգծումները մերն են. - Գ.Ս.) կողմից»: Այդ «որի համար էլ»-ը, ինչպես և «նրանց գործը շարունակողները» Մովսես Խորենացու աշխատությունից, և ընդհանրապես որևէ տեղից, ամենևին չեն հրկում: Ռ. Թոմասը ակնհայտորեն հեղինակում է խոսում Մովսես Խորենացու՝ իր մասին ունեցած բարձր համարման մասին: Սակայն մի՞թե նույն Հաղթությունը չի կարելի հեղինակի ենթարկել Հորացիոսին նրա «Exegi monumentum»-ի համար:

Նախորդ տողերում Մովսես Խորենացին գրում է (դարձյալ իր ուսուցիչներ Սահակի և Մեսրոպի մասին). «Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փոռավորվեին իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությունը, և մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ գլխով (ընդգծումը մերն է. - Գ. Ս.) հույս ունեինք պարել, խիպախ և արագ շարժումներով, և առաջաստի երբեք երբեք-այժմ այդ ուրախություն փոխարեն (խոսքը ուսուցիչներին հետ Հանդիպման ուրախության մասին է. - Գ. Ս.), գերեզմանի վրա ողբեր եմ առում, ողբանելի Հուստիանով» (նույն տեղում): Ռ. Թոմասը ծանոթագրում է, «Թեև նա, լինելով հանդուգն երիտասարդ, պարբեր սիրահար՝ զվարթ ժամանց էր անկալում մայրաքաղաքում (Բյուզանդիայի. - Գ. Ս.), Սահակի և Մեսրոպի մահն ընդհատեց նրա ուղևորությունը և ստիպեց վերադառնալ Հայաստան»: Այս մեկնաբանությունը Հիմնված է, իհարկե, «Հայոց պատմության» մեզ հասած բնագրի տարբերակների վրա (ի տարբերություն նախորդ բոլոր թարգմանիչների ու հետազոտողների, Ռ. Թոմասը ի Բիւզանդիոյ՝ «Բյուզանդիայից» ընթերցման փոխարեն նախընտրում է ի Բիւզանդիոն՝ «գեպի Բյուզանդիա» տարբերակը), սակայն գրաբարի քաջ գիտակ Ռ. Թոմասնի այսօրինակ ընտրությունը աչառու դիրքորոշման հետևանք է: Ակնհայտ է, որ այն պարզորոշ կերպով Հակասում է նախադասության իսկական իմաստին<sup>2</sup>: Մովսես Խորենացու Պատմության նկատմամբ քննադատավորության բռնկումը մենք վերը որպես ժամանակավրեպ

<sup>2</sup> Նման աչառու վերաբերմունքը գիտության խնդիրներում վշտացվել է, առավել ևս, երբ ուղեկցվում է այսօրինակ արտահայտություններով. «Գրեթե մեկ Հարյուրամյակի ընթացքում 1890 թվականից մինչև օրերս, Պատմության թվագրության Հարցում Համաձայնություն չի եղել Հայ և օտար գիտնականների միջև»: Ռ.Թոմասն ակնարկում է, թե Հայ հետազոտողները զոհարեցում են գիտությունը Հանուն Հույզերի: Այս արտահայտությունը պատիվ չի բերում Մովսես Խորենացու Պատմության գերբնադասանելից ամենաքննադատատուղի՝ Հայ գիտնական Գր. Խալաթյանցի Հավատարիմ հետևորդին:



ընտելթագրեցինք, քանի որ եթե XIX-XX դարերի սահմանագծի քննադատամտումները տարվում էին ժամանակի բանասիրության գերքննադատական հովերով և «Հայոց պատմություն» մեջ նորանոր անհարկություններ հայտնաբերվելու մրցավազքով, ապա Ռ. Թոմասը աշխատում է այլ պայմաններում ինչպես բանասիրական գիտության միջնորդի առումով՝ ընդհանրապես, այնպես էլ Մովսես Խորենացու աշխատության կոնստրուկտիվ քննական հետազոտության միջնորդի առումով՝ մասնավորապես: Կարելի էր սպասել, որ այս գործոնները արտացոլում կգտնեին և նկատի կառնվեին նրա աշխատությունում:

Հուսադրում է, այնուամենայնիվ, Ռ. Թոմասի հրատարակել Գր. Խալատյանցի Հայաքննարկից «Հայոց պատմություն» բանահյուսական նյութերի հարցում: Նա ոչ միայն դրանք կեղծիք էի համարում, այլև զբաղված էր զննարկում բանավոր ստեղծագործությունների նկատմամբ Մովսես Խորենացու դերը որոշումը: Եթե այստեղ միջնադարյան պատմիչի առանձնահատկությունները և ինքնատիպությունը ճիշտ են ընկալվել, ապա դրան կարող են հաջորդել նույն ոգով արված և այլ հայրակացություններ:

Հիշատակելով քննադատամտությունն ի պոետիկումը, թերևս, չպետք է բռնաբանում մասնակի հակառակ ծայրահեղությունը, քանի որ այն որոշակի արձագանք է գտնում անտեղյակ ընթերցողների չըջանում: Վերջին տարիներին փորձեր են ձեռնարկվում «Հայոց պատմություն» նկատմամբ միջնադարին հատուկ անվերապահ անքննադատ վերաբերմունքը վերականգնանքները ուղղությունը: Այդ հեղինակներն անհարկ են համարում ոչ միայն Մովսես Խորենացու աշխատության ամեն մի քննադատություն, այլև նույնիսկ նրա տեղեկությունների մեկնաբանման յուրաքանչյուր փորձ՝ Հակադերևու Պատմահոր հանճարեղությունը ժամանակակից ուսումնասիրողների ճշմարտությունը: Այստեղ գործ ունենք թերամտության և գավառականության տիպիկ դրսևորման հետ: Բավական է ասել, որ նրանց համար ընդհանրապես գոյություն չունի Մովսես Խորենացու սկզբնադրյունների կարևորագույն խնդիրը, որը ծառայում է «Հայոց պատմություն» ամեն մի հետազոտողի առջև<sup>3</sup>:

Ո՛չ գերքննադատությունը, ո՛չ թերքննադատությունը ի վիճակի չեն «Հայոց պատմություն» հետազոտության արդյունավետ ուղիներ առաջարկել և հավասարապես փակուղի են սանում: Եթե առաջինը պարզապես մերժում է այն որպես պատմական աղբյուր, ապա երկրորդն այն դուրս է դնում գիտական ուսումնասիրության չըջանակներից: Այսուհանդերձ քննադատամտության նոր բունկման փաստը վկայում է հուշարձանի բացառիկ բարդության մասին: Իրոք, նրա քննական յուրացման ասպարեզում գիտնականների նվաճումները խիստ նշանակալի են, բայց և այնպես մնում են բազում հարցեր ու անզգայականներ, որոնք պիտավորապես վերաբերում են «Հայոց պատմություն» աղբյուրային հիմքին:

Գաղանիք չէ, որ հին պատմության ասպարեզում պարզ և մատչելի աղբյուրների կողքին գոյություն ունեն և չափազանց բարդ գործեր, որոնց հարուցած դժվարությունները սաջև զիտությունը, սակայն, չպետք է տեղի տա: Դրանցից մեկը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է: Նրա կոնստրուկտիվ յուրաց-

ման ստիպողական անհրաժեշտությունը ստատկանում է այն հանգամանքով, որ այն, լինելով հին Հայաստանի պատմության միակ ամբողջական ու համապարփակ շարադրանքը, հզակի և անվերաբերելի է:

Ի՞նչ արժեք է ներկայացնում Մովսես Խորենացու աշխատությունը գիտության համար: Մի քանի էջի սահմաններում պատշաճ լիակատարությամբ այս հարցին անհնարին է պատասխանել՝ այնքան հազեցած և բազմազան է «Հայոց պատմություն» բովանդակությունը: Մենք կարող ենք սոսկ առանձնացնել մի քանի հիմնական խնդիրներ և բերել համապատասխան օրինակներ:

1. Հայ ժողովրդի հնագույն պատմություն: Մովսես Խորենացին Հայ ժողովրդի ծագման մասին ազգային ավանդության փաստորեն միակ շարադրողն է: Բուն ավանդությունը, բնականաբար, շատ ավելի հին է և իր արմատներով ձգվում է մինչև մեր ժողովրդի կազմավորման ժամանակները, այսինքն այն սկսել է ձևավորվել Պատմահոր ծնվելուց մեկուկես հազար տարի առաջ: Հասկանալի է, որ այդ հսկայական ժամանակաշրջանի ընթացքում այդ ավանդությունն էականորեն կերպարանափոխվել է, բազում մանրամասնություններ կորել են, բազում նստվածքներ՝ ավելացել: Այնուամենայնիվ, ինչպես որ բացահայտվում է նրա տվյալների և հին, իրադարձություններին ժամանակակից աղբյուրների համադրությամբ, «Հայոց պատմություն» մեջ մեզ հասած տեսքով էլ այդ ավանդությունը պատմական ճշմարտության շատ տարրեր է պարունակում: Հիշատակված մակաշերտումներից մեկը կարելի է առանձնացնել բավականաչափ հստակորեն և բնութագրել որպես Աստվածաշնչից եկող: Դա Հայոց նախահայր Հայկի ընդգրկումն է աստվածաշնչական տրհմագրության մեջ՝ որպես Նոյի որդի Հաբեթի շառավիղներից մեկի, ինչպես և Հայկի նախնական բնակատեղիի տեղադրումը Բաբելոնում, որտեղից նա անցել է «Արարադի երկիր»: Հանելով այդ շերտը, մենք պարզում ենք, որ Հայկը, ըստ ավանդության, իր ամբողջ տոհմով ապրել է Վանա լճից արևմուտք ընկած տարածքում, Հալե դավառում, Տարոնի ու Սասունի հարևանությունում: Այս ամենը վարմանախորհրդի հաստատվում է ասորեստանյան և ուրարտական մ. թ.ա. XII-VIII դարերի սեպագիր աղբյուրներով, որը և վկայում է ավանդության հնություն և հարավատության մասին: Նշված աղբյուրներով որպես Հայկական լեռնաշխարհի ներսում հայկական ցեղերի նախնական բնակության շրջաններ են հիշատակվում Սասուն-Տարոն-Հարբ դավառների տարածքում տեղորոշվող Ուրումե-Ուրմե, ինչպես նաև Արևի երկրները, ընդ որում վերջինը համընկնում է Հարբի հետ նույնիսկ անվանումով:

Հայկական պատմականության սկզբնավորման մասին ազգային ավանդությունը ևս պահպանվել է միայն Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում»: Ընդ որում այն առավել մեծ չափով, քան նախորդ ավանդությունը, խաչաձևվում է հնագույն աղբյուրների հետ և լրացնում նրանց տեղեկությունները: Պատմահայրն ավանդում է, որ Հայոց Պարույր նահապետը օգնում է Մարասանի թագավորին ջախջախելու Ասորեստանյան տերությունը և գրավելու նրա մայրաքաղաք Նինիվն: Ի հաստատումն ցույց արված օգնության՝ նա թագավոր է հռչակվում, Հայոց առաջին թագավոր, և Մարաց արքայից թագավորական իշխանության նշաններ ստանում: Այս ամենը վարմանալի համաձայնությունն մեջ

<sup>3</sup> Այս մասին հանգամանորեն տե՛ս Գ. Խ. Սարգսյան, История Армении Мовсеса Хоренаци, Ереван, 1984, с. 40-45.



է սեպագիր աղբյուրի՝ մ.թ.ա. VII դարի բարեկրոնյան ժամանակագրությունն է մ.թ.ա. V դարի Հուլյն պատմիչ Հերոդոտի՝ մ.թ.ա. 612 թվականին Ասորեստանյան տերությունը ջախջախելու և Նինվին գրավելու մասին տեղեկությունների հետ: Մովսես Խորենացու տվյալները, համադրվելով այդ տեղեկությունների հետ, հնարավորություն են ընձևեռում ճշգրտորեն որոշելու առաջին համահայկական պետություն կազմավորման ժամանակը:

Դեռ ավելին. «Հայոց պատմությունը» հանգամանորեն նկարագրում է, թե ինչպես է այդ պետությունը, իր կազմավորումից կարճ ժամանակ անց, համառ պայքարի մեջ մտնում իր նախկին դաշնակից Մարաստանի դեմ: Հայոց Տրդրան պաքան, Երվանդ Սակավակյացի սրգին, դաշինք կնքելով իր մտերիմ բարեկամ Պարսից Կյուրոս թագավորի հետ, ջախջախում է Մարաց տերությունը: Միևնույն դեպքերի մասին Հաղորդում է նաև մ.թ.ա. V-IV դարերի ականավոր Հուլյն պատմիչ Քսենոփոնը իր «Կյուրոսագրիա» աշխատությունը<sup>4</sup>: Նա պատմում է Հայոց թագավորության մասին և, ճշիշատակելով թագավորի անունը, խոսում է Տրդրան արքայազնի մասին, որը և հետագայում թագավոր է հռչակվում: Նկարագրում է նաև երկրի հարստություններն ու ռազմական հզորությունը: Տրդրանը այստեղ ևս հանդես է գալիս որպես Կյուրոսի ընկեր և դաշնակից, մասնակից վերջինիս այն արշավանքներին, որոնց հետևանքով կործանված Մարաց տերության անդամ ստեղծվից առավել հզոր ու վիթխարի Պարսից Աքեմենյան տերությունը: Մովսես Խորենացու և Քսենոփոնի տարբերությունն այն է, որ «Կյուրոսագրիայում» Տրդրանն է Կյուրոսի օգնականը, իսկ «Հայոց պատմությունում», ընդհակառակը, Կյուրոսն է Տրդրանի օգնականը: Այսպիսի տարաձայնությունը երկու աղբյուրների միջև լիովին պարզ է ու հասկանալի. ազգային ավանդություններում, բնակա-նարար, առաջին պլան են մղվում սեփական ազգային հերոսները:

2. Երկրի ներքին կյանք: Այստեղ մենք ցանկանում ենք ընդգծել հետևյալը. «Հայոց պատմության» տեղեկությունների մեծ մասը վերաբերում է Հայ ժողովրդի պատմության առավել մոլթ, այլ աղբյուրներով չլուսաբանվող բնագավառներին ու ժամանակաշրջաններին: Օտար, հատկապես անտիկ աղբյուրները կարծես արտաքուստ են լույս ափում Հայաստանի պատմության վրա, այն էլ դեպքից դեպք, երբ խաչածելվում են նրա ու հարևան պետությունների ուլի-ները: Տեղեկությունները վերաբերում են գլխավորապես ռազմական բախումներին, դիվանագիտական հարաբերություններին և այլն: Մովսես Խորենացին կարծես ներքուստ է լուսաբանում Հայաստանի պատմությունը: Ամենևին մոռացություն չէ շատրվով պատերազմներն ու դիվանագիտական առնչությունները՝ հեղինակն ուշադրություն սևեռել է երկրի ներքին՝ քաղաքական, հոգևոր, մշակութային և նույնիսկ, այսօրվա ընկալմամբ, սոցիալ-տնտեսական կյանքի վրա, որոնց մասին արտաքին աղբյուրները փաստորեն լուսում են: Բերենք օրինակներ:

<sup>4</sup> Թեև այդ ստեղծագործությունը ոչ թե գուտ պատմական երկ է, այլ յուրօրինակ պատմական վեպ, բայց նախ՝ Կյուրոսի պայքարը Մարաստանի դեմ նկարագրում է նաև Հերոդոտը, ապա՝ պատմությունն ապացուցել է, որ Հայաստանին վերաբերող մասերը հավաստի տեղեկություններ են պարունակում: Դրանք Քսենոփոնը կարող էր ստանալ մ.թ.ա. 401թ. Հայաստանի սարածքով նահանջելու ժամանակ, որի նկարագրությունը տրված է նրա մյուս Հայտնի աշխատությունում՝ «Անաբասիսում»:

Մովսես Խորենացու պատմված Հայոց Վաղարշակ արքայի մասին վիթխարի նյութ է պարունակում Հին Հայկական պետության ներքին կառուցվածքի, վարչական համակարգի, ռազմական ուժերի կառուցվածքի, երկրի կառավարման մեջ վճռական դեր խաղացող արքունիքի և այլնի վերաբերյալ: Վաղարշակ արքայի կերպարը հավաքական է. նրա գործունեության մեջ կենտրոնացված են մի շարք Հայ թագավորները բարձրը: Նրանցից յուրաքանչյուրը որոշակի բաժին ունի այն փոփոխությունների, բարեփոխումների ու նորամուծությունների մեջ, որոնք «Հայոց պատմությունում» վերապրվում են մեկ անձնավորության:

Մովսես Խորենացու պատմվածի մեջ առանձնապես արժեքավոր են Հայաստանի ավաստատիրական-նախարարական հասարակարգը, ավելի ճիշտ, նրա կազմավորման պրոցեսն ուղղափոխ տեղեկությունները: Հստակ պատկերացում է տրվում այն մասին, թե ինչպես էին ծագում խոշոր նախարարությունները՝ ավաստատիրական տիրույթները, որոնք նախկինում կառավարվելով արքունի պաշտոնյաների կողմից, այնուհետև վերածվում էին ժառանգական հողային սեփականություն, որի վրա նստած նախարարները սկսում էին իրենց արքայիկներ գգալ, ինչպե՛ս էին ժառանգական դառնում պետական ու արքունի պաշտոնները և այլն: «Հայոց պատմությունը» բազում տվյալներ է պարունակում Հայաստանի տարածքում նախարարական տիրույթների տեղադրությունը, թագավորի և նախարարների մերթ՝ խաղաղ, մերթ՝ ավաստատիրական հասարակության զարգացման համար սնվող ապահովելի՝ արյունահեղ բախումների ու քաղաքացիական կոլիզիերի վերածվող փոխհարաբերությունները, քրմություն, ապա և քրիստոնեական եկեղեցու ու հուգեոթականության դիրքորոշումն այդ վայրկյաններում և նրանցից ավարզաբանելու համար:

Հատուկ կարևորություն ունեն թագավորները և ավագանու մասնատիրական տնտեսությունների և դրանցում աշխատող մշակները՝ հողագործ ստրուկների մասին տեղեկությունները: Այդ ավայրերի հիման վրա է վերականգնվում Հին Հայկական հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման պատկերը: Դրանք բնավազում են երկրի տնտեսական կյանքում այն կացութաձևը, որը հակազդվում էր համայնքային, պլուրացիական կացութաձևին: Բուռն կերպով զարգացող մասնատիրական տնտեսությունները (որոնցում աշխատում էին սարուկները, բայց Մովսես Խորենացու երբեմն մինչև 500 հասնող, խմբեր) ճնշում էին զործադրում պլուրացիական համայնքների վրա, ստիպելով գեղջի վերջիններս վաղնջական հողերը: Հաղորդվում է և թագավորների այս կապակցությամբ ձեռնարկած միջոցառումները՝ հողային բարեփոխումների փորձի մասին, որն իրականացվում էր տիրույթների հստակ սահմանազեման միջոցով (այս մասին արդեն խոսվից վերը):

Մովսես Խորենացու տեղեկությունները մեծապես լրացնում են նվաճված երկրներից մարդկանց հոծ զանգվածների Հայաստան տեղափոխման մասին անտիկ հեղինակների տվյալները: Տեղափոխումները ձեռնարկում էին Հայոց արքաները՝ մասնատիրական տնտեսությունները ստրկական ուժով ապահովելու, քաղաքները բնակչություն ավելացնելու և նոր քաղաքներ հիմնադրելու նպատակով:

Ոչ պակաս կարևոր են Հայաստանի քաղաքները վերաբերյալ տվյալները, բանի որ վաղ միջնադարի մյուս Հայ պատմիչները այդ մասին գրեթե ոչինչ չեն հաղորդում. քաղաքային կյանքը մեղանում սկսեց մարել արդեն IV դարում, և



նոր վերելքը սկսվեց միայն կես հազարամյակ անց, IX դարից: Բացառություն է կազմում Մովսես Խորենացին, որի շնորհիվ մենք ոչ միայն տեղեկանում ենք Հին Հայաստանում բազմաթիվ քաղաքների գոյության մասին, այլև Հնարավորություն ենք ստանում պատկերացում կազմելու դրանց ներքին կառուցվածքի, մնացյալ, գյուղական բնակչության նկատմամբ քաղաքացիների սոցիալական դերքի մասին: Նա հաղորդում է, օրինակ, Վաղարշակ արքայի կարգադրություն մասին, որի համաձայն գյուղացիները պետք է պատվին քաղաքացիներին որպես իշխանների: Բաղաքի և գյուղի նման հակադրումը բնորոշ էր հելլենիստական դարաշրջանին, որին V դարում Հայաստանում քաջատեղյակ էր միայն Մովսես Խորենացին:

3. Պատմության պարբերացում և ժամանակագրություն: Մովսես Խորենացին, սկսելով ժուրվրդի ծագումից, շարադրում է Հայաստանի պատմությունը մինչև Հայ Արշակունիների Հարատվության անկման ժամանակաշրջան: Այդ վիժխարի պատմաչրջանը նա բաժանում է երեք դարաշրջանի, յուրաքանչյուրին հատկացնելով Պատմության գրքերից մեկը: Չափազանց կարևոր է այն հարցի պարզաբանումը, թե ինչ սկզբունքի համաձայն է նա առանձնացրել այդ դարաշրջանները, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս է պարբերացրել Հին Հայաստանի պատմությունը: Այդ առանձնապես կարևոր է, քանի որ, ինչպես պարզվում է, նրա առաջարկած պարբերացումն է ընկած այժմյան դիտման պարբերացման հիմքում: Իրոք, եթե աշխատության սկիզբ ու վերջ են դրսևում ժողովրդի ծագումը և նրա Հին պետականության անկումը, ապա որպես առաջին և երկրորդ գրքերի սահմանագիծ է ծառայում Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանը: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Մովսես Խորենացին Հայաստանի պատմությունը դիտարկում էր ոչ թե մեկուսացված, այլ համաշխարհային պատմության ետնախորքի վրա, որպես նրա մի մասը: Ուստի Համաշխարհային պատմության կարևոր ուղեկիցը՝ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները, որոնք սկիզբ դրեցին հելլենիզմի՝ մարդկության արևմտյան և արևելյան հատվածների միջև ազդեցության աննախագեղ արդյունավետացման, նրանց անստեական ու մշակութային փոխարդասավորման, մարդկության զարգացման ընթացքի նկատելի արագացման դարաշրջանին, դարակազմիկ նշանակություն ունեին Մովսես Խորենացու աչքում նաև Հայաստանի պատմական զարգացման տեսանկյունից: Երկրորդ և երրորդ գրքերի սահմանաբաժան է ծառայում Տրդատ III Մեծի օրոք, IV դարի սկզբում Հայոց դարձը՝ քրիստոնեության ընդունումը: Առաջին Հայացքից կարող է թվալ, թե այդ իրադարձությունը, թեև կարևոր, այնուամենայնիվ տեղական նշանակություն ունի: Սակայն IV դարի սկիզբը նաև ամբողջ Միջերկրածովյան շրջանում քրիստոնեության հաղթանակների ամենակաշրջան էր, փաստորեն Համաշխարհային կրոնի վերածվելու փուլ: Ավելին, մի կրոնից մյուսին անցնելու գաղափարախոսական վերակառուցման ներքո թաքնված էր անցումը նոր սոցիալ-անտեսական հասարակարգի՝ ավատատիրությանը, որը Հայաստանում նշանավորվեց թագավորական իշխանության և ավատատիրականացող նախարարության միջև ծագված պայքարի սկզբնավորումով: Ուշադիր բնութագրումը կասկած չի թողնում, որ Պատմության երկրորդ և երրորդ գրքերի միջև փաստական սահմանագիծ է ծառայում հենց այդ հակամարտության սկիզբը:

Անդրադառնալով «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգին: «Չկա ճշմարիտ պատմություն առանց ժամանակագրության», - գրում է

Մովսես Խորենացին՝ այս առումով էականորեն տարբերվելով վաղ միջնադարի մնացած Հայ պատմիչներից, որոնք զանազան չափով, բայց բավականին անհոգ են եղել ժամանակագրության հարցում:

Իր ժամանակագրության համար Պատմահայրը ելակետ է ընտրել մ.թ.ա. 312 թվականը՝ Սելևկոս I Նիկատորի գահ բարձրանալու և Հին աշխարհում մեծ տարածում գտած սելևկյան թվականության սկզբնատարին: Ծիշտ է, այդ թվականը նա համարում է նաև Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթիվ (Ալեքսանդր Մակեդոնացին իրականում վախճանվել է մ.թ.ա. 323 թվականին), սակայն այդ՝ Արևելքում արմատացած ավանդության ազդեցության հետևանք էր: Այսպես, ասորական ժամանակագրության մեջ, սելևկյան թվականի սկզբնատարին՝ մ.թ.ա. 312/311 թվականը, նշվում է որպես «Ալեքսանդր Մակեդոնացու տարի»: Իր ժամանակագրության համար Պատմահայրը հասցնում է մինչև մ.թ.ա. 439/440 թվականը՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվան տարին:

Ժամանակագրական համակարգը Պատմությունում ներկայացված է ոչ թե աղյուսակների, այլ ամբողջ աշխատությունում սրված տարեթվային տվյալների ձևով, որոնք նշում են այս կամ այն արքայի կառավարման տարեքանակը և նրա գահ բարձրանալու թվականի Հարաբերությունը Հարևան երկրի թագավորի կառավարման տարեթվի հետ: Այդ տվյալներն այնքան սպառնիչ են և համակարգված, որ Հնարավորություն են ընձևում վերականգնել ժամանակագրական այն աղյուսակը, որը, անշուշտ, Պատմահոր ձեռքի տակ է եղել աշխատության շարադրման ժամանակ: Այն բաղկացած է երեք անընդմեջ ժամանակագրական շարքերից՝ Սելևկյան-Արշակունի-Սասանյան արքաների (ամենաերկար շարք), Հայոց թագավորների, Հայոց կաթողիկոսների և չորրորդ, ըստ անհրաժեշտության ներկայացված, հռոմեական կայսրերի շարքից:

«Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը կազմում է երկրորդ և երրորդ գրքերի (առաջին գրքում ժամանակի հաշվարկը և տարբեր երկրների պատմության համաժամանակացումը կատարվում է ոչ թե տարեթվերով, այլ տիրակալների սերունդներով) առանցքը և այն Հենքը, որը Հիմք է ծառայել շարադրանքի համար: Ուստի Պատմության և նրա ժամանակագրության ընդթաղանները մեծապես նման և նույնիսկ նույնական են: Ժամանակագրական համակարգը ներքուստ նույնքան անթերի, ներդաշնակ և սլացիկ է, որքան և «Հայոց պատմությունը»: Այն ևս կառուցված է աղյուսակների տվյալների մշակման նույն սկզբունքներով, որոնք արդեն ընդթաղանի են «Հայոց պատմության» կապտակցությամբ: Ուստի այդ, իր հիմքում ճիշտ և բազում մանրամասնություններում հավաստի համակարգը Պատմության նման մի շարք (երբեմն՝ էական) չեղումներ ունի ներկայումս ընդունված գիտական ժամանակագրությունից: Դրանցից զվառվորը հռոմեական կայսրերի շարքի տեղաշարժն է Իրանի Արշակունի և Սասանյան արքաների շարքի Հարաբերումը, որի հետևանքով մի ընդարձակ հատվածում ծագում է ժամանակավրիպումների (անաբրոնիզմների) ամբողջ շարք, կարելի է ասել ենթահամակարգ: Պատմականորեն ժամանակամերձ տիրակալներն այստեղ երբեմն հեռացված են իրարից, իսկ զանազան ժամանակաշրջանների գործիչները մերթ ընդ մերթ հանդես են գալիս որպես ժամանակակիցներ: Այդ հենքի վրա ստեղծված պատմությունը դեպքից դեպք արհեստական պատմական



զբվագների ի Հայոց գայու Հնարավորություն է ընձևուում, որոնք կարելի է կոչել «ժամանակագրական Համակարգի արտադրանք»:

Մովսես Խորենացու աշխատության քննադատության զգալի մասը, բնականորեն, վերաբերում է Հենց այդ շեղումներին, որոնց ուսճացումը որոշ հետազոտողների կողմից Հանդեցրել է ամբողջ Համակարգի վարկաբեկմանը: Այնինչ Պատմություն ժամանակագրությունը, իր բոլոր թերություններով Հանդերձ, Հայ միջնադարյան պատմագրության խոշորագույն նվաճումներից է: Հայ իրականության մեջ առաջին անգամ Պատմահայրը մի քանի զուգահեռ շարքերի վրա Հիմնված Համաժամանակիցման Համակարգ է մշակել որոշակի ժամանակաշրջանի համար: Այդ փորձը Հոկայական նշանակություն է ունեցել Հայ պատմիչների Հաջորդ սերունդների համար: Բացի այդ, Մովսես Խորենացու ժամանակագրության մի շարք Հատվածների Հիմքի վրա է կառուցված Հայ ժողովրդի պատմության գիտական ժամանակագրությունը:

4. Կրոն, բանահայտություն, պատմագրություն: Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ, Տորք, Աստղիկ անուններն ու դրանց հետ կապված առասպելներն ու գրույցները Հայերի Հեթանոսական կրոնի և Հավատալիքների Հնագույն շերտերի այն նմուշներն են, որոնք ցույց են տալիս, թե մինչև իրանական դիցանուններ կրող Արամագրից, Վահագնից, Անահիտից, Միհրից և ուրիշներից կազմված Հայ Հեթանոսական դիցարանը, Հայերն ունեին իրենց նախնական, ավելի Հին դիցարանը: Այն Հայերի Հնագույն և ինքնատիպ Հոգևոր մշակույթի, որը սերտ առնչություն ուներ Հինարևելյան՝ ուրարտական, իսթական, ասորեստանյան մշակույթների հետ, արդատիքներից էր: Եթե չլինեի Մովսես Խորենացին, մենք ոչինչ չէինք իմանա այդ մշակույթի մասին: Երկրորդ դիցարանը ևս, որը պատմական ճակատագրի թեկուզրանքով փոխարինեց առաջինին, մեր առջև զգալի չափով ուրվագծվում է դարձյալ Պատմահոր Հաղորդումների շնորհիվ: Նրա միջոցով է Հայտնի դառնում, որ իրանական անուններով աստվածները Հայաստանում Հանդես էին գալիս վերափոխված կերպարանքով և ձևք էին բերել տեղական, ազգային Հոտականիչներ: Մեղանում, օրինակ, ի տարբերություն իրանական միտանական Ահուրա-Մադայի, պաշտում էին չորս տարբեր Արամագրուների, բացակայում էր իրանական կրոնին բնորոշ երկվությունը՝ բարու և չարի միջև Հավերժական պայքարի գաղափարով՝ վերջինիս մարմնացում Անգհր-Մանյու-ԱՀրիմանի հետ միասին: Դարձյալ Մովսես Խորենացին է Հաղորդում այն փոփոխությունների մասին, որ կրեց Հայկական դիցարանը Հելլենիստական դարաշրջանում, երբ Հայոց աստվածների հետ կարծես սերտաճեցին Հուսական աստվածներ Ջևար, Ապոլոնը, Արտեմիսը, Հերակլը և ուրիշներ: Հենց նա է Հաղորդում Հայաստանում յուրօրինակ «քաղաքական կրոնի» գոյությունը, որը լայն տարածում էր ստացել Հելլենիստական աշխարհում, այն է՝ թագավորների և թագավորական Հարստության աստվածացման մասին:

Ոչ պակաս, և թերևս ավելի մեծ, կարևորություն են ներկայացնում Մովսես Խորենացու շնորհիվ պահպանված ժողովրդական բանավոր ստեղծագործության այն նմուշները, որոնք ցույց են տալիս, թե մինչև «Մամա ծաեր» ժողովրդական վեպը Հայաստանում գոյություն ունեին ուրիշ, ավելի Հին վերական շարքեր: Պատմահայրը դրանցից օրինակներ է բերում այնպես, ինչպես որ լսել է

դուստներնրից: Ուստի Հարկ է ընդգծել, որ այդ ստեղծագործությունները՝ Վահագնի ծնունդի, Արտաշեսի ու Մաթենիի, Արամագրի մասին երգերը և ուրիշներ, երևան են Հանում ոչ միայն ժողովրդական բանավոր ստեղծագործության ձևն ու բովանդակությունը, այլև, որ առանձնապես կարևոր է, մինչդրական ժամանակաշրջանի, այսինքն՝ մինչև մ. թ. V դարի Հայերեն խոսակցական լեզվի նմուշներ են ներկայացնում:

Բանավոր ստեղծագործությունը, ժողովրդական Հիշգրությունը թեև խիստ կարևոր, բայց այնուամենայնիվ միակ ուղին չէին «Հայոց պատմության» Հեղինակին խոր Հնագրի մասին տեղեկություններ Հաղորդելու համար: «Հայոց պատմությունը» բախվածությանի ավյալներ է պարունակում նաև տեղական գրավոր ուղիները, առաջին Հերթին՝ պատմական մտքի զարգացման շղթան վերականգնելու համար: Պատմական երկերը շարադրվում էին օտար լեզուներով, բայց տեղական Հիմքի վրա և այդպեսով Հայկական էին: Այդ շղթայի մի շարք օղակներ՝ «Մեհենական պատմությունները» - «Հյուստամն պիտոյիցը» - Մար Աբաս Կասինայի աշխատությունը, ստեղծվել էին Արշակունիների Հարստության կառավարման (մ. թ. I-IV դարեր) ընթացքում: Եթե սրանց ավերակները անտիկ Հեղինակների մեջ Հայտնի ավյալները այն մասին, որ Հայաստանի պատմության վերաբերյալ աշխատություններ էին ստեղծվել տեղում դեռևս Արտաշեսյանների Հարստության դարաշրջանում՝ Տիգրան II-ի (մ.թ.ա. 95-55) օրոք Մետրաղոտու Սկեփիսպու և Ամիրկիրատես Աթենացու, իսկ Արտավազդ I-ի (մ.թ.ա. 55-35) օրոք Հենց այդ արքայի կողմից, ապա այդ շղթան ոչ միայն էսպանորին կերկարի, այլև կճյուղավորվի երկու գուգահեռ գծերի՝ արբունի և մեհենական պատմագրությունների: Շղթան ձգվում է Հելլենիստական դարաշրջանից մինչև վաղ միջնադար և ակնհայտորեն Հավանդում է Համարվելու V դարի Հայ պատմագրության նախորդը ու նրա բուն ծագման գործոններից մեկը:

Մովսես Խորենացու ավյալները վեր են Հանում Հայաստանի Հեթանոսական տաճարների դիրք գրավոր մշակույթի ստեղծման և պահպանման գործում: Այդ դերը Համարելի է, մի կողմից, նախորդ Հինարևելյան, մյուս կողմից՝ հետագա բրիտանոսական տաճարների՝ գրավոր մշակույթի կրողների ու կենտրոնների գործունեությունը հետ: Այսպիսով բացահայտվում է մշակութային ուղանդների Հաղորդականությունը Առաջավոր Ասիայի տարածաշրջանում բազում Հագա-բամյակների ընթացքում:

5. Տեղեկություններ այլ երկրների մասին: «Հայոց պատմությունում» պահպանված մշակութային արժեքների քննությունը թերի կլինեի առանց Հիշատակելու, թե ինչ է Հաղորդում աշխատությունը Հարևան և Հեռավոր երկրների պատմության մասին: Այդ ամենի թվարկումն այստեղ անհնարին է, ուստի և մենք կտահմանափակվենք Հարևան Իրանի մասին եղած բազմաթիվ տեղեկություններից ընտրված օրինակներով:

Մովսես Խորենացու Հաղորդած պարթևական Արշակունի արքաների ցանկը Հատկապես կարևոր է, քանի որ անտիկ և ասորական պատմական ավանդույթներում պարթևական արքաների ցանկին ու ժամանակագրությունն ընդհանրապես բացակայում են: Իրանական ավանդույթն արտացոլող ցանկեր են պահպանվել միայն ուշ շրջանի արաբական Հելլենիստիկ և Ֆիրդուսու երկերում, այն էլ խիստ աղճատված տեսքով՝ թե՛ անունների կազմի, թե՛ ժամանակագրության



ստումով: Այսպիսով, այդ հարստության արքաների շարքի և ժամանակագրության մասին գիտությունը պատկերացում է կազմում հունա-հռոմեական հեղինակները պատահական տեղեկությունների և դրամատիկական տվյալների հիման վրա: Մովսես Խորենացու ցանկը թեև վարձյալ որոշակիորեն խաթարված է անուանների կազմի առումով, այնուամենայնիվ շահեկանորեն առանձնանում է նրանով, որ նշված տարբերակները զարմանալիորեն համաձայնում են հունահռոմեական հեղինակների և դրամների տվյալների հետ (այն տարբերությամբ, որ Մովսես Խորենացու մոտ կարճատև գահակալությունները գումարված են երկարատևներին): Ընդ որում, եթե այդ հարստության կառավարման ողջ ժամանակաշրջանը բացարձակ ժամանակագրության մեջ տեղադրելիս Մովսես Խորենացին հենվել է անտիկ պատմագրության տվյալների վրա, ապա, այսուհանդերձ, որոշ հստակ նշաններից դատելով, Պատմաճայրը ծանոթ է եղել նաև անտիկ հեղինակների կողմից անտեղյակ «Արշակունյաց թվականության» հետ: Այդ թվականությունը, որի սկզբնատարին մ.թ.ա. 248/247 թվականն էր, կիրառում էին իրենք՝ պարթև Արշակունիները:

Այս ամենը ցույց է տալիս, որ Սասանյան Իրանում կորսված պարթև Արշակունյաց ավանդույթը (գիտություն մեջ դա կոչվում է «Արշակունյաց բացուտ») շարունակվում էր պահպանվել Հայաստանում և հանդես է գալիս «Հայոց պատմության» մեջ՝ բարձրացնելով նրա հեղինակությունը, որպես պատմական աղբյուրի:

«Հայոց պատմությունը» էլ ավելի կարևոր տվյալներ է պարունակում Իրանի պատմության Սասանյան ժամանակաշրջանի վերաբերյալ: Հատկապես ուշագրավ են իրանական բանահյուսության այն տվյալները, որոնք ավելի վաղ են հավաքվել ու զրի առնվել Մովսես Խորենացու կողմից, քան Իրանում, հետևաբար և առավել հին տեսք ունեն: Պատմաճայրը Ռոստոմ Ջալին (Սազճիկ) բազում դարեր ավելի վաղ է հիշատակում, քան Ֆիրդուսին նրան իր «Շահնամի» հերոս կրթածներ: Նույնպիսին է իրավիճակը նաև իրանական բանահյուսական մյուս կերպարների՝ Հրուզնի (Ֆերիդուն), Բյուրասպի Աժդահակի հարցում: Մովսես Խորենացին մեզ է հասցրել նաև վերջինիս ուսուցիչական դադարները. «Կամենում էր ցույց տալ, որ ամենը պետք է ընդհանուր կենցաղ ունենան. նա ասում էր, թե ոչ որ չպետք է առանձին (սեփական) բան ունենա, այլ ամեն ինչ ընդհանուր պետք է լինի: Նրա ամեն մի խոսքը, ամեն մի գործը հայրանի էր. ոչ մի բան ծածուկ չէր մտածում, այլ սրտի բոլոր դադարների խորհուրդները լեզվովն արտահայտում էր. և սահմանում էր, որ բարեկամները նրա մոտ ելուժուտ անեն ինչպես հայտում էր. և սահմանում էր, որ բարեկամները նրա մոտ ելուժուտ անեն ինչպես արդիական են այստեղ շարադրված հնադույն և հավերժ նոր դրույթները, և որքան գլատա է Պատմահոր՝ դրանց տված գնահատականը:

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում Սասանյան հարստության հիմնադիր Արասաչիր Պապականի գրույցի՝ «Հայոց պատմությունում» պահպանված տարրերը:

Իրանական աշխարհը, սակայն, բոլորովին էլ միակ ոչ-հայկական ոլորտը չէ, որի մասին տեղեկություններ է հազարրում Մովսես Խորենացին: Խիստ կարևոր են նաև Հարևան Վրաստանի ու Ադվանքի, ինչպես և Ասորիքի, Հյուսիսային Կովկասի, Միջին Ասիայի, Փոքր Ասիայի պատմությունը վերաբերող տվյալները:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև նրա տեղեկությունները Հին Հռոմի, Սելևկյան տերության, Հին Հունաստանի, Պաղեստինի, Ուրարտուի, Ասորեստանի, Բաբելոնի մասին:

Ամփոփելով այն հարցի պատասխանը, թե ինչ է տալիս պատմական գիտությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», կարելի է ասել, որ այն պահպանել և մեզ է հասցրել մինչքրիստոնեական հայկական քաղաքակրթությունը և Հին աշխարհի մյուս քաղաքակրթությունների հետ նրա կապերը հատկանշող բազում տվյալներ:

«Հայոց պատմությունը» նաև աչքի ընկնող գրական հուշարձան է, հայ միջնադարյան արձակի լավագույն նմուշներից մեկը: Նրա լեզուն Մղաբի ոսկեղենիկ հայերենն է՝ սակավ չափով ենթարկված հունարան դարձրի ազդեցությանը: Մովսես Խորենացու լեզուն աչքի է ընկնում բազմադասություններ և հակադիր թվացող հատկանիշներով, որոնք արտահայտվում են հարկ եղած տեղերում անհրաժեշտ և պատշաճ չափով: Այդ լեզուն հարուստ ու պերճ է, միաժամանակ՝ դուսպ: Երբեմն վերամբարձ է, բայց միշտ՝ ճշգրիտ, հանդիսավոր է ու պարզ, կոթողային է ու ճկուն՝ կախված հանդամանքներից ու նկարագրություններից առարկայից, և կատարելապես արտահայտում է թե՛ առարկայականը և թե՛ վերացականը:

Մովսես Խորենացու նկարագրությունները ցայտուն են ու ընդգրկուն, ներկա գտնվելու տպավորություն են ստեղծում, թեև աչքի են ընկնում իրենց սեղմություններ:

Պետական գործիչների նրա կերտած կերպարները զարմանալիորեն կենդանի են և հոգեբանորեն իրական: Այն աստիճան, որ տպավորություն են ստեղծում, թե նրանք մեր ժամանակակիցներն են: Մեջբերենք մի հատված, որտեղ բնութագրվում է Երվանդ արքան: Մի կողմից, նա բռնակալ է, օրինական գահաժառանգի մահն է տենչում, այնպիսի «չար աչք» ունի, որ նրա հայացքից փչվում են որձաբարերը: Մյուս կողմից, նա հմուտ կառավարիչ է, մեծ շինարար, որը նոր մայրաքաղաք և կուռքերի քաղաք է կառուցել, հիմնադրել է Մենդոց անասուր և այլն: Մի խոսքով, Երվանդը բարդ խառնվածք ունեցող անձնավորություն է: Տեսնենք, ինչպես է նա վարվում օրհասական իրադրությունում, երբ օրինական գահաժառանգը օտար զորքերով Հայաստան է ներխուժել, ու մահու և կենաց ճակատամարտ է սպասվում: «Երվանդն ավելի առաստացնում էր պարզեցնելը և ամեն մեկին բաժանում էր գանձերը և որքան շատ էր տալիս, այնքան ավելի ատելի էր դառնում, որովհետև բոլորն էլ զիտեին, թե առաստածեությունից չէ, որ տալիս է, այլ երկյուղից վստահում է: Եվ այնքան սիրելի չէր դարձնում նրանց, որոնց շատ էր տալիս, որքան թշնամի էր դարձնում նրանց, որոնց այնքան առատ չէր տալիս» (II, 45):

«Հայոց պատմության» առանձին դրվագներ զոդորիկ նովիներ են հիշեցնում: Այդպիսի օրինակ կարող է ծառայել Տրդատ Բագրատունու պատմությունը: Սա, տեղի լինելով հանդերձ, ամուսնացել էր գեղեցկուհի արքայադուստր Երանյակի հետ ու, չհանդուրժելով կնոջ քամահարական վերաբերմունքը, սպստամբել էր Տիրան արքայի դեմ:

«Հայոց պատմության» կառուցվածքն առանց չափազանցության կարելի է կատարյալ անվանել: Այս պնդումը հիմնված է նրա տարրեր հատվածների, գլուխների, պարբերացման զարմանահրաշ համամասնությունների, դրանց ներդաշնակ,



Հաջորդականությունն ու Հակադրությունը գուրակեցող, Հերթապաշտության վրա: Աշխատությունն ասարեք մտախնայ, ինչպես նաև ամբողջ ստեղծագործությունը, կատարյալ ավարտությունը դրոշմ են կրում: Անկասկած է, որ սեփական պատմահայեցողությունից գաս, Մովսես Խորենացին ղեկավարվել է նաև գրական ստեղծագործության գեղագիտական չափանիշներով: Այս երկու Հայեցակերպերի գուրակչում էլ ստեղծագործությանը Հաղորդել է այն անկերկնելի ինքնատիպությունն ու Համապարփակությունը, որով աչքի է ընկնում «Հայոց պատմությունը»:

Նրան վիճակված էր դառնալ նաև այն ստեղծագործությունը, որը երկար ու ձիգ դարերի ընթացքում կատարելատիպ էր դառնալու ոչ միայն պատմագրական, այլև մասնաշաղկապ դարձող գրական ժանրերի երկերի Համար: Այս երևույթը Հիմնված է երկու կարևոր Հանգամանքների վրա: Առաջինը՝ Մովսես Խորենացու ստեղծագործության մեջ Հեղինակն ամբողջ և մասնատրուկության ազդեցության (այդ բառի ամենալայն իմաստով) կուտակումն էր, երկրորդը՝ նոր, զուտ Հայեցի մտածողության ստեղծումը: Իրենց Համաձուլությունը դրանք կազմեցին այն անսպառ աղբյուրը, որի լույսը ճառագում էր Հայոց միջնադարում և Հասել է մինչև մեր օրերը:

«Հայոց պատմությունը» մի կողմից նրա Հեղինակի Հանճարի, մյուս կողմից՝ վեհ քաղաքացիականության արգասիքն է: Քաղաքացու, Հայրենասերի կերպարը ի Հայտ է գալիս ամեն մի էջում: Հեղինակի ապրումները բացահայտորեն ողբերգական երանգավորում ունեն: Մովսես Խորենացու սղբերգության սկունքը նրա քաղաքական Համակրանքների և իղձերի երկատվածությունն է: Ժամանակի Հայ Հասարակության երկու ղեկավար ուժերը՝ նախարարությունը՝ Պատմահոր աչքում ժողովրդի առաջընթացի մղիչ ուժը, և թագավորական իշխանությունը՝ օտարների Հարձակման սարսուռալիքի պայմաններում երկիրը Համախմբող ու միավորողը, իրենց վեհ առաքելությունը կատարելու փոխարեն, օրհասական Հակամարտության մեջ էին գտնվում: Այս ամենը խոր վիշտ էր պատճառում Մովսես Խորենացուն, քանի որ այդ եղբայրասպան բախումները գյուրացնում էին Հայաստանը շրջապատող երկու Հզոր ոսպմաքաղաքական ուժերի՝ Իրանի և Հռոմի (Բյուզանդիայի) քայքայիչ գործունեությունը և վերջիվերջո Հանգեցրին Հայրենի երկրի բաժանմանն ու քաղաքական անկախության կորստին: Մովսես Խորենացու ստեղծագործությունը պատմական գաս ու նախազուգուցում է նաև մեզ Համար:

Այն նպատակը, որ իր առջև «Հայոց պատմությունում» դրել է Մովսես Խորենացին, լիովին իրականացել է: Ինչպես որ Պատմահայրն էր տքնաշանտրեն աշխատել գծվարին խնդիրը՝ «Հայոց պատմության» ստեղծման Հարցը լուծելու Համար, այնպես էլ նրա Պատմությունն արտրման օրվանից սկսած դարեր շարունակ «բանել է» մեծագույն արդյունավետությունը: Այն Հայ Հասարակության բազում սերունդներ է դառնալու, մասնակցել է Հայ գործիչների ու մտավորականության գաղափարական մտքի կազմավորմանը, նաև այժմ գծվարին պատմական ուղիով ընթացող մեր ժողովրդին վարակում է անձնագոհության, խիզախության, իմաստության և մարդկային բազում այլ սուրբինությունների օրինակներով:

Նոր ժամանակներում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» վարձել է Համաշխարհային գիտության Հետաքրքրության տառակա: Բացի Հայ գիտնականներից այն ուսումնասիրել են անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, ռուս,

խոսալացի և բաղամթիվ այլ Հետազոտողներ: «Հայոց պատմությունը» թարգմանվել է տասնյակ օտար լեզուներով: Այդքան լայն տարածման և Հետաքրքրության պատճառներից մեկը, անշուշտ, այն Հանգամանքն է, որ Պատմահայրը իր ժողովրդի պատմությունը գիտարկել է Համաշխարհային պատմության շրջանակներում: Նրա տեսագրչույթն է գտնվել ողջ քաղաքակիրթ աշխարհը, երկրագնդի ողջ բնակեցված տարածքը Բրիտանիայից մինչև Չինաստան:

Բարձունքում թևածող արծաթի սրատես Հայացքով նա ընդգրկում էր ողջ երկիրը և Հենց այդ էլ Հնարավորություն էր ընձեռում նրան խորապես ըմբռնելու սեփական ժողովրդի տեղն ու դերը Համաշխարհային պատմության մեջ, սալու նրա անմահ ու Հպարտ բնութագրերը. «Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջություն շատ գործեր կան գործված, գրելու և Հիշատակելու արժանի» (1, 3):

Այդ գործերից մեկն էլ Հիրավի «Հայոց պատմության» ստեղծումն էր:



**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»**

**ԵՎ ՄԵՊԼՂԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ<sup>1</sup>**

(Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը)<sup>1</sup>

Մ. թ. ա. IX-VII դդ. Հայկական լեռնաշխարհում ծաղկած Ուրարտու պետությունը, ինչպես և Հինարևելյան շատ ուրիշ պետություններ ու Հասարակություններ (Շուսեր, Էլամ, Խաթի, Միտանի և այլն) անհայտ էին մնում գեառությունը մինչև XIX դարի երկրորդ կեսը և XX դարը, երբ հնագետների ջանքերով Հայտնաբերվեց նրանց նյութական մշակույթը, սալա և վերձանվեցին նրանց թողած սեպագրական հուշարձանները: Մովսես Խորենացին ևս, Հին և միջնադարյան ուրիշ Հեղինակներին նման, ոչինչ չի լմացել այդ երկրներին, մասնավորապես՝ Ուրարտուի, գոյություն մասին:

Այսուհանդերձ, նրա «Հայոց պատմություն» Առաջին գրքի շարադրանքում առկա են մի շարք դրվագներ, որոնք, անկախ Հեղինակի պատկերացումներից, մտամբ ակներևաբար, մասամբ էլ Հայտնականության տարբեր աստիճաններով, արտացոլում են Ուրարտուի և նրա ժամանակաշրջանի իրողություններն ու իրադարձությունները:

1. Հայտնի է Մովսես Խորենացու հատուկ հետաքրքրությունը իր շարադրանքի հետ կապվող քաղաքների, ամրոցների, ջրանցքների, կոթողների, արձանների և նյութական մշակույթի այլ տեսակների նկատմամբ: Պատմահայրը ոչ միայն հիշատակում է դրանք, այլև հնարավոր դեպքերում նկարագրում անհրաժեշտ մանրամասնություններով: Նրա նկարագրություններից ընթերցողը Հստակ տեսողական պատկերացումներ է ստանում: Այդպիսիք են, օրինակ, Երվանդաշատի, Թեոդուսյոսի - Կարինի, Վան քաղաքի նկարագրությունները:

Վանի կապակցությամբ Մովսես Խորենացին նախ նկարագրում է տեղանքը, ապա հսկայական «ամրարտակը», ինքը՝ քաղաքը, նրա միջնաբերդը, ժայռավոր սրահները և, վերջապես, ժայռի Հարթված մակերեսի վրա փորագրված սեպագրական արձանագրությունները: Սրանցից շատ բան մեր ժամանակներին է հասել երկրի երեսին, շատ բան էլ պերված-լույս աշխարհ է հանված Հնագետների կողմից, և ակնատեսներն ու մասնագետները խոսում են Պատմահոր նկարագրությունների ճշգրտության մասին: Մեզ Հայտնի է, որ այդ ամենը աղբյուր էր Ուրարտուի թագավորների շինարարական գործունեության, որն սկսել էր դեռևս մ.թ.ա. IX դարի երրորդ քառորդում Սարգուրի I-ը, և որին մեծ ծավալ էր տվել մասնավորապես Մենուան (մ.թ.ա. 810-786թթ.): Վերջինս, բացի այլևայլ շինություններից, կառուցել է նաև «ամբարտակ» կոչվողը՝ 70 կմ երկարություն ունեցող Հուսա-

կավոր, մինչև մեր օրերը պահպանված ջրանցքը, որը ջուր էր մատակարարելու մայրաքաղաք Տուշպային, այսինքն՝ Վանին, և որի պատերը կազմող վեճերի կամ շրջակա ժայռերի վրա բազմաթիվ տեղերում շինարար թագավորը թողել է իր արձանագրությունները, նշելով նրանցում ջրանցքի կառուցման փաստը և ջրանցքն իր անունով կոչելու հրահրանքը<sup>2</sup>:

Որևէ քաղաքի նկարագրությունը տալիս Մովսես Խորենացին միշտ առաջին հերթին հիշատակում է, թե ով է այն հիմնադրել ու կառուցել: Արդեն ասվել է, որ Ուրարտուի գոյություն մասին նա պատկերացում չի ունեցել, ուստի և էլ էր կարող Վանի կառուցումը վերագրել Մենուային կամ մեկ ուրիշ ուրարտական թագավորի: Գուցե նա կարող էր վերագրել այդ կառուցները Հայոց նահապետներից որևէ մեկին, ասենք, Արամին կամ նույն Արա Գեղեցիկին և այդ, թերևս, մոտ կլինեի նրա սրտին: Սակայն նա այդպիսի Հնարավորություն չի ունեցել, քանի որ իրեն Հայտնի ժողովրդական ավանդությունը քաղաքի ստեղծումը վերագրում է Ասորեստանի թագուհի Շամիրամին<sup>3</sup>: Այդ ավանդությունը բաղկացած էր երկու տարրից, որոնք Պատմահորն էին հասել տարբեր աղբյուրներից: Մեկը նրանցից Արա Գեղեցիկի և Շամիրամի ընտրելագույն զիջագրույցն է, որի աղբյուրը, ըստ Մովսես Խորենացու շարադրանքի, Մար Աբաս Կատինայի մատյանն է, մյուսը՝ Շամիրամի հետ առնչվող տեղական առասպելավանդությունը, որից մեզ, դարձյալ Մովսես Խորենացու շնորհիվ, առանձին մանրամասնություններ են հասել: Ինքը Պատմահայրը որոշակիորեն տարբերում է այդ առասպելավանդությունը Հիշատակված զիջագրույցից, նշելով նրանց զանազան աղբյուրները. «Եւ առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ Ասորին (այսինքն՝ Մար Աբասին- Գ. Ս.) արդարացուցանեն», գրում է նա և իսկույն ավելացնում այդ առասպելավանդությունից մի քանի փշրանքներ. «Աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ, և զՀետևակ փախտտոն, և զպարտման և զիրձս ջրոյն և զարբումնն, այլ և ի մոտ Հասանել սուսերաւորաց՝ և գյուտութիս ի ծով, և բան ի նմանէ. «Ուլունք Շամիրամայ ի ծով»: Այլ թէ արտոբնն առասպել՝ և Շամիրամ քար առաջին քան զԻրոքէ» (Ա, 18):

Այս տեղական առասպելավանդությունը, բնականաբար, շատ ավելի փարթամ եղած պիտի լինի, քան պատկերանուն է մեզ Մովսես Խորենացու պահպանած փշրանքների հիման վրա: Մեր օրերին է հասել «Շամիրամա ջուր»

<sup>2</sup> Տե՛ս Դ. Ա. Меликишвили. Урартские клинообразные надписи (УКН). М., 1960, NN 43-56.

<sup>3</sup> Թերևս, այդ կառուցները, Մովսես Խորենացու օրոք ավելի քանակությամբ և առավել լավ պահպանված լինելով, քան այսօր, նրա աչքին նաև խորթ են թվացել Հայկական շինարարական ոճին, ինչպես և այժմ մեր Հնագետներին են ներկայանում: Գուցե դրանով են մասամբ թեկարարված նրա այսպիսի արտահայտությունները այդ կառուցների կապակցությամբ. «Իսկ զձայր քաղաքին և որ ինչ ի նմա Հաշակիստութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ Հասու լուս, և ոչ պատմել է կարողութիւն... Որոյ որպիսութիւն դրութեանն յօրինածոյ ոչ ի յսիլս մեր Հասուղ ճմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս Հիսուկ Հասանիք» և այլն (Ա, 16): Եվ այս խնդրում առանձնապես կողմնորոշող պիտի լինեի նրա Համար Վանի ժայռի հսկայական սեպագրական արձանագրությունը՝ Արգիթի I-ի (մ.թ.ա. 786-764թթ.) Հայտնի «Խորխորան տարեգրությունը», որի մասին նա գրում է. «Իսկ զամենայն երեսս քարին իրբն զբնա զմամ Հարթեալ բազում գիրս ի նմա գրեաց (Շամիրամը. - Գ. Ս.), որոյ Հայեցուանն միայն զամենայն որ ի զարմանս ամէ» (նույն տեղում):

<sup>1</sup> Հոգիվածը ներկայացնում է 1991թ. Հունվարի 25-26-ին Փարիզում կայացած «Moise de Khorène et l' historiographie arménienne des origines» - «Մովսես Խորենացին և Հայ պատմագրության ակունքները», միջազգային գիտաժողովում ընթերցված՝ «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և Ուրարտուն» զեկուցման ընդգայնված և լրացված տարբերակը:



անվանումը, որը ժողովուրդը տալիս է Մենուայի կառուցած ջրանցքին<sup>4</sup>: Մովսես ինքնապես մոտ «Շամիրամի քաղաք» անվանված Վանը այդպես է անվանում նաև Թովմաս Արծրունին, որը, բացի այդ, Հիշատակում է նաև «Շամիրամ բերդը», իսկ Ճվաչ դավառում՝ «Շամիրամ ամրոցը»<sup>5</sup>: «Շամիրամ դուռը» Մշո դաշտում Հիշատակում է Գար. Սրվանձադյանը<sup>6</sup>: Վանի մոտ Թովմաս Հիշատակում է Լեզք գյուղը (Լեզույ գեաղջն)<sup>7</sup>՝ կապելով այն Շամիրամի գլխավորներից Արա Գեղեցիկի ստացած վերքերը լիգել-սպիտակելու հետ<sup>8</sup>: Արալիզները (առլեզները) Հիշատակվում են նաև Փավստոսի (Ե, 36) ու Եգիպիկի (Ա, 24) մոտ և Անանունի «Նախնական պատմություն» մեջ (գլուխ Ա): Որ փող միջնադարում ժողովրդի մեջ գեղեցիկ պատմվում էր Արա Գեղեցիկի հետ կապված բուն առասպելը՝ անողորմ կիտրեն հուշում է նաև Արայի լեռան Հիշատակումը VII դարի Աշխարհացոյցում<sup>9</sup>:

Այս բոլորը ավելի ցյուն, հարուստ ու հստակ լինելով Մովսես ինքնապես սպրած V դարում, բավական հիմքեր են տվել նրան Վան քաղաքի հիմնադրումը վերագրելու Շամիրամի և ոչ մեկ ուրիշի, իսկ Ուրարտուի մասին նա, ինչպես ասվեց, տեղեկություն չունի և չէր կարող ունենալ:

2. Մովսես ինքնապես «Հայոց պատմություն» մեջ ուրարտական ժամանակաշրջանին առնչվող նյութի առկայություն տեսակետից Շամիրամի հետ կապված հազորդումները մեզ ավելի հեռուն են տանում, քան սոսկ Վան քաղաքի հիմնադրման թեման է: Հարցը հետևյալն է: Ինչ ճանապարհով և երբ է Շամիրամի կերպարը եկել մտել Հայկական միջավայր: Ամենահնչոտ պատասխանը կլինի, թե՛ անտիկ շրջանի այն գրականությունից, որում Շամիրամի (Սեմիրամիսի) առասպելը բավական մեծ տարածում ունի: Հիրավի, Մովսես ինքնապես շարադրած՝ Շամիրամի հետ կապված առասպելները մի խոչըր մասը վաղիս է անտիկ գրականությունից:

Անտիկ գրականության մեջ այդ առասպելների գլխավոր ակունքը մ.թ.ա. V դարի հույն Հելլինակ, պարսից թագավորի բժիշկ Քսենոփանի երկն է, որը մեզ չի հասել, բայց որի մեջ այստեղ հետաքրքրող մտքերը վերապատմել է մ.թ.ա. I դարի հույն Հելլինակ Դիոդորոս Սիկիլիացին իր «Պատմական գրադարանի» II գրքի 4-20 գլուխներում<sup>10</sup>: Մովսես ինքնապես գուցե անմիջականորեն օգտված լինի այդ շարադրանքից, սակայն իր տեղեկությունների մեծ մասը նա քաղել է IV դարի Հելլինակ Եվսեբիոս Կեսարացու «Բրոնիկոնից»<sup>11</sup>: Այստեղից են գալիս Շամիրամի ամուսին Նինոսի, ինչպես և Շամիրամի և Զրադաշտ մոզի մասին տեղեկությունները, Շամիրամի հույկական արշավանքի, իր որդիներին կոտորելու և նրանցից մեկից՝ Նինոսից սպանվելու պատմությունը, ինչպես և Նինոսի Զամես երկրորդ անվան և Արա-համանի ժամանակակից լինելու մասին հազորդումները: Եվսեբիոսի միջնորդությամբ է մեջբերում Մովսես ինքնապես Կեփաղիոնի այս

<sup>4</sup> Գար. Սրվանձադյան, Երևան, 1978, էջ 383, 403:  
<sup>5</sup> Թովմասի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց. ՍՊԲ, 1887, էջ 258, 270:  
<sup>6</sup> Գար. Սրվանձադյան, Երևան, 1978, էջ 49:  
<sup>7</sup> Թովմասի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց. ՍՊԲ, 1887, էջ 252:  
<sup>8</sup> Սեմ. Ս. Ս. Երևան, 1963, էջ 110:  
<sup>9</sup> Diodorus of Sicily in twelve volumes, I, Books I and II, 1-34, London, 1968.

հազորդումները Շամիրամի մասին (Ա, 18)<sup>10</sup>, թեև այդ կապակցությամբ վերջերս որոշ մասնակի կասկածներ են հայտնվել<sup>11</sup>:

Սակայն բացի այս բոլորից, Մովսես ինքնապես գրվածները է շարադրում, որոնք վերաբերում են Հայկական միջավայրի հետ Շամիրամի առնչություններին: Ինչպես արդեն ասվեց վերը, դրանք են Արայի և Շամիրամի առասպելը, Վան քաղաքի կառուցման նկարագրությունը և Շամիրամի՝ Հայաստանում, Վանա լճի ափին իր վախճանը գտնելու մասին ավանդությունը:

Մրանցից միայն երկրորդ գրվածքի՝ Վան քաղաքի շինարարության կապակցությամբ է, որ գուցե կարելի է նշմարել անտիկ գրականության, այն է՝ Դիոդորոս Սիկիլիացու հազորդումների ազդեցությունը, որոնք, սակայն, բնույթով միանգամայն տարբեր են Եվսեբիոսից եկող տեղեկություններից: Վերջիններս կոնկրետ հազորդումներ են Շամիրամի կյանքի ու շրջապատի (Նինոսի, Զրադաշտի, Նինոսի և այլոց) մասին, իսկ Դիոդորոսին վերագրելիները սոսկ նկարագրական, սճական տարրեր են, որոնք կարող են փոխառված լինել նրա՝ Շամիրամի կողմից Բաբելոն, Էլլաթանա քաղաքների շինարարության կազմակերպումն ու իրականացումը պատկերող գրվածքներից, մինչդեռ Մովսես ինքնապես մոտ վերաբերում են Վան քաղաքի շինարարության կազմակերպմանը և իրականացմանը<sup>12</sup>: Դրանք, եթե, իրոք, կան, ամենևին չեն խանդավառում Վան քաղաքի, նրա միջնաբերդի, նրա շրջակայքի, Հայտնի ամբարտակ-ջրանցքի նկարագրություններին միանգամայն հարազատ լինելու այն պատկերին, որ Հասել է մեր օրերին և կամ լույս աշխարհ է հանվել հնագետի բրիտիշ օդուկությամբ: Այգորիանի, բայց շատ ավելի ակնառու «Ռճական» փոխառությունները Մովսես ինքնապես մոտ հաճախ են անդիպում և երբեք չեն վնասում դրանց օգնությամբ շարադրված նկարագրությունների հարազատությանը բուն շարադրելի նյութին<sup>13</sup>:

Այսպիսով, ինչպես արդեն ասվեց վերը, Շամիրամի մասին Մովսես ինքնապես պատմածը կարելի է բաժանել երկու մասի, որոնցից մեկը վաղիս է անտիկ գրականությունից, իսկ մյուսը գուցե տեղական է (Վանի կառուցման նկարագրության կապակցությամբ վերը նշված երևույթի հաշվառմամբ):

Հարց է ծագում, իսկ Շամիրամի մասին Հայկական նյութը արդյոք իր Հերթին որևէ ազդեցություն չի՞ գործել անտիկ գրականության համապատասխան թեմայի վրա: Այստեղ հանդիպում ենք մի քանի փաստերի, որոնք այսպիսի ազդեցության օգտին են խոսում: Նախ, ինքը Դիոդորոսը պատմում է, որ Ասորեստանի Նինոս արքան, գեղեցիկ Շամիրամ-Սեմիրամիսի հետ ամուսնանալուց

<sup>10</sup> Եսեբի Պամփիլիայ Կեսարացու ժամանակակառք. Վենետիկ, 1818, մասն Ա, էջ 84, 92, մասն Բ, էջ 65: Տե՛ս նաև Գ. Х а л а т ь я н ц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. II, М., 1896, с. 37.  
<sup>11</sup> Տե՛ս Ջ ու ս ա ո Ս Ր Յ յ և Մովսես ինքնապեսի «Պատմական» ավանդությունը Հայոց պատմության Ա գրքի 5-րդ գլուխի մեջ: «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 32:  
<sup>12</sup> Տե՛ս Գ. Х а л а т ь я н ц. Указ. соч., с. 32 и сл. Նույն տեղում Գր. Խաթաբյանը նմանություններ է նշում նաև Հովսեփոս Փրավիոսի հետ, որ նույնպես հնարավոր է:  
<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, Գ. Խ. Ս ա Ր Յ յ և Մ. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես ինքնապես մոտ. - Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 31 և հոտ.:











Կա, սակայն, մի փաստ, որը կարող է որոշ չափով կողմնորոշիչ դեր կատարել: Դա Մարդուկ աստծու Հիշատակումն է Թեյշեբախի-Կարմիր բլուրում գտնված՝ Ռուսա II ուրարտական թագավորի մի սեպագրական արձանագրություն մեջ, որը թվագրվում է մ.թ.ա. VII դարի կեսերով<sup>22</sup>:

Արձանագրության պաշարանված մասը պարունակում է հիմնականում անեծքի բանաձևեր, որում արձանագրության հեղինակը սպառնում է այն փչացնողներին, տեղահանողներին, յուրացնողներին և այլն: Սուրբաբար նա այդպիսիների գլխներին է կուտակում ուրարտական երեք գլխավոր աստվածների՝ Խալդիի, Թեյշեբայի և Շիվինիի ցասումն ու վրեժխնդրությունը: Սույն արձանագրության մեջ, սակայն, դրանց ավելացված է Մարդուկ աստվածը՝ գաղափարազրույցով. [Ս Hal-di-še ԾIM-še ԾUTU]-še ԾMARDUK-še-(աստված) Խալդին, (աստված) Թեյշեբան, (աստված) Շիվինին, (աստված) Մարդուկը...»:

Կարծիքներ կան, որ Մարդուկի պաշտամունքը Հայտնիկ է Արարատյան դաշտում գերեվարված բարեկրթացիների հետ (ն. Հարությունյան) կամ, որ նրա գաղափարազրույցի սակ թաքնված է որևէ տեղական աստվածություն (Գ. Մելիքիշիլի): Բայց դեպքերում Մարդուկի այստեղ Հայտնիկը Հատկանշական է: Այն, կարծես թե, ակնարկում է, թե ինչպիսի պատմական պարագաներում կարող էր տեղի ունենալ Բել-Մարդուկ աստծու ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ՝ Ատրիեստանի հետ բախումների պարագաներում: Դրանք սկսվել են մ.թ.ա. XIII դարում, երբ հզոր Ատրիեստանի դեմ կանգնած էին դեռևս Նաիրի և Ուրուառի հեղհեղուկ ցեղային միությունները, և շարունակվել հզոր և հակահարվածի ընդունակ Վանի թագավորության օրոք: Այդ եռանդուն բախումների ու շփումների շուրջը առաջացած ավանդություններում Բել աստծու կողքին հանդես է եկել, զուցի, ուրարտական Խալդի գլխավոր աստվածը:

Երևի այդ ավանդությունները, ուրարտական էթնոսի՝ Հայկականի մեջ տարրալուծվելուն համընթաց Հայացվել են և միահյուսվել Հայկական հնագույն աստված Հայկի շուրջը վաղուց յ վեր գոյություն ունեցած առասպելներին և այդ վիճակում հասել Մովսես Խորենացուն<sup>23</sup>: Նման վարկածը, մեզ հավանական թվալով, ամենևին չի բացառում այլ մեկնաբանությունների հնարավորությունը: Նրա օգտին են խոսում, սակայն, այլ ժողովուրդների առասպելաբանության նմուշները, տանը Համաշխարհային ջրհեղեղի այն առասպելի օրինակը, որը զարգացման երեք փուլ է անցել՝ շումերական, աքքադական և հրեական, ամեն մի փուլում փոփոխելով գլխավոր հերոսի անունը՝ Զիուսուդրա-Ուտանապիշտիմ-Նոյ, և տեղայնացնելով առասպելի առաջնիմիական և այլ մանրամասնությունները:

4. Մեծ դժվարություններ է առաջացնում Մովսես Խորենացու մոտ պահպանված Արամի առասպելի պատմական մեկնաբանման փորձը: Թեև ոմանց թվում է, թե այստեղ մեկնաբանելու բան չկա՝ Արամը պարզապես այն Արրամու Ուրարտացին է, որը Հիշատակվում է մ.թ.ա. IX դարի կեսերի ասուրական արձա-

<sup>22</sup> Г.А. Меликишвили. Урартские клинообразные надписи. Открытия и публикации 1954-1970 гг. - Вестник древней истории, 1971, 4, N 450.

<sup>23</sup> Հմմտ. Մ. Ար. եղևան. նշվ. աշխ., էջ 252 և հտ. «...Մի՞թե կարող չէ այդ վրույցի մեջ մնացած ինչևէ Հայաստանի նախահայ բնակիչների՝ ուրարտացիների ասորիստանցոց դեմ մղած պատերազմների Հիշատակը, որը հետո Հայերը ժառանգել են ուրարտացիներից»:

նագրություններում որպես Ուրարտուի առաջին թագավոր: Հիրավի, անունները գրեթե նույնն են, և այս հանգամանքը ընդունակ է և՛ կողմնորոշելու, և՛ ապակողմնորոշելու: Գուցե Արամի առասպելը իսկապես հյուսված է Արրամու Ուրարտացու շուրջը: Սրա համար, եթե վերանայք անունների նույնությունից, իմ կարծիքով, զգացվում է նրանց հարազատությունը հաստատող լրացուցիչ պատմական փաստերի որոշակի պակաս:

Կամ զուցի մենք գործ ունենք անունների ոչ հազվադեպ հանդիպող պատահական նմանություն հետ: Այդ դեպքում, կարծում ենք, կարելի է ավելի սերտորեն հետևել Մովսես Խորենացու շարագրանքին: Արամին, որ Հայկյանների վեցերորդ սերնդի ներկայացուցիչն է, Արրամու Ուրարտացու ժամանակից բաժանում է շուրջ 25 սերունդ՝ գրեթե մեկ հազարամյակ: Այնուհետև, ըստ Մովսես Խորենացու, Արամը, Հայկից հետո, Հայերի երկրորդ անվանադիրն է, նրանց «արմեն» ցեղանվան աղբյուրը: Գոնե այս երկու հանգամանքը զրգում են մտածելու, թե արդյոք «Արամ» անունը իսկապես կապված չէ՞ «արմեն»-ին նախորդած «արմ», «ուրում» (= «օրում») կամ այլ ցեղանվանական ենթադրվող ձևերի հետ, ինչպես հետևում է Պատմահոր ասածից, և թե արդյոք, այդպիսով, Արամն իսկապես Հայկական հնագույն աստվածների թվին չի՞ պատկանում՝ Հայկի և Արայի հետ միասին:

Կամ զուցի կա մի երրորդ մեկնաբանություն հնարավորություն: Այս հարցերը մեզ համար տակավին բաց են մնում:

5. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Առաջին գրքում շարագրված՝ Հայկ Նահապետի և Հայկյանների տեղաշարժերի մասին ավանդությունը կամ առասպելը ամենաառարկելի գնահատականների է արժանացել գիտական գրականության մեջ: Մինք հարում ենք այն տեսակետին, որ այդ նյութը իր հիմքում հնագույն ծագում ունի: Իհարկե, դարերի և հազարամյակներ ընթացքում այն շերտակալ է այլևայլ տարրերով ու մանրամասներով, ենթարկվել ձևափոխությունների և նշանակալից չափով կորցրել իր նախնական պատկերը, բայց և այնպես պահպանել է հնագույն տարրերակի հիմնական գծերը: Մեր համոզումը դրանց իսկություն վերաբերյալ առավել ևս ամրապնդվում է, երբ Հայտնաբերում ենք, որ նրանց տվյալները համընթաց են հնագույն, իրադարձությունների ժամանակակից սեպագրական և այլ աղբյուրներին:

Մեր խոսքն այստեղ մասնավորապես Հայկի և առաջին Հայկյանների այն տեղաշարժերի մասին է, որոնք բավական մանրամասն նկարագրված են Մովսես Խորենացու, ինչպես և Սեբեոսի «Պատմությունը» կից մեզ հասած տարրերակներում: Հարց է ծագում, որքա՞ն պատմական հիմք ունեն այդ տեղաշարժերը, և եթե ունեն, ապա ո՞ր ժամանակների իրադրությունն են նրանք արտացոլում:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ ներկայացված է Հայկական լեռնաշխարհի բնակեցման ոչ թե մեկ, այլ երկու ալիք: Առաջին ալիքը, իբր, տեղի է ունեցել Հայկից երեք սերունդ ավելի վաղ և կապված է եղել աստվածաշնչական Սևմի՝ Նոյի որդու և նրա որդի Տարբանի հետ:

Եթե որպես Հայկի ու Հայկյանների մասին տեղեկությունների աղբյուր Մովսես Խորենացին անվանում է Մար Աբաս Կառնիայի մատյանը, ապա Սևմի և Տարբանի պատմության կապակցությունը նա Հիշատակում է երկու աղբյուր՝ հույն փիլիսոփա Օլիմպիոդորոսի բանավոր հաղորդումը և, զուգահեռաբար,







Այսպիսով, եթե մենք ընդունենք ավանդությունն նախնական տարբերակի գոյություն Հնարավորությունը, ապա նրանում, որպես Աստվածաշնչից եկող տարբեր, պիտի բացակայելին թե՛ Բարեկոնքը և թե՛ «Արարողի երկիրը»՝ որպես միջանկյալ Հանգրվան Հարքի ճանապարհին (այլ կապակցությունը, ինչպես ասացինք և կտեսնենք, այն կարող էր Հիշատակված լինել), Հետևաբար և ընդհանրապես Բարեկոնքը մինչև Հարք ճանապարհի Հիշատակումը: (Ավանդություն վերը ներկայացված մասը, իր նախաստիվածաշնչական տեսքով, Հավանաբար, պարունակված կլինի Հայկի և նրա տոհմի տեղաշարժերի նաև ուրիշ մանրամասներ, որոնք Հետագայում կարող էին դուրս մղվել վերոհիշյալ աստվածաշնչական թեմաների ներմուծման Հետևանքով, մասնավաղ եթե Հակասում էին դրանց):

Այս տեսակետը Հիմնավորելու Համար կարելի է Հենվել նաև առասպելի պահպանված տեքստի որոշ առանձնահատկությունների վրա: Դրանք առկա են և Մովսես Խորենացու մատուցած տարբերակում, բայց ավելի ցցուն են ներկայացված Հայկի առասպելի՝ Սեբեոսի «Պատմություն» կազմում մեզ հասած տարբերակի մեջ, ուստի քաղվածքներ ենք բերում միայն այս վերջինից: Հայկն այստեղ տարբերակորեն երևում անգամ է իր թոռ Կարմոսին պարզեւում «Արարողի երկիր» իր կալուածքը: Առաջին անգամ այդ տեղի է ունենում Բարեկոնքը Հայաստան ճանապարհին, որի մասին կարդում ենք. «Ետ գնա (գերիկին Արարողայ-Գ. Ս.) Հայկն կալուած ժառանգութեան Կարմեայ թոռին իւրում, որդւոյն Արամենակայ» (Երևան, 1979, էջ 48): Երկրորդ անգամ նա այդ անում է իր կյանքի վերջում, որի մասին գրված է. «Եւ ի ժամանակի մահուանն իւրոյ ետ գնա (նույն երկիրը-Գ. Ս.) կալուած ժառանգութեան Կարմեայ թաւին իւրում, որդւոյ Արամենակայ» (էջ 50):

Քանի որ ձևակերպումը բառացիորեն է կրկնվում «ետ գնա...» և այլն, ապա բնական է ենթադրել, որ երկու դեպքերից մեկը մյուսի սոսկ կրկնություն է, և որ նախնական ավանդության մեջ այս երկուսից միայն մեկն է եղել: Մեր կարծիքով, եղել է միայն երկրորդը, քանի որ այն, ի տարբերություն առաջինի, կապված չէ աստվածաշնչական թեմայի հետ:

Ահա, ուրեմն, Մովսես Խորենացու «Պատմության» մեջ մեզ հասած երկու ավանդություններն էլ (այսինքն՝ Սեմ-Տարբանի և Հայկի), նրանց պարունակած աստվածաշնչական տարբերից դուրս, համառորեն հանդես են բերում Տարբը և Հարքը որպես Տարբանյանների և նրանց Հնազանդեցրած Հայկյանների բնօրրան, որտեղից այնուհետև, ինչպես պատմվում է առասպելի շարունակության մեջ, տեղի է ունենում Հայկյանների Հետագա տարածումը:

Այժմ սույն եզրակացությունն տեսանկյունով անդրադառնա՞նք ուրարտական սեպագրական աղբյուրներին: Դրանցից մեզ տվյալ դեպքում Հատկապես Հետաքրքրում է ուրարտական Մինուա թագավորի (մ.թ.ա. 810-786թթ.)՝ Մուշ քաղաքում Հայտնաբերված արձանագրությունը, որ փորագրված է քարակոթողի վրա (ձևձ, 41): Քարակոթողն էսպես վնասված է, սակայն Հնարավորություն կա ընկալելու արձանագրության Հիմնական բովանդակությունը:

Նախապես Հիշեցնենք, որ Մինուայի օրոք սկսվում է Ուրարտուի աշխարհակալության շրջանը, երբ Ուրարտական տերությունը ետ մղեց ու նսնամացրեց իր գլխավոր թշնամի Ասորեստանին և իր արևմտյան սահմանները Հասցրեց մինչև

Եփրատի վերին Հոսանքի Հովտը: Նրա այդ վերելքը տեկց ավելի քան կես դար, որի ընթացքում Մինուային փոխարինեցին նրա որդին՝ Արգիշթի 1-ը (մ.թ.ա. 786-764թթ.) և թոռը՝ Սարգուրի II-ը (մ.թ.ա. 764-730թթ.):

Սակայն մեծ տերություն ստեղծելու Համար Մինուան նախ և առաջ սլտի դուրս գար բուն Ուրարտուի կամ Բիայնիլիի նեղ սահմաններից, որոնք նրա Հոր՝ Իշպուկնիի օրոք ընդգրկում էին սոսկ Վանա լճի ավազանը և նրան արևելքից, Հարավից և Հյուսիսից անմիջականորեն Հարող Հողերը: Ահա, Մինուայի առաջին սարձանագրության մեջ: Վանա լճից Հարավ ընկած մի ուղիով Մինուան իր զորքերով մտնում է ստուրական արձանագրություններում Ծուբբիա անվանվող երկիրը, որը կազմում էր Սասունի մի մասը, գրավում այդ երկիր Գուլմերի (ներկայումս՝ Քղիմար) քաղաքը, այնտեղից Աթաունի քաղաքի վրայով անցնում է Ուրմի երկիրը: Այստեղ արձանագրությունը Հաղորդում է. [ h ] a-a ü-bi KURUr-me-i-e te-ru-b[i]i-ni DUB-te, այսինքն՝ «Ես նվաճեցի Ուրմի երկիրը, դրեցի այս քաղաքի կոթողը» (YKH, 41): Քանի որ այդ քարակոթողը Մուշ քաղաքում է գտնվում, ուրեմն և Մուշի շրջանը, այսինքն՝ Տարբը, կազմել է Հենց Ուրմի երկիրը: Անմիջապես դրանից Հետո արձանագրությունը Հաղորդում է՝ <sup>[KUR]</sup>Ar-ḫi-i-e-di [...], որ նշանակում է «Արխի երկիրն [...] կամ «դեպի Արխի երկիրը [...], իսկ դրանից Հետո ջարդվածք է:

Առկա մասնագիտական գրականություն մեջ Արխի երկրի տեղագրությունը բավականաչափ Հստակ չէ ներկայացված: Նշվում է սոսկ, որ այդ երկիրն ընկած էր Վանա լճից Հարավ-արևելք՝ Ուրմի երկրի և Գուլմերի քաղաքի Հարևանությամբ (Ն.Հարությունյան): Մինչդեռ Մուշի արձանագրությունը Հնարավորություն է տալիս գտնելու Արխի երկրի ճշգրիտ տեղագրությունը: Եթե շարունակենք Մինուայի երթուղին Քղիմար-Մուշ (Գուլմերի-Ուրմի) գծով, նույն ուղղությամբ, այսինքն՝ այնպես, ինչպես թվադրում է Մուշի արձանագրությունը, ապա այդ գիծը կհասցնի մեզ Հայկական Հարք գավառը, որն անմիջականորեն սահմանակից է Տարբին Հյուսիսից և Հյուսիս-արևելքից: Հարք գավառը Հիշատակում է, բացի Մովսես Խորենացուց, նաև Անանիա Եփրատացու «Աշխարհացոյցը»՝ որպես Տուրուրերան նահանգի գավառներից մեկը: Այսպիսով, եթե պարզվում է, որ Արխի երկրի և Հարք գավառի տարածքները Համընկնում են, ապա ոչ մի խոչընդոտ չկա նույնացնելու նաև նրանց անվանումները: Արխին նույն Հարքն է: Սա կարելի է Հիմնավորել նաև ուրարտա-Հայկական լեզվական ընդհանրություններում Հանդես եկող Հնչյունական անցումների օրինաչափություններով (Հ-ի բացակայությունը բառակազմում, իւ-ք անցումը): Արխի-Հարք նույնացման փաստը ամրապնդվում է նաև Պլինիոս Ավագի կողմից Արածանու վրա Archene Հայկական գավառի Հիշատակությամբ (NH, VI, 31, 1-3)<sup>25</sup>:

Մեր թեմայի Համար Հատկապես կարևոր է այն Հանգամանքը, որ Տարբ-Հարքի շրջանը, որը Մովսես Խորենացու պահպանած Հայկական Հնադուրյն ավանդության մեջ, ինչպես տեսանք, Հանդես է գալիս որպես Հայերի օրրան, իր աշխարհագրական տեղագրությամբ Համընկնում է Ուրմի-Արխի շրջանի Հետ: Խնդիրն

<sup>25</sup> Տե՛ս Գ. Խ. Ս ա ր գ ս յ ա ն. Ուրարտական տերությունը և Հայերը.- Ուրարտու և Հայաստան, Երևան, 1989, էջ 92 և Հտ.:



այն է, որ վերջինս, ըստ ասուրա-ուրարտական սեպագրական աղբյուրների, իր հերթին ոչ պակաս կարևոր հատկանիշներ ունի Հայ ժողովրդի կազմավորման ու լեոնաշխարհում տարածման տեսակետից:

Որո՞նք են այդ հատկանիշները:

Մամապեանները (Գր. Խալաթյանց, Գր. Ղափանցյան, Ս. Երեմյան, Բ. Պիտո-րովսկի, Ի. Դյակոնով, Գ. Մելիքիշվիլի և ուրիշներ) վաղուց ի վեր առանձնացնում են Եփրատի փոքրասիական կամ վերին հոսանքի հովիտը, որպես Հայ ժողովրդի կազմավորման ընտրան՝ մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսում: Խեթական և ասուրական սեպագրական աղբյուրների տվյալների համաձայն այստեղ կուտակված են եղել մի շարք երկրներ, որոնց անվանումները այս կամ այն կերպ առնչվում են Հայերի ցեղանուններին: Հյուսիսից հարավ դրանք են բոլորին Հայտնի Հայասա երկիրը-Սուխմու երկիրը, որի անվանումը համադրում են վրացիների կողմից կերպավորված «սամխի»՝ «Հայ» ցեղանվան հետ, Թեգարամա՝ Աստվածաչնչում «Պորգոմի տուն» կոչվող երկիրը (Թորգոմը, ըստ աղգային ավանդություն, Հայերի նախնին է), Մալիա-Մելիզ(այսօրվա Մալաթիա) երկիրը, որը երբեմն անվանվում է Խաթե, իսկ «խաթե»-ն ումանք համարում են «Հայ» ցեղանվան սկզբնական ձևը և այլն: Սրանք, բացի Հայասայից, գիտություն մեջ երբեմն կոչվում են «ուշ-խեթական» թագավորություններ, բայց իրականում նրանք էթնիկապես հագեցած էին Հայկական տարրով:

Մ. թ. ա. XII դարից սկսած նույն տարածքի հարավային մասերում աղբյուր-ներում հիշատակվում են մուշու և ուրումու ցեղերը, որոնք ևս համարվում են Հայկական, ըստ որում «ուրումու»-ի հետ կապվում է Հայերի «արմեն» ցեղա-նունը: Ասուրական աղբյուրները հիշատակում են սրանց առաջնաղագրումը դեպի արևելք, ըստ որում մուշու ցեղերը հանդրմանում են Ալզի-Աղձնիքում<sup>29</sup>, իսկ ուրումուները հասնում են Վանա լճի մոտերքը, որտեղ և հիշյալ աղբյուրներում նշված է Ուրումու կամ Ներքին Ուրումու երկիրը: Կարճ ասած, խեթական և ասու-րական սեպագրական աղբյուրները մ.թ.ա. II հազ. վերջերին և I հազ. սկզբներին Հայկական լեոնաշխարհի արևմուտքում տարբեր անվանումներով նշում են Հայկական մի մեծ, դեպի լեոնաշխարհի կենտրոնը ձգվող էթնալեզվական գոյացված: Սրանով, իհարկե, չի ժխտվում Հայկական տարրի կղզյալների առկա-յությունն այդ ժամանակ նաև լեոնաշխարհի արևելյան մասում:

Մ. թ. ա. IX դարի վերջերից հանդես են գալիս ուրարտական սեպագրական աղբյուրները, որոնք էսպես լրացնում ու ճշգրտում են այս պատկերը և հանդես բերում Ուրմե (Ուրումու, Տարոն) երկրի հատուկ դերը:

Եթե, չմոռնալով մանրամասնությունները մեջ, հանրագումարի բերենք ուրարտական երեք թագավորների՝ Մենուայի, Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի՝ իրենց սեբությունների հզորության գագաթնակետին, այսինքն՝ մ.թ.ա. VIII դարի առաջին կեսին, Հայկական լեոնաշխարհի արևմտյան մասում իրականացրած ռազ-մական ձեռնարկումները, ապա կզժողովի նրանց աշխարհագրական ծավալման երկու եզր, երկու սահմանագիծ: Դրանցից մեկը՝ հեռավոր կամ արտաքին

<sup>29</sup> Ըստ վրացի պատմաբանների՝ մուշիները վրացական մեծերն են: Սակայն վրացական էթնիկական տարրի ներթափանցումը Հայկական լեոնաշխարհի հարավային գոտին աղբյուրների տվյալներով չի հաստատվում:

սահմանը, անցնում էր Եփրատի վերին հոսանքի հովտի երկայնքով: Դա Ուրար-տուի պետական սահմանն էր արևմուտքում և ընդգրկում էր վերը թվարկված, այսպես կոչված «ուշ-խեթական», բայց իրականում, ինչպես ասվեց, էսպես Հայա-լեզու մանր թագավորությունները մի մասը: Մյուսը՝ մոտակա կամ ներքին սահ-մանը, դեպի լեոնաշխարհի կենտրոնը ձգվող Հայկական տարրի հիմնական գանգալածի եզրագիծն էր, որի վրա էին առաջին հերթին տեղի ունենում նրա բախումները՝ հակառակ ուղղությամբ, այսինքն՝ դեպի արևմուտք շարժվող ուրար-տական ռազմական մեքենայի հետ: Ուրարտական աղբյուրներում, նշված կես-դարյա ժամանակահատվածի համար նմանօրինակ բախումներ են արձանագրված, եթե թվարկենք հարավից դեպի Հյուսիս, հետևյալ երկրներում. Ալզի (Աղձնիք), Արմե (Նփրկերտ), Կուլմերի (Մասուն), Ուրմե (Տարոն), Արխի (Հաբը), Տուարա-ծինեի խուբի (Տուարածատափ), Ալուշե (Բյուրակն)<sup>30</sup>: Ահա այս երկրները միացնող գծով էլ ձգվում էր նշված մոտակա կամ ներքին սահմանը, շարունակելով այնու-հետև դեպի Եփրատի ակունքները և Սև ծովը: Այս ներքին սահմանագծի վրա, թվարկված երկրները, որպես առավել անհանգիստ ու անկոտորիչ, ուրարտական աղբյուրներում հանդես է գալիս նրանցից ամենաարևելյանը՝ Ուրմե երկիրը, որը Ուրարտական տերություն սիրտը կազմող Վանա լճի ավազանի անմիջական հարևանն էր, ուստի և ամենավտանգավորն էր Վանի թագավորների համար:

Այս է պատճառը, որ նրանք անընդհատ գրոհներ էին ձեռնարկում Հատկա-պես այդ երկրի վրա: Մենուա արքան, բացի իր վերոհիշյալ Մուշի արձանագրու-թյունից, հիշատակում է Ուրմեի նվաճման, ավերման, բնակչությանը կոտորելու մասին նաև մի այլ, Թրմիլըրում գտնված արձանագրության մեջ (ձեծ, 40): Մ. թ. ա. 773 թ. Ուրմեի վրա է արշավում Արգիշթի I-ը և դարձյալ հաղորդում երկրի ավերման ու բնակիչների գերիվարման մասին դեպի Բիայնիլի: Քսան տարի անց, Ուրմեի վրա է հարձակվում Սարգուրի II-ը, որը հաղորդում է երկրի 11 ամրոց-ների ավերման և շուրջ 10 հազար մարդկանց տեղահանման մասին: Ուրմեն, ինչ-պես տեսնում ենք, չնայած հուժկու գրոհներին, մնում էր անընկճելի:

Այսպիսով, թեև ուրարտական տերությունը հզոր թագավորները ամրացել էին Եփրատի հովտով անցնող արևմտյան սահմանի վրա, բայց և այնպես նրանց տերություն կենտրոն Բիայնիլիի և այդ սահմանի միջև գոյություն ունեցող մի պատվար, ի դեմս հիշատակված երկրների շղթայի, որը ժամանակ առ ժամանակ դառնում էր ուրարտական արքաների համար խիստ շոշափելի ու վտանգավոր: Եվ այդ պատվարի ամենահզոր ու անհաղթահարելի հատվածը կազմում էր Ուրմե երկիրը: (Այստեղ պետք է փակագծում չհշտեց, որ ուրարտական աղբյուրները տերություն մնացած տարածքում հարավում, Հյուսիսում կամ արևելքում, չեն նշում երկրի ներքին շրջանների համար, բացի մի դեպքից<sup>31</sup>, ոչ մի նմանօրինակ բախում: Սա կարևոր հանգամանք է և ցույց է տալիս, որ տերություն մեջ առկա էթնիկական տարրերից արևմտյանը, այսինքն՝ Հայկականը, ամենաառաջնությունը և ամենագործունեն էր):

Այսպիսով, այս երկու սահմանների միջև գծադրվում է, եթե կարելի է

<sup>30</sup> St'ya YKH, 28, 375 (Ալզի), 156 DI+DII (Արմե), 40, 41 (Կուլմերի), 40, 41, 127 VI, 128 A 4, 155 A (Ուրմե), 41 (Արխի), 127 V (Տուարածինեի խուբի), 157 (Ալուշե):  
<sup>31</sup> YKH, 418:



այսպես ասել, մի «նախնական Հայաստան»<sup>32</sup>: Եթե Ուրարտական տերության Հզորության պահին նրա արքաներին այսպես թե այնպես հանդիմանում էր ժամանակավորապես արգելակել այդ «նախնական Հայաստանի» ընդարձակումը, ապա սկսած մ.թ.ա. VIII դարի կեսերից այդ արգելքը, ուրարտական արքաների Հզորության հետ միասին, գրեթե վերանում է, և Հայկական տարրը սկսում է ողողել լեռնաշխարհի նաև արևելյան կեսը, որպիսի պրոցեսին պիտի օժանդակեր այնտեղ Հայաբնու ընակչության հատվածների առկայությունը:

Այս մասին արդեն ուրարտական պաշտոնական աղբյուրները, սկսած մ.թ.ա. VIII դարի կեսերից, քար լուսվում են պահպանում, քանի որ սովորություն է կար հազորդուներ անկող պարտությունների կամ անհանդուրժելիությունների վերաբերյալ: Ժամանակի ասուրական սեպագրական աղբյուրներն են, Ասորեստանի թագավորների, մասնավորապես Սարգոն II -ի (մ.թ.ա. 722-705), ուղարկած հետախույզների գեղեցիկները, որ խոսում են թշնամու երկրում՝ Ուրարտուում սեղի ունեցող այլևայլ խոտվությունների, բախումների ու տեղաշարժերի մասին՝ հատկապես տերության հարավային, Ասորեստանին սահմանամերձ գոտում<sup>33</sup>:

Մեր ուշադրության առարկա պատմական պրոցեսն էր արտացոլում է գտել ստիպյն, Մովսես Խորենացու «Պատմության» մեջ, որի հաղորդած տեղեկություններին էլ վերադառնում ենք:

Եթե ըստ ուրարտական սեպագրական աղբյուրների Ուրմե-Արխիի շրջանը ներկայանում է որպես Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տարածված Հայկական էթնոլոգիական գանգվածի արևելյան եզրը, ապա նրան համապատասխանող Տարոն-Հարբի շրջանը Հայ ազգային հնագույն ավանդության մեջ ներկայանում է, ընդհանրապես, որպես Հայերի դեպի արևելք տարածման մեկնակետ: Այսինքն, այնտեղ և այն ժամանակ (մ.թ.ա. VIII դարի կեսերին), որտեղ և երբ դադարում են պատմիչ սեպագրական աղբյուրները, այդ նույն տեղից պատմությունը շարունակում է Հայկական հնագույն ավանդությունը: Ըստ որում վերին աստիճանի հատկանշական է, որ այն խոսում է միայն ու միայն արևելյան ուղղությունը կայացած տեղաշարժերի մասին, բայց ամենևին ոչ արևմտյան:

Հայկեր, պատմում է Մովսես Խորենացին, Հարբում «մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդուց իւրում», իսկ «Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարեկս Հյուսիսոյ» (Ա, 12): Արամանյակի և նրա անմիջական հետնորդների տարածվելը հյուսիս-արևելքում, այսինքն՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից էլ այն կողմը՝ Կասպից ծովի ուղղությամբ դեպի Արաքսի և Կուրի խառնարանը, շատ մանրամասն նկարագրված է ավանդության մեջ: Այդ նկարագրությունն ամրապնդված է նաև իրացվող վայրերի տեղանունները Հայկյանների անձնանուններից բխեցնելու (ինչպես նախորդ շարադրանքում Սիմը՝ Սեմից, Տարոնը՝ Տարբանից) բազմաթիվ

<sup>32</sup> Այդ է վկայում, փաստորեն, նաև ուրարտական աղբյուրների այն տեղանունների ցանկը, որոնցում Գ. Բ. Ջահուկյանը ավելի կամ պակաս հավանականությամբ Հայերենի բառարմատներ է տեսնում: Դրանց ճնշող մեծամասնությունը վերաբերում է մեր նշած տարածքին: Տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Ուրարտերենը և Հայերենը.՝ Ուրարտու և Հայաստան, Երևան, 1988, էջ 151 և հտ.:

<sup>33</sup> АВИИУ, 50, 1, 3, 4, 5, 8, 9, 10 և այլն:

փորձերով, օրինակ, Արազածը՝ Արամանյակից, Արամվիրը՝ Արամայիսից, Շիրակը՝ Շարալից, Մասիսը՝ Ամասիակից, Այրարատը՝ Արայից, Գեղարքունիքը՝ Գեղամից, Միսականը (Մյունիքը)՝ Միսակից, Առանը՝ Առանից, Աղվանքը՝ Աղու մականունից և այլն, և այլն: Այս ժողովրդական կամ կեղծ կոչվող ստուգաբանությունները, իհարկե, գիտական արժեք չունեն, սակայն իրենք՝ տեղանունները արտակարգ կարևոր են, քանի որ որոշակի աշխարհագրական տեսք են տալիս Հայկյանների երթուղիների մասին ավանդության մեջ պահպանված տեղեկություններին:

Հայկյանների բունած մյուս ուղղությունը, դարձյալ երակես ունենալով Տարոն-Հարբի շրջանը, Հարավ-արևելյանն է՝ դեպի «Արարադի երկիրը», այսինքն՝ Կորդուք: Այստեղ անհրաժեշտ է մտաբերել վերը արտահայտված մեր այն կարծիքը, որը «Արարադի երկիր» հիշատակում որպես Բաբելոնից սկիզբ առած ճանապարհի վրա հանդրամիտ՝ աստվածաշնչական մակաշերտում է առասպելի նախնական տարբերակի վրա և, որպես այդպիսին, պիտի դուրս բերվի ավանդության բուն բովանդակությունից: Ընդհակառակն, այդ երկիր հիշատակում միանգամայն տեղին է ավանդության այն տեղում, ուր Սեբեոսյան տարբերակում ասված է, թե Հայկը իր մահվանից առաջ նվիրեց «Արարադի երկիրը» իր թոռ Կադմոսին՝ Արամանյակի որդուն, իսկ Մովսես Խորենացու մոտ՝ առավել հարմարեցված աստվածաշնչական թեմաներին, ինչպես և իր սեփական՝ տեղեկությունների փոխհարմարեցման սովորությունը, թե Հայկը կյանքի վերջում իր Կադմոս թոռանը հրամայում է իր առաջին (այսինքն՝ Կորդուքի, սկզբում իրեն նվիրաբերված) տանը բնակվել<sup>34</sup>: Ի դեպ, նշենք, որ Կադմոս անվան իրական կապը այս երկրամասի հետ ամրապնդվում է այն հանգամանքով, որ Կորդուքի անմիջական հարևանությամբ՝ Տիրբուխի մյուս (մասամբ և այս) ափին, տարածվում էր ասուրական աղբյուրների Կադմու-խի երկիրը:

Վերջապես Հարբից դեպի արևելք՝ դեպի Վանա լճի շրջակայքը և հատկապես Վան-Տոսպի շրջանը, շարժումն իրականացնում են, ըստ ավանդության, ինքը Հայկը, նրա որդիներ Խոռն ու Մանավաղը և թոռ Բազը: Լսելով Բելի՝ Հարավից ներխուժման մասին, Հայկը շտապում է նրան ընդառաջ, շրջանցելով Վանա լիճը, և բախվում նրա հրոսակների հետ Ուրարտու-Բիսյնիլի բուն արտում: Տեղի ունեցած ճակատամարտի վայրը ստանում է Հայոց ձոր անվանումը, որպիսի անունով հայտնի է Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Հայկական գավառներից մեկը: Խոռը և Բազը իրացնում են Վանա լճի հյուսիսային ափերը (Խոռխոռունիք և Բզնունիք): Սրանով, ըստ Մովսես Խորենացու, փաստորեն, ավարտվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի իրացումը Հայկյանների կողմից:

6. Հարց է ծագում, սակայն, իսկ ե՞րբ և ինչպե՞ս է իրացվել, ըստ ազգային ավանդության, Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը, այսինքն՝ Հարբ-Տարոնի շրջանից դեպի արևմուտք, մինչև Եփրատի հովիտը տարածվող հսկայական երկրամասը, պատմական Հայաստանի մոտավորապես կեսը: Զարմանքով տեսնում ենք, որ ոչ միայն այդ մասին, այլև ընդհանրապես այդ երկրամասի վերաբերյալ ազգային ավանդությունը ոչ մի տեղեկություն չի պարունակում: Հանգամանք, որը բացատրություն կամ մեկնաբանություն է պահանջում, քանի

<sup>34</sup> Տե՛ս վերը, էջ 37, 38, ծան. 27:



որ աներևակայելի է, որ ավանդույթյունը իր նախնական տեսքով ևս այդ խնդրում լուսվում են պահպաններ:

Սակայն նախ և առաջ Համոզվենք, որ դա իրոք այդպես է: Մենք քննարկեցինք Մովսես իտրենացու Պատմության Առաջին գրքի 10-12-րդ գլուխների պարունակած տեղեկությունները, որոնցում խոսքը Հայկի և Հայկյանների՝ Բաբելոնից մինչև Հարբ-Տարոնի շրջանը և այնտեղից դեպի արևելք տեղաշարժերի մասին էր, որոնց ընթացքում Հայկյանների կենտրոնը Հարբ-Տարոնից տեղափոխվում է Արարատյան դաշտը (ըստ Մովսես իտրենացու՝ Արարատ կամ Արայի դաշտ), որտեղ Հիմնադրվում է առաջին մայրաքաղաք Արմավիրը:

Հաջորդ՝ 13-14-րդ գլուխները նվիրված են Հայկյանների վեցերորդ սերնդի ներկայացուցիչ Արամի (որի մասին այլ առումով վերը խոսվել է) ռազմական արշավանքներին, որոնց մեկնակետը արդեն Արմավիրն էր: Նկարագրված երեք արշավանքներից՝ դեպի արևելք, դեպի Հարավ և դեպի արևմուտք, առաջին երկուսը պարզորոշ կերպով շարունակությունն են կազմում Հայկի և Հայկյանների նախորդած տեղաշարժերի:

Այսպես, առաջին արշավանքը ուղղված է Մարաստանի (Մեդիայի) կողմը, որի կորերին գրեթե Հասել էին ինքը Հայկը՝ մտնելով Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Հայոց ձոր գավառը, և նրա հետնորդները՝ մտնելով Արաքսի ստորին հոսանքի հովիտը: Արամը, գրում է Մովսես իտրենացին «պատահեց Մեդագուցոց կրիտասարդաց, որոց առաջնորդ էր Նիւբար ոմն ասացեալ Մադէս... յեզերս սահմանացն Հայոց»: Հաղթելով սրան, Արամն իր հերթին առաջ է ընթանում մինչև Մարաստանի Զարասպ լեռը:

Արամի երկրորդ արշավանքը ուղղված էր դեպի Հարավ՝ Կորդուքի վրայով Ատրեստանի կողմը: Նա հաղթեց Բարշամին և «գմեծ մասն դաշտացն Ատրեստանի կալաւ ի ծառայութեան Հարկի...»: Այստեղ նույնը կարելի է ասել, ինչ որ առաջին արշավանքի դեպքում. Արամի այս արշավանքը նույնպես անմիջական շարունակությունն էր Հայկի և Հայկյանների տեղաշարժերի, քանի որ խոսքը Կորդուքի մասին է, որը, ինչպես հիշում ենք, բնակեցրել էր Հայկի թոռ Կադմուրը:

Միանգամայն տարբեր է, սակայն, Արամի երրորդ, դեպի արևմուտք ուղղված արշավանքը: «Աստ յարևմուտս շարժեալ. գրում է Մովսես իտրենացին, ... Հասանէ ի կողմանս Կապադովիացուց, ի տեղի մի, որ այժմ ստի Կեսարիա»: Այստեղ նա հաղթում է Պայսալիս Բաադյա Տրոտայանին, կուսարիւլ է կարգում իր ազգական Մշակին (որը Հիմնադրում է Մաթաթ քաղաքը, հետագայի Կեսարիան) և «դաւնայ ի Հայս», նախապես պատվիրելով տեղացի բնակչությանը սովորել հայերենը: Նրա նվաճած տարածքից Մաթաթի բնակչությանը սովորել է «Պոտոի Արմենիա» (Մովսես իտրենացու մոտ՝ «Պոտոին Արմենիան»)՝ Հուսարենի Հայցական Հորովով, այսինքն՝ «Առաջին Հայք», մյուսները՝ «մինչև ցբուն իւր սահմանն»՝ Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք: Սրանք, բացի վերջինից, որն ըստ Մովսես իտրենացու նույնական է Ծոփքի Հետ, գտնվում էին Եփրատից արևմուտք: Այս երկրամասերը, ըստ Մովսես իտրենացու, նախապես անբնակ էին, և Արամը լցնում է դրանք բնակչությամբ:

Այսպես, ուրեմն, Արամի օրոք, «բուն իւր սահմանքն», այսինքն՝ Հայքի արևմտյան սահմանները, անցնում էին Եփրատի վրայով, բացառյալ Ծոփքի շրջանը: Բայց չէ՞ որ ըստ ավանդության Հայկի ու Հայկյանների բնակեցրած

ամենաարևմտյան շրջանը Հարբ-Տարոնն էր: Ուրիշ խոսքով ասած, եթե Արամի այս արշավանքը ևս, նախորդ երկուսի նման, կազմեր Հայկի և Հայկյանների տեղաշարժերի շարունակությունը, ապա այն պիտի սկսվեր ոչ թե Եփրատից, ինչպես որ է, այլ Հարբ-Տարոնի շրջանից:

Այսպիսով, մենք համոզվում ենք, որ ազգային ավանդությունը՝ մեզ Հասած վիճակում, կատարյալ լուսվում է պահպանում լեռնաշխարհի արևմտյան մասի և նրա իրացման մասին: Լուսվում է նաև ինքը՝ Մովսես իտրենացին, չփորձելով որևէ ձևով լրացնել այդ բացը, ըստ երևույթի իրա Համար ձեռքի տակ անհրաժեշտ նյութ չունենալու պատճառով: Եթե մեկը բավականաչափ ծանոթ է Պատմահոր սկզբունքին՝ մշտապես ձգտել նկարագրվող երևույթներն ու պրոցեսները Հասցնելու վերջավորված, ավարտուն վիճակի, ապա նրան այդ բացի առկայությունը իսկապես առեղծվածային կներկայանա: Այսպես, օրինակ, եթե չհեռանանք լեռնաշխարհի իրացման խնդրից, ապա Պատմահայրը մոտացություն չի տվի Հայկյանների կապակցությունը չհիշատակված նրա Հյուսիսային մասերը, լրացնելով այդ բացը Վաղարշակի գործունեությանն անդրադառնալու ժամանակ: Այսպես, Վաղարշակը (Բ, 6), մակեդոնացիների լծից ազատագրելով անդրեփրատյան շրջանը («զկողմանս Մաթաթայ և զՊոնտացիս և զԵգերացիս»), «դաւնայ զՀիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց»: «Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին Հիւսիսայ և որ գտորոտով մեծի լեռինն Կաւկասայ... արձակէ գնոսս Հանդերձ արամք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ: Եւ ինքն ...իջանէ ի տեղիս խոտաւէտս մեծ՝ ի սահմանն Ծարայի», այսինքն՝ Հայկյանների նախորդ իրացած երկրամասը՝ Երբակ: Սա կրկնում է Արամի արևելյան և Հարավային արշավանքների սխեման, այն տարբերությամբ միայն, որ Վաղարշակը ոչ թե շարունակում է Հայկյանների տեղաշարժը, ասենք, նրանց իրացրած Երբակից, այլ շրջանց ճանապարհով է մտնելում նույն այդ Երբակին:

Այս հետնախորքի վրա իսկապես դժվար է վերոհիշյալ բացը վերագրել Մովսես իտրենացուն, և բոլոր հիմքերը կան բացատրելու այն նրա ժառանգած ազգային ավանդության թերի վիճակով: Եթե միայն չենթադրենք, թե Համապատասխան գլուխները ինչ-ինչ պատճառներով չեն Հասել մեզ նրա «Հայոց պատմության» կազմում, մի բան, որ տվյալ դեպքում վերին աստիճանի անհավանական է թվում:

Վերը նշվել է, որ այնպիսի աստվածաշնչական տարրերի ներմուծումը Հայ ազգային հնագույն ավանդության մեջ, ինչպիսիք են բաբելոնյան աշտարակաչիությունը և նրա հետևանքների հետ կապված թեմաները, ընդունակ էր դուրս մղելու բուն ավանդությանը որոշ թեմաներ, մանավանդ, եթե վերջիններս հակասելիս լինեին վերոհիշյալ տարրերին:

Ահա այս տեսանկյունով դիտարկելիս Մովսես իտրենացու մոտ պահպանված պատկերը, մենք որոշակի իրավունք ունենք ենթադրություն անելու, թե նշված բացը նախապես ավանդության մեջ չի եղել և առաջացել է Աստվածաշնչից ծագող՝ Հայկի և Հայկյանների բաբելոնյան ուղիով Հայկական լեռնաշխարհը մտնելու տարբերակի՝ նրա վրա մակաշերտման հետևանքով: Ուրիշ խոսքով ասած՝ բաբելոնյան մասի հետ կապված այնպիսի մի թեմա, որը Հակասում էր իրեն:

Ծագող Հարցը կարելի է այսպես ձևակերպել. եթե Հայկը և Հայկյանները ըստ ավանդության նախնական վերականգնվող տարբերակի չեն Հայտնվել Հարբ-



Տարոնի չըջանում բարեխոյան ուղիով, ապա ո՞ր ուղիով կարող էին նրանք հայտնված լինել այնտեղ ըստ այդ տարբերակի: Այստեղ մենք ընտրելու հնարավորություններ պրեթե չունենք, քանի որ պարզ է, որ, ըստ այդ տարբերակի, նրանք չէին կարող հայտնված լինել այնտեղ, ինչպես ըխում է վերը շարադրվածից, ո՛չ Աստրեստանի կողմից, այսինքն՝ դարձյալ հարավից, ո՛չ էլ Մարաստանի կողմից, այսինքն՝ արևելքից: Նույնը և հյուսիսից: Ուրեմն, մնում է արևմտյան կողմը: Կարելի է դուցե մտածել, թե վերականգնվելիք թեման կապված է եղել ոչ թե արևմուտքից գալու, այլ ընդհակառակն, Հարբ-Տարոնի չըջանից դեպի արևմուտք տարածվելու հետ: Շատ բնական կլիներ ենթադրել, թեևս, թե ըստ նախնական ավանդությունների, բայցի Արամանյակից, որը շարժվել է դեպի արևելք, Հայկի մեկ ուրիշ սրբի, իր գերդաստանով հանդերձ, նույն ձևով շարժվել է դեպի արևմուտք և իրացրել, ասենք, Արածանու հովիտը, Եփրատի ձախափնյակը և այլն, տալով տեղերին յուրայինների անունները: Սակայն այստեղ մի զժվարություն կա: Այսպիսի թեման մաղաչափ անգամ չէր հակասի Աստվածաշնչից ծագող բարեխոյան տարբերակին, ուստի և ոչ մի հիմք չէր լինի այդ թեմայից ձերբազատվելու համար: Ընդհակառակն, այդպիսի համապարփակ ավանդության մեջ բարեխոյան տարբերակի ներմուծումը ավելի չքեղ և արդյունավետ տեսք կտար նույն այդ տարբերակին:

Իմ կարծիքով, այս պարագաներում, մենք կարող ենք միայն մի ենթադրություն անել, այն է, որ հայոց հնագույն ազգային ավանդության նախնական տարբերակում Հայկը և Հայկյանները հասել են Հարբ-Տարոնի չըջանը արևմուտքից՝ Եփրատի ավազանից: Այսպիսի ենթադրությունը լիովին գոհացնում է մեր նշած նախապայմանին՝ նրանով ուրվագծվող պատկերը տրամադորեն հակասում է աստվածաշնչական բարեխոյան տարբերակին: Այսպիսով, այդ պատկերի չքացումը՝ նշված տարբերակի ազդեցության տակ դուրս մղվելու հետևանքով, լիովին բացատրում է մեզ հասած ավանդության մեջ լուծաշխարհի արևմտյան մասի հետ կապված թեմատիկայի իսպառ բացակայությունը:

Այս ենթադրությունն ամրապնդելու համար կարևոր նպաստ է բերում դարձյալ Մովսես Խորենացու հիշատակությունը Հարբի կամ, ավելի ճիշտ, Հարբում բնակվածների մասին: Վկայակոչելով Մար Աբասին, Պատմահայրը գրում է. «Եւ ինքն (Հայկը) խաղայ, ստէ, այլով աղխին ընդ արևմուտս Հիւսիսոյ. դայ ընտակ է ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեւնադաշտին Հարբ, այս ինքն թէ Հարբ են»<sup>35</sup> ասակն բնակեալը՝ ազգի սանն թորգոմայ» (Ա, 10):

<sup>35</sup> Որոշ բացատրություններ է պահանջում այստեղ «Հարբ»՝ «Հայեր» բառը: Առասպելի բուն իմաստն այն է, որ Հարբում առաջինները բնակություն են հաստատում Հայկը և նրա որդիները: Ուրեմն և, ըստ առասպելի, «Հարբ ... ազգի տանն թորգոմայ» Հենց նրանք են: Սակայն եթե այս արտահայտությունը պոլիէք առասպելի կոնտեքստից, այն կնշանակի ավելի շուտ ոչ թե Հայկին ու իր որդիներին, և նույնիսկ՝ ոչ թե իրեն թորգոմին, այլ նրա հայրերին՝ Թիրատին, Գամբրին, նույնիսկ Հաբեթին: Մի բան, որ ինքն առասպելը կորականապես մերժում է: Հետևաբար, հանդես է դալիս որդակի հակասություն այդ արտահայտության նեղ իմաստի և առասպելի բովանդակության միջև: Այդ հակասությունը չէր լինի, եթե Մովսես Խորենացու մոտ կարդայիք փոխանակ «Հարբ»-ի, ասենք թե, «արք ազգի տանն թորգոմայ», որը ոչ մի կոսակած չէր թողնի, թե խոսքը Հայկի ու նրա որդիներին մասին է: Ահա, մեր կարծիքով, այդ նշանավոր հակասությունը բացատրվում է այն հանգամանքով, որ «Հարբ» բառն այստեղ ծագել է «Հարբ» տեղանվան ճնշման ներքո, որպես Պատմահայրը շատ սիրելի

«Տուն թորգոմայ»՝ աստվածաշնչական արտահայտություն է՝ կրթայերենում՝ Beth Thogarma, հունարենում՝ δίκος τού Θοργαμά (կամ Θοργαμά), որ նշանակում է ոչ թե պարզապես «թորգոմի տուն», այլ «թորգոմի տուն» անունը կրող երկիրը<sup>36</sup> (ինչպես, օրինակ, Հայ մատենագրության մեջ «Անգեղոտուն» արտահայտությունը): Դրա մասին վերը խոսվել է, իսկ այժմ մեջբերենք Աստվածաշնչում առկա երկու համապատասխան հիշատակությունը, երկուսն էլ եղելիք մարգարեի այն ճառերից, որոնք թվագրվում են մ.թ.ա. 590-585թթ.<sup>37</sup>: Առաջինը կապված է Փյունիկիի Տյուրոս փաճառաշահ քաղաքի հետ. «Եվ ի Տանէ թորգոմայ»<sup>38</sup> ձիովք և հեծելովք և ջորիովք լցնի զվաճառա քո» (Իե, 14): Երկրորդը հետևյալն է. «Եւ Տունն թորգոմայ ի ծագացն Հիւսիսոյ, և ամենեքին, որ շուրջ զնովաւ» (ԼԼ, 6):

Վերն արդեն ասվեց, որ «Տուն թորգոմայ» երկիրը տեղագրվում է Եփրատի վերին հոսանքի ավազանում Մալաթիայից հյուսիս: Սակայն Հայ միջնադարյան մատենագրության մեջ այն ընդհանրապես միանշանակ ընկալվել է որպես Հայաստան. այսպես, օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցու մոտ (Թիֆլիս, 1912), էջ 6՝ «Վաղարշակ Պարթև թագուորէ տանն թորգոմայ» կամ էջ 47՝ «ի պատրիարքութիւն տանն թորգոմայ զՄեծն Ներսէս» և այլն:

Սակայն V դարում, երբ դեռ նոր էր թարգմանվել Աստվածաշունչը, «Տուն թորգոմայ»-ը դեռևս մասամբ պահպանել էր իր աստվածաշնչական իմաստը: Այս է պատճառը, որ այդ դարի հեղինակները, ցանկանալով նույնացնել «Տուն թորգոմայ»-ը Հայաստանի հետ, միշտ հատուկ բացատրություն են տալիս, թե խոսքն այստեղ Հայաստանին է վերաբերում: Բացի Մովսես Խորենացուց, այդ արտահայտությունը V դարում հանդիպում է Ազաթանդեղոսի և Փավստոս Բուզանդի մոտ, հետևյալ տեսքով. «Այլարատեան զաւառին ... բխիցին Հայոց տանն թորգոմայ շորհք» (Ազաթանդեղոս, 776), «Ի մէջ Հայաստան աշխարհի

ժողովրդական ստուգարանությունների դայթակղեցուցիչ մի նմուշ: Հմմտ. Ա. Մ. Գ ա ռ ա դ ա շ յ ա ն. Բնական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, մասն Ա, էջ 146, ուր և նշված է այդ հանգամանքը, ինչպես և հիշեցված է, որ «Հարբ» բառի հղովման ձևը «Հարբայ» է, և ոչ «Հարանց», ինչպես կլինի, եթե ստուգարանությունը ճիշտ լիներ:

<sup>36</sup> Որ Մովսես Խորենացու մոտ ևս ճիշտ այդ իմաստն է առկա, բացի Աստվածաշնչի հեղինակությունից, ցույց է տալիս նաև իր՝ Պատմահայր բառօգտագործման հանգամանքը: Այսպես, մենք նրա պատմության մեջ այլևս չենք գտնում «ազգ տանն», այսինքն՝ «տան ազգ» արտահայտությունը, ինչպես որ այստեղ կա, թեև դրա առիթները արտակարգ բազմաթիվ են: «Ազգ» բառը նրա մոտ անմիջականորեն լծորվում է անձնանվան, սոցիալական կամ ցեղանվան հետ, օրինակ. «ազգին Քամայ» (Ա, 6), և ոչ՝ «ազգին տանն Քամայ», «յազգէ Գրիգորի» (Գ, 16), «ազգ Մամիկոնից» (Բ, 81), «յազգէն Գնունեաց» (Գ, 43), «ազգը Պարթևաց» (Բ, 68) և այլն, և այլն: Սա պարզորոշ կերպով նշանակում է, որ քննարկվող դեպքում «ազգ» բառի հետ լծորման առարկա հանդես է դալիս ոչ թե «թորգոմ» անունը (այդ դեպքում կլիներ պարզապես «ազգ թորգոմայ»), այլ «Տուն թորգոմայ» միասնաշնչում: արտահայտությունը, որպես երկրի անուն, ինչպես որ այն ներկայանում է Աստվածաշնչում:

<sup>37</sup> O. E i s s f e l d t. Einleitung in das Alte Testament. Tübingen, 1964, S. 504 ff.

<sup>38</sup> Ի դեպ, Հայերեն Աստվածաշնչում այդ անվան ուղղակի հղովմաձև է թորգոմա, սեռականը՝ թորգոմայ (այստեղից էլ՝ Տուն թորգոմայ), իսկ Հայ մատենագրության մեջ համապատասխանաբար՝ թորգոմ-թորգոմայ: Տե՛ս Հր. Ա. Ե ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Բ, էջ 344:



տանն թորգոմայ» (796), «տան որբուց թորգոմայ աշխարհին հայոց» (Փավստոս, Դ գրքի վերնագիր), «ամենայն բնակիչք տանն թորգոմայ, հայ լեզուն առ Հասարակ» (Ե, 30)<sup>39</sup>:

Մովսես Խորենացու մոտ, ինչպես տեսանք, նման բացատրություն չկա, ուստի կարելի է մտածել, որ նրա մոտ «Տուն թորգոմայ» արտահայտությունն էլ ավելի է պահպանում իր աստվածաշնչական իմաստը, քան V դարի նշված Հեղինակների մոտ է: Մեր ենթադրությունը այստեղ աղբյուրին հնագույն առասպելավանդության կորուստը մասից մի նմուշ կամ վերհույ է պահպանվել, որը հուշում է, թե այդ մասում խոսված պիտի լինե՞ր Հայկի ու նրա որդիների ոչ թե Բաբելոնից, այլ Հայկի բուն հայրենիքից՝ «Տուն թորգոմայ»-ից մինչև Հարբ կտրած ճանապարհի մասին: Հայկի առասպելի հնությունը ընդունողները Համաձայն են, որ բաբելոնյան ուլին հետագայի հավելում է, ուրեմն և բացակայել է նրա նախնական տարբերակում: Մենք, մեր հերթին, ջանացինք ցույց տալ, որ այն, մակաշերտվելով առասպելի վրա, պետք է որ դուրս մղեր մեկ այլ գաղափար, որը նրան Հակասում էր, ըստ որում, դուրս մղված գաղափարը, բնականաբար, պետք է դարձյալ Հայկի գալստյան ուղուն վերաբերեր: Ահա, «Տուն թորգոմայ»-ի ուղու թեման է, որ, մեր կարծիքով, դուրս է մղվել բաբելոնյան ուղու հավիման հետեանքով, որպես նրան արտագծորեն հակասող:

Կարելի է առարկել, թե այս թեման ևս աստվածաշնչական է, ուստի և երաշխիք չկա, թե այն առկա է եղել առասպելի նախնական տարբերակում: Այո, այն ևս արտաբնական աստվածաշնչական է, բայց այդ երկու աստվածաշնչական թեմաների միջև տարբերություն կա: Բաբելոնյան թեման զուտ աստվածաշնչական է, կապված է աշտարակաշինության և նրան հաջորդած՝ ժողովուրդների ցրվելու առանցքային գաղափարի հետ, ուստի և կարող էր բխել միայն ու միայն Աստվածաշնչից, մինչդեռ մյուսն ունի իր արտաստվածաշնչական արմատները:

Այսպես, թորգոմի, որպես հայերի նախահոր, գաղափարը, Համենայն դեպս, ավելի վաղ է վկայված, քան իրականացվել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Այն առկա է արդեն IV դարի Հեղինակ Եվսեբիոս Կեսարացու «Բրտնիկոնում», որտեղ կարդում ենք. «Θοργαμά θὲ οὖν Ἀρμένιοι «Թորգոման, որից (ծագում են) հայերը»: Հայ.՝ «Թորգոմ. և ի նմանն Հայք»<sup>40</sup>: Այ՛նքնք, թորգոմի Հայոց նախահայր լինելու գաղափարը V դարի հայ մատենագրության մեջ ծագած մի գաղափար չէ՞՝ հղացած սոսկ Աստվածաշնչի թարգմանության ներքո, այլ այն գոյություն է ունեցել արդեն ավելի վաղ, նախագրական շրջանում:

Այնուհետև, «Տուն թորգոմայ» երկրի մասին տեղեկությունները չեն սահմանափակվում Աստվածաշնչի պարունակած՝ վերը մեջբերված երկու վկայություններով: Այն, ինչպես արդեն ասվել է, նույնանուն է մ.թ.ա. VIII-VII դդ. պատկանող ասորական աղբյուրների թվագրիմամուհի<sup>41</sup> և մ.թ.ա. XVI-XIII դդ. պատկանող

<sup>39</sup> Նաև այն դեպքում, երբ խոսքը ոչ թե անմիջականորեն «տուն թորգոմայ»-ի, այլ «Թորգոմայ ազգի» կամ «Թորգոմայ որբուց» մասին է, նշված Հեղինակները դարձյալ շատ զգույշ են: Հմմտ. «Թորգոմայ ազգիս, գՀայաստան աշխարհիս» (Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, 16), «ազգացն Հայաստան աշխարհի որբուց թորգոմայ» (Փ ա վ ս ո ս, 10տտ. նախ.) և այլն:

<sup>40</sup> Եւսեբի Պամփիլեսայ Կեսարացու ժամանակակից. մասն Բ, Վենետիկ, 1818, էջ 12:

<sup>41</sup> F. T hureau - Danguin. Une rélation de la huitième campagne de Sargon II, Paris, 1912.

խեթական աղբյուրների թեգաբարամայի<sup>42</sup> հետ՝ թե՛ իր անվամբ և թե՛ աշխարհագրական տեղադրությամբ: Այնպես որ մեր առասպելը կարող է ժամանակին սնված լինել հենց այդ իրականություններից և միայն հետագայում որդեգրած այդ երկրների աստվածաշնչական «Տուն թորգոմայ» անվանումը<sup>43</sup>:

Իսկ այն Հանգամանքը, որ թորգոմի տուն-թիվագրիմամու-թեգաբարամա երկիրը գտնվել է «Հայ» ցեղանվան, ուրեմն և «Հայկ» անձնանվան հետ կապված Հայասա երկրի մերձավոր Հարևանությամբ, ընդունակ է ոչ միայն սոսկ ամրապնդելու մեր վերոհիշյալ եզրակացությունները, այլև հիմք ծառայելու թորգոմ-Հայկ և թեգաբարամ-Հայասա զույգերի առկայությունից բխող նոր եզրակացությունների համար:

Ամփոփելով, մենք ցանկանում ենք փորձ անել մոտավորապես վերականգնելու Հայկի և Հայկյանների առասպելավանդության զարգացման փուլերը՝ սկսած հնագույն շերտերից: Դրանք, մեր կարծիքով, ընդհանուր գծերով, առասպելաբար, արտահայտում են պատմության իրական ընթացքը, էպոսն հաստատվելով սեպագրական աղբյուրների տվյալներով և, իրենց հերթին, լրացնելով դրանք:

Առաջին փուլ: Հայկը որպես հայերի առասպելական նախնի և անվանատիր (էպոնիմ)՝ գլխավոր ցեղային աստված, որսորդության և աստեղային (աստրալ) աստվածություն: (Այս վերջին հատկությունը առիթ է հնարավորություն է տվել հետագայում նրան հին հունական Օրիոնի հետ համադրելու և Օրիոնի համասեղությունը նրա անունով «Հայկ» կոչելու համար): Այնուհետև և առասպելը ծագել են, հավանաբար, հնդեվրոպական ընդհանրությունից հայերի տարանջատվելուց հետո, «Հայ» ցեղանվան բյուրեղացման հետ կապված:

Երկրորդ փուլ (մեզ հասած առասպելի մեջ պակասող օղակը): Հայկի չվիլը թեգաբարամ-թիվագրիմամու-Տուն թորգոմայ երկրից և հաստատվելը Հարբում: Ստեղծվել է Հավանաբար, մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսին - I հազ. սկզբներին, որպես արտացոլում սեպագրական աղբյուրներով վկայված վերը նկարագրված պատմական իրողությունների:

Երրորդ փուլ: Հայկի հաղթական պայքարը Միջագետքից ներխուժած բռնակալ Բեիլ դեմ: Կարող էր ստեղծվել որպես արտացոլում Հայկական լեռնաշխարհի վրա մ.թ.ա. II հազ. վերջերին - I հազ. սկզբներին գիշատիչ Ասորեստանյան տերության պարբերական թալանչիական արշավանքների և լեռնաշխարհի բնակչության դիմադրություն:

<sup>42</sup> Répertoire géographique des textes cunéiformes, Bd. 6. Die Ortsnamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 383.

<sup>43</sup> Այսպիսի մոտեցմանը հարում է Ի. Մ. Դյակոնովի այն տեսակետը, թե «Բավական հայկական է, որ սկսած Ասորիսադրոնի ժամանակից (մ.թ.ա. 680-669թթ.) մինչև արեմենյան տիրապետության շրջանը (մ.թ.ա. VI դարի կեսերը - Գ. Ս.) գոյություն է ունեցել մի բավական մեծ, լեզվով՝ հայկական ...թալանչիություն, որի կենտրոնն է եղել Մեջլիլը ...Հենց այդ թալանչիությունն է Աստվածաշնչում անվանված թորգոմայ, թորգոմայ կամ Բեթ-թորգոմայ («Թորգոմայի տուն»-Գ.Ս.)» - И. М. Дьяконов. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей. - Вестник древней истории, 1981, N 2 с. 60. Այստեղից բխում է, որ «Տուն թորգոմայ» թագավորությունը պետք է գոյություն ունենար Աստվածաշնչում նրա հիշատակումից (մ.թ.ա. VI դարի սկզբներին), Համենայն դեպս, չուրճ մեկ դար առաջ:



Չորրորդ փուլ: Հայկի որդիների շարժումը Հարբի շրջանից արևելյան ուղղությամբ և Արարատյան դաշտի, Շիրակի, Սևանա լճի ավազանի ու նրանից այն կողմ ընկած հողերի, ինչպես և Վանա լճի ավազանի ու Կորդուբի իրացումը: Կապված է մ.թ.ա. VIII-VI դդ. այն իրադարձությունների հետ, որոնցում ավարտվում է Հայ ժողովրդի կազմավորումը:

Հինգերորդ (աստվածաշնչական թեմաների մակաշերտման) փուլ: Հայկի՝ Բաբելոնում աշտարակաշինությանը ժամանակակից և մասնակից լինելը և այնտեղից «Արարողի երկրի» վրայով դեպի Հարբ նրա ուղին: Կապվում է Աստվածաշնչին Հայերի ծանոթանալու ժամանակի հետ:

Այսպիսի դարգացման ճանապարհ կարելի է ենթադրել Հայկի և Հայկյանների առասպել-ավանդության համար, մինչև նրա՝ Մովսես Խորենացու և Անանունի-Սեբեոսի երկերում արտացոլվելը:

#### “ИСТОРИЯ АРМЕНИИ” МОВСЕСА ХОРЕНАЦИ И КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ

(Проблема историчности и этапов развития легенды о Хайке и Хайкидах)

#### Резюме

Подобно всем древним и средневековым авторам, Мовсес Хоренаци не знал о существовании государства Урарту. Тем не менее, в его “Истории Армении” имеется ряд сведений, отражающих события и явления, связанные с этим государством и временем его существования. В наиболее явственной форме эти сведения выступают в главах о строительстве города Ван - столицы Урарту Тушпы, приписанном Мовсесом Хоренаци, вслед за народным преданием, полулегендарной ассирийской царице Шамирам, образ которой проник в местную среду из Ассирии и переплелся с древнейшей армянской легендой об Ара Прекрасном, боге пробуждающейся природы. Далее, такие сведения, по нашему мнению, выступают в легенде-предании о Хайке и первых Хайкидах. Это эпизоды борьбы с месопотамским завоевателем Белом, которые отражают борьбу населения Армянского нагорья с ассирийской агрессией в XIII - VIII вв. до н.э. Кроме того, это эпизоды, связанные с основанием Хайком и его ближайшими потомками восточной части Армянского нагорья, также имеющие историческую основу. Все эти сведения, так или иначе, подтверждаются клинописными (хеттскими, ассирийскими, урартскими) источниками, в свою очередь, дополняя их данные. Вместе с тем, оказывается, что упоминаемая легенда-предание со времени своего возникновения претерпела серьезные изменения, в частности, под влиянием Библии. Так, под влиянием легенды о Вавилонском столпотворении и рассеянии после него народов по всему свету,

Хайк, в качестве прародителя армян, также оказался в Вавилоне и, тем самым, пришел в Армению вместе со своим родом именно оттуда. По нашему мнению, этим вставным эпизодом из первоначального варианта легенды-предания о Хайке и Хайкидах был вытеснен противоречивший ему другой эпизод, по которому Хайк пришел не из Вавилона, а из страны, упоминаемой в Библии как “Дом Торгома” (Тильгаримму ассирийских, Тегарама хеттских источников), располагавшейся к западу от верхнего течения Евфрата и носившей имя отца Хайка - Торгома. В заключение сделана попытка выделить этапы развития легенды-предания о Хайке и первых Хайкидах со времени ее возникновения и до времени ее отражения в трудах Мовсеса Хоренаци и Анонима (Себеоса).

#### MOVSES KHORENATSI'S “HISTORY OF ARMENIA” AND THE CUNEIFORM SOURCES

(The Problem of Historicity and Stages of Development of the Legend of Hayk and Haykides)

#### Summary

Like all ancient and medieval authors Movses Khorenatsi also knows nothing about the kingdom of Urartu. Nevertheless, his “History of Armenia” contains information which reflects events and phenomena connected with this state and the time of its existence. Most clearly this information appears in the chapters dedicated to the construction of the capital city of Urartu-Van, which Movses Khorenatsi, following the folk tradition, ascribed to the semilegendary Assyrian queen Semiramis. Her image has entered the local milieu from Assyria and is interlaced with the ancient Armenian legend about Ara the Beautiful, the god of the rising nature. Furthermore, as we believe, such information appears in the legend-tradition about Hayk and the first Haykides. These are the episodes about the battle against the Mesopotamian conqueror Bel, which reflected the struggle of the people of Armenian highland against Assyrian aggression in the XIII-VIII centuries B.C. Besides that, these are the episodes connected with the settling of eastern part of the Armenian highland by Hayk and his immediate descendants, which also have historical background. This information, in either case, is confirmed by the cuneiform (Hittite, Assyrian, Urartian) sources and in its turn completes their data. At the same time, the abovementioned legend-tradition from the time of its creation was seriously modified, in particular, under the influence of the Bible. Thus, under the influence of the legend about Babel and dispersion of peoples around the world, the eponym of Armenians, Hayk, was also located in Babylon and had gone to Armenia with his kin exactly from there. We believe that this inserted episode has forced out from the original legend-tradition about Hayk and



the Haykides the contradictory episode, according to which Hayk came not from Babylon, but from the country attested in the Bible as the “House of Thorgom” (Tilgarimmu of Assyrian, Tegarama of Hittite sources), which was located to the west of the upper stream of the Eurhrates and carries the name of Hayk’s father-Thorgom. In conclusion, we have attempted to distinguish stages of development of the legend-tradition about Hayk and the first Haykides from the time of its creation up the time of its appearance in the works of Movses Khorenatsi and Anonym (by Sebeos).

**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԵՎ ԱՆՈՆԻՄՈՍ ԵՄԵՐԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ՑԱՆԿԸ**

Երբ ծանոթանում ես «Հայոց պատմության» մեջ նախարարական տոհմերի ծագման և հետագա պատմության լուսարանմանը, ապա դժվար է հրաժարվել այն մտքից, որ Խորենացին, ինչպես իր ժամանակագրական համակարգը կերտելիս, այստեղ ևս, նախարարության պատմությամբ զբաղվելիս, մեծ նախապատրաստական աշխատանք է տարել, հանգեցնելով իրեն հայտնի տեղեկությունները մի որոշակի համակարգի, որը և գետեղել է իր «Պատմության» մեջ:

Խորենացու առաջին մտահոգությունը այս ուղղությամբ պետք է լիներ այն նախարարությունների ցանկի կազմումը, որոնք պիտի հանդես գային իր «Պատմության» էջերում (բոլոր նախարարությունները չեն, որ հիշատակվում են այնտեղ): Ծանոթանանք այդ ցանկին, հանելով այն «Հայոց պատմության» տեքստից նախարարական տոհմերի նույն հերթականությամբ, ինչպես որ նրանցից յուրաքանչյուրն առաջին անգամ կամ եղակի, հիշատակվում է Խորենացու երկրում:

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1. Բագրատունի      | Մովսես               |
| Գնթունի            | Ապահունի             |
| Խոռխոռունի         | Մանապեան             |
| Վարաժնունի         | Բզնունական           |
| 5. Գաբեղեան        | 30. Սլկունի          |
| Աբեղեան            | Մանդակունի           |
| Արծրունի           | Վահունի              |
| Գնունի             | Առաւենեան            |
| Սպանդունի          | Զարեհաւանեան         |
| 10. Հատունի        | 35. Աղճնիքի          |
| Զրնական            | Մոկացի               |
| Մարզպետական        | Կորդուացի            |
| Մուրացեան          | Անձևացի, Անձաւացի    |
| Կազմեան            | Ակէացի               |
| 15. Սիւնի (Սխական) | 40. Ոչտունի          |
| Առանի              | Գողթնեցի             |
| Ուտէացի            | Վանանդացի, Վանանդեցի |
| Գարդմանացի         | Դիմաքսեան            |
| Մավղէացի           | Տրունի               |
| 20. Գարդարացի      | 45. Ամատունի         |
| Աչոցեան            | Առուեղեան            |
| Տաշրաց             | Ռոփսեան              |
| Գուգարացի          | Մամիկոնեան           |
| Որդունի            | Կամսարական           |
| 25. Անդեղեայ       | 50. Աշխաղարեան       |

Այսպիսի մի ցանկ կազմել է դեռևս Ն. Արունցը՝ վաղ միջնադարի հայ



նախարարութեան պատմութեան մանրակրկիտ և խորաթափանց հետազոտողը, որի անունը սույն Հոդվածում անընդհատ կհիշատակվի<sup>1</sup>: Ադոնցի ցանկը նույնպես կազմված է ըստ «Հայոց պատմութեան» մեջ նախարարութեանը հիշատակման հաջորդականութեան, բայց տարբերվում է մեր կազմածից իր ընդգրկմամբ: Նրա անվանացանկը պարունակում է 48 սոցմանուն, թիև, ըստ ցանկին ուղեկցող թվերի, պիտի լինեի 49: Ըստ այդ թվերի 35-րդի (Աղձնիքի) և 40-րդի (Ռշտունի) միջև պիտի լինեի չորս սոցմանուն՝ Մոկացի, Կորդուացի, Անձևացի, Ակէացի, սակայն թվարկված են միայն առաջին երեքը, իսկ Ակէացին չկա, գուցե՝ թյուրիմացաբար: Համենայն դեպս բերում ենք Մովսես Խորենացու Համապատասխան Հիշատակութեանը Ակէացու մասին, որը կասկածի տեղ չի թողնում: Խոսքը Վաղարշակ թագավորի մասին է: «Իսկ զՄոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ սնէր ընդ իւրեաւ սրիկայս բազում» նախարարութիւն Հաստատէ: Նոյնպէս և զԿորդուացիս, և զԱնձևացիս, և զԱկէացիս ի նոյն գաւառաց» (II, 8):

Սակայն, արդեն գիտակցաբար, Ադոնցը իր կազմած ցանկի մեջ չի ընդգրկել Առանի (Աղուանքի) նախարարութեանը, մինչդեռ Խորենացու մոտ կարգում ենք. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարեկից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին զԱռան, առ մեծ գետովն, որ հաստանէ զգաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գետեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակելի, զգուճոյն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զգաշտն Աղուանից և զԿեւնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամառն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յամուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի ալու ձայնէին զնա: Ել ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաղ կարգեցաւ կողմնակալ բերատոր ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սոցա զակայց ասին սերեալ զազգն Ուտէացուց և Գարդմանացուց և Ծաւղեացուց և Գարդարացուց իշխանութիւնս» (II, 8):

Այստեղից պարզվում է, որ «աշխարհի» Աղուանք անունը ծագում է, ըստ Խորենացու, Սիսակի «ալու» (քաղցր, հաճելի) մականունից, և որ այդ «մեծ և անվանի և բազմաբարձր կողմում (Վաղարշակը) կարգել է կողմնակալութեանը», կողմնակալ նշանակելով «անվանի և բարձր մտավորութեան և հանճարի բարձրում առաջին այր՝ Առանին»: Իսկ Առանը ներկայացուցին էր Սիսակից ծագած «մեծ և անվանի ցեղի», որը Սիսակից ժառանգել էր «Աղվանքի դաշտը և դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչվող ամրոցը», և որը Խորենացին, իր իսկ ասելով, մոռացել էր հիշատակել իր առաջին գրքում: Առանից էլ իրենց հերթին ծագել են Ուտէացիների, Գարդմանացիների, Ծաւղեացիների և Գարգարացիների նախարարութեանները:

Բողոքոյին անհասկանալի է, թե ինչն է դրդել Ն. Աղոնցին դուրս թողնել Առանի սոցմը Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ հանդես եկող նախարարական սոցմերի ցանկից: (Նշենք, որ Խորենացու մոտ Աղվանք տեղանվան Առան տարբերակը ներկայանում է որպես անձնանուն): Եթե դա «նախարարութիւն» (կամ «նահապետութիւն») բառի բացակայութեան է տվյալ դեպքում, ապա նույն

զլխում (II, 8) ունենք նաև մի շարք այլ նման դեպքեր, որոնք վերաբերում են Անգեղեայ, Սյլուճի, Աղձնիքի, Աշոցքի և այլ նախարարական սոցմերի կարգմանը: Ի դեպ, Առանեանք որպես նախարարական սոցմ հիշատակվում են Սերետի մոտ<sup>2</sup>:

Թվարկված 50 նախարարական սոցմերից բացի, «Հայոց պատմութեան» մեջ մեկական անգամ հիշատակված են նաև երկու իշխաններ՝ Հաշտեանքի իշխան Գազր (Դատր, III, 4) և Անձիթի իշխան Սաղամութը (III, 15): Երկու իշխաններն էլ հանդիպում են Բուզանդի մոտ (Գազը՝ Դատ ձևով): Մենք, հետևելով Աղոնցին, այս երկու իշխաններին չենք մոցնում Խորենացու՝ նախարարական սոցմերի համակարգի մեջ, որովհետև նրանց հիշատակութեանը «Հայոց պատմութեան» մեջ անցողիկ բնույթ է կրում, և Խորենացին նրանց սոցմերի մասին ծագումնաբանական տեղեկություններ չի տալիս, մի բան, որ նա անում է անխտիր բոլոր սոցմերի նկատմամբ:

Արդ, որտեղից է քաղված Խորենացու այս 50 սոցմանուն պարունակող ցանկը: Նախ, ինչ-որ չափով, նախամետոպյան շրջանից Խորենացուն հասած գրավոր նյութերից (Ողյուճակ քուրմ, «Հիւստումն պիտոյից», Մար Աբաս գուցի և ինչ-որ այլ նյութեր), այնուհետև, շատ մեծ չափով, IV և V դդ. Հայոց պատմութեանը լուսաբանող Հայ մատենագրութեանից և սրա կողքին՝ իր աուրյա կյանքից, շփումներից և Հարցուխորձից նախարարական սոցմերի և նրանց պատմութեան վերաբերյալ: Մենք դեռ կհամոզվենք, թե ինչքան մեծ է եղել այս երկրորդ խմբի տեղեկությունների նշանակությունը Խորենացու համար: Սակայն նրա ցանկը սերտորեն առնչվում է նաև հանրահայտ Գահնամակի հետ<sup>3</sup>:

Գահնամակը մեկ թերթի վրա և մեկ օրինակով մեզ հասած նախարարական սոցմանունների մի թվարկում է, բաղկացած 70 անուններից, որին մի փոքր առաջաբան է կցված. ծանոթանանք նախ առաջաբանին<sup>4</sup>, իսկ հետագայում կմտենանք նաև նրան հաջորդող ցանկին:

«< Իմ Սա> Հակայ խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի թագաւորի զոր ի Տիսպոնն իսաւսեցեալ եթէ ես զուսմականն զնամա զոր Արտաշէր ի դիւանին տէսի ի քաղոց ամոյո ժէ: Եւ Վուսմայ արքայից արքայի եւ բարերարի եւ զիր արարի եւ Սահակ կաթողիկոս թէ որպէս Ձեր բարերարութիւնդ հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտիրանց որպէս յառաջ առ Հայոց ազգին, նոյնպէս եւ ի ձերում դիւանի շահհամա <ը> ին առնել, որ յայտ հետէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց զահ ի յայտ լինէր: Նոյնպէս և ներսէհ հրամանաւ արքայից արքայի և ես <Սա> Հակ Հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնեմակին և եղաք մատանի զարքայից արքայի և զմերս. եւ է այսպէս արդար և ճշմարիտ» (Հաջորդում է ցանկը):

<sup>1</sup> Պատմութիւն Սերետի, աշխատութեամբ Գ. Վ. Աբաբաբյանի. Երևան, 1979թ., էջ 165:  
<sup>2</sup> Գահնամակն առաջին անգամ հրատարակվել է Մ. Էմինի կողմից՝ История Армении Моисея Хоренского. М., 1858, с. 358: Լուսանկարը տես Դ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 431-432: Գահնամակի մանրամասն և համակողմանի ուսումնասիրությունը տվել է Ն. Աղոնցը: Н. А д о н ц. Указ. соч., с. 249 и сл.  
<sup>3</sup> Ընթերցումն ըստ Ն. Աղոնցի:

<sup>1</sup> Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 261-262.



Թարգմանություն. «<Ես, Սա> Հակ, փնտրեցի Արտաշես թագավորի արքունի դրանը այն, ինչի մասին գեկուցեցի Տիգրանում, թե «ես տեսա Արտաշի բամական նաման դիվանում քաղոց ամսի 17-ին»։ Եւ արքայից արքա և բարերար Վասմին ես, Սահակ կաթողիկոս գիր գրեցի թե «թող Ձերք բարերարությունը հրաման տա՝ Հայոց ազատներին ու տանուտերներին, ինչպես առաջ (ընդունված էր) Հայոց ազգի մեջ, նույնպես և ձեր դիվանում շահհամա <ը>ի անկի, որպեսզի այսուհետև Հայոց ազատների և տանուտերների գահը Հայտնի լինի»։ Նույնպես և Ներսիսը՝ արքայից արքայի հրամանով, և ես <Սա> Հակ Հայոց կաթողիկոսս, կնքեցինք դահնամակը և դրինք արքայից արքայի և մեր մատանիները և այսպէս արգար ու ճշմարիտ է» (Հաջորդում է ցանկը)։

Գահնամակը մեզ հասել է ոչ թե բնագրի, այլ արտագրության ձևով (և որոշ աղավաղումներով)։ Այս հանդամանքը, դժբախտաբար, գրկում է հետազոտողին այն արտաքին տեսքի՝ այսինքն ձևավորման, հնագրության, նյութի, մի խոսքով՝ վավերագրաբանության (գիսլոմատիկայի) տեսակետից ուսումնասիրելու և թվագրելու հնարավորությունից և թույլ է տալիս քննության առարկա դարձնել սակ նրա բովանդակությունը։

Բովանդակությունը հետևյալն է. Սահակ կաթողիկոսը միտք է հղանում վերահաստատել Հայ նախարարների գահնամակը պարսից թագավորի ձեռքով։ Նա որոնում ու գտնում է գահնամակը վերջին Հայ Արչակունի՝ Արտաշես թագավորի դիվանում և ներկայացնելով այն Վասմ արքային՝ ստանում ցանկալի հաստատումը։

Առաջաբանում Հիշատակված են հետևյալ հինգ (կամ չորս) անձնավորությունները. ա) Սահակ Պարթև, Հայոց կաթողիկոս, որը գործել է IV դարի 90-ական թթ. սկսած մինչև 439թ., բ) Արտաշես, Հայոց թագավոր, որն իշխել է 422-428 թթ., գ) Արտաշի II, պարսից թագավոր, որ իշխել է 379-384թթ., դ) Վասմ V, պարսից թագավոր, որն իշխել է 420-439թթ. և ե) Ներսիս, պարսից թագավորի խոշոր պաշտոնյա, գուցե Հնուագայում Հայտնի Միհրնեսիսը՝ իր գործունեության սկզբնական շրջանում։

Այսպիսով, ըստ Գահնամակի իսկ տվյալների, այն ներկայացվել ու հաստատվել է 428 և 439թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։ Մինք բացառում ենք Արտաշեսի թագավորության տարիները (422-428թթ.), հենվելով, նախ, գահնամակի այն ցուցման վրա, ուր ասված է «...որպես յառաջ առ Հայոց ազգին, նոյնպես և ի ձերում դիւանի...», ուր «յառաջ»-ը պետք է նշանակի Արչակունիների Հայկական պետության դուրսված շրջանը։

Պարզաբանում է պահանջում «Արտաշի» անվանաձևը, որն օգտագործված է գահնամակում «Արտաշ»-ին գուգահեռ։ Տարակույս կա, թե արդյոք երկու անվանաձևերի տակ թաքնված է նույն անձնավորությունը, թե՞ խոսքը մի դեպքում Հայոց Արտաշեսի (որը կոչվել է նաև Արտաշի), մյուս դեպքում՝ Շապուհ II-ի որդի, պարսից թագավոր Արտաշի II-ի մասին է։ Կարծում ենք, որ ավելի ընդունելի է երկրորդ հնթագրությունը<sup>5</sup>, այսինքն՝ Հայոց արքա Արտաշեսի դիվանում գտնվել է պարսից արքա Արտաշիի հաստատած գահնամակը։ Սակայն,

<sup>5</sup> Հավանաբար, այդպես է հասկացել Գահնամակի առաջաբանը նաև Մովսես Խորենացին (III, 51, 65)։

եթե խոսքը այնուամենայնիվ Արտաշեսի մասին է, ապա ինչո՞վ կարելի էր բացատրել նույն տեքստում երկու անվանաձևերի առկայությունը։ Նախ նշենք, որ «Արտաշես» ձևը արտահայտում է իրանական այդ անվան հին, պահլավական, այդ ժամանակ արդեն որպես Հայկական ընկալվող ձևը, իսկ մյուսը՝ «Արտաշի»-ը, Սասանյան շրջանում Պարսկաստանում կիրառվող ձևը<sup>6</sup>։ Փորձենք սալ երկու անվանաձևերի զուգահեռ օգտագործման հնարավոր բացատրությունը, հենվելով թղթում Հանդիպող նմանօրինակ մի այլ դեպքի վրա։ Այստեղ Արտաշի անվան հետ կապակցված, հանդես է գալիս «ռամական նամա» տերմինը, որի ստուգաբանությունը չուրջ վեճեր են եղել<sup>7</sup>։ Թվում է, թե ինչպիսի ստուգաբանություն էլ տրվեք այդ տերմինին, թղթի ամբողջ կոնտեքստը թույլ է տալիս պնդելու, որ «ռամական նամա»-ն և մի քանի տող հետո հիշատակված «գահնամակը» («գահնեմակին») նույն բանն են նշանակում, մեկը՝ պարսիկների մոտ, մյուսը՝ Հայերի։ Իրականում այդ բառը նույնպես իրանական ծագում ունի, և պարունակում է նույն «նամա (կ)» բառը, սակայն նրա ձևը, հատկապես, վերջին կ-ի առկայությունը, վկայում է այն մասին, որ նա փոխառված է ոչ թե սասանյան շրջանում, ինչպես «ռամական նամա»-ն, այլ պահլավերենից, այսինքն՝ ավելի վաղ շրջանում<sup>8</sup>, իսկ V դարում, Հայաստանում ընկալվում էր արդեն որպես Հայկական բառ։

Այս զույգը հիշեցնում է Արտաշես-Արտաշի գույգը և Հուշում «Արտաշի» անվանաձևի օգտագործման հնարավոր պատճառները։ Այն օգտագործված է «ռամակա նամա»-ի հետ միասին, միևնույն նախաբանություն մեջ, որը ասել է Սահակը Տիգրանում։ Բերականապես այդ նախաբանությունն ուղիղ խոսք է, այսինքն՝ ակնկալություն ունի բառացիորեն վերարտադրելու սասածը։ Բացառված չէ, որ Սահակն այստեղ բերում է այն տերմինը և այն անվանաձևը, որոնք նա կիրառել է Տիգրանում Գահնամակի կապակցությունը բացատրություններ տալիս։

Վերադառնալով Գահնամակի թվագրման հարցին, շարունակենք, ասելով, որ նախարարական տոհմերի բուն ցանկը ևս չի հակասում առաջաբանից բխող թվագրմանը։ Ազոնցը նշում է, որ այդ ցանկը, չնչին բացառություններով (որը և բնական է), ինչպես նաև գերծ է այնպիսի տոհմերի հիշատակությունից, որոնք V դարում արդեն դուրսվում չունենին<sup>9</sup>։

<sup>6</sup> Արտաշես-Արտաշի անվանաձևերի նշված հարաբերակցությունը Հայոց արքա Արտաշեսի կապակցությամբ պարզ արտահայտվել է Խորենացու մոտ (III, 58)։ Անվանաձևերի ծագման մասին տե՛ս Հ. Ա. ճ ա ու յ ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Ա, Երևան, 1942, Արտաշես և Արտաշի։

<sup>7</sup> Ն. Հ. մինն ուղղում է՝ «Վասմական». Գր. խաթաթյանը համաձայն չէ, և ստուգաբանում է պարսիկերեն «ռամա»-ն՝ «երամ, ամբողջ» բառի օգնությամբ։ Սիգրենդորեն նրա հետ համաձայն է Ն. Արտնցը, որը, սակայն, առաջ է քաշում պահլավական «ռամակ» ձևը, բնագրից նրա՝ որպես ռագմական միավորի (=վաշա) նշանակությունը։

<sup>8</sup> Տե՛ս Հ. Ա. ճ ա ու յ ն. Հայոց լեզվի պատմություն. I-ին մաս, Երևան, 1940, էջ 250, թիվ 256 և էջ 274, թիվ 866։

<sup>9</sup> IV դարի սկզբում ընդհատված տոհմեր՝ Մանաթայան, Որդունի, Բզնունի, մարզպանական Հայաստանից դուրս իշխող տոհմեր՝ Անդեղտուն, Ազմեթի, Գուգարի և այլն։ Բացառություն են կազմում Կասպիցի և Մոխաց տոհմերը, որոնց տիրույթները դուրս էին մարզպանական Հայաստանից։ Տե՛ս H.A. д о н и. Указ.соч.с 262.



Ն. Աղոնցն ընդարձակ և մանրամասն հիմնավորում է տալիս այսօրինակ վավերագրերի գոյություն անհրաժեշտությունը և՛ Արշակունիներին, և՛ մարզպետության շրջանում, ինչպես նաև բնութագրում է նրանց դերը, որպես ավատական (ֆեոդալական) տիրապետությունը իրավական ձևավորում տվող միջոցներից մեկը: Նա գտնում է նաև, որ Գաճնամակն արտահայտում է V դարի նախարարական կարգային վիճակը<sup>10</sup>:

Այսուհանդերձ, մեզ Հասած տվյալ Գաճնամակը նա Համարում է ոչ թե վավերագիր կամ, նույնիսկ, նրա պատճեն, այլ գրական կոթող, կազմված VII դարի առաջին կեսում՝ V դարի նյութերի հիման վրա:

Գաճնամակի գրական կոթող լինելու իր կարծիքն Աղոնցը հիմնավորում է նրանով, որ նախարարական կրկնվող տոհմանունների («Սիւնեաց երկրորդն», «Արծրունեաց երկրորդն», «Այլ Անձաւացի» և այլն), ինչպես և 6 այլ, մեծ մասամբ արավարկված, տոհմանունների հիշատակումն այլ աղբյուրներում չկա: «Այս անուններն են այն կապիվածները, որոնք վարկաբեկում են մեր Հուշարձանը»,- գրում է Աղոնցը<sup>11</sup>: Մեզ Համար անհասկանալի է, թե ինչու մի վավերագրում (կամ նրա պատճենում) չեն կարող լինել անուններ, որոնք չկան մեզ Հայտնի մատենագրության մեջ: Իսկ աղավաղումները պատճենների Համար սովորական բան են: Առավիղ ևս, վավերագրի Համար պատշաճ է հիշատակել այնպիսի պաշտոնական մանրամասներ, որոնք տեղ չեն գտնում նախարարի (պատմողական) Հուշարձաններում, ինչպես, օրինակ, տվյալ դեպքում նախարարական տները ճյուղավորումների մասին տեղեկությունները: Ինչ վերաբերում է VII դարով թվագրման խնդրին, այսպես Ն. Աղոնցը Գաճնամակի բովանդակության մեջ որևէ հենակետ չի գտնում: Նրա հենակետը Գաճնամակից դուրս է:

Մովսես Կաղանկատացու մոտ (II, Ա), գրում է նա, մի գրույց է պահպանվել, որտեղ պատմվում է Շապուհ II -ի արքունիքում տեղի ունեցած ճաշկերպի մասին: Շապուհը Հայ նախարարներին սեղանի շուրջն ըստ արժանվույն տեղավորելու նպատակով պահանջում է նրանցից մի որևէ վավերագիր, ուր նշված լիներ նրանց հերթականությունը: Նրան ներկայացնում են ոչ այլ ինչ, քան Ագաթանգեղոսի գիրքը, ուր նշված են 17 նախարարներ՝ որոշակի կարգով: Այս գրույցը, ըստ Աղոնցի, ծագել է VII դարի սկզբից ոչ վաղ, և Հենց Ագաթանգեղոսի Հիշյալ ցուցակը այն ձևով, ինչպես նա ներկայանում է գրույցի մեջ, VI դարի վերջերից ավելի վաղ չի ձևավորվել: Արդ, շարունակում է Աղոնցը, եթե մի գրույցում, որ ասեղծվել է VII դարի սկզբներին, մեր Գաճնամակի փոխարեն Հանդես է գալիս Ագաթանգեղոսի ցուցակը, որը Աղոնցի պնդմամբ, ամենեւին Գաճնամակ չէ, ապա Գաճնամակն այն ժամանակ դեռևս գոյություն չի ունեցել և ավելի ուշ է ասեղծվել, Հետևաբար և գրական, այլ ո՛չ վավերական, բնույթ ունի<sup>12</sup>: Նման փաստարկումը մի շարք խոցելի կետեր ունի: Նախ և առաջ, նրանից արամաբանորեն հետևում է, որ ոչ միայն այս Գաճնամակը, այլև ընդհանրապես ո՛չ մի Գաճնամակ գոյություն

չի ունեցել մինչև VII դարի սկզբները, իսկ դա Հակառակ է գաճնամակների անհրաժեշտության Աղոնցի իսկ տված հիմնավորմանը՝ մարզպանական շրջանի Հենց սկզբից (չնոսելով արդեն Արշակունյաց շրջանի մասին): Այնուհետև, սպացուցված էլ չէ, թե վերահիշյալ գրույցը իսկապես VII դարից առաջ ծագած լինել չէր կարող: Բայց եթև Համարենք էլ, թե այն Հաստատապես VII դարին է պատկանում, դարձյալ չի կարելի պնդել, թե Գաճնամակը, իր գոյություն դեպքում, անպայման պետք է հիշատակվեր այն գրույցում: Այսպիսով, մեր կարծիքով, որևէ անհրաժեշտություն չկա Գաճնամակը, ավելի ճիշտ՝ նրա վավերական նախատիպը, տեղաշարժելու V դարի 30-ական թթ., կամ այն Համարելու գրական կոթող: Ավելի շուտ այն վավերագիր Գաճնամակի արտագրություններից մեկն է՝ որը աղավաղումներով, որոնք ի Հայտ են դալիս թե՛ առաջաբանում և թե՛ բուն ցանկի մեջ:

Չբաժանելով Ն. Աղոնցի կարծիքը Գաճնամակի թվագրման և բնույթի Հարցերում, միտքամայն Համամիտ ենք նրա Համոզմանը, որ այն ծառայել է Խորենացուն որպես աղբյուր<sup>13</sup>: Դրա Համար Ն. Աղոնցին որպես ապացույց են ծառայել հրկու տիպի փաստեր: Առաջին տիպի փաստերը ի Հայտ են գալիս «Հայոց պատմության» պարունակած նախարարական տոհմերի և Գաճնամակի կազմի Համեմատությունից, որից հրևում է, մի կողմից, որ Խորենացու ցանկի շուրջ երեք քառորդը առկա է Գաճնամակում, իսկ մնացած քառորդը այնպիսի նախարարություններ են, որոնք չեն էլ կարող այստեղ լինել, քանի որ Գաճնամակը ընդգրկում է միայն մարզպանական Հայաստանի տարածքը և V դարում գոյություն ունեցած նախարարությունները, իսկ մյուս կողմից, որ Գաճնամակում առկա նախարարությունների մի որոշակի մասի բացակայությունը Խորենացու մոտ նույնպես միանգամայն օրինաչափական է (այս Հարցին մենք մանրամասն կանդաղատանք ստորև): Երկրորդ տիպի փաստերը Գաճնամակի և մասնավորապես նրա առաջաբանի աղղեցությունից հրևում են Խորենացու տեքստում: Այսպես, Խորենացին բերում է պարսից թագավոր Վռամի անունից Սահակ կաթողիկոսին արծաթ առաջարկություն վերջինիս տված պատասխանը՝ «Արծաթ նորա նմա լիցի. բայց դու Հաանեցուցես գնա՝ տալ ինձ զերկուսս գայս միայն. զգաճ նախարարացն Հայոց, որպես կարգեալ յԱրտաշէս վարեցան մինչև ցայժմ՝ նորին օրինակաւ Հրամայեցէ և առ յապալ... Եւ միւս...» և այլն: Այնուհետև տեղեկանում ենք Վռամի պատասխանին՝ «Այնմ ըտդ եղեալ Վռամայ՝ Հրամայէ զամենայնն կատարեալ» (III, 65):

Այս բոլոր բովանդանաչափ Համոցի են և Հագիվ թե կասկածի տեղ թողնվի Գաճնամակին Խորենացու ծանոթ լինելու Հարցում:

Գաճնամակի բուն տեքստին (ցանկին) մենք կանդաղատանք ստորև, իսկ այժմ մի այլ խնդիր: Խորենացին օգտագործել է Գաճնամակում բերված նախարարական տոհմերի անունների մոտավորապես կեսը միայն (70-ից՝ 30-ը), անտեսելով մնացածը: Հարց է ծագում, թե ինչով է նա առաջնորդվել: Աղոնցը փորձում է պատասխանել նաև այս Հարցին:

Գաճնամակում, ինչպես ասվեց, հիշատակված են նախարարական 8 խոշոր տոհմերի 11 ճյուղավորումներ, օրինակ, «Սիւնեաց երկրորդն», «Արծրունեաց

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 291:  
<sup>11</sup> Նույն տեղում, էջ 257, 291: Այսուհանդերձ, այս վերջին էջում, սողատակում Աղոնցը ինքն է նշում աղբյուրներում նախարարական տների ճյուղավորումների հիշատակման մի քանի դեպք:  
<sup>12</sup> Նույն տեղում, էջ 291:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 271 և այլուր:



երկրորդն» և նույնիսկ «երրորդն», «այդ Դիմաքսիանն» և այլն: Այս բոլորը Խորենացին մի կողմ է դրել: Մնում են, սակայն, երկու տասնյակից ավելի՝ թվով 23 այլ անտեսված նախարարական տոհմեր: Սրանց վտարումը բացատրելու Համար Ն.Աղոնցը առաջ է քաշում մի այլ թույլի, որը և, Գահնամակի օրինակով, անվանում է Ջորանամակ («Воинская грамота»)¹⁴:

Ջորանամակը նույնպես նախարարական տոհմերի ցանկ է: Ի տարբերություն Գահնամակի, այն բաժանված է չորս մասի կամ «դռան» (Արեւելեան դռան, Արեւմտեան դռան, Հիւսիսային դռան, Հարուսային դռան), և յուրաքանչյուր տոհմի անվան դիմաց գրված է, թե քանի գինվոր (Հեծյալ) է մատակարարում տվյալ նախարարությունը: Ն.Աղոնցը մանրամասնորեն հիմնավորում է նման փաստաթղթերի գոյություն անհրաժեշտությունը ևս, և այն էլ ոչ միայն մարզպանական, ինչպես Գահնամակը, այլ նաև արաբական տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում: Դառնալով, սակայն, կոնկրետ մեզ Հասած Ջորանամակին, նա Համարում է այն դրական բնույթի Հուշարձան, կազմված VII կամ Հաջորդ դարերում և այս անգամ, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է:

Իր այս կարծիքը Ն. Աղոնցը հիմնում է Ջորանամակի ներքին տվյալների, նրա ներքին հակասությունների վրա: Նա նշում է չորս խմբերի կազմերի շինծու բնույթը, որն արտահայտվում է մի կողմից խմբերի մեջ ընդգրկված տոհմանունների թվերի արհեստական համաչափություն (21-21-22-22), մյուս կողմից՝ նրանց բովանդակությունը մեջ. թեև խմբերը կոչվում են «Արեւելեան դռան» և այլն, սակայն նրանց մեջ նախարարները միավորված են աշխարհագրական սկզբունքի խախտումներով: Այսպես, Բագրատունիներն ու Բասենացիին Հայտնվում են արեւմտյան խմբում, Կասպէից իշխանը՝ Հյուսիսային խմբում, Գողթան իշխանը՝ Հարավային խմբում: Կարելի է բերել և ուրիշ օրինակներ: Բացի այդ, ցանկում կան այնպիսի տոհմեր (Որդունիներ, Մանավազյաններ), որոնք վերացել են դեռևս IV դարի սկզբում և այլն:

Բացի այդ, գինված ուժերի չորս խմբի բաժանման և Ջորանամակի կազմի մեջ Ն. Աղոնցը ժամանակագրական հակասություն (անաբրոնիզմ) է տեսնում, քանի որ նման բաժանումը նա համարում է ուշ ժամանակի արգասիք (Մասանյանների վերջին շրջանը)¹⁵, մինչդեռ Ջորանամակի աշխարհագրական ընդգրկումը թվարկված նախարարությունների կազմի, ընդգրկման տեսակետից համապատասխանում է Հին, հայ Արչակունիների ծաղկման ժամանակաշրջանին:

Բերում ենք Ջորանամակի ցանկը՝ իր թվական տվյալներով՝ ըստ Ն.Աղոնցի. աջ կողմից ավելացնում ենք տվյալներ, թե Ջորանամակում պարունակված որ նախարարություններն են հիշատակված Գահնամակում (նշվում է Գ տառով), Մովսես Խորենացու մոտ (Խ տառով), Ղազար Փարպեցու մոտ (Ղ տառով), VII դարի Աշխարհացույցում (Ա տառով) և Սեբեոսի մոտ (Ս տառով):

¹⁴ Նույն տեղում, էջ 251-252:

¹⁵ Ստորև կտեսնենք, սակայն, որ այն կա արդեն Մովսես Խորենացու մոտ: Սակայն Խորենացուն VII-VIII դարերով թվագրող Աղոնցի Համար այս փաստը արժեք չունի:

Արեւմտեան դռան		Արեւելեան դռան	
1. Անդեղ տուն	վն - Խ	1. Սինի	ա՛քն Գ Խ
Բզեչին Աղճնեաց	ա - Խ	Ամասկոնի	մ Գ Խ
Բըղդունական	վ - Խ	Աածացին	մ - -
Մանաւազեան	ս - Խ	Վարձաւունի	մ Գ -
5. Բագրատունի		5. Տամբարացի	ճ Գ -
Խորխոտունի		Մազազացի	
Ծոփացի	ս Գ Խ	Յողկեպան	ճ - -
ՎաՀունի	ս Գ Խ	Գըղճունի	ձ - -
Ապահունի	ս Գ Խ	Վաունունի	ձ - -
10. Գնունի	չ Գ Խ	10. Բաքան	ձ - Ա
Բասենացի	ս Գ -	Կճրունին	ձ - Ա
Պալունի	յ Գ -	Գուվանն	ձ - Ա
Ընծաքին	տ Գ	Պասապարունին	ձ - Ա
Մանդակունի	յ Գ Խ	Գալբիկան	ձ Գ -
15. Սաղկունի	յ Գ Խ	15. Վիժանունի	ձ Գ -
Վարաժնունի	յ Գ Խ	Ջանդաղան	ձ - Ղ
Այծենական	ճ - -	Սողացի	ձ - Ա
Առունեան	յ Գ Խ	Աքածեցի	ձ Գ -
Վարժնունեան	ճ - Ա	Ասճչեան	ձ - -
Սպան <զ> ունի	յ Գ Խ	Կինան	ձ - -
21. Ռափսեան	ճ Գ Խ	21. Տագրեան	ձ Գ -

Հյուսիսային դռան		Հարավային դռան	
1. Բզեչին Գուգարաց	տչ-Խ	1. Կաղմէացի	ալմ - Խ
Կամարական	ս Գ Խ	Կորդուացի	ս - Խ
Կասպեցի	վ Գ -	Արծրունի	ս - Գ - Խ
Ուտէացի	ս - Խ	Ռըշտունի	ս - Գ - Խ
5. Ծալվէացի	ս - Խ	5. Մոկացի	ս - Գ - Խ
Տայցի	ս - Գ -	Գողթնեցի	չ Գ Խ
Մամիկոնեանն	ս Գ Խ	Անձեւացի	չ Գ Խ
Վանանդացին	ս Գ Խ	Հարուժեան	ճ Գ -
Գարդմանեցին	ս Գ Խ	Տրպատունի	ճ - Ա
10. Որդունի	չ - Խ	10. Մեհնունի	ճ Գ -
Առուեղեանքն	չ Գ Խ	Ակէացի	յ Գ Խ
Աչոցեան	չ Գ Խ	Ջարէհունեայ	յ Գ Խ
Դիմաքսեան	յ Գ Խ	Եր<ու>անթունի	յ Գ -
Գնթունի	յ Գ Խ	Համաստունեան	ճ - -
15. Բոխայեցի	յ Գ -	15. Արտաշեսեան	յ Գ -
Գաբեղեան	յ Գ Խ	Սազրատունի	ճ Գ -
Աբեղեան	յ Գ Խ	Արբահամեան	ճ - Ս
Հաւնունի	յ Գ Խ	Տրունի	յ Գ Խ



Սահառունի	յ Գ -	Բուժունի	մ Գ -
20. Ձևենականան	յ Գ Խ	20. Քաջբերունի	ճ Գ -
Աշխաբարևան	ճ Գ Խ	Բողունի	ճ - Ա
22. Վարազարտիկեան	ճ Գ -	Մուրացան	յ Գ Խ

Նախ, անդրադառնանք Գահնամակի և Ջորանամակի ցանկերի փոխհարաբերությունը: Այստեղ, ինչպես և գտնում է Ն.Ադոնցը, ամեն ինչ պարզ է: Ջորանամակի Հեղինակը ծանոթ է եղել Գահնամակին և Հիմնովին օգտագործել է այն: Գահնամակի 70 կամ ավելի ճիշտ՝ 60 տոհմանուններից (11 տոհմանուն, ինչպես նշվեց, արդեն Հիշատակված 8 տոհմանունների կրկնություններ են, բայց դրանցից մեկը՝ Բուլա Դիմաքսեանը, կա Ջորանամակում Բոխայեցի ձևով): Ջորանամակում չկան միայն երեքը՝ Նախճերին, Քաղաքապետն արքունի և Յուլն: Մնացած 57-ը առկա են: Կան մի քանի արավազված անուններ, բայց դրանք չեն խոչընդոտում արված եզրակացությունը, օրինակ, Գահնամակում Ամատունի, Համբուժեան, Վարապակեան, Ջորանամակում Ամակունի, Հարուժեան, Վարազարտիկեան և մի քանի ուրիշը:

Նույնանման պատկեր են ցուցադրում Խորենացու և Ջորանամակի ցանկերը: Խորենացու 50 տոհմանուններից Ջորանամակում առկա են 46-ը և չկան միայն չորսը՝ Մարդպետականը, Առանին, Գարգարացին, Տաշրացը: Ավելին, Ջորանամակի չորս «գրունք» և նրանց զորավարները նույնպես արձագանքում են Խորենացու մոտ Հանդես եկող պատկերին: Հայոց զորքը ըստ ծագերի չորս մասի բաժանելու գաղափարը Հանդես է գալիս նաև Խորենացու մոտ: Այսպես, Արտաշես թագավորը չորս մասի բաժանված հայոց զորքը Հանձնարարում է. արևելյանը՝ իր Արտավազդ որդուն, արևմտյանը՝ Տիրան որդուն, Հյուսիսայինը՝ Ջարեհ որդուն և հարավայինը՝ Սմբատ զորավարին (III-րդ, 54): Սակայն նրանից շատ առաջ էլ, ըստ Խորենացու, այդպիսի բաժանում եղել է և դեռևս Արամ նահապետը Հանձնարարել է արևելյան մասը Միտակյաններին (Մյունի), հարավայինը՝ Կաղմյաններին (I,14,11,8), Հյուսիսայինը՝ Գուգարաց բղջիչին, արևմտյանը՝ Անգեղյաններին (II,8): Այս ևս Համապատասխանում է Ջորանամակի չորս զորավարներին. Արևմտեան դուռն՝ Անգեղ տուն, Հյուսիսային դուռն, Գուգարաց բղջիչ, Արևելյան դուռն՝ Մյունի և Հարավայինը՝ Կաղմյաններ:

Սակայն այս բոլորով Հանդերձ, այսինքն, բացի նաև Գահնամակի և Խորենացու ցանկերում առկա անուններից, Ջորանամակում կա ևս 19 անուն, առանց որոնց չէր կարող լրացվել սխեմայի քանակական մասը՝ 21+21+22+22=86 թիվը: Պակասող միավորները (որոնք կուտակված են հատկապես «Արևելեան դուռն» Հատվածում) լրացնելիս Հեղինակը դիմել է նախ և առաջ VII դարի Աշխարհացոյցին: Այստեղից նա առել է 9 անուն. Վարժնունեան (Հավանաբար, երեք Վարժնունեիներից Տուրուբերանի Համապատասխան գավառը), Մազազացի (Մազազ գավառից), Բաքան, Կճրունի (ճիշտը՝ Կրճունի), Գուկան, Սողացի (Սողք գավառ), Տրպատունի, Բողունի (ճիշտը՝ Բոգունի): Եվս 2 անուն կա Փարպեցու (Ջանդաղան)<sup>16</sup> և Սերետի (Աբրահամեան)<sup>17</sup> մոտ:

<sup>16</sup> Ղազարայ Փարպեցուց Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1904, էջ 61:  
<sup>17</sup> Պատմութիւն Սերետի, էջ 129:

Այս բոլորից Հետո դարձյալ մնացել է 8 դատարկ տեղ, որոնք էլ Հեղինակը լրացրել է Հայտնի չէ ինչ աղբյուրից: Այդ անուններն, ըստ երևույթին, անձանաչելիորեն արավազված են: Դրանք են. Այծենական, Աածացին, Յողկեպան, Գրգճունի, Վառնունի, Աածչեան, Կինան, Համաստունեան:

Ուշ շրջանի այս արհեստական և խայտաբղետ գրվածքը, որը Հավակնություն ունի արտացոլելու Արշակունիների ժամանակաշրջանը, Ն. Ադոնցը Համարում է Խորենացու աղբյուր: Ձևական տեսակետից սա կարելի է պատկերացնել, քանի որ վերը նշված նմանությունները տեսականորեն կարող են լինել թե՛ Ջորանամակի և թե՛ Խորենացու փոխառություն արդյունք: Սակայն Ն.Ադոնցը ընտրություն մեջ անշուշտ իր դերն է խաղում Խորենացու VII կամ Հաջորդ դարի Հեղինակ Համարելու հանգամանքը: Պետք է ասել, որ ընդհանուր եզրակացություն Հանելիլս նա որոշ վերապահություն է անում, բայց կոնկրետ վերլուծությունը դիմելիս վերացնում է այդ վերապահությունը:

Այսպես, նա գրում է. «Խորենացու խոսքերը «կարգ պինդություն»-ի մասին ցույց են տալիս, որ նրան ծանոթ է եղել մեր թղթի (Ջորանամակի-Գ.Ս.) նման ինչ-որ մի բան, բայց թե այն ինչ Հարաբերություն մեջ է Ջորանամակի Հեա՝ Հայտնի չէ: Գուցե գոյություն է ունեցել նախարարական այրուձիի ցուցակ, և այդ ցուցակը Հետագայում վերամշակվել է մեզ հասած այդ թղթի տեսքով: Խորենացուն, համենայն դեպ, ծանոթ է եղել մի զինվորական ցուցակ իր այս կամ մեկ ուրիշ տեսքով»<sup>18</sup>: Այսինքն, տվյալ Ջորանամակը չէ անալոգիան, որ օգտագործել է Խորենացին, այլ գուցե որևէ այլ գրվածք կամ վավերագիր, որն արտացոլել է նաև Ջորանամակի մեջ: Սրա Հետ կարելի է լիովին համաձայնվել: Սակայն, իրականում, դառնալով Հարցի կոնկրետ քննարկմանը, Ադոնցն անվերապահորեն դործի է դնում Հենց մեր ձեռքի տակ եղած Ջորանամակի թվական տվյալները, նշելով՝ «Ուշադիր դիտարկումները Հայտնաբերում են Խորենացու ծանոթությունը ոչ միայն Գահնամակի, այլև Ջորանամակի Հետ»<sup>19</sup>:

Որպես ապացույց Ն.Ադոնցը բերում է մի Հիբրիդային աղյուսակ, որը ներկայացնում է Գահնամակի ցանկը, օժտված Ջորանամակի պարունակած յուրաքանչյուր նախարարի ունեցած զինվորների թվաքանակներով:

Վերադառնալով հնք այդ աղյուսակը, մեր կողմից աջ մասում ավելացնելով տեղեկություններ Գահնամակում թվարկված նախարարությունների՝ V դարի այլ աղբյուրներից՝ Հիշատակման վերաբերյալ: Սրա նպատակն է ստեղծել մի յուրա՝ տեսակ, ժամանակակից բառով ասած, ուղիղնալի (արժուրդման) պատկեր, պարզելու Համար, թե Խորենացու ապրած դարում նախարարական ո՞ր տոհմերն են առավել Համախ Հիշատակվել մատենագրության մեջ, ուրեմն և առօրյա շխու՝ ների ժամանակ և, Հետևաբար, որոնք են, որ առավել նշանակալից դեր են կատարել երկրի կյանքում: Հարկավ, չի կարելի երաշխավորել, որ ստացվող պատկերը ճիշտ կլինի նաև իր մանրամասներում, բայց ընդհանուր պատկերացում այն մասին, թե ինչ տեղեկատվություն է ունեցել Խորենացին որպես ժամանակակից, անշուշտ, կատարյալ:

<sup>18</sup> Н. А д о н ц. Указ. соч., с. 296  
<sup>19</sup> Նույն տեղում, էջ 263 և այլուր:



Բերվող տվյալները նշված են Հեղինակների անունների սկզբնատառերով՝ Կ-Կորյուն, Ա-Ազաթանյեղոս, Փ-Փալստոս Բուզանդ, Ղ-Ղազար Փարպեցի, Ե-Եղիշե: Բացի այդ, ընդգծել ենք Խորենացու ցանկում բացակայող տոհմանունները՝ չեղատառով:

Գահնամակի ցանկը բերում ենք Ն. Աղոնցի արած ճշգրտմամբ, ըստ որի «Առաջին իշխան Հայոց ևւ մաղխազն» Մաղխազունին (Խոսեփոստունին) ցանկից դուրս վիճակից (զրված է ա. կետից առաջ) տեղափոխվում է 4-րդ (դ.) տեղը, որով Մամիկոնյանները այրտեղից անցնում են 5-րդ (ե.) տեղը, և համարակարգվումը շարունակվում է մեկ միավոր տարբերությամբ մինչև 24-րդ (իդ.) տեղը, որպիսի թիվը Գահնամակում բաց է թողնված և 23-ին (իզ.) հաջորդում է 25-ը (իե.): Աղոնցի Հիմնավորված ճշգրտմամբ այս բացթողումը ուղղվում - լրացվում է, և ցանկը շարունակվում է Գահնամակում առկա թվերով՝ մինչև 70 (զ.):

ա. Մունեսայ տէր	19400 Կ Ա Բ Ղ Ե
բ. Ասպետն	1000 - Ա Բ Ղ Ե
գ. Արծրունեսայ տէր	1000 - Ա Բ Ղ Ե
դ. Առաջին իշխան Հայոց Մաղխազն	1000 - Ա Բ Ղ Ե
ե. Մամիկոնէից տէր	1000 Կ Ա Բ Ղ Ե
զ. Շահապն Ծոփաց տէր	1000 - Ա Բ - -
է. Մոկաց տէր	1000 - Ա - Ղ Ե
ը. Ռշտունեսայ տէր	1000 - Ա Բ Ղ Ե
թ. Վահունեսայ տէր	1000 - - - Ղ Ե
ժ. Կասպէից տէր	3000 - - - - -
ժա. Անձաւացիաց տէր	- - - Բ Ղ Ե
ժբ. Ապահունեսայ տէր	1000 - - Բ Ղ Ե
ժգ. Կամսարականն	600 - - Բ Ղ Ե
ժդ. Այլ Ապահունի	- - - - -
ժե. Վանանդացին	1000 - - Բ Ղ Ե
ժզ. Ամատունի տէր	- Կ - Բ Ղ Ե
ժէ. Գողթան տէր	500 Կ - Բ - -
ժը. Գնունեսայ տէր	500 - - Բ Ղ Ե
ժթ. Այլ Անձաւացի	500 - - - - -
ի. Տայոց	600 - - - - -
իա. Բասենոյ դատաւորն	600 - - - - -
իբ. Գնթունեսայ տէր	300 - - Բ Ղ Ե
իգ. Վարձաւունին	200 - - - - -
իդ. Գարդմանայ տէր	1000 Կ - Բ - -
իե. Սահառունին	300 - - Բ Ղ Ե
իզ. Գարեղէնից տէր	300 - - - Ղ Ե
իէ. Աբեղէնից տէր	300 - - - Ղ -
իը. Մունեսայ երկրորդն	- - - - -
իթ. Արծրունեսայ երկրորդն	- - - - -
լ. Արծրունեսայ երրորդն	- - - - -
լա. Մամիկոնէից երկրորդն	- - - - -

լբ. Ռոփսեսանն	100 - - - Ղ Ե
լգ. Աշոցեանն (Գաշոցեանն)	500 - Ա - Ղ -
լդ. Դիմաքսեանն	300 - - Բ Ղ Ե
լե. Բուխա Դիմաքսեանն	300 - - - - -
լզ. Այլ Աբեղեանն	- - - - -
լէ. Այլ Դիմաքսեանն	- - - - -
լը. Պալունին	300 - - - - -
լթ. Առաւելեանն	500 - - - Ղ Ե
լս. Աշահմարեանն	100 - - - - -
լտ. Համբուժեանն	100 - - - - -
լսբ. Վարասպակեանն	100 - - - - -
լսգ. Չիւնականն	300 - - - Ղ -
լսդ. Ակէացին	300 - - - - Ե
լսե. Զարեհաւանեանն	300 - Ա - - -
լսզ. Ընծայեցին	4000 - - - Ղ Ե
լսէ. Մանդակունին	300 - - - Ղ Ե
լսը. Սղկունին	300 - - - - Ե
լսթ. Տայգրեանն	50 - - - - -
ծ. Երուանթունին	300 - - - Ղ -
ծա. Սպանդունին	300 - - - - -
ծբ. Առաւելեանն	300 - - - Ղ Ե
ծգ. Տրունին	300 - - - - -
ծդ. Մամբրեացին	100 - - - - -
ծե. Հաւնունին	300 - - - - -
ծզ. Բժնունին	200 - - - - -
ծէ. Քաջբերունին	100 - - - Ղ Ե
ծը. Մեհնունին	100 - - - - -
ծթ. Նախճերին	- - - - -
կ. Քաղաքապետն արքունի	- - - - -
կա. Որսապետն արքունի	300 - - - - -
կբ. Արտաշեսեանն	300 - - - - -
կգ. Վանանդացին երկրորդ	- - - - -
կդ. Յուլն	- - - - -
կե. Վիթանու<նի>	50 - - - - -
կզ. Աքածու	50 - - - - -
կէ. Շիրակա Դիմաքսեան	- - - - -
կը. Գազրիկանն	50 - - - - -
կթ. Մարացեան տ <էր>	300 - - - - -
զ. Վազրասպու<նին>	100 - - - - -

Արդ, Գահնամակի 70 տոհմանունները Խորենացու ցանկում առկա են միայն 36-ը: Բացակայում են 34-ը: Սրանցից 11-ը, ինչպես երբիցս ասվեց, 8 երևելի նախարարական տոհմերի ճյուղավորումներն են ներկայացնում, ուստի և բնակարարաբար չկան Խորենացու մոտ: Բայց հարց է ծագում, թե ինչու են բացակայում



նրա մոտ մնացած 23-ը: Այս Հարցին պատասխանելու Համար Ն. Աղոնցը գործի է դնում Զորանամակի թվերը, որոնք կցված են Գահնամակում տեղ գտած նախարարական տոհմերին, և դռնում, որ «Գահնամակի Հիմքում ընկած է ռազմական ուժը՝ նախարարությունները սեզավորված էին նվազող դժով, Համաձայն այրուձիի (գործի) այն քանակություն, որն ուներ նրանցից յուրաքանչյուրը»<sup>20</sup>: Տեսականորեն սրա հետ կարելի է Համաձայնվել և նույնիսկ չի կարելի է Համաձայնվել, քանի որ բնական է, որ նախարարությունները այսպիսի մի տեղ, ինչպիսին է Գահնամակը, պիտի դասավորվեին բոտ իրենց խաղացած դերի երկրի քաղաքական, անտեսական կյանքում, և առաջին Հերթին, իհարկե, ըստ իրենց ռազմական Հզորություն:

Սակայն, այնուհետև, կոնկրետ և վստահորեն, Ն.Աղոնցը դիմում է մեզ Հատած Զորանամակի թվական տվյալներին, որպես Խորենացու անմիջական աղբյուրի, և նրանց Հիման վրա փորձում բացատրել Խորենացու մոտ նշված 23 նախարարությունների բացակայությունը՝ «Խորենացու մոտ Գահնամակի Համեմատությամբ պակասող նախարարությունները,- գրում է նա,- այն նախարարություններն են, որոնք կամ խախտում են գահերի շարքի Հերթականությունը և կամ ունեն երեք Հարյուրից պակաս ձիավոր (զինվոր)»<sup>21</sup>:

Գահնամակում գահերի թվական գործակիցների աստիճանական նվազման ընդհանուր բաղադրարը ընդունելի է, բայց Ն.Աղոնցի առաջարկած այս երկու բանաձևերի կոնկրետ դրսևորումը չափազանց շատ խոչընդոտների է Հանդիպում ի դեմս զրանք խախտող բացառությունների:

Առաջին բանաձևի կապակցությամբ այդպես էլ չի սլարզվում, նախ և առաջ, թե ինչու՞, ի՞նչ պատճառներով գործերի թվաքանակների աստիճանական նվազման պատկերը խախտող նախարարությունները պիտի այդ Հատկանիշով ընդհանրապես Հանվին Խորենացու ցանկից: Այստեղ Խորենացուն ոչ մի Հիմք չի վերապրվում, նույնիսկ՝ տրամաբանական:

Բայց ծանոթանանք Ն.Աղոնցի բերած կոնկրետ օրինակներին: Դրանք են. Կասպեից տէր՝ 3000 զինվորով, Տայոց՝ 600 զինվորով, Բասենոյ դատաւորն՝ 600 զինվորով և Ընծայեցին՝ 4000 զինվորով: Թե ինչպես են զրանք խախտում նվազման աստիճանականությունը՝ երևում է աղյուսակից: Բայց այնտեղ կա ևս չորս նախարարություն, որոնք իրենց գործերի թվաքանակով նախորդ չորսի նման խախտում են նվազման աստիճանականությունը և, այսուհանդերձ, չեն վտարվել Մովսես Խորենացու ցանկից: Դրանք են. Վանանդացին իր 1000, Գարգամանայ տէրը իր 1000, Առչոեանը իր 500 և Ասաւեղեանը իր 500 զինվորներով (տե՛ս աղյուսակը): Ուրեմն՝ չորս օրինաչափականի դեմ չորս բացառություն: Նման օրինաչափությունը դժվար է ընդունել:

Այժմ նայինք այդ ութ նախարարությունների արժորոշմանը աղյուսակի աջ կողմում: Եթե Խորենացու ցանկում բացակայող առաջին քառյակը ունի 0,0,0,2 միավոր, ապա երկրորդ, այնտեղ առկա քառյակն ունի 3,2,2,2 միավոր: Սա դրդում է մեզ Խորենացու կատարած ընտրություն Հիմքերի մեջ առաջնությունը տալ արժորոշմանը, այսինքն՝ ընդունել, որ իր սպրած դարում նա այդ խնդրում Հետեւել

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 264:  
<sup>21</sup> Նույն տեղում:

է երկրի կյանքում նախարարություններին խաղացած դերին և ոչ՝ թե զուտ մեխանիկորեն գործողություններ է կատարել թվերի Հետ, ինչպես սովյալ դեպքում նրան այդ վերագրում է Աղոնցը:

Գալով երկրորդ բանաձևին, ըստ որի Խորենացու ցուցակից վտարվել են 300 զինվորից պակաս ունեցող նախարարությունները, ապա այստեղ էլ կա թվով վեց<sup>22</sup> բացառություն: Այսպես, Ռոֆսեանը և Ալխաղարեանն իրենց 100-ական զինվորներով մնացել են Խորենացու ցուցակի մեջ, մինչդեռ Սահառունին, Պալունին, Արտաշեանն ու Երուսանդունին իրենց 300-ական զինվորներով՝ վտարվել այնտեղից:

Ուրեմն այս բանաձևի դրսևորումը ևս այնքան սահուն չէ, ինչպիսին այն ներկայացնում է Աղոնցը:

Այժմ քիչ ավելի խորանանք արժորոշման տվյալներին մեջ: Խորենացու նախարարական ցանկում ներկայացված՝ Գահնամակի 36 առհասարակներից (որոնք մեր վերջին աղյուսակում առանց ընդդժման են ներկայացված) 30-ը, ըստ աղյուսակի աջ կողմում մեր ցուցադրված տվյալներին, մեկից մինչև Հինգ անգամ ներկայանում են Մարիի աղբյուրներում, 1 անգամ՝ 5-ը, 2 անգամ՝ 9-ը, 3 անգամ՝ 9-ը, 4 անգամ՝ 5-ը և 5 անգամ՝ 2-ը: Այդ աղբյուրներում բացակայում են 6-ը:

Գահնամակի մնացած 23 առհասարակների (11 կրկնվողները խաղից դուրս են) արժորոշման պատկերը Հետևյալն է. 1 անգամ Հիշատակվում է Երուսանթունին, 2 անգամ՝ Պալունին, Ընծայեցին, Քաջրեռունին, 3 անգամ՝ Սահառունին: Թե ինչու սրանք չկան Խորենացու մոտ, դժվար է ասել, մասնավոր՝ Պալունին, որ ազդեցիկ նախարարական տոհմ էր: Գուցե Պատմահոր քաղաքական Համակրանքից ու Հակակրանքից ելնելով, որը կվկայել նրա քաղաքական ակտիվ դիրքորոշման մասին, և Համընթաց կրիներ տոհմերի արժորոշմանը նրա, մեր կարծիքով, նվիրված ուշադրությունը:

Ավելի կարևոր է, որ նշված 23-ից 18-ը ընդհանրապես բացակայում են Մարիի աղբյուրներում և դրանով պատշաճ Հիմք ստեղծում բացատրելու Համար ամբողջ այդ լամբի բացակայությունը: Դրանք այն նախարարություններն են, որոնց ծանոթ լինելով Գահնամակից, Խորենացին այնուհանդերձ չի ներգրավել իր նախարարական ցանկի մեջ և նույնիսկ Հիմնավորել է իր այդ քայլը, ինչպես նկատել է Աղոնցը, Հետևյալ կերպ. «Եւ այլ որ ինչ կրտսերագույն ազգք... Հաստատէ այս Տիգրան (Վերջին), որք միանգամ անագլղէ էին ի վաշտս և անձամբ երեւիլք... որք... ի պարմից Հայկազանց ոմանք և յեկուց: Զոր ոչ անուամբ պատմեսցուք...» (11, 64):

Աղոնցը «անագլղէ էին ի վաշտս» արտահայտությունը ծառայեցնում է Գահնամակի՝ Խորենացու կողմից զտման իր առաջ քաշած բանաձևի Հիմնավորմանը (300 զինվորից պակաս), բայց այն, սույն բանաձևի գեթ մասնակի վարկաբեկման պայմաններում, Հավասարապես կարող է ամրապնդել մեր անցկացրած արժորոշման արդյունքները:

Այսպես, ուրեմն, եթե Խորենացու մոտ առկա 36 առհասարակներից միայն

<sup>22</sup> Գուցե՛ յոթ, եթե Հաչիլի առնենք Բուխա Դիմաքսեանին, իր 300 զինվորով, որն այդ 300-ով, ըստ Աղոնցի, պիտի մնար Խորենացու ցանկում, իսկ որպես Դիմաքսեանների ճյուղավորում պիտի բացակայեր:



վեցն են բացակայում V դարի մեզ հայտնի աղբյուրներում, այսինքն՝ 16,5 տոկոսը, ապա նրա մոտ բացակայող 23 տոհմանուններից այդ աղբյուրներում չկան 18-ը, այսինքն՝ 78 տոկոսը: Այսպիսի հարաբերությունը, թվում է, բավարար հիմք է եզրակացնելու, որ Խորենացին, ընտրություն անելիս, հիբրավի, ելել է իր ժամանակի Հասարակական կարծիքից, ուժերի փոխհարաբերությունից:

Մրա օգրոն է խուսում նաև վերը վերլուծված մասնավորա այն դեպքը, երբ զորքերի թվական տվյալների նվազման սահունություն խախտմամբ է բացատրվում չորս նախարարությունների վտարումը Խորենացու ցանկից, մինչդեռ մենք ցուցաբերեցինք, որ այդ 4-ից 3-ը իսպառ չեն հիշատակվում նաև V դարի այլ աղբյուրներում, իհարկե, ոչ այն պատճառով, որ Համապատասխան հեղինակները ևս կիրառել են տոհմանունների գուման այդ չափանիշը:

Անդրադառնալով կրկին անգամ այն 6 նախարարություններին, որոնք, առկա լինելով Խորենացու ցանկում, այսուհանդերձ բացակայում են V դարի այլ աղբյուրներում, թվում է, թե ի վիճակի ենք բացատրել այն հիմքը, որը Խորենացու աչքում փոխարինել է արժորոշմանը: Խոսքը Աշխադարեան, Սպանդունի, Տրունի, Հաւ(ն)ունի, Որտապետն արքունի (Վարաժնունի) և Մուրացեան նախարարությունների մասին է: Ինչու՞վ են սրանք արժանացել ՊատմաՆոր ուշադրությունը: Պատասխանելու Համար պիտի թեթեալի ոտք կոխենք մի բնագավառ, որը մտադիր ենք մանրամասնորեն արծարծել մեր Հաջորդ Հոգվածներից մեկում: Դա Խորենացու մոտ նախարարական տոհմանունների ժողովրդական ստուգաբանությունն է:

Պեսք է հիշեցնել, որ տոհմանունները Խորենացու աչքում ոչ թե սոսկ Հատուկ անուններ են եղել, այլ պատմական տեղեկատվություն կրողներ, պատմական աղբյուրներ: Այդ իմաստով նրա մոտ կան ավելի երևելիները և պակաս երևելիները, և դա կախված է ոչ թե Համապատասխան տոհմերի իրական երևելիությունից, այլ զուտ տոհմանվան ընձեռած ստուգաբանական Հնարավորությունների աստիճանից: Այդ իմաստով, ասենք, Ռշտունի հզոր տան տոհմանունը Խորենացուն ոչինչ չի տվել, իսկ, ասենք, Զիւնական շարքային տան տոհմանունը պարզեւել է մի փոքր պատմական տեղեկատվություն. տոհմի ներկայացուցիչները, ըստ Խորենացու, կարգված են եղել արքունի «ամառանոցաց պահակա և ձինակիր», որից և վաստակել են իրենց տոհմանունը (II, 7):

Այս առումով վերահիշյալ մեր վեց տոհմանուններին անդրադառնալիս տեսնում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը Խորենացուն որոշակի՝ մեծ կամ փոքր տեղեկատվական զանգված է մատուցել: «Ասեմ և Սպանդունի ոտք ի վերա գնաւորանաց և գչաւունի ոտք՝ բազէակիրս և բազէակալս, յաղագս ի մայրիս բնակելոյ» (II, 7):

Տրունի տոհմանունը, ըստ Խորենացու, ստացել են Տուր անունով մի անձնավորություն 15 որդիները Արտաշես արքայից «ոչ վասն արութեան ինչ դործոց, այլ միայն վասն քսութեան հօր նոցա, զոր առնէր ի տանն արքայի (Երուսանդայ - Գ. Ս.), առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուսանդայ...» (II, 47): «Տուր» անունը՝ «տամ» բայից Խորենացին առնչել է նրա կրողի «քսութեան» («մատնիչութեան») հետ<sup>23</sup>:

<sup>23</sup> Տե՛ս նոր բառգրքը Հայկազեան լեզուի, II Վեներտի, 1937, «տալ որպէս մատնել յայս կամ գանձն»:

Գահնամակի «Որտապետն արքունի» տոհմանունը Խորենացին նույնացրել է Վարաժնունի տոհմանվան հետ, ասելով «Առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց և այծեմանց և վարպուց, դիպաճութեամբ նետից կորովի. զաս ի վերայ որսոց արքունականաց կարգէ... Եւ ի սմանէ ասեն լինել գտունն Վարաժնունի» (I, 12, II, 11):

Այս նույնացման հիմքը «վարաժ» անվան և «վարազ» բառի նմանությունը պիտի լինի:

Շատ ավելի ծավալուն է Մուրացեան տոհմանվան մատուցած տեղեկատվությունը: Գահնամակում նրան Համապատասխանում է Մարացեան տէր ձևը, որը և, ըստ երևույթին, դրդել է Խորենացուն շարադրել հետևյալ դրվագները, որոնք սկսվում են Վաղարշակ արքայի օրերից: «Բայց ետ կարգելոյ գտուն թագաւորին, գրում է Խորենացին», երկրորդ թագաւորութեանն լինի ի գաւակէ Աժդահակայ, Մարաց եղիլոյ թագաւորի, որ այժմ Մուրացեանը կոչն: Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարաւոցն տէր» (II, 8): Մուրացեանի՝ Մարացեանով ստուգաբանությունը լրացվում է Աժդահակ-վիշապ նույնացմամբ: «Զի Աժդահակը՝ գրում է Խորենացին, - ի մեր լեզու է վիշապ»: Ուստի և սրանց հաջորդում են Արտաշես Միջինի ժամանակ տեղի ունեցած դրվագները՝ Հայոց թագուհի Սաթինիկի սերը Մուրացեան-Վիշապադուն Արգամ-Արագաւանի նկատմամբ, Արտաշեսի դեմ վերջինիս լարած դավերը, որոնք ավարտվում են Մուրացեան տոհմի բնաջնջմամբ Արտաշեսի որդի Արագաւազի ձեռքով (II, 51):

Վերջապես Խորենացու մոտ հանդես եկող Աշխադարեան տոհմանունը (որն Արտնյը իրավացիորեն նույնացնում է Գահնամակում աղավաղված Աշահմարեան ձևով հանդես եկող տոհմանվան հետ) Պատմահայրը կապում է Տրդատ թագաւորի հարսնացու, ապա և թագուհի Աշխեհի և նրա հայր Աշխադարի հետ (II, 83):

Մի խոտքով, այս վեց տոհմանուններից յուրաքանչյուրի ստուգաբանությունը Խորենացին որպես աղբյուր է ծառայեցրել իր պատմություն Համար, և այս է եղել, մեր կարծիքով, նշված նախարարությունների ներդրաման հիմքը կամ հիմքերից մեկը: ՊատմաՆոր աչքում սրանց ունեցած արժեքը շեշտելու Համար նշենք, որ նրա հիշատակած 50 տոհմանուններից 20-ը նա չի ստուգաբանել, իսկ մնացած 30-ից չուրջ 10-ը ըստ պարզ ստուգաբանություն ունեն, մեր վերը նշված իմաստով քիչ արդյունավետ. դրանք սոսկ պարզում են տոհմանվան հիմքում ընկած անձնանունը՝ Աբեղեան՝ Աբել, Խոռխոռունի՝ Խոռ, Գաբեղեան՝ Գաբաղ, Բզնունեական՝ Բազ և այլն: Այսպիսով, մեր շոշափած տոհմանունների արժեքը բավական բարձր պիտի եղած լինի Խորենացու հետքով դիտելիս, ինչպես որ Խորենացու ստուգաբանությունները Համակարգի տեսքով դիտելիս, ինչպես որ ծրագրել ենք, ասվածը ավելի Համադիչ ձևով է ներկայանում:

Մեր ուշադրությունը հիմնականում նվիրելով Գահնամակի և Խորենացու Համար ընդհանուր 36 տոհմանուններին, այսուհանդերձ, չպիտի մոռանանք, որ Խորենացու ցանկում կա ևս 14 այնպիսի տոհմանուն, որոնք Գահնամակում բացակայում են: Եվ ահա, հարց է ծագում, թե որտեղից է դրանք առել Խորենացին, հիթ ոչ Գահնամակից: Դրանցից 10-ը առկա են Զորանամակում, բայց մենք արդեն եկանք այն եզրակացություն, որ Խորենացին է ծառայել որպես աղբյուր Զորանամակի հեղինակի Համար և ոչ Հակառակը:



Բերում ենք այդ 14 տոհմանունները, ալ կողմից նշելով, նախորդ աղյուսակի օրինակով, այդ տոհմանունները հիշատակող Վարդի աղբյուրները:

Մարզպետական	- Ա Բ Ղ -
Կորդուաց	- Ա Բ - -
Աղձնիքի	- Ա Բ - -
Անդեղեայ	- Ա Բ - -
5. Գուգարացի	Կ - Բ - -
Գարգարացի	- Ա - - -
Ծավղէացի	- Ա - - -
Ուտէացի	- Ա - - -
Որդունի	- - Բ - -
10. Բզնունի	- - Բ - -
Մանուսղեան	- - Բ - -
Տաշրացի	Կ - - Ղ Ե
Կարմեան	- - - - -
14. Առանի	- - - - -

Աղյուսակը ցույց է տալիս, որ Գահնամակում հիշատակված այս 14 նախարարությունների արժորոշումը V դարի աղբյուրներում նույնանման պատկեր է ցուցաբերում, ինչպիսինը տեսանք 36 հիշատակվածների խնդրում: Ուրեմն, այստեղ դեռ ավելի մեծ հիմքեր կան հենվելու այդ արժորոշման վարկածի վրա: Գահնամակից փոխառված չլինելով, ուստի և դուրս մնալով Աղոնցի առաջարկած բանաձևերի գործողություն ուրտից, նրանք պիտի մուսք գործեին ինքնացուցու Պատմությունը Հենց իրենց արժորոշման շնորհիվ:

V դարի աղբյուրներում հիշատակված չեն այս 14-ից 2-ը միայն, որը կազմում է 14 տոկոս և համընթաց է 36-ի և 6-ի հարաբերությունը՝ 16,5 տոկոսին: Եթե դառնանք, ինչպես այդ 6-ի դեպքում էր, այս 2-ի՝ ինքնացուցու մոտ առկայություն բացատրությունը, ապա պիտի հիշատակենք, որ Կաղմյան տոհմի մասին տեղեկությունները նա ստացել է Մար Աբաս Կատինայի մատյանից, որը անվանելով վերջինիս Մարբաթ Մծուրնացի, նույն իմաստով օգտագործել է նաև Սեբեոսի «Պատմությունը» կցված «Նախնական պատմություն» Անանուն Հեղինակը: Գալով Առանյաններին, ապա նրանք, ինչպես ասվեց սկզբում, հիշատակված են Սեբեոսի բուն պատմության մեջ, VII դարում, որ նշանակում է, թե նրանք գոյություն են ունեցել V դարում ևս:

Եվ այսպես, Մովսես ինքնացուցին, իր աչքի առաջ ունենալով և օգտագործելով Գահնամակի նման մի ցանկ, որը, ըստ Ն. Աղոնցի խոսքի, «մեզ համար ունի գրեթե պաշտոնական վավերագրի նշանակություն», ո՛չ բավարարվել է նրանով և ո՛չ էլ կուրորեն հետևել նրան: Իր պատմության համար նախարարական տոհմերի կազմը նա ձևավորել է, օգտվելով, բացի Գահնամակից, նաև անցյալը լուսաբանող մատյաններից (Մար Աբասի, Ուլյունյալ քրմի և այլն), իսկ հիմնականում իր ապրած V դարում դրժող նախարարություններին վերաբերող իրեն մատչելի բոլոր տեսակի աղբյուրներից, այսինքն, ոչ միայն կարագածից, այլև տեսածից, լրածից, տեղեկացածից: Անշուշտ, նրանից չէր կարող վրիպել և

նախարարություն Հետ կապված այնպիսի մի բնագավառ, ինչպիսին էր տոհմերի համեմատական հզորությունը և առաջին հերթին՝ դրա առավել կարևոր և շոշափելի ցուցանիշը՝ յուրաքանչյուրի ունեցած կամ մատուցած դորբի քանակությունը: Նա ունեցած կլինի նաև Զորանամակի նման թվերով օժտված մի գրություն կամ գրություններ, որոնք ևս օգնել են նրան նախարարական տները ընտրության գործում:

Ի դեպ, ժամանակակից դիրքը մի հատկանիշ է Պատմահոր նկարագրի մեջ, որն ինքն է շեշտում իր վերջին, 3-րդ գրքում, որն ընդգրկում է շուրջ 110 տարվա պատմություն, հասցնելով մինչև իր սպրած ժամանակը: Ի տարբերություն 1-ին և 2-րդ գրքերի, որոնք լի են գրավոր աղբյուրների հղումներով (յուրաքանչյուրում մի քանի տասնյակ), այստեղ նա և ոչ մի գրավոր աղբյուր չի հիշատակում, որը հատկանշական է իր կամ իր անմիջական նախորդների տեսածն ու լրածը վերապատմողի համար: Այս տեսակետից Հետաքրքրական է, որ ինքնացուցին հասարակորեն առանձնացնում է այս դիրքը նաև իր այստեղ կիրառած լեզվի առումով, ասելով, թե գրում է այն, ի տարբերություն նախորդ երկու գրքերի, «Հասարակաց լեզուով անցանելով զպատմություն» (III, 1), այսինքն՝ ժամանակի խոսակցական լեզվով:

Արդ, նախարարական տների տարբեր ուղիներով ինքնացուցու իրականացրած ընտրության որպես արդյունք ձևավորվել է պատահականություններից Հետո մի կազմ, որը, փոքր բացառություններով (որոնք, անշուշտ, իրենց հիմքը կունենան), բաղկացած է թե՛ (իր պատկերացմամբ) Հին դարերում և թե՛ (արդեն փաստացիորեն) իրեն նախորդած IV և իրեն ժամանակակից V դարերում երկրի կյանքում էական դեր խաղացած տոհմերից: Սրանք նրա պատմության մեջ Հանդես են գալիս խիստ դինամիկ, փոխկապակցված և մտաբանող՝ սերտորեն կապված թագավորական տոհմի ու նրա ունեցած իշխանության դրսևորումների Հետ, ու նրանց շարժումը սկզբից մինչև վերջ ներկայացնում է մի կուռ համակարգ՝ մեկը ինքնացուցու «Հայոց պատմությունը» կազմող համակարգերից:

СПИСОК НАХАРАРСКИХ РОДОВ  
У МОВСЕСА ХОРЕНАЦИ

Резюме

В “Истории Армении” Мовсеса Хоренаци действуют 50 нахарарских родов. Так как число таких родов по другим источникам существенно больше, то возникает вопрос о критериях их отбора историком. Н. Адонц показал, что основным источником для Хоренаци послужил Гахнамак - разрядная грамота с перечнем 70 нахарарских родов, которую он датирует VII в. Соглашаясь с Н. Адонцем в части источника, мы, однако, полагаем, что Гахнамак обладает всеми признаками памятника V в. В качестве источника для Хоренаци Н. Адонц привлекает и т. н. Зоранмак - воинскую грамоту, датируемую им также VII в.,



откуда, по его мнению, историк получил данные о численности воинов каждого из нахарарских родов, которые и применил в качестве критерия отбора. Полагаем, что трудно было бы приписать Мовсесу Хоренаци столь механический подход в этом важнейшем для него вопросе, тем более, что предложение Н. Адонца натывается также на множество фактических препятствий. Критерием отбора из Гахнамака 36 родов, а также - уже из других источников - отсутствующих в нем 14 родов, по нашему мнению, для Мовсеса Хоренаци послужило подобие рейтинга, выражаясь современным термином. А именно, частота и весомость их упоминания в трудах авторов V в. и более ранних, в других писаниях этого времени, в том числе и содержащих, скажем, данные о численности воинства, далее, его собственные впечатления как современника от того, что он видел, слышал, до чего допытывался и т.п. Таблицы, приведенные в статье, подтверждают это мнение.

THE LIST OF NAKHARAR FAMILIES OF  
MOVSES KHORENATSI

Summary

In the "History of Armenia" Movses Khorenatsi narrates of 50 Nakharar families. Since the number of such families in other sources is exceedingly higher, the question arises as to the criterion of their selection by the historian. N. Adonts has shown that the main source for Khorenatsi was Gahnamak, the category deed listing 70 Nakharar families. He dates Gahnamak to VII A.D. We agree with Adonts as to the source of the historian but not as to dating. Gahnamak has all the features of the document of the fifth century. Adonts discussed the so-called Zoranamak dated by him also to VII A.D. He argues that it is from here that Khorenatsi took the number of warriors in each Nakharar family and they are these numbers that he employed in selecting the families from Gahnamak. In fact the criterion for selecting 36 families from Gahnamak, as well as 14 families from other sources not attested in Gahnamak, appears to be the result of some sort of modern rating. We believe the selection was based on the combination of the historian's impressions, facts he gathered, the frequency and weight given to the families mentioned in the works of the fifth century, their treatment by earlier authors, as well as other works at the time, in particular containing information on the number of warriors. The tables brought in the article proved this view.

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՏՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հատուկ անունների (տոհմանունների, անձնանունների և տեղանունների) ստուգաբանության երևույթը բոլորին հայտնի է, սակայն լուրջ հետազոտության առարկա չի դարձել մինչև օրս: Պատճառը, թերևս, նրա, այսօրվա տերմիններով ասած, «ժողովրդական» կամ «կեղծ» ստուգաբանական բնույթն է, որը հետազոտողներին չի դաշխակղել սպասելի էական արդյունքներով: Դրանց համակարգային հետազոտությունը, սակայն, ցույց է տալիս, թե որքան թյուր է այդ կարծիքը, մասնավորապես Խորենացու ներաշխարհը և աշխատանոցն ու հետազոտական մեթոդներն ըմբռնելու տեսակետից:

Իմ հետաքրքրությունն այդ բնագավառի նկատմամբ սկսվեց նախարարական տոհմանուններից, որոնց մի ստվար մասը ենթարկվել է Պատմահոր ստուգաբանությանը: Այնուհետև ինձ համար պարզ դարձավ, որ հետազոտել նրա ստուգաբանությունների այդ մասը՝ անջրպետված մյուսներից, անհեռանկար է: Ուստի և ձեռնարկեցի նշված երևույթի ամբողջական, տուսայ հետազոտությունը, որի արդյունքներն էլ ներկայացված են ներկա աշխատության մեջ:

Մովսես Խորենացու առաջարկած ստուգաբանությունների ընդհանուր թիվը, իմ մոտեցման համաձայն, 84 է: Շրջանցված են այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են՝ «Հայկաչեն», «Տիգրանակերտ», «Արշակունի» և այլն, բացառությամբ Երուանդավանի, որը Խորենացու մոտ առանձնանում է (տե՛ս ստորև), ինչպես և այնպիսի նախարարական տոհմանուններ, ինչպիսիք են՝ «Մոկացի», «Գոյթնեցի», «Ակէազի» և այլն, քանի որ սրանց ստուգաբանելի և ստուգաբանիչ տարրերը համընկնում են:

Ստորև տրվում է ստուգաբանությունների ցանկը՝ բաժանված երեք խմբի՝ ստուգաբանություններ ըստ իմաստի, ըստ անձնանվան և ըստ ցեղանվան: Յուրաքանչյուր խումբ իր հերթին բաժանվում է երեք մասի՝ տոհմանուններ (նախարարական), անձնանուններ և տեղանուններ:

Հերթականությամբ՝ 1-ից մինչև 84 թիվը, ներկայացված են ստուգաբանական զույգերն իրենց ստուգաբանվող և ստուգաբանող տարրերով: Յուրաքանչյուր թվին կցված է ծանոթագրություն, որը ներառվում է նույն թվով, սակայն փակագծերի մեջ առած: Խաչաձև հղումներն արված են ըստ այդ թվերի: Ծանոթագրությունները սկսվում են Խորենացու համապատասխան հատվածի (հատվածների) մեջբերմամբ: Մեր հավելումներն այստեղ նվիրված են մեծ մասամբ ստուգաբանող տարրի առանձնահատկություններին, քանի որ ստուգաբանվող տարրը, որպես կանոն, խնդիրներ չի հարուցում: Ըստ այդմ, ճնշող մեծամասնությունը կազմող սովորական (պարզ) ստուգաբանությունների կողքին առանձնանում են «թագնաված», «երկդիմի», «թարգմանական» և այլ տիպի ստուգաբանություններ, որոնց բնույթը բավականաչափ պարզաբանվում է նույն ծանոթագրություններում: Տրվում են Անանուն պատմիչի (Սեբեոսի) մոտ առկա՝ մեր խնդրո առարկա ստուգաբանությունների զուգահեռները: Ստուգաբանող անձնանունների



կապակցություններ, ըստ Հնարավորության, արվում են յրացուցիչ տեղեկություններ այն դեպքերում, եթե դրանք առկա են միայն խորհրդանշան մոտ կամ եթե օտար ծագում ունեն և կամ ծագումն անհայտ է: Անհրաժեշտ դեպքերում այս կապակցություններ արվում են Համաստատական գիտական գրականություն հղումներ:

Առաջին՝ ըստ իմաստի ստուգարանությունների խմբի առաջին ենթախումբն ընդգրկում է այնպիսի նախարարական տոհմանուններ, որոնք ստուգարանված են ըստ տոհմի՝ արբունիում գրազեցրած պաշտոնի կամ էլ ըստ տոհմի նախահոր անձնական հատկությունների: Դրանք են.

- 1. Արծրունի - «արծուի ունի»
- 2. Գնունի - «գինի ունի»
- 3. Սպանդունի - «ի վերայ գենարանաց»
- 4. Զինական - «ծինակիրք»
- 5. Հաւունի - «բազակիրք և բազակալք»
- 6. Դիմաքսեան - «գլխաց կէս»
- 7. Ամատունի - «ամատ» (պարսկերեն՝ «եկավ»)
- 8. Անգեղեայ, Անգեղ տուն - «վասն ժահգիտություն»

(1) II, 7. «Եւ Արծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորս (Վաղարշակ արքայի - Գ.Ս.) կրէին»։ խորհրդանշան «Պատմություն» մեջ հիշատակվում և ժխտվում է քննարկվող տոհմանվան նաև մի այլ ստուգարանություն, որի, ինչպես և որոշ այլ հարակից խնդիրների մասին տե՛ս ստորև:

(2) II, 7. «Գիտեմ և գնունիսդ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն. որ ոքանչեկ իմն դիպեալ եղև ըստ զործոյն և անունն. քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և ի Համեղ գինեաց, ունէր և կոչումն անուանն Գին. ընդ որ կարի զուարճացեալ, ասեն, Վաղարշակ, կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց»:

Այստեղ ուշադրության արժանի է Գնունի տոհմանվան խորհրդանշան առաջարկած կարծես թե կրկնակի ստուգարանությունը՝ «գինի» բառով և «Գին» անվամբ: Նախապատմությունը նա տալիս է «գինուն», «գին» տարբերակը վերածելով գավեշտական պատմության: Պետք է ասել, սակայն, որ քերականության տեսակետից (իհարկե, դուրս չգալով խորհրդանշան հատուկ ժողովրդական ստուգարանություն շրջանակներից) ավելի կհարմարվեր «Գինը», որի է ձայնավորը թեք Հյուսիսում և բարդ բառերի կազմում ընդգրկում է սզվելու, ինչպես և կա «Գնունի» տոհմանվան մեջ, մինչդեռ «գինի» բառի առաջին վանկի ին, բնականաբար, չի սզվում:

Ըստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, I, 471), Գին անունը միայն խորհրդանշան է Հիշատակում, ուստի և Հեղինակի կարծիքով այն «սարքված է Գնունյաց նախարարական տոհմի անունից»:

Գնունի տոհմանվան կապակցություններ Հիշատակելի է և «Գնել» անձնանունը: Թեև խորհրդանշան այն անմիջական մասնակից չի դարձնում տոհմանվան ստուգարանությունը, բայց և այնպես նրա մոտ այդ անվան երեք կրողներն էլ (II, 19, III, 23, III, 24-25) առնչվում են այդ տոհմին, ըստ որում դրանցից մեկը Հանդես է գալիս որպես արբունի տակառուպետ:

(3-5) II, 7. «Ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ գենարանաց, և Հաւունիսդ՝

բազակիրս և բազակալս, յաղաղս ի մայրիս բնակելոյ: Եւ եթէ առ ցոխս ինչ ոչ ունիցիս՝ և զԶինականսդ՝ ամառանոցաց պահակս և ձինակիրս, և յառաջագիտութիւնէ ազատացեալս որպէս ընտանիք թագաւորաց»:

Այս շարքի տոհմանունների նկատմամբ խորհրդանշան կիրառած ստուգարանական մեթոդների մեջ որոշ տարբերություն կա: Եթե երրորդ անդամի՝ «Զինական» տոհմանվան նկատմամբ կիրառված է նույն մեթոդը, ինչ որ տեսանք Արծրունի և Գնունի տոհմանունների դեպքում, այսինքն՝ ստուգարանող բառը անմիջականորեն պարունակվում է ստուգարանվող բառի մեջ, ապա առաջին երկու դեպքերում այն (ստուգարանող բառը) ստուգարանության բացատրության մեջ փոխարինված է իրեն մոտավորապես համարժեք մեկ այլ բառով: «Սպանդունիների» դեպքում դա «սպանդին» փոխարինող «գենարան» է, իսկ Հաւունիների դեպքում՝ «Հաւ»-ին փոխարինող «բազէն»: Այս տիպի արտահայտությունները մենք նշեցինք «թաքնված ստուգարանություն» բառերով: Ի դեպ, Գահնամակում առկա է Հաւունի տարբերակը, որին խորհրդանշան դերադասել է Հաւունին, Հավանաբար, որպես ավելի զուգրությունը ստուգարանելի «Հաւ» բառով:

(6) II, 47. «Դիմաքսեան, քանզի... զկէս դիմաց սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի»:

(7) II, 57. «...ասեն եկեալ զազգն Ամատունեաց ի կողմանցն արեւելից Արեաց աշխարհին... և անուանին Ամատունիք, որպէս թէ Եկք»:

Այստեղ մենք հանդիպում ենք (3) և (4) ստուգարանական դեպքերին հատուկ տարբերակից առանձնացող մեկ այլ տարբերակի, որը կոչեցինք «թարգմանական ստուգարանություն»: «Եկք» բառով խորհրդանշան այստեղ թարգմանում է պարսկերեն «ամատ» - «եկավ» բառը, մի բան, որ ի Հայտ է գալիս ստորև մեջբերվող (81) ստուգարանության դեպքում ևս:

(8) II, 8. «...զայր խոթուազել և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց... Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահգիտութեանն ձայնէին Անգեղեայ... յերեսացն անպիտանութենէ կոչէ (Վաղարշակ-Գ.Ս.) զանուն ազգին Անգեղ տուն»:

Սա «թաքնված ստուգարանություն» դեպքերից է, երբ խորհրդանշան «անգեղ» բառը բացատրության մեջ փոխարինել է «ժահգիտություն» բառով, որը դեռ ուղեկցվում է նախորդող «կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց» որակումներով: Այս ստուգարանության կապակցությունները հատկապես նշելի են «Անգեղի» վերաբերյալ Անանուն պատմիչի տեղեկությունները: Այդ անունը նա հատկացնում է Բագրատունիների նախահայր Բագրատունին. «Որդիքն Բագրատունայ ժառանգեցին... Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագրատուն և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչէին»<sup>1</sup>: Անանունն, ուրեմն գիտե այն փաստը, որ Աստվածաշնչում Անգեղը Հանդես է գալիս որպես «բարբարոսների» աստվածություն: Խոսքը 4-րդ թազ. ԺԷ, 30-ում «և արք Բուժայ արարին զԱնգեղ» արտահայտության մասին է, որին Համարժեք նախադասություն մեջ Հունական բնագիրը հիշատակում է Ներգալին՝ բարեկական ստորգետնյա աստծուն: Այն, որ խորհրդանշան շրջանցել է իր տեսադաշտում առկա

<sup>1</sup> Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությունը Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 51:



Աստվածաշնչի այս դիցանունը, ինչպես և նրա կապը Բագարատի հետ, գուցե կարելի է բացատրել այն Հանդամանքով, որ նա այդ տեղեկությունն համար Տորքի ստատույթին մեջ Հենակետ չի գտել, կամ գուցե նա այդ արել է Բագարատունիների ոչ Հայկյան լինելու իր տեսակետը (1,22) անասան պահելու նպատակով:

Առաջին խմբի Հաջորդ, երկրորդ ենթախմբին են պատկանում դարձյալ ըստ իմաստի, սակայն արդեն մի շարք անձնանունների ստուգաբանություններ:

Դրանք են՝

- 9. Սանատրուկ - «տուրք Սանտոայ»
- 10. Աբգար, Աբգարոս - «աւագ այր»
- 11. Կամար - «կամ ար» (պարսկ. «կես գլուխ»)
- 12. Մոզպաշտէ - «աշակերտ մոզի»
- 13. Տուր - «տայ» («մատնել»)
- 14. Հրաչեայ - «պայծատատէս և բոցակնադոյն»
- 15. Սոսանուէր (մականուն) - «ձոնեալ ի սօսին»
- 16. Սլաք - «որսալ գբօշան»

(9) II, 36. «...կոչեցաւ Սանատրուկ, ի դայեկին իւրոյ (Սանտո անվամբ. - Գ.Ս.) զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանտոայ»:

Այս ստուգաբանական օրինակը «երկրիմի» է: Նրա ստուգաբանվող տարրը իտրենացին բաժանել է երկու մասի՝ Սանատ-տրուկ, որոնք նա առանձին- առանձին է ստուգաբանում: Բացի այդ, այն կարող էր ներկայացվել և մեր երկրորդ (ըստ անձնանունների ստուգաբանության) խմբում, քանի որ այն Հնիվում է, բացի - արուկ - «տուրք» իմաստային առնչությունից, նաև Սանտո անձնանվան վրա: Ըստ Աճառյանի (ՀԱԲ, IV, 396)՝ այս անվան ծագումն անհայտ է, այն Հանդիպում է միայն մեկ անգամ իտրենացու մոտ: Ստուգաբանությունն ունի նաև առասպելական մաս, որը կրճենարկվի ստորև:

(10) II, 26. «Այս Աբգարոս կոչէր աւագ այր, վասն առաւել Հեղութեանն և իմաստութեանն, որում յետոյ և տիքն»: Այստեղից Հետեւում է, որ իր այս անունը Աբգարը, ըստ իտրենացու, ստացել է Հասուն տարիքում, այսինքն՝ վերանվանվել է: Սկզբնական անունը իտրենացին չի հայտնում:

(11) II, 87. «Այս Կամար... Նահատակեալ առ Հարրն ի պատերազմունս... Հարկանի ումեմնէ սակերբ զգլուխն և վերացուցալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ ի զեղոց, պակաս գոլով բոլորութիւն զագաթանն անուանեցաւ՝ Կամար այնր պղազաւ»:

Կամ սար՝ պարսկերեն նշանակում է կես կամ քիչ գլուխ, որով այս դեպքը ստանում է «թարգմանական ստուգաբանություն» տեսք: Տե՛ս նաև (7) և (81):

(12) II, 48. «...աշակերտ մոզի ուրումն երագահանի, որ յայնմ սակս և Մոզպաշտէ անուն կարդային»:

Ստուգաբանությունը «երկրիմի» է՝ ստուգաբանող տարրի մի մասը («մոզ») անմիջականորեն առկա է ստուգաբանվող անվան մեջ, իսկ մյուս մասը՝ «աշակերտը», գառում է այն «թաքնված ստուգաբանությունների» շարքը:

(13) II, 47. «...սորա (Արտաշեսի - Գ.Ս.) ... սերեայ ազգ զորդխն Տուրայ... յանուն Հօրն իւրեանց Տրունիս, ոչ վասն արութեան ինչ գործոց այլ միայն վասն ըութեանն Հօր նոցա, զոր առնէր ի տանէն արքայի (Նրվանդի. - Գ.Ս.) առ Սմբատ»:

Իմ ենթադրությամբ այս ստուգաբանությունը, հավանաբար և ողջ այս

սարօրինակ դրվագը, Հեցած է «քուլթին - Տուր» բառերի իտրենացու դիտած իմաստային կապի վրա, այսինքն՝ «թաքնված ստուգաբանություն» է: «Տայ» բային ՆԲՀԼ-ում վերագրվում է նաև «մատնել զայս կամ զանձս» իմաստը, թեև ոչ կոնկրետ «քուլթյան», «մատնություն», այլ այլիկ շուտ «գատապարտման» առումով (օր. «զիգէնան... յանգնդոյն տայ», «տայ ի բանտ» և այլն): Ըստ իս, ուրեմն, այստեղ կարող է կիրառված լինել իտրենացիական մոտավոր համարժեքի մեթոդը («թաքնված ստուգաբանություն» տե՛ս (3), (4): Հ.Աճառյանը (ՀԱԲ, V, 173) այս անվան կապակցությամբ նշում է. «Կամ իրան. Thur- «բաջ», կամ Հյ. «տուր» բառից իբրև կրճատ ձև»:

(14) I, 22. «Սա Հրաչեայ կոչի վասն առաւել պայծատատէս և բոցակնադոյն իմն լինելոյ»: «Թաքնված ստուգաբանություն» է:

(15) I, 20. «...Անուղանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանաց ի սօսին Արամանեկայ որ յԱրմավիր»:

Ստուգաբանությունը «երկրիմի» է, ըստ որում երկրորդ մասը («նուէր-ձօնեայ») արված է «թաքնված ստուգաբանություն» մեթոդով:

(16) II, 8. «Զրմնեայ Սլաքն... կարգէ (Վաղարշապ. - Գ.Ս.) սակաւ արամբք պահել զլեռանն և որսալ գբօշան. որք անուանեցան Սլկունիք»:

Սլաք անվան ստուգաբանությունը, եթե միայն այն առկա է, Հեցած պիտի լինի «թաքնված ստուգաբանություն» մեթոդի բավական լայն ըմբռնման և կիրառման վրա:

Ստուգաբանությունների առաջին խմբի երրորդ ենթախմբին են պատկանում մի շարք ըստ իմաստի ստուգաբանվող տեղանուններ: Դրանք են.

- 17. Հարք - «Հարք» («Հայրեր»)
- 18. Գերեզմանք, Գերեզմանակք - «ուր... անկաւ Բել»
- 19. Յրօնք - «բաժանումն»
- 20. Բագարան - «բազին»
- 21. Բագնաց աւան, Բագաւան - «բազին»
- 22. Երուանդավան - «վանեաց զԵրուանդ»
- 23. Որթք - «որթ» (կողով)
- 24. Ծննդոց - որսի կենդանիների «ազգ», «բազմություն»
- 25. Աշտիշատ - «յաշտից տեղիք»

(17) I, 10. Հայկն «անուանէ զանուն լիւնադաշտին Հարք, այս ինքն թէ Հարք են ասալէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»:

Նույն ստուգաբանությունն առկա է նաև Անանունի մոտ. Հայկը «կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն» (էջ 48) և «Արամնակը բնակեցաւ անդէն յառաջնումն գաւառին, զոր կոչեցին յանուն Հարց իւրեանց՝ Հարք» (էջ 50):

(18) I, 11. «Իսկ զբուրն, ուր քաջամարտիօքն անկաւ Բել՝ անուանաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանակք»:

Սա ևս «թաքնված ստուգաբանություն» օրինակ է. «գերեզման» բառը փոխարինված է «բուրն, ուր անկաւ Բել» մոտավոր համարժեքով: Աչքի է ընկնում նաև այն հանգամանքը, որ իտրենացին Հին «Գերեզմանք» անվան կողքին բերում է նաև իր ժամանակի «Գերեզմանակք» անվանումը:

(19) I, 6. Սեմը «զանուն տեղոյն ուր բնակեցաւն՝ կոչէ Յրօնս զի անդ



զառեջինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ»: «Թաքնված ստուգաբանութեան» տիպական օրինակ է, որում «բաժանվելը» ծառայեցված է որպէս «ցրվելու» Համարժեք:

(20-21) 11, 40. «Բազարան, այս ինքն թէ ի նմա զբազնաց յօրինեալ է զկազմութիւն»: Նշենք, որ «բազինը» պահանջում էր ավելի շուտ «Բազնարան» ձևը: Այս ստուգաբանութեան ունի, մի քանի ուրիշներն նման, իր «եղվորդակը» ի դեմս (21)-ի, որի կապակցութեամբ Խորենացին գրում է (11, 66). «...վերջին Տիրաբնայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղորն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բազնացն առանի, որ ի Բաղրևանդ գաւառի, բազին ի վերայ գերեզմանին չինեալ», և մեկ ուրիշ տեղ (11, 77). «...զհուրն որմզգական որ ի վերայ բազնին, որ ի Բազաւան»:

(22) 11, 46. Արտաշեսը անվանում է «գտեղի ճակատան՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայնմ տեղուջ վանեցաւ զԵրուանդ»: Հետեւելով ժողովրդական ստուգաբանութեան իր մեթոդին, Խորենացին այստեղ «-վան» մասնիկը բխեցնում է «վանել» բայից: Իրականում, սակայն, գործ ունենք կամ իսկապես «վան» բառի հետ, որը կտար տեղանվանը «Երվանդի օթևան» իմաստը (Հմմտ. Շահապիվան), կամ էլ «աւան» բառի հետ (Հմմտ. Արշակաւան, Վաղարշաւան և բազմաթիւ այլ): Վերջին դեպքում պիտի ենթադրենք Խորենացու կատարած ուղղագրական միջամտութիւն, որով նա Երուանդաւանը վերածել է Երուանդավանի՝ իր ստուգաբանութիւնն իրականացնելու նպատակով: Նրա ստուգաբանութիւնների շարքում, կարծես, Հանդիպում ենք մեկ այլ նմանօրինակ դեպքի՝ (82), որտեղ առկա է «Մարաց մարգ»-ը թերևս «Մարանց մարգի» փոխարեն: Թվում է թե Երուանդաւան տեղանունը իրականում պիտի զար լրացնելու Խորենացու մոտ ներկայացված Երուանդաշատ և Երուանդակերտ «-շատ»-ով և «-կերտ»-ով վերջավորվող տեղանունների զույգը մի երրորդ անդամով՝ «-աւան» վերջավորութիւնն պարունակող տեղանվանք:

(23) 111, 27. Արշակաւանի ավերման ժամանակ Հայոց նախարարներն առանձնացրել էին ձեռքեր տղաներին՝ գերեզմանները նպատակով: «Զորս թափեալ մեծին Ներսիսի, Հրամայեաց կրել որթովք ի գոմ մի, և դարմանս և սնուցողս նոցին կարգեաց. որք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք այնորիկ աղազաւ»:

(24) 11, 41. Երվանդ թագավորը «անկէ և մայրի մեծ... արգելլով ի ներքս այժեմունս երազունս, և զեղանց և զեղջիրուաց ազգ, և ցիւս և վարազս, որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն... Եւ անտառնէ զանտառն՝ Մնդոց»:

Իմ կարծիքով այստեղ ևս առկա է «թաքնված ստուգաբանութեան», «լայնացրած» կիրառման (տե՛ս Սլաք (16) տարբերակ, որում ստուգաբանող տարրն է Աստվածաշնչի «Գիրք ծննդոցը»: Խորենացուն կարող էր Հնարան ծառայել այս անտառում Նոյի տասպանի նման այլևայլ կենդանիների ժողովումը:

(25) 11, 12. «...Իսկ զՀերակլեայն առնապատկերն... զՎազազն իւրեանց (Վազունիները. - Գ.Ս.) վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յլուրեանց սեպհական գիւղն յԱշտիշաս...», այնուհետև՝ 11, 14. «Բայց Ափրոդիտեայ զպատկերն, իբրև Հերակլեայ տարփառերի, առ նորին պատկերին Հերակլեայ Հրամայեաց (Տրպրան Միջինը. - Գ.Ս.) կանգնել յաշտից տեղին...»:

Խորենացին անմիջականորեն չի նշում Աշտիշաս-«յաշտից տեղին» («զո-Հարերութիւնների տեղեր») ստուգաբանական փաստը, բայց այն միանգամայն

ակնհեր է:

Ստուգաբանութիւնները երկրորդ, առավել բազմաճյուղա խմբում միավորվում են այնպիսի տոհմանուններ, անձնանուններ և տեղանուններ, որոնք ստուգաբանված են ըստ նրանց մեջ իսկապես պարունակվող կամ նրանց վերագրված անձնանունների:

Այստեղ ևս ունենք երեք ենթախումբ, որոնցից առաջինը դարձյալ կազմում են նախարարական տոհմանունների ստուգաբանութիւնները: Դրանք են.

- 26. Կաղմեան - Կաղմոս
- 27. Խոռխոռուների - Խոռ
- 28. Մանաւազեան - Մանաւազ
- 29. Բզնունի - Բազ
- 30. Սիսական (ազգ) - Սիսակ
- 31. Բազրատունի - Բազարատ
- 32. Առաւենեան - Առաւան
- 33. Ալկունի - Ալք
- 34. Մանդակունի - Միանդակ
- 35. Աբեղեան - Աբել
- 36. Գաբեղեան - Գաբաղ
- 37. Վազունի - Վազազ
- 38. Վարաժնունի - Վարաժ / Վարժ
- 39. Տրունի - Տուր
- 40. Ռովեան - Ռովի
- 41. Մամիկոնեան, Մամգոնեան - Մամգոն
- 42. Կամարական - Կամար
- 43. Զարեհաւանեան - Զարեհ

(26) Այս ստուգաբանական զույգը Համատեղ չի հիշատակվում, այլ Կաղմեան նախարարական տունն առանձին (II,4,8) և նրա նախահայր Կաղմոսը՝ առանձին (I,10,11):

Հունական դիցաբանութեան մեջ Կաղմոսը Փյունիկիայի արքայազն է՝ Հունական Թեբե քաղաքի Հիմադոլի և վյունիկյան այբուբենի հիմքի վրա Հունարեն այբուբենը ստեղծող: Խորենացին պետք է որ տեղյակ լիներ նրա մասին: Մյուս կողմից «Կաղմոսի տունը»՝ նրա տիրույթը, համընկնում է ասուրական այբուբենի Կաղմուսի երկրի հետ ոչ միայն Հնչյան տեսակետից, այլև իր տեղագրութեամբ:

(27-29) I, 12. «Իսկ նորա (Արամանյակի. - Գ.Ս.) թողեալ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ և զՄանաւազ... ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ... Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան և Բզնունեաց... Իսկ Խոռն ի կողմանս Հիւսիսոյ բազմաճայ... և ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց»:

Խոռ անվան ծագումն, ըստ Աճառյանի, անհայտ է (ՀԱԲ, II, 528), Բազ անունը նա համեմատում է «բազէ» թուզնական հետ (ՀԱԲ I, 360): Այս երկու անունը հանդիպում են միայն Խորենացու մոտ՝ մեկական անգամ: «Մանաւազ» անունը իրանական ծագում ունի:

(30) I, 12. «Աստ բնակեալ Սիսակ... զաշխարհն կոչէ իւրով անուամբ



Սրւնիբ. այլ Պարսկբ յատակադրին ևս Սրսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ... գտեալ արս անուանին՝ տեարս աշխարհին կարգէ, որ է Սրսական ազգ»: Սրսակ անվան ծագումն անհայտ է (ՀԱՔ, IV, 528), հանդիպում է Փարպեցու մոտ:

(31) II, 3. Վաղարշակը «Նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէիցն՝ Շամբատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգու թագադիր լինել Արշակունեաց, և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բագարատունի»:

Բագարատ անունը իրանական ծագում ունի:

(32) I, 31. «Եւ սորա (Վազազնի. - Գ.Ա.) են գարնք Վազունիբ. Ի սորս կրտսեր որդւոյն Առաւանայ Առաւենեանք»:

Աճառյանը «Առաւան» անվան ծագումը համարում է անհայտ (ՀԱՔ, I, 205): Ըստ Ջազուկյանի՝ այն իրանական ծագում ունի:

(33) II, 8. «...գրգնեայ Սրաքն... կարգէ (Վաղարշակը. - Գ.Ա.)... պահել պեանն և որսալ պիօշսն. որք անուանեցան Սրկունիբ»:

Եվ այսպես, Սրկունի ստեղծանունը ինքնացին ստուգաբանում է Սրաք (16) անձնանունով: Մյուս կողմից ինքնացին ունի «Սրուկ» (տարընթերց.՝ Սրուկ), նահապետ ազգին Սրկունեաց» (II, 84), որը կարծես ավելի հարմար կլինէր տոհմանունը ստուգաբանելու համար: Ըստ Աճառյանի, այս անվան ծագումն անհայտ է, կա միայն ինքնացու մոտ (ՀԱՔ, IV, 537): Ա. Փերիխանյանի կարծիքով Սրուկը Սելեկոսն է (Σέλευκος), որ անցել է Հայաստան արամեական SLWK-ի միջնորդութեամբ<sup>3</sup>: Չի բացառվում նաև, որ այն Սրկունի տոհմանվան ծնունդ է: Համեմատութեան համար նշենք «Գնունի Գնել» (2) և «Աբեղեան-Աբեղոյ» (35) ինքնացու մոտ չկայացած ստուգաբանութունները:

(34). Սրկունի-Սրաք ստուգաբանական գույզը բնութագրելով՝ ինքնացին ավելացնում է. «Այսպէս և ի նոյն իրս և զՄիանդակն անդառնալի. և ի սմանէ Մանդակունիբ» (II, 8): Այստեղ պարզ չէ, թե ինչ նկատի ունի ինքնացին ասելով՝ «Այսպէս և ի միևնոյն իրս», և թե արդոք նա չի՞ բխեցնում «անդառնալի» (հաստատուն, անզիջող) որակումը Միանդակ անձնանունից, որի ծագումն Աճառյանն անհայտ է համարում (ՀԱՔ, III, 330), բայց որն իր կերտվածքով իրանական է թվում: Փաստորեն այս անունը միայն ինքնացին է հիշատակում, քանի որ Սմանուկ Անիցու մոտ եղած հիշատակութունը սոսկ կրկնում է ինքնացուն:

(35-36) II, 7. Վաղարշակը կարգադրում է լինել «...Չաբաղ ոմն անուն ի վերայ կուտից, և զԱբէլ սպասարար և զհարար. և չէնս պարգևէ նոցա, յորոց անուն կոչեն. սապէս և նախարարութիւնքն՝ Աբեղեանք և Գարեղեանք»:

Ըստ Աճառյանի, Գաբաղ անվան ծագումն անհայտ է (ՀԱՔ, I, 426): Անսովոր անուն է, կա նաև Փարպեցու մոտ, սեպուհ՝ Գարեղեան տոհմից:

Ինքնացու մոտ Հայտնվում է և «Աբեղոյ ոմն, նահապետ Աբեղեանից տոհմին» (II, 60): Թերևս այդ անունով մի անձնավորութեան ավելի կարասիքներ

<sup>2</sup> Գ.Ք. Ջ ա ճ ու կ յ ա ն. Մովսես Ինքնացու «Հայոց պատմութեան» առաջին դրբի անձնանունների լեզվական աղբյուրները. - «Պատմա-բանասիրական հանդես», 1981, էջ 61 (այսուհետև՝ Ջ ա ճ. 81):

<sup>3</sup> A. Perikhanian. Une inscription araméenne du roi Artases trouvée a Zanguéour (Siwnik) - Revue des études arméniennes, N.S., tome III, 1966, p.18, 22.

վերագրել տոհմի նախահոր դիրքը, քան աստվածաշնչական Աբել անունը կրող մեկին: Աճառյանը (ՀԱՔ, I, 16) համարում է այդ անունը «Աբեղեան տոհմանունից սարքված» (հմտ. (2) Գնել և (33) Սրուկ):

(37) I, 31. «Այլ ասեն զսա (Վազազնը. - Գ.Ա.) և աստուածացիալ... Եւ սորա են զարմք Վազունիբ», և սպա՝ II, 8. «Բայց յորդուցն Վազազնի գտեալ արս, որք ինքնակամ ինչորեցին գմեհնից պաշտամունս (Վաղարշակը. - Գ.Ա.)՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զբրնութիւնն»:

Վազազնի անվան ծագումն մասին խոսելն ավելորդ համարելով, նշենք, որ այն այստեղ ստուգաբանող տարր հանդես գալով, որպես ստոծու կամ աստվածացի ինքնացու, իր հետ բերում է տոհմին քրմութեան պաշտոնը, իսկ այս էլ, իր հերթին, ծնում պատմութեան մի քանի համապատասխան դրվագներ, որոնց կանոնադրանքը ստորև:

Նշելի է նաև, որ տոհմանունը եղիշիի և Փարպեցու մոտ, ի տարբերութեան Գահնամակի և Ինքնացու «Վահունի» է և ոչ Վահունի, իսկ Վազազնի մեհյանը Ագաթանգեղոսի մոտ կոչվում է «Վահեվանեան» (տարընթերց.՝ Վահեվահան): Թերևս, Գահնամակն է, որ հուշել է ինքնացուն իր հղացած ստուգաբանութեան համար ավելի հարմար ձև:

(38) II, 7. «Իսկ գիտա... ի վերայ որոց արքունականաց կարգէ (Վաղարշակը. - Գ.Ա.): Որոյ որդի եղեալ Վարթ (տարընթերց.՝ Վարաթ)՝ յանուն նորա անուանի ազգն, բայց այս զինի յաւուրս Արտաշիսի»: Առաջին գրքում I, 12. «առ Արտաշիսի թոռամբ Վաղարշակայ, ոմն Վարաթ (տարընթերց.՝ Վարթ) անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուց և վարացուց, դիպածութեամբ նետից կորովն, զսա ի վերայ որոց արքանականաց կարգես... Եւ ի սմանէ ասեն լինել զտունն Վարաթունի»: Այնուհետև, կրկին երկրորդ գրքում II, 11. «Բայց (Արտաշեսը - Գ.Ա.) տալ զՏիգրան որդի իւր զպատանի Վարաթ անուն... քանզի էր պատանին նշառակ ի նետաձգութիւն կորովութեան, ուսուցանել զՏիգրան... յանուն նորա կոչի զազգն Վարաթունի»:

Այս մեջբերումները, բացի ստուգաբանութեան կրկնությունից, կոչված են ցուցադրել Վարթ-Վարաթ տարբերությունները, որոնք մտահոգիչ են: «Վարաթ» անուն, բացի ինքնացու դեպքից. Հայտնի չէ, կա Վարաթ, այդ թվում Պատմահոր մոտ (II, 64): Արդոք «Վարաթը» անանցված չէ՞ «վարազից»՝ արքունի որսապետի և «աջող յորս... վարազուց»-ի կերպարին անձը համարեցնելու համար: Բայց նույնը և «Վարաթը», որը սերտորեն աղերսվում է «դիպածութեամբ նետից կորովի», «նշառակ ի նետաձգութիւն կորովութեան» արտահայտությունների հետ: Երկու դեպքում էլ ունենք «ինքնացիական» տարբերակ և թաքնված ստուգաբանություն. ուստի և դժվարանում եմ ընտրություն կատարել, թե երկուսից ո՞րն է իսկապես ծագայել Պատմահորը՝ իր ստուգաբանությունն առաջարկելիս (կամ, գուցե, ոչ մեկը):

(39): «Տուր» ստուգաբանող տարրի մասին՝ որպես ստուգաբանություն, տե՛ս այդ անվան տակ (13):

(40) II, 64. Ղուկիանոս Կեսարը «Ետ զԹովի զկոյս, զմերձաւոր իւր, նմա (Հայոց Տիգրան Վերջին արքային. - Գ.Ա.) կնութեան. զոր եկեալ ի Հայս ի բայ թողու, և զլեալ ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մորն իւրեանց Ռովեայ Ռովեսան»:



Աճառյանը Ռոմիի անունը ծագած է Համարում լատիներեն Rufa - «շեկ» անունից (ՀԱԲ, IV, 334):

(41) II, 84. «Իսկ Մամզոն վաղվաղակի զգացուցանէ թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ, զրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր խոստացան, և կարգէ զնա նախարար ի տելի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամզոնեան»: Մյուս դեպքում խորհնացին այս տոհմը անվանում է «Մամիկոնեան», ատանց նշելու, որ այս ձևը ծագում է «Մամզոնեան»-ից:

«Մամիկոնեան» տոհմական ստուգաբանությունն, այսպիսով, եռաստիճան է. «Մամիկոնեանը» ստուգաբանվում է «Մամզոնեանով», սա էլ՝ «Մամզոնով»: Անանունի տարբերակով այն ստուգաբանված է զուլդ՝ Մամիկ և Կոնակ անուններով: Մամիկ անունը, եթե հետևենք Մարքիվարտին, հիշատակում է, դեռևս Տրդատի Մեծի կապակցությամբ, Ապվիանոսը (App., Mithr, 84, 86)՝ Μαγκαίος (Մանկայոս) ձևով (Մամիկ > Մամկայ՝ սեռ. հոլ., Մամկայոս > Մանկայոս)<sup>4</sup>:

Աճառյանը (ՀԱԲ, III, 184) Մամզոն անունը Համեմատում է չինական Man-gun «Հարավային արիակամն այլազգիների իշխան» կամ gun-Man՝ «իշխան մաների» անունների հետ:

(42) II, 90. «Բայց թագաւորին Տրդատայ միթիթաբեալ զզրուլս որդուցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, աղբ զնա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց»: Այնուհետև, Վրթանեսը «յանձն ատնէ զաշխարհս Արշաւիր Կամսարականի» (III, 10) և այլն:

«Կամսար» անվան ստուգաբանությունը տե՛ս (11):

(43) I, 31. «Զարեհ. ի սորա զարմից է որ Զարեհաւանիցն կարդան ազգք»: Այնուհետև, II, 8. «Սապէս և զԱւստենեանան և Զարեհաւանեանան քտեալ ի զարմից առաջնոց թագաւորացն՝ կարգէ ի նոյնանուանս աւանս»:

Սույն աշխատության մեջ, ինչպես նշվել է սկզբում, մենք տեղանուններից ծագող սահմանումները, օր. «Մոկացի», «Կորդուացի», «Ակէացի» և այլն, չենք մտքիդ ստուգաբանությունների շարքը: Սակայն «Զարեհաւանեան» տոհմական պարագան այլ է: Հետաքրքրական է, որ խորհնացին առաջին Հաղորդման մեջ (և ընդհանրապես) առանձին չի հիշատակում տոհմական մեջ առկա «Զարեհաւան» քաղաքանունը, սու՛մը ծագեցնելով անմիջականորեն Զարեհից: Երկրորդ Հաղորդման մեջ նա միայն ակնարկում է նման մի «ափանի» գոյությունը փաստը: Նույնը և «Աւստենեանեաների» նկատմամբ, որոնց տոհմական հետ կապված որևէ տեղանուն մեզ, սուկայն, հայտնի չէ:

Ստուգաբանությունների երկրորդ խմբի երկրորդ ենթախումբն ընդգրկում է այնպիսի անձնանուններ, որոնք ստուգաբանված են նույնպես անձնանուններով: Դրանք են.

- 44. Դոմեստ - Դոմեստիանոս
- 45. Արգաւան - Արգամ
- 46. Բաղարատ - Բագադիա
- 47. Աշոտ - Ասուդ
- 48. Վարազ - Վազարիա

<sup>4</sup> J. Marquart. *Eränšahr nach Geographie des Ps., Moses Xorenci.* Berlin, 1901, S. 177.

- 49. Սմբատ - Շամբատ
- 50. Յապետոսթէ - Յաբեթ
- 51. Մերոզ/ը - Գոմեր
- 52. Սիրաթ - Թիրաս
- 53. Թակլադ - Թուրքոմ
- 54. Արջամ - Արջամ

(44). II, 54. «Զայս կամելով երգել յառասպելոն՝ Դոմեստ գտն սասն եկեալ, որ է ինքն կայսր Դոմեստիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրաման նորա և զգօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»:

Այստեղ Հատկապես հետաքրքրական է և այն Հանգամանքը, որ խորհնացին իր ստուգաբանական Համակարգը (աշխարհը) անմիջականորեն կապում է այլաբանական, այսինքն՝ առասպելական, Համակարգի (աշխարհի) հետ: Այս մասին մանրամասն կխոսվի ստորև:

(45) II, 51. «Այս Արգամ է, որ յառասպելին Արգաւանն անուանի»: Ասլիս-ծից Հատակորեն չի պարզվում ստուգաբանության ուղղությունը: Հետևելով, սակայն, նախորդ օրինակի տրամաբանությունը, դերերը բաշխում ենք այսպես. «Արգաւան»՝ ստուգաբանվող տարր, որպես առասպելով վկայված անուն, և «Արգամ»՝ ստուգաբանող, որպես խորհնացու կողմից ներգրավված տարր: Արգամ անունը հիշատակում է միայն խորհնացին (նրան հետևելով՝ Ուխտանեսը)՝ Աճ., ՀԱԲ, 271:

(46-49) II, 63. «Բայց զիտես, զի ի թողուլ ազգին Բագարտունեաց զօրէնս Հարցն՝ նախ խժական ժառանգեցին յորջորջունն - Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչումունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն-Բագադիա, Տուբիա, Սնեքիս, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Եւ ինձ թուի, թէ որ այժմը կոչին Բագարտունիք Բաղարատ՝ Բագադիա է դա, և Ասուդ՝ Աշոտ. զոյնպէս և Վազարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ»:

Այստեղ ստուգաբանության ուղղությունը պարզ է, խորհնացին ստուգաբանում-պարզաբանում է իրեն ժամանակակից անվանաձևերը դրանց նախնական տեսքերով: Հատուկ ուշադրություն է արժանի «եւ ինձ թուի...» արտահայտությունը, որով Պատմահայրը, ի տարբերություն ստուգաբանությունների պոստիլին իրեն ընդհանրապես Հատուկ կտրուկ պնդումների, ավյալ շարի նկատմամբ չի թաքցնում իր սուբյեկտիվ մտտեցումը: Այդպիսի ուրիշ դեպքեր էլ կան, և մենք ստորև կանդրադառնանք այդ երևույթին:

Գալով թվարկված նախնական անվանաձևերի՝ Մովսես Խորենացու տեսադաշտում Հայտնվելու ինդիքին, կարող ենք վկայակոչել միայն Աճառյանի մի երկու դիտողություն, թողնելով եզրակացություններն ընթերցողին: «Իբրք որ Բագարատ անվան պրո. ձևն է Bagadata» (ՀԱԲ, I, 354): Մյուսը՝ Շամբատի վերաբերյալ՝ «Իբրև հրեական անուն գիտէ նաև Միլի. Ասորին» (ՀԱԲ, IV, 137): Մյուս դիտողությունները կրկնում են խորհնացուն:

(50-53) I, 9. «Արդ ի նոյն մասենէ (Մար Աբաս Կոտինայի - Գ.Ս.) սկսեալ ասացից. Յապետոսթէ, Մերոզ (տարբնթերց՝ Մերոզ), Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ»:

Ստուգաբանության ուղղությունն այստեղ ակնհայտ չէ: Խորհնացին ներկայացնում է այդ երկու քառյակը որպես զուգահեռ անվանաձևեր, մեկը՝



աստվածաշնչական, մյուսը՝ Մար Աբասի մատյանից: Սակայն «Յապետոսի» անունը, ըստ Խորենացու, կա նաև Բերույան Սիրելյայի հետևյալ հաղորդման մեջ. «Յառաջ քան գրուրդն, ասէ, և զբազմաբարբառն լինել ձայնի ազգի մարդկան... Զրուանն և Տրտանն և Յապետոսի է լինելին իշխանք երկրի»: Խորենացին անմիջապես ավերացնում է՝ «Որ ինձ թուին Սեմ, Բամ և Յաբել» (I, 6):

Այդ «ինձ թուի»-ն թերևս հուշում է, որ ստուգաբանվող տարրն այստեղ «Յապետոսի» է, իսկ ստուգաբանող-բացատրողը՝ Յաբելը, և այդ մոտեցումը կարելի է մակարեղել նաև վերը թվարկված քառյակի մյուս երեք անդամների վրա, ինչպես և մենք արել ենք ցուցակում:

«Յապետոսի» ձևը, սկսած Գուշմիդից, համարվել է թյուրիմացական, ինչպիսին և, հավանաբար, է: (Հունարեն Ἰαπετοστέ-ից, որտեղ -τέ մասնիկը կցական շաղկապ է ներկայացնում): Մյուս անուններից «Մեթոզ» Գոմերե, իսկ «Սիրավը» թիրախի գրաչընություններն են (анаграмма): «Թակկաղի» ծագումը դժվար է բացատրել:

(54) II, 24. «Արջամ, որ է Արչամ»: Նախորդի պես այստեղ ստուգաբանության ուղղությունն ակնհայտ է: Հայտնի է, որ այժայ համատեքստում «Արչամի» ի հայտ գալը արհեստական բնույթ է կրում: Այն ծագում է ասորի վարքագիր Լարուբնայի հիշատակած (Խորենացու մոտ՝ Դեբուբնայ) ասորական «Աբգար Ուկկամա (Ուկխամա)» անվանումից, որը նշանակում է «Սև Աբգար», որը նրա շարադրած վարքի Հայերեն թարգմանության մեջ հասած տեքստում դարձել է «Աբգար Արչամայ»<sup>5</sup>, ծնունդ տալով Արչամ անունով թագավորի՝: Այստեղ կարելի է ենթադրություն անել թյուրիմացության ծագման վերաբերյալ: «Արջամ» անվան մեջ կարելի է տեսնել «արջ» մասնիկը, որ նշանակում է «մութ սև», «թանձր սև» ըստ Ստ. Մալխասյանի (ՀԲԲ, I, 280), և «սև»՝ ըստ Աճառյանի (ՀԱԲ, I, 335): Բարդ բառերում այն սովորաբար ներկայանում է լրիվ կազմով (արջնադոյն, արջնադուռ և այլն), բայց Աճառյանը տեսնում է այն նաև «արջասպ» բառի մեջ (նույն տեղում), այսինքն, սուսնց «ն» վերջավորության, ինչը կարելի է ենթադրել նաև «Արչամ(յ)» մականվան մեջ, որը վերածվել է հայրանվան: Խորենացին, թերևս, ունեցել է երկու տարբերակ և ընտրել է Արչամ անունը որպես սովորական, մասնավորապես որ կա Հայոց այդպիսի արքայանուն (Արչամ Ծովբեր թագավոր՝ մ.թ.ա. II դարի կեսերին):

Անդրադառնանք այժմ երկրորդ խմբի երրորդ ենթախմբին, որը ամենաընդարձակն է: Այստեղ հայաբլված են անձնանուններով ստուգաբանված տեղանունները: Դրանք նպատակահարմար է բաժանել չորս մասի՝ աշխարհագրական բաշխումը ցուցադրելու նպատակով: Առաջին մասը բաղկացած է երկու միավորից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ողջ Հայաստանը:

55. Հայք (որպես երկրանուն) - Հայկ

56. Արմէն/ Արմէնիկ (երկրանուն) - Արամ

(55) I, 11. «Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնայն մերոյ Հայկայ՝ Հայք»:

Այս ստուգաբանությունը առկա է Անանունի մոտ՝ «Իսկ երկիրն ըստ նմին

<sup>5</sup> Լարուբնայ դեանադիր դպրի եղեսից թուղթ Աբգարու. Վենետիկ, 1868, էջ 4:  
<sup>6</sup> Տե՛ս Գ.Խ. Ս ա ռ գ ս յ ա ն. Հեղինակական դարաշրջանի Հայաստանը և Մոզես Խորենացին. Երևան, 1966, էջ 124 և հտ.:

(Հայկի. - Գ.Ս.) պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են Հայադամբը Հանդերձ» (էջ 49): Այս ձևակերպումը նույնիսկ այժիկ հարուստ է, քանի որ երկրանուն հետ մեկտեղ ընդգրկում է և «Հայ» ցեղանունը:

Որքան մեզ հայտնի է, «Հայ» ցեղանվան և «Հայկ» անձնանվան կապը բարդի կողմից ընդունված լինելով Հանդերձ, նրանց լեզվաբանական փոխանցությունը դեռևս պետականորեն համոզիչ կերպով բացատրված է:

(56) I, 12. «Արամայ բազում գործք քաջութեան պատմին... և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. որոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպես Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»:

«Արամ» անձնանվանի Խորենացու Պատմության մեջ ներկայանալու համարձանները դեռևս բացատրված չեն: Երեք Հնարավոր տարբերակներից՝ ա) ծագում է Աստվածաշնչի Արամ՝ «արամեացիներ» անձնավորված ցեղանունից, բ) Ուրարտուի թագավոր Արամուից և գ) հնագույն Հայկական առասպելից, ինձ առավել հավանական է թվում վերջինը:

Գ. Զահուկյանի կարծիքով «Սեբեոսը (Անանունը. - Գ.Ս.), ի տարբերություն Խորենացու, «արմեն» անվանումը կապում է ոչ թե «Արամ», այլ «Ար(ա)մանեակ» (Արմենեակ, Արմենակ) անվան հետ»<sup>7</sup>: Թեև Անանունի մոտ նման ստուգաբանություն չկա, բայց այդպես մտածելու հիմք են տալիս նրա հետևյալ արտահայտությունները. «ազգ Արամենակայ», «որդիք ազգածնինն Արամենակայ» և այլն, ի տարբերություն Խորենացու «Արամազնիայք», «արք Արամեանք», «Արամեան ազն» արտահայտությունների:

Ենթադրելի երկրորդ մասն ընդգրկում է Վանա լճի ավազանի տեղանունները: Դրանք են.

57. Միմ (լեռ) - Մեմ

58. Տարան (Տարոն) - Տարբան

Մեր Հիտագոսությունը շահագրգռություններից ելնելով՝ նպատակահարմար է այստեղ զետեղել նույն տարածքին, այսինքն՝ Վանա լճի ավազանին վերաբերող վերը և ստորև հիշատակվող նաև մյուս տեղանունները՝ իրենց հերթական համարներով: Դրանք են. Հարք-Հարք (Հայրիր) (17), Հայք (դաստակերտ) - Հայք (Հայեր) (83), Հայոց ձոր-Հայք (Հայեր) (84), Գերեզմանք (Գերեզմանակք)-Բելի նետահարման վայրը (18), Ցրօնք - Սեմի՝ իր որդիների հետ բաժանվելու վայրը (19): Այսպիսով, սույն տարածքի համար կա ընդամենը յոթ ստուգաբանված տեղանուն:

(57) I, 6. Սեմը, «ղիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ, գետոյ ընդ մէջ նորս անցանելով... անուանէ յանուն իւր զԵԵԱՆՆ Միմ»: Աստվածաշնչական Սեմ անունը որևէ մեկնաբանություն չի պահանջում:

(58) I, 6. «Իսկ ի կրոստերագունից որդուցն նորս (Սեմի. - Գ.Ս.) Տարբան անուն... բնակէ անդէն ի նոյն գետեղեր, յորոյ անուն և զգատուն անուանէ Տարան (Տարոն)»:

«Տարբան» անունը Աստվածաշնչում չկա, այն հայտնվում է միայն Խորենացու մոտ:

Երրորդ մասում ընդգրկված են Արարատյան դաշտի և նրա շրջակա երկ-

<sup>7</sup> Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, նախադրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 286:



րամասերի (Հյուսիսարևելյան Հայաստան) տարածքի տեղանունների ստուգաբանությունները: Գրանք են.

- 59. Արտգած - Արամանեակ
- 60. Արմալիր - Արամայիս
- 61. Երասխ - Երասս
- 62. Շիրակ - Շարայ
- 63. Մասիս - Ամասիա
- 64. Փառսիսոս - Փառսիս
- 65. Յուրակերտ - Յուրակ
- 66. Գեղ (լիռ) - Գեղամ
- 67. Գեղարքունի (գաւառ) - Գեղամ
- 68. Գեղարքունի/ Գեղամայ ծով - Գեղամ
- 69. Գեղամի (գաստակերտ) - Գեղամ
- 70. Գառնի - Գառնիկ
- 71. Սիւնիք/ Սիսական - Սիսակ
- 72. Այրարատ/ Արայի դաշտ - Արայ
- 73. Աղուանք - «Աղու» (մականուն)
- 74. Վայկունիք - Վայկուն
- 75. Վանանդ - Վոնդ կամ Վինդ
- 76. Արշարունիք - Արշալիր

Նույն կարգով, ինչ որ նախորդ մասի կապակցությամբ, ավերացնենք այստեղ նաև սույն տարածքի՝ Խորենացու ըստ իմաստի կամ ցեղանվան ստուգաբանված մյուս տեղանունները՝ իրենց ցուցակային Համարներով: Գրանք են. Բազարանբազին (20), Մարմնա-«մար ամատ» (81), Մարաց մարգ-մարեր (82), Երուսուղական-վանել (22), Ծննդոց-կենդանիների բազմություն (24): Բերված ցուցակի Հետ միասին ստացվում է 23 տեղանուն:

Այս ցուցակում ներկայացված անուններից առաջին 15-ը (59-73) Խորենացին ծագեցնում է Արամանյակի և նրա սերունդների Հետ կապված առասպելավանդությունից: (Այստեղ չենք խորանում մարաբասյան պրոբլեմի մեջ): Մենք հակված չենք վիճարկելու, ինչպես որ բազմաթիվ անգամ արված է առկա զրականություն մեջ, ՊատմաՆոր այս պնդումը, Համաձայնվելով Գ. Զառուկյանի այն տեսակետին, որ «Խորենացին այս անունները ոչ թե Հորինել է, ինչպես կարծում են որոշ քննադատներ, այլ վերցրել գերագանցապես ժողովրդական ավանդություններից և օտար աղբյուրներից» (Զահ. 81, էջ 51): Սա ընդհանուր ծանոթաբանություն է Հաջորդ շարադրանքի Համապատասխան մասի Համար, որին տեղերում կալիբացնենք անհրաժեշտ մանրամասներ: Կարևորագույնները դրանցից վերաբերում են Անանունի (Սերեոսի) մոտ նույն այդ անունների կապակցությամբ առաջարկված ստուգաբանություններին, անկախ այն բանից, թե դրանք Համընկնում են Խորենացու առաջարկներին, թե՞ տարբերվում են նրանցից: Նշենք, որ վերը «Հայք»-Հայկ և «Արմեն/ Արմենիկք»-Արամ զույգերի կապակցությամբ Անանունի տվյալներն արդեն բերվել են:

(59) I, 12. «Յայտ խորություն դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի Հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նոյն կողմանէ, և գլխունն անուանէ յանկաղոյն յիւր անուն» Արագած և գկալուածսն՝ ոտն Արաղածոյ»:

Նշելի է Խորենացու Հատուկ անդրադարձումն իր առաջարկած ստուգաբանության Հնչյունային որակին («յանկաղոյն», այն դեպքում, երբ նմանությունը իրականում չնչին է:)

Անանունը ևս նշում է, որ «Արամենակ բնակէ անդ, և շինէ գերկիրն կարուած ժառանգութեան իւրոյ՝ զվայրն լիւնակողմն և առապար» (էջ 50), սակայն այստեղ չի հիշատակում Արագած լեռը, այլ միայն Հեռագայում (էջ 52) և այլ կապակցությամբ: Անանունի մոտ Արամենակի հիշատակումների կապակցությամբ տե՛ս վերը (56):

(60-62) I, 12. «Իսկ որդի նորա (Արամանյակի. - Գ.Ս.) Արամայիս շինէ իւր սուն բնակութեան ի վերայ ոսոոյ միոյ առ եզեր գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմալիր. և գանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Երաստայ (տարընթիւրց՝ Արաստայ)՝ Երասխ: Եւ զորդի իւր զՇարայ, զյորովածին և զչատուկեր, առաքէ ամենայն աղիսիւ իւրով ի դաշտ մի մոտաւոր, արգաւանդ և բերրի... յորոյ անուն և զգաւանն ասեն անուանեալ Շիրակ: Վասն որոյ թուի արգարանալ առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. «Թէ՛ քո Շարայի որկորն է՛ ասեն, մեր Շիրակայ ամրարքն չեն»:

«Արմալիր»-Արամայիս ստուգաբանությունը «Արմալիր» տեղանվան որոշ փոփոխությամբ առկա է և Անանունի մոտ, այն է՝ Արամայիր-Արամայիս. «Արամայիս շինէ իւր ի վերայ գետեզերն տուն բնակութեան, և անուանէ զանունն նորա ըստ անուան իւրոյ Արամայիր» (էջ 50):

«Շարայ» անունը Աճառյանը (ՀԱԲ, IV, 150) Հարցակննով Համեմատում է պարսկերեն šāra «չատակեր» բառի հետ:

Եզակի դեպք է, երբ Խորենացին Հիմնավորում է իր առաջարկած ստուգաբանությունը գեղջուկներից լսած «առասպելով» (առածով):

(63-65) II, 12. «Ամասիա (Արամանյակի որդին. - Գ.Ս.) բնակեալ Արմալիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ և յետ Գեղամայ՝ զՓառսիս արի և զՅոյակ... և շինէ ...երկուս տուն... Եւ ետ զնոսա ժառանգութիւն երկուց որբուց իւրոց... յորս բնակեալ՝ յիւրեանց անուն գտեղիսն կոչեցին, ի Փառսիսայ՝ Փառսիսոս, և ի Յոյակայ՝ Յոյակերտ: Բայց զլեառնն՝ Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս»:

Ամասիա անունը աստվածաշնչական է: Գալով Մասիս անվան ստուգաբանությունը, ապա Անանունը միանգամայն այլ Ամասիայի Հետ կապ չունեցող, տարբերակ է առաջարկում, թեև նրա անունը այլ կապակցությամբ հիշատակվում է: Ըստ Անանունի, Աբրահամի ընդոժին Մարսեակը, փախչելով Իսահակից, «եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ Հայկն Հանդեպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կառարն և ի Գեղ լեառն: Եւ անուանէ զլերինս յանուն իւր, որում Ագատն կոչեն լեառն» (էջ 52): «Ագատն», ինչպես Հայտնի է, Մասիսի սովորական ածականն է:

Անանունը ստուգաբանում է նաև Փառսիս և Փառական տեղանունները՝ Փառսիս անձնանվամբ. «Փառսիս, նա է Եղիազար, և Փառսիս կոչեն գտեղի բնակութեանն, և Փառականն՝ դաշտ որոց և արշաւանաց նոցին» (էջ 52):

Աճառյանը Փառսիս անվանը վերագրում է իրանական ծագում՝ farrux-«հրջանիկ» բառից:

<sup>8</sup> Փառականի մասին տե՛ս Պատմութիւն Սերբոսի, ծան. 39:



(66-68) 1, 12. «Իսկ Գեղամ... զնաց զմիւս լիբամբն արեւեան Հիւսիսոյ, յիզր ծովակի միոյ: Երնէ զիզր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զիւսունն անուանէ Գեղ, և զչէնան՝ Գեղարբունի, որով կոչի և ծովն»:

Անանուներ նույնպէս հիշատակում է Գեղամին (էջ 50) և Գեղ լեռը (էջ 52), բայց ստուգաբանական կապակցութեան մեջ չի դնում:

Խորհնացու տեքստից երևում է, որ ծովը (խոսքը Սևանա լճի մասին է) նույնպէս անվանվել է Գեղարբունի: Այլ տեղերում երկիցս (II, 46 և III, 46) Խորհնացին անվանում է այն «Գեղամայ ծով»:

Աճառյանը Գեղամ անվան մասին գրում է (ՀԱԲ, I, 452). «Հնից Հայտնի է միայն մեկ անգամ, ծագումը՝ կամ խալդեան (ուրարտական, այդպիսի է Հակված մտածելու նաև Ջահուկյանը, Ջահ., 81, էջ 54) կամ Գեղամա (ծով, լեռ) տեղա- նունից»:

(69-70) 1, 12. «Բայց ինքն Գեղամ... ի ճորակի միում ամբողջ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թողանէ նորա անուանեցաւ Գառնի»: Աճառյանը (ՀԱԲ, I, 446) և Ջահուկյանը (Ջահ., 81, էջ 55) Գառնիի անունը համարում են «գառն» բառի փոխաբերական ձևը: Հմմտ. «գառնուկ»: Գառնին, ըստ Ն. Հարութիւնյանի, ծագում է ուրարտական Գրաու- նիանի տեղանունից, որ միանգամայն հավանական է<sup>9</sup>:

(71) II, 12. Գեղամի որդի Սիսակը «ընու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ, և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք, այլ Պարսք յստակագոյնս ևս Սիսական կոչեն»:

Սիսակ անվան ծագումը Աճառյանը (ՀԱԲ, IV, 525) համարում է անհայտ: Ուշադրութեան արժանի է Խորհնացու դիտողությունը («յրաստակագոյնս»: «Սի- սական») ձևի կապակցութեամբ (տե՛ս նաև 59):

(72) I, 15. Շամիրամը «Գոյ Հասանէ տաղնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ»:

Նույն ստուգաբանությունն առկա է նաև Անանուների մոտ. «Արայն Գեղեցիկ, որով անուն իսկ դաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարատը» (էջ 50): Հիշատակում է նաև «դաշտն Արայի» (էջ 51):

«Արայ» անունն, անշուշտ, ծագում է առասպելից:

(73) II, 8. Սիսակի մասին. «և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին դնա»: Մականվան Հետ կապված ստուգաբանություն տե՛ս նաև (15)՝ «Սոսանուներ»:

Սրանով ավարտվում է Արամայակի և նրա սերունդների դեպի Հյուսիս-արևելք տարածվելու մասին առասպել-ավանդության Հետ կապված տեղանունների ստուգաբանության շարքը:

(74) II, 14. Տիգրան թագավորի մասին. «Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ Պտղոմայիդ քաղաքաւ: Իսկ զշխոյն Հրէից Աղեքսանդրիայ... ինչս բարումս Կայսրի՝ դարձոյց զնա անախ: Քանզի էր լուեալ համբաւ, թէ Վայկուն ուն անուն յեղուզակ խուպի գերկիրն Հայոց, զիստն ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յեղուզակին կոչին Վայկունիք»:

<sup>9</sup> Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с.62

Այս պատմությունը Խորենացին առել է Հովսեփոս Փայլիոսի «Հրեական պատերազմի մասին» գործից, որտեղ կարդում ենք (I, 115, 116). «Իսկ Աղեքսանդրան ...Հայոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և պաշարել այնտեղ (փակված) Կլեոպատրային, զաշինքով ու նախընտրով հեռացրեց: Իսկ Տիգրանը Լուկուլլոսի արշավանքների հետևանքով ստանն սկսված անկարգությունների պատճառով, վերացնում է պաշարումը և հասնում Հայաստան»<sup>10</sup>:

(75) II, 6. Անիայտ և Վերին Բասեսանը «յետոյ վասն հատուածին Վղիզուր Բուրլարայ Վնդայ, բնակելոյ ի տեղին՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ»:

Սա այդ անձի միակ հիշատակությունն է, և ուղիղ Հորովով նրա ներկայացման բացակայությունը թույլ չի տալիս դատել սղված ձայնավորի մասին՝ ու կամ ի (Վունդ, Վինդ):

(76) II, 90. «Իսկ Արշալիր (Կամսարականը. - Գ.Ս.) առաւել սիրեալ զգաւան՝ յիւր անուն կոչէ Արշարունիս»:

Ստուգաբանությունը կամ տոհմական է, կամ պատկանում է Խորենացուն<sup>11</sup>:

Տեղանունների՝ անձնանուններով ստուգաբանման չորրորդ մասը կազմում են այնպիսիները, որոնք ջրված են Հայկական լեռնաշխարհի տարբեր ծայրերում և նույնիսկ մեկը՝ նրա սահմաններից դուրս:

- 77. Զարուանդ - Զրուան
- 78. Մաժաք - Մշակ
- 79. Մանեայ այր - Մանի

Ըստ նախորդ օրինակների, այստեղ ևս ավելացնում ենք նույն կարգի, այսինքն՝ ջրված, սակայն ըստ իմաստի ստուգաբանված տեղանունները, որոնք են՝ Բաղաւան / Բազնայ «աւան-բագին» (21) և Որթք - «որթ» (կողով) (23): Ընդամենը Հինդ տեղանուն:

(77) I, 6. «Քանզի կողմանք արևելից Զրուան զՍեմ կոչեն, և Զարուանդ զգաւանն անուանեալ ասեն մինչև ցայժմ»:

Զրվանը, որ իրանական դիցաբանության մեջ ժամանակի և ճակատագրի աստվածն է, որը ծնել է թե՛ ԱՀուրամազդաշին՝ բարու, թե՛ ԱՀրիմանին՝ չարի մարմնացումը, այստեղ նույնացված է աստվածաշնչական Նոյի որդիներից Սեմի հետ:

(78) I, 14. «Եվ զգաստակերան, զոր յանուն իւր շինեաց Մշակ կողմնապետն Արամայ... անուանէին Հինքն աշխարհին Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախոսել»:

Բավական հետաքրքրական է, որ Կոստանդին Ծիրանածինը պահպանել է նմանօրինակ մի տեղեկություն, այն է՝ «Կեսարիա մայրաքաղաքը, որն իր անունը պարտական է մեծ Հուլիոս Կեսարին, նախապէս կոչվում էր Մազակա, կապաղովկիացիների նախահայր Մոսոխի անունից»<sup>12</sup>: Նշենք «ոչ կարելով, ուղղա-

<sup>10</sup> Հ ո վ ո ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 35:  
<sup>11</sup> «Արշալիր» անվան մասին տե՛ս Գ. Ս ա ռ գ ա յ ա ն. Հեղինակազատ դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 125 և այլ:  
<sup>12</sup> Կոստանդին Ծիրանածին, Թարգմանությունը Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 168 և ծան. 36:



խոսել» արտահայտությունը՝ որպես Խորենացու՝ իր ստուգաբանություններին տված Հասցվածքուս ծանոթություններից մեկը: Տե՛ս և (59, և 71):

(79) 11, 91. «Բանդի էր կին ոմն անուն Մանի, յընկերաց սրբոց Հոփփ-սիմեանց որ... բնակեցաւ ի լեբրնս յաստիկ... վասն որոյ կոչեցաւ անուն լեբրնն Մանեայ այոք»:

«Մանի» որպես իզական անձնանուն կիրառված է միայն Մովսես Խորենացու մոտ:

Վերջին, երրորդ խումբը ամենափոքրն է, այն ընդգրկում է ստուգաբանության ընդամենը 5 օրինակ և պարունակում է ըստ ցեղանունների ստուգաբանված Հատուկ անուններ: Այս խումբը բաժանվում է երկու ենթախմբի (բացակայում են անձնանունների ստուգաբանությունները): Դրանցից առաջինը նախարարական ընդամենը մեկ սոհմանուն է պարունակում:

80. Մուրացեան - մար (մարացուց տէր)

(80) 11, 8. «Բանդի ոչ ասն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարցուցն տէր»:

Նշելի է, որ Գահնամակի մեկ Հասած տեքստում Մուրացեան տոհմանունը ներկայանում է «Մարացեան» տեսքով: Հավանաբար Խորենացին աչքի առաջ է ունեցել նման մի տարբերակ ևս և կատարել իր ընտրությունը Հօղուս «Մարացեանի», քանի որ այդպիսի ընթերցումը ճոխ պատմաառասպելական մեկնաբանության Հնարավորություն է տալիս, որին մասամբ կծանոթանանք ստորև:

Երկրորդ ենթախումբը պարունակում է չորս տեղանվան ստուգաբանություն: Դրանք են՝

81. Մարմէս - «մար ամատ» (պարսկերեն՝ «մարը եկավ»)

82. Մարաց մարզ - «մարերի մարզ»

83. Հայք (դաստակերտ) - «Հայք» («Հայեր»)

84. Հայոց ձոր - «Հայք» («Հայեր»)

(81) 11, 46. Արտաշեսը, «Հասեալ ի դասակերտն Երուանդայ (Երվանդակերտ, - Գ.Ս.) և միաբան գոչմամբ հրամայեաց աղադակել զօրացն՝ «մար ամատ», որ թարգմանի Մարս եկն... Յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէս»: Մենք արդեն ծանոթ ենք Խորենացու ստուգաբանական «թարգմանական» մեթոդին Ամատունի տոհմանվան (7) և Կամսար անձնանվան (11) ստուգաբանություններից: Այս դեպքը միաժամանակ դրսևորում է իր Հիմքում ընկած նաև «կրկնակի ստուգաբանություն» մեթոդը:

(82) 11, 46. Արտաշեսը «անուանեաց զՀոփրոն, ուր ի վերայ դիակացն բանակեցաւ՝ Մարաց մարզ»:

«Մարաց մարզը» Խորենացին ստուգաբանում է «մար» ցեղանվան միջոցով, ստանց, սակայն, այն ստանձին Հիշատակելու, որը և ավելորդ կլիներ առկա Համատեքստում, ուր խոսվում է նաև «Մարմետի» մասին: Խնդիրն այստեղ այլ է: XIII դարի երեք արձանագրություններում այդ տեղանունը մի դեպքում Հիշատակված է Խորենացու ավանդած ձևով, մյուս երկուսում, սակայն, «Մարանց (այսինքն՝ մայրերի) մարզ»<sup>13</sup>, որ ավելի էրատեսական է թվում: Զի բացառվում, որ

<sup>13</sup> Տե՛ս Գ. Халатьянц. Армянский эпос в "Истории Армении" Моисея Хоренского. М., 1896, ч. II, с. 233

Խորենացին, ունենալով երկու տարբերակ, ընտրել է իր պատմությունը կերտելու Համար Հարմարագույնը: (Հմնտ. Երուանդավան (22):

(83-84), 12. «Բայց գտելի ճակատում չինէ դաստակերտ և անուն կոչէ Հայք վասն յաղթութեան պատերազմին: Այնորիկ աղաբաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր»:

Ի տարբերություն «Հայք» երկրանվան (59), որն ըստ Խորենացու գալիս է «Հայկից», «Հոյք» դաստակերտը, ըստ Համատեքստի, իր անվանումը ստացել է «Հայք» («Հայեր») ցեղանունից, ինչպես և «Հայոց ձորը»:

Դիտարկված 84 ստուգաբանական միավորները պատկանում են, ինչպես սալից սկզբում, այսպես կոչված «ժողովրդական» ստուգաբանության տեսակին, որը բնութագրվում է նրան մասնակից անուններ կամ բառերի արտաբերման, զուտ Հնչյունական նմանության պարագայով զուգադրմամբ և այդ հիմքի վրա նրանց կապի՝ մեկը մյուսից ծագելու հանգամանքի բացահայտմամբ:

Հայնորեն չարաչափելիով մեր օրերի գիտականաշուքը սիրողների կողմից, այն միանգամայն բնական է Խորենացու և նրա ժամանակի գիտություն Համար և այդ իմաստով պետք է գիտահետազոտական մեթոդ Համարվի:

Խորենացու մոտ հանդես եկող ստուգաբանությունների մեջ անշուշտ կան և՛ իր սեփական առաջարկները, և՛ նրա որդեգրած միավորները: Զանդվածաբար գտելի դրանք մեկը մյուսից, հատկորեն առանձնացնել «դրսից» նրա առած օրինակները զժովարին, իսկ ավելի ճիշտ՝ անհնարին գրքը է: Նկատի ունենալով Պատմահոր անսքող Հակոբը ստուգաբանությունների նկատմամբ, ինչպես և դրանց քանակությունն ու որակը, կանխավ կարելի է ենթադրել, որ դրանց մի սովոր մտքը, հավանաբար՝ մեծամասնությունը, առաջարկված է Հենց իր կողմից: Ինքը՝ Խորենացին, որոշ սուղ Հնարավորություններ է ընձեռում այդպիսիները առանձնացնելու Համար, սակայն Հետեկով էլ դրանց, զժվար է հասնել որևէ երաշխավորված արդյունքի:

Ստուգաբանությունները, ճնշող մեծամասնությամբ, մատուցված են որպես օրյեկտիվ փաստեր: Դրանք Հիմնականում ներկայացված են կամ ներդրածական ձևով, օր., Սեմը իր որդի Տարբանի անունով «զբաւառն անուանէ Տարան», կամ կրավորական ձևով, օր., Գառնի ձեռակերտն «Ի Գառնկայ... անուանեցաւ Գառնի» և կամ սրանց այլևայլ տարբերակներով:

Որոշ դեպքերում անվանակոչության փաստը չի արձանագրվում, այլ պարզապես ներկայացվում են ստուգաբանվող և ստուգաբանող տարբերը (եղբնոն նույնիսկ իրարից հետև), օր., «Աշտիշատ», Հաջորդ զլիտում՝ «յաշտից տեղիք» (25):

Խիստ սահմանափակ դեպքերում է, որ Խորենացին նշում է իր մասնակցությունը ստուգաբանությունը: Այսպես, նա գրում է. «Եւ զԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս», իսկ այնուհետև՝ «Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս», որտեղ «գիտեմ»-ը պիտի հասկանալ «կարծում եմ»: Երկու այլ դեպքում «գիտեմ»-ը փոխարինված է «ասեմ»-ով՝ «Ասեմ և զՍպանդանիսդ ի վերայ զհնարանաց, և Հավունիսդ՝ բազէակիրս և բազէակալս»: Երկու անգամ էլ Խորենացին ստուգաբանությունների նկատմամբ կիրառում է «ինձ թուի» արտահայտությունը:

Բնականաբար, մենք չենք կարող միայն այս սակավաթիվ ցուցանիչների



վրա հենվելով առանձնացնել դրանց վերաբերող ստուգաբանությունները մնացած զանգվածից և համարել վերջինս խորհնացու կողմից լիովին «գրսից» հավաքած, ուրիշների կողմից արված, ուստի և հրաժարվեցինք նման սահմանազատումից, գտնելով հանդերձ, որ այդպեղ շատ բան խորհնացուն է:

Այստեղ արժե, թերևս, երկու լրացում անել: Առաջինը կապված է ստուգաբանական յոթ դեպքի հետ (17, 41, 55, 60, 63, 64, 72), որոնք, բացի խորհնացուց, ներկայացված են նաև Անանունի մոտ: Մենք զննահատում ենք այդ երեւոյթը՝ որպես երկու հեղինակների կողմից ընդհանուր աղբյուրի օգտագործման արգասիք: Սրան չի խանգարում այն հանգամանքը, որ նշված յոթից միայն Հինգի ստուգաբանություններն են համընկնում երկու հեղինակների մոտ, երեքը՝ լիովին, երկուսը՝ փոքր տարբերությամբ, իսկ երկուսը չեն համընկնում Մամիկոնեան - Մամգան (խորհնացի) - Մամիկ և Կոնակ (Անանուն) և Մասիա - Ամասիա (խորհնացի) - Մարսակ (Անանուն): Դիտելով այս երկուսը որպես խորհնացու ներկայացրած այլընտրանք, համեմայնողնապ կարելի է ընդունել ողջ յոթնյակը որպես խորհնացու՝ «գրսից» առած փաստեր:

Երկրորդ վերապահությունը վերաբերում է «ասեն» («ասում են, որ...» իմաստով) բառով ներածվող երեք և «անուանեն» - ով ներածվող մեկ ստուգաբանություններին (վերջինը Արամի անունով մեր երկիրը այլ ազգերի կողմից Արմէն, Արմէնիք անվանվելու վերաբերյալ): Սրանք էլ, դիտվելով որպես, թեև անորոշ, բայց այնուամենայնիվ՝ հղումներ, թերևս պիտի դասվեն «գրսից» առածների թվին:

Այս բոլորը, սակայն, չեն հասակեցնում սահմանազատման խնդիրը և հնար չեն տալիս դասավարդելու ամբողջ նյութին ըստ «սեփական» և «գրսից առած» կատեգորիաների: Սակայն ներկայացված 84 ստուգաբանությունները դասակարգվում են մի շարք այլ կտրվածքներով: Առաջին երկուսը, բնակարար, թելադրվում են ստուգաբանական միավորի երկու տարբերով, որոնք են ստուգաբանվողը (պասսիվ) և ստուգաբանողը (ակտիվ): Ստուգաբանվող կամ պասսիվ տարբերակի կողմի տեսակետից նշված զանգվածը բաժանվում է երեք մասի՝ տոհմանուններ (նախարարական)՝ 27 միավոր, անձնանուններ՝ 19, տեղանուններ՝ 38: Երեք մասի է բաժանվում այն նաև ստուգաբանող կամ ակտիվ տարբերի առումով՝ իմաստային՝ 25 միավոր, անձնանունների՝ 54 և ցեղանունների՝ 5:

Այսպիսին է ստուգաբանական միավորների ընդհանուր պատկերը, որը և ներկայացված է վերը բերված մեր ցուցակում: Այստեղ արդեն նշմարվում է Պատմահոր՝ իր ձեռքի տակ եղած հատուկ անունների զանգվածից նպատակաուղաց ընտրություն կատարելու սկզբունքը, որի ընդհանուր էությունն է, ինչպես կոտանենք, քաղած նյութը օպտիմալ ասրբերակով «Հայոց պատմություն» շարադրմանը ծառայիցնելու նպատակը:

Իրականացման մեթոդիկայի տեսակետից ևս ստուգաբանությունը բաժանվում է երեք խմբի: Ամենասովորականը և ամենաընդգրկունը պարզ ստուգաբանությունների մեթոդն է, որի դեպքում ստուգաբանող բառը լիովին կամ մասամբ, կամ էլ որոշ չափով ձևափոխված վիճակում, հնչյունական առումով պարունակվում է ստուգաբանվող բառի ընդգրկում (օր. Զիւնական - ձիւն, Մաժաք - Մշակ, Վահունի - Վահագն): Սրանք կազմում են 66 միավոր:

Երկրորդը «թաքնված ստուգաբանությունների» մեթոդն է, որի դեպքում, ինչպես նշված է արդեն վերը (ՊԲՀ, 1998, 1-2, էջ 113), ստուգաբանող բառը անմիջականորեն չի պարունակվում ստուգաբանվող բառի մեջ, այլ ներկայացված է նրա մոտիկ կամ հեռու համարժեքով, կամ էլ նրա ֆունկցիոնալ նկարագրությամբ, օր. Սպանդուռի - (սպանդ, որը բացակայում է) - զինարան, Տուր - (տալ՝ «մասնիկ») - քություն, Ծրօնք - (ցրուկ) - բաժանվել, գերեզմանք - «ուր անկաւ Բիլ»: Սրանց թիվը ութն է:

Երրորդը «երկդիմի ստուգաբանություն» մեթոդն է, որի դեպքում ստուգաբանվող բառը բառի երկու մասերը առանձին - առանձին են ստուգաբանվում, ըստ որում մի մասը կարող է սովորական, իսկ մյուսը՝ «թաքնված» ձևով ստուգաբանվել (օր. Գնունի - զինի ունի, Աբքար - աւազ այր, Մոզղաշտէ - մոզի աշակերտ): Սրանց թիվն էլ տասն է:

Նորենացին ունեցել է մեթոդիկայի այլ, ավելի մասնավորացրած ձևեր, երանգներ, որոնց կիրառումը դրսևորվում է, այսպես ասած, «ողկույզների» ձևով: «Ողկույզների» առաջացման հիմքերը շատ այլազան են և, բացի այդ, նրանք կարող են խաչաձևվել, այսինքն՝ նույն ստուգաբանական միավորը կարող է տարբեր հիմքերով հանդես գալ մեկից ավելի «ողկույզների» մեջ: Բնութագրենք դրանցից մի քանիսը, չհավակնելով սպառելու խորհնացու ստեղծագործական կարողությունները:

Նախարարական տոհմանունների ըստ իմաստի ստուգաբանության դեպքերը երկու «ողկույզ» են կազմում: Մեկը բաղկացած է հինգ միավորից և հեցած է տվյալ տոհմի ներկայացուցիչների՝ արքունիքում կատարած պաշտոնի ընութագրման վրա, օր. «Ձիւնաւանսոջ ամուսնոցսմ պահակս և ձիւնակիրս»: Մյուսը՝ երեք միավոր հուշեր է պահպանում տոհմի նախահոր մարմնական կամ այլ առանձնահատկությունների մասին, օր. Դիմաքայան-«դիմաց կէս» ստուգաբանությունը տոհմի նախահորը մարտում հասցված ահալոր վերքի մասին է վկայում:

«Ողկույզների» մի շարան կազմված է միևնույն անձի կամ իրի, որպես ստուգաբանող տարր, օգտագործման դեպքերից: Այսպես, «բագին» բառով ստուգաբանված է երկու տեղանուն՝ Բագարան և Բագասան (կամ Բագնաց աւան): «Մար» ցեղանունով ստուգաբանված են Մարմէտ և Մարաց մարզ տեղանունները, այլև Մուրացեան տոհմանունը, Գեղամ անձնանունով՝ Գեղ (լեռ), Գեղարքունի (լեռ), Գեղարքունի (գավառ) և Գեղամի (դաստակերտ) տեղանունները: Հայք («Հայկիր») ցեղանվամբ՝ Հայք (դաստակերտ) և Հայոց ձոր (գավառ) տեղանունները: Պարսկերեն «ամատ» («եկավ») բառով Մարմէտ («Մարը եկա») տեղանունը և Ամատունի («Որպէս թէ «եկք») տոհմանունը:

«Ողկույզի» մի տարատեսակ է «կամ սար» (պարսկ. «կիս գլուխ») և «դիմաց» (դիմքի) կէս» (Հայերեն) միանշանակ արտահայտություններով, համապատասխանաբար, Կամսարական և Դիմաքայան տոհմանունների ստուգաբանումը:

«Ողկույզ» են Սեմ և Զրուան (ըստ խորհնացու՝ նույն Սեմը՝ «արևելյան կողմերում») անձնանուններով Սիմ (լեռ) և Զարուանդ (գավառ) տեղանունների և Սիսակ ու «Աղու» (Սիսակի մականունը) անձնանուններով Սիսական (Սիւնիք) և Աղուանք տեղանունների ստուգաբանությունը:



Մեթոդիկայի տեսակետից «որկույզ» են կազմում Երուսաղեմյան և Մարաց մարզ տեղանունները: Երկուսի մեջ էլ Խորենացին, մեր կարծիքով, փոփոխություններ է մտցրել ստուգաբանությունը ապահովելու նպատակով. Երուսաղեմյանը դարձրել է Երուսաղեմ(յ)-վան, և ստուգաբանել «վանել» բայով, իսկ «Մարանց»-ը դարձրել է «Մարաց» և ստուգաբանել «մար» ցեղանունով (22 և 82):

Սրանց հարում է Հաուուների և Վահուների տոհմանունների կազմավորումը այլ աղբյուրներում հանդիպող և, հավանաբար ճիշտ, Հաուուների (Հաուուուների) և Վահուների ձևերից՝ «Հաու» և «Վահաղն» բառերով ստուգաբանությունը դյուրացնելու նպատակով (4 և 37):

«Ողկույզներ» են նաև մի կողմից՝ Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ և մյուս կողմից՝ Յապետոյթի, Մերոզ, Սիրաթ, Թակլազ անունների ստուգաբանական համադրումը և Բագարատ, Աշոտ, Վարագ և Սմբատ անունների ծագեցումն ու ստուգաբանումն իբր Հին Հրեական Բագադիա, Ասուդ, Վապարիա և Շամբատ անուններից:

Մենք որդեն այլ առումներով ծանոթ ենք Ամատունի տոհմանվան, Մարմետ տեղանվան և Կամար անձնանվան ստուգաբանություններին, բայց տվյալ համադրության մեջ նրանք մի «թարգմանական ողկույզ» են կազմում՝ ստուգաբանված լինելով ամետ - «նկալ» և կամ սար - «կես զուլխ» պարսկերեն բառերով: Ողկույզ են և Գին, Գնել, Սյուկ ու Արեղոյ անձնանունները, որոնք, չօգտագործվելով Հանդերձ Գոուուների, Սյուկների, Արեղեան նախարարական տոհմանունները ստուգաբանելու նպատակով, Հանդես են գալիս որպես պահեստային միջոցներ, և խաղում, հավանաբար, նշված տոհմանուններից ծնված անձնանունների դեր:

Կարելի է բազմացնել «որկույզների» թիվը, սակայն մեր թեմայի համար ավելի շահեկան է ներկայացնել նախորդի նման «չկայացած ստուգաբանությունների» ևս մի երկանդամ «որկույզ», որը բնականաբար, բացակայում է մեր ջուղակում: Ռշտունի և Գողթնեցի նախարարական տոհմանունների մասին Խորենացին գրում է. «Ոչ գիտեմ, թե՛ յանուն արանցն զգաւաւան անուանեալ, և թե՛ յանուն գաւաւացն զնախարարութիւնան կոչեցեալ» (11, 8): Այս բառերն ավելորդ անգամ բնութագրում են Խորենացու պրպտող միտքը, որը, սակայն, տվյալ դեպքում չի կարողացել գտնել խնդրի լուծումը և Հարկ է համարել խոստովանել այդ փաստը: Պատկերը լրացվում է նաև հետևյալ «չկայացած» ստուգաբանության դեպքով. «Եւ զգեցուցանողս իւր զձեռէս ի գաւակէ քանանացոց. և անուն կոչէ ազգին Գնթունիս, ոչ գիտեմ, էր աղագաւ» (11, 7), խոստովանում է Խորենացին:

Երկու խոսք էլ ավելացնենք Խորենացու՝ ստուգաբանություններին տրվող որակավորման վերաբերյալ: Այդպիսի երկու դեպք կա. Արամանեսարը, առում է Խորենացին, «գլեանն անուանէ յանկազոյն յիւր անուն Արագած» (11, 12): Ահա, սա, տարօրինակաբար, «յանկազոյն» է հնչել Խորենացու ականջին, թեև ստուգաբանող անվան միայն առաջին երեք տառն են առկա ստուգաբանվողի մեջ: Նույն գլխում կարդում ենք. «Սրսակ... զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սրենիք. այլ պարսք յոտակազոյնս ևս Սրսական կոչէն» (1, 12):

Այս երկուսի համադրումից երևում է, որ իր ստուգաբանությունները բերելիս Խորենացին լավ է սարբերել, թե որն է «յստակազոյն», բայց և չի խորշել իր

չափանիշների «յանացված» կիրառումից, ինչպես «յանկազոյնի» դեպքում է, բանի որ դա բազմացնում էր նրա ստուգաբանական հնարավորությունները:

Բերված նյութից Հաուուոզ բոլոր այս ստուգաբանական կարվածքներից, մեթոդներից, դասակարգումներից, «որկույզներից», մեր կարծիքով, բխում է այն եզրակացությունը, որ ի դեմս Խորենացու ստուգաբանությունների, մենք սեննեք ոչ թե պատահական դեպքերի դանգված, այլ մշակված համակարգ, կիրառված որոշակի չափանիշներով, սկզբունքներով և որոշակի նպատակով, որի բնութագրմանն էլ անցնում ենք:

\*\*\*

Սկզբնական այն տեղեկատվությունը, որը Հատուկ է ստուգաբանության բոլոր դեպքերին և նրա բուն էությունն է կազմում՝ դա Հատուկ անունների բացատրությունն է, նրանց ծագման, բուն իմաստի բացահայտումը, իհարկե խորենացիական ըմբռնմամբ: Օրինակ, Արմաւիր-Արամայիս ստուգաբանությունը բացատրում է Արմաւիր քաղաքանվան ծագումը և հիմնադրման հանգամանքները (60): Խորենացու 84 ստուգաբանություններից 51-ը կանգ են առնում այս առաջին աստիճանի վրա: Եվս 24 դեպք մտադրում են երկրորդ աստիճան: Այդտեղ, առաջին աստիճանի տեղեկատվության վրա կառուցվում է պատմական մեծ կամ փոքր դրվագ: Օրինակ՝ Դիմաքայան - դիմաք կէս ստուգաբանության վրա կառուցվում է ճակատամարտում տոհմի նախնու՝ դեմքի կեսից զրկվելու պատումը (6): Եվս մի քանի դեպքում ստուգաբանությունները հասնում են երրորդ աստիճանին: Այստեղ պատմական դրվագին գումարվում է մի լրացուցիչ տեղեկություն կամ առասպել, որն առնչվում է ստուգաբանությանը, բայց և զուրս է գալիս նրա սահմաններից: Օրինակ՝ Սոսանուէր - սոսի - ձօնել ստուգաբանությունից (15) հետևում է այդ մականունը կրած Անուշավանի՝ սոսիներին ձոնված լինելու հանգամանքը, իսկ այդտեղից էլ սկիզբ է առնում Արամավիրում Արամայակի տնկած սոսիների սոսավյունից գուշակություններ անելու՝ հնում ընդունված սովորության մասին պատմությունը: Վերջապես, առկա է նաև չորրորդ աստիճանը, որն իրենից ներկայացնում է այդ ստուգաբանությունների երրորդ աստիճանին (եթե դա առասպել է) գումարված՝ առասպելների խորենացիական «ճշմարտեցումը» (այս վերջին տերմինը հանգամանորեն կպարզաբանվի ստորև):

Ինչպես տեսնում ենք, Խորենացու ստուգաբանությունների տեղեկատվությունն առատ է, բայց և ոչ համարժեք, այսինքն՝ նրա տարբեր միավորները շատ տարբեր արժեք ունեն հենց Խորենացու համար և, ավելացնենք, նաև մեզ համար, որպես Խորենացու երկը Հետազոտողների:

Եվ այսպես, ի՞նչ, ինչպես արդեն սովոր ենք, դարձյալ առաջին Հերթին անդադրաւանք նախարարական տոհմանունների ստուգաբանություններին, ավագ պիտի շեշտենք, որ Խորենացին իզուր չի վստասել «Նախարարություն պատմաբանի» համբավը: Լիրավի, իր «Պատմություն» մեջ հանդես եկող բոլոր 50 նախարարական տոհմերը նա ջանացել է օժտել հնարավորին չափ հարուստ պատմություններով: Բնակամաբար, աղբյուրների ընձեռած հնարավորությունները տոհմերին այդ իմաստով բավական անհավասար պայմանների մեջ են դրել:



Խորհնացին փորձել է յուրաքանչյուր տոհմի համար հարցաթերթիկ լրացնել, որի հիմնական կետերն էին. ա) նախարարական տոհմի ծագումը, բ) նրա «նախարարացումը» և պաշտոնը (դերը) արքունիքում կամ պետական համակարգում, գ) տոհմի կարկառուն ներկայացուցիչները, նրանց բարի և չար գործերը (սխրանքներ, ապստամբություններ, հանցագործություններ և այլն), դ) տոհմի վախճանը (եթե տեղի է ունեցել մինչև հեղինակի ժամանակը):

Խորհնացին ջանացել է իրեն հասանելի բոլոր միջոցներով յուրաքանչյուր տոհմի համար լրացնել այս սխեման, և դրա մեջ մեծ դեր են խաղացել տոհմա-նունների ստուգաբանությունները: Ամենաքիչը, Պատմահորը հաջողվել է տալ նախարարական տոհմի ծագումը և նրա նախարարական շուքի սկզբնավորումը: Բայց սա էլ ֆեոդալական հասարակության մեջ նախարարական (ավատական) տոհմի ծանրակշռությունն ապահովելու համար ավելի քան կարևոր էր: Լավագույն դեպքերում տրվում է տոհմի փարթիսմ պատմությունը: Մյուս դեպքերն ըստ հագեցվածության դասավորվում են սրանց միջև:

Որպես նշված սխեմայի, հարցաթերթիկի լրացման (ընդ որում՝ տոհմանվան ստուգաբանության արդյունքների կիրառմամբ) ցայտուն օրինակ բերենք Վահու-նինների նախարարական տոհմը: Խորհնացին Վահունիներին չորս անգամ է անդրադարձնում, լրացնելով բերված հարցաթերթիկի բոլոր չորս կետերը:

Ա) 1, 31. «Սորա (Տիգրան Երվանդյանի - Գ. Ս.) որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ ասնն առասպելք աշխարհիս... («Երկնէր երկին...» և այլն), և սորա են զարմբ Վահունիք»: (Ծագում):

Բ) 111, 8. «Բայց յորդոցն Վահագնի պտեալ արս, որք ինքնակամ ինդրեցին գմեհնից պաշտամունսն՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տայով նոցա զքրմութիւնն. և կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն, և անուն կոչէ Վահունիս»: (Նախարարության սկզբնավորումը, ինչպես և քրմապետության, կապված է, անկասկած, Վահագնից ծագելու հետ, որը և հատակվում է հաջորդ կետով):

Գ) 11, 12. Արտաշեսը «գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեգօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեցնին յԱրմաւիր: Զօր առեալ քրմապետացն, որ էին յագգեն Վահունեաց՝ զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն դառնապատկերս... զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»: (Հանգամանք, դարձյալ կապված Վահագնից ծագելու հետ):

Դ) 11, 14. Տիգրանը (Արտաշեսի որդին) ցատուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդէր յիւրեանց սեպհական իշխեցին կանգնել զպատկերն Հերակլի... ընկնու գնասա ի քրմութիւնէն, և զգիւղն յարքունիս անուս, յորում պատկերքն կանգնեցան»: (Վախճան, նորից կապված Վահագնից ծագելու հետ):

Ինչպես տեսնում ենք, Վահունի - Վահագն ստուգաբանությունը, ծառայելով Հանդերձ Խորհնացու նպատակներին, իր հետ նաև հետաքրքրաբույն տեղեկություններ է բերում Հայ Հեթանոսական կրոնի մասին:

Վերը մենք խոստացանք անդրադառնալ այն «պատմաստուսպեկական» մեկնաբանմանը, որին Խորհնացու համար հնարավորություն է ստեղծել Մուրացեան տէր-Մարացուցն տէր (80) ստուգաբանությունը:

Սրա հետ կապված պատումը նույնպես կարելի է տեղափոխել վերը նշված սխեմայի մեջ:

Ա) 11, 8. «Բայց յետ կարգելոյ զտուն թագաւորին (Վաղարշակի. - Գ. Ս.)՝ երկրորդ թագաւորութեանն լինէր ի գաւակէ Աժդահակայ, Մարաց եղիւոյ թագաւորի, որ այժմ Մուրացեան կոչնն: Քանզի ոչ ասնն նահապետաց պզկին՝ Մուրացեան տէր, այլ Մարացուցն տէր»: (Տոհմի և նախարարության ծագում):

Բ) Նույն տեղում՝ պաշտոնը արքունիքում՝ «երկրորդ թագաւորութեան»:

Գ) 11, 46. Արտաշեսը Երվանդի դեմ պայքարելիս միայն Մուրացեան տոհմի Նահապետ Արգամից էր երկուցում, ուստի և «առաքեալ պատգամ առ Արգամ, նահապետ Մուրացեան Հանդերձ բազում երդմամբք՝ թողուլ ի վերա նոր գոր ինչ պտեալ էր յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի գԵրուանդ թողեալ ի բաց գնացէ»: Քանի որ Արգամը կատարում է այդ պատգամը, ապա Արտաշեսը, դահակալելով, (11, 47) «Տայ և առնն քայլի և պատուականի Արգամայ զխոստացեալ գահն երկրորդական, և պսակ յակնթակապ...» և շատ ուրիշ բաներ:

Սակայն Սաթենիկ թագուհին սիրահարվում է Արգամին, ինչի շուրջը խոսվում է և առասպելում, որտեղ Արգամը Արգաւան է անվանված (11, 51): Սա սկսում է դավեր նյութի Արտաշեսի դեմ (1, 30):

Դ) Արտաշեսն իր որդի Արտավազդի ձեռքով սպերում է Մուրացեանների ապարանքը և սպանում Արգամին և նրա ազգի երեխիներին (11, 51):

Ինչպես տեսնում ենք, այս ամբողջ պատմությունը ևս հեցած է Մուրացեան (տոհմանուն) - «մար» (ցեղանուն) և սրա հետ իսախաձևելող Արգաւան-Արգամ (անձնանուններ) ստուգաբանությունների վրա:

Մուրացեան - մար ստուգաբանությունն իր հուկից բերում է վիշապագուների առասպելը: Այն ծայր է առնում մարաց Աժդահակ (= վիշապ) թագավորից: Սրան հաղթելով ու սպանելով, Տիգրան Երվանդյանը վիշապագուներին՝ իրենց թագուհի, Աժդահակի առաջին կին Անուշի հետ միտսին բնակեցնում է Մասիս լեռան վիհում, մինչև Գողթան սահմանը: Այստեղից է ծագում վիշապագն Արգամներ, որն, ըստ Խորհնացու, նույնանում է Մուրացեան (Մարացուց տէր) Արգամի հետ: Ըստ առասպելի, վիշապագուները գողանում են Արտաշեսի որդի Արտավազդին և տեղը դե են դնում:

Պակաս ցուցադրական չէ նաև Արծրունի - արծուի ունի ստուգաբանությունն արծարծումը: Խորհնացին գրում է. «Եւ Արծրունիդ զիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա (Վաղարշակի թագավորի. - Գ. Ս.) կրէին» (11, 7):

Ինչպես տեսնում ենք, այսքանը լրացնում է Խորհնացու Արծրունիներին ներկայացրած հարցաթերթիկի միայն Բ), այն է՝ արքունիքում ունեցած պաշտոններին վերաբերող կետը, իսկ մնացած կետերը, պիտի ստեղծել շարապրված են «Պատմություն» մեջ այլ նյութերի հիման վրա:

Սակայն այստեղ մենք հանդիպում ենք ստուգաբանությունից բխող տեղեկատվության միանգամայն այլ ուղղության: Խորհնացին շարունակում է Հենց ընդհատված տեղից այսպես. «Թողում գառասպելացն բաջադանս, որ ի Հաղամակերտին պատմին, մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակալ, և հովանի թուչնոյ՝ պատանույն թալկացելոյ»:



Այստեղ պարզորոշ կերպով խտսվում է Արծրունի տոհմանվան ստուգաբանությունը մեկ այլ, «Հաղամակերտյան» (այսինքն, քանի որ Հաղամակերտը Արծրունիների նաապայրն էր, ապա՝ տոհմական) տարբերակի մասին: Խորենացին վճռակամորեն ժխտում է այդ տարբերակը (որը, ի դեպ պատկանում է «Թաքնված» ստուգաբանության տեսակին), որպես առասպելական: Սակայն, բացի «Իրականառասպելական» Հակադրությունից, որը սովորական է Պատմահոր Համար, այստեղ կա և մեկ ուրիշը: Խորենացու ստուգաբանությունը առաջարկված է մեծապետական դիրքերից, այստեղ շեշտված են Արծրունիների ծառայողական ֆունկցիաները՝ թագավորի նկատմամբ, իսկ «Հաղամակերտյան», այսինքն՝ տոհմական տարրերակը Հենվում է Հեքիաթային տարածված մի սյուժեի վրա՝ Հակաթական թռչնի թևերի Հովանու տակ փրկություն գտած մանկան մասին: Հաս որում այդ սյուժեն իր շարունակության մեջ, փրկված մանկանը սովորաբար Հասցնում է մեծապետի պատվերի և դիրքերի: Նկատի ունենալով Խորենացու ստոր վերաբերմունքը Արծրունիների նկատմամբ, նրա մոտեցումն այս Հարցին լիովին բացատրելի է: Այս կապակցությամբ բավական Հետաքրքրություն են ներկայացնում Արծրունիների տոհմական պատմիչ Թովմա Արծրունու Հաղորդած անդեկությունները, որոնց մեջ կատարյալ մոտացություն են սրված Խորենացու ներկայացրած երկու տարբերակներն էլ, թեև դրանք, Խորենացու ամբողջ երկի Հետ միասին, անշուշտ, ծանոթ են եղել Թովմային<sup>14</sup>:

Այսպես թե այնպես, բայց Խորենացու ներկա ստուգաբանությունը Հարստացնում է նրա պատմությունը (նաև Հայ առասպելաբանությունը) մի նոր առասպելով՝ պատանու և արծվի մասին:

Նախարարական տոհմանունների ստուգաբանություններից ծագող տեղեկատվության ցուցադրումը կարող է երկարորեն շարունակվել, այն սարքեր չափերով ընդգրկում է բոլոր ստուգաբանված դեպքերը: Սակայն անձնանունների

<sup>14</sup> Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, 1, 2, էջ 83-84: Թովմայի Համար նվաստացուցիչ պիտի լինեն Ասորեստանի Մենեքերիմ թագավորի որդիներ Աղրամելիքից և Մանասարից ծագող Արծրունիներին Համարել թագավորի արծվակիրներ: Իսկ «Հաղամակերտյան» տարբերակի բացակայությունը, թերևս, կարելի է բացատրել այսպես՝ դարերի ընթացքում այն դուրս էր մղվել տոհմական բանավոր ավանդությունից, ուստի և խորթ էր թվում Թովմային:

Թովման առաջ է քաշում Արծրունի տոհմանվան դարձյալ «արծուի» բառով ստուգաբանման միանգամայն այլ մեկնաբանություններ: Նա գրում է. «Խնդրէ զնա (Արծրունիների) Կյուրոս անունը կրող նախնուն - Գ.Ս.) Վաղարշակ յԱրշակայ և առնու սոճ զնա ընդ իր ի Հայս, և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծուունըն կերպարանօք: Բայց ոչ զհոնմ, թէ յանուն աշխարհին թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունի: Երկրորդ վասն բնակութեան արիւթեանն, արծուաբար քաջաարտապէս խելագիրութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուխ առակելին զնոսա»: Ինքը՝ Թովման, նախապատմությունը տալիս է այս մեկնաբանություններից առաջինին: Դեռ ավելին, թագավորական արծվակիր լինելու պարտականությունը Արծրունիներից էլ ավելի Հեռացնելու նպատակով, Թովման վերագրում է այն մեկ այլ տոհմի: Հատկանշական է, որ դեռ Համար ընտրվում է Աժդահակի գալականներից ծագող տոհմը, որը Խորենացու մոտ անվանված է Մուրացեան, և որի նահապետները, ըստ Խորենացու, եղել են թագավորության երկրորդ դեմքերը, այսինքն, խաղացել են այն դերը, որը, թերևս, ակնկալում էին իրենք Արծրունիները:

ստուգաբանությունը ևս քիչ բան չի տալիս: Բերենք մի քանի օրինակ: Այսպես, Սանատրուկ-«սուրբ Սանտույ» (9) զուգրի Սանտուր Հանդես է գալիս որպես Սանատրուկ արքայի դայակը: Կորդվայ լեռներում ճանապարհորդելիս ընկել են բքի տակ, թաղվել ձյան մեջ: Դայակը երեք օր ու գիշեր պահել է մանկանը իր կրծքերի միջև, փրկել: «Ձորմէ առասպելաբանեն,- գրում է Խորենացին,- եթէ կինդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն»: Բայց իսկույն եւթ, իր սովորություն Համաձայն, Պատմահայրը ձգտում է «ճշմարտեցնել» առասպելը. «Բայց որչափ մեք եղար վերահասու՝ այսպէս է, շուն սպիտակ ընդ խնդրական լեալ, պատահեաց մանկանն և դայեկին» (11, 36): Այստեղ ևս ստուգաբանությունն իր Հետ առասպել է բերում:

Արա Գեղեցիկի թու Անուշավանի Սօսանուեր պատմափոխորդը և դրա ստուգաբանությունը որպես «սօսիներին ձօնյալ», նոր լույս է սփռում Հայ Հեթանոսական կրոնի և ծիսակատարությունների խավար բնագավառը: Այստեղ Հանդես է գալիս ոչ միայն Հին Հայերի՝ սոսիների ստղարթների սոսափյունից գուշակություններ անելու սովորույթը, այլև դրան, Հավանաբար «Սօսանուեր» պատմափոխորդում և սրբավայրի քրմապետի պաշտոնով Հայոց նահապետների անմիջական մասնակցությունը փաստը: Դրանք, ըստ Խորենացու, սկզբնավորված պիտի լինեին դեռևս Արամանյակի ժամանակ (1, 20):

Առեղծվածի առջև է կանգնեցնում Վայկունիք - Վայկուն ստուգաբանությունը: Վայկունիքը գաւառ է (ըստ Խորենացու՝ լեռ) Սևանա լճի ավազանում, Վայկունը՝ Հայաստանն ասպատակած մի «յեղուգակ», որը «խուղէր գերիկին Հայոց» այն պահին, երբ Հայոց Տիգրան թագավորը պաշարում էր Պարսիստինի Պողոմայրէ քաղաքը: Լսելով Վայկունի մասին, Տիգրանը, փրկագին ստանալով քաղաքից, շտապում է Հայաստան (11, 14):

Առեղծվածայինն այն է, որ, ինչպես ասվել է վերը, Տիգրանի կողմից Պաղոմայրի պաշարման, փրկագին, Հայաստանից ստացված ըոթի և Տիգրանի աճապարելու պատմությունն անում է նաև Հովսեփոս Փրավորոսը՝ իր «Հրեական պատերազմի» մեջ: Բայց նրա մոտ Հայաստանը «խուղողը» ոչ թե Վայկուն է, այլ Հռոմեական զորավար Լուկուլոսը: Թե սա ինչպես է վերածվել Վայկունի՝ այդ է առեղծվածայինը և սրա բացատրությունը մենք դեռևս չունենք<sup>15</sup>: Սակայն Խորենացու այս տեղեկատվությունը ինքնին շատ Հետաքրքրական է, այն լրացնում է նրա Պատմության մի քանի նմանօրինակ տեղերի թիվը:

Կարելի է բազմացնել և անձնանունների Հետ կապված օրինակները, բայց ավելի նպատակահարմար է այժմ էլ դիմել տեղանունների ստուգաբանության բերած տեղեկատվությանը, որն, անսպասելիորեն շատ ուրույն կերպարանք է ձևաբերում:

Ստուգաբանված տեղանունների ընդհանուր թիվը 38 է: Աշխարհագրական տեղաբաշխման տեսակետից դիտարկելիս, գտնում ենք, որ դրանցից երկուսը՝ Հայր և Արմեն (Արմենիկը), ընդգրկում են ողջ Հայաստանը, 5-ը ցրված են, ըստ որում դրանցից մեկը՝ Մաթաբը, Հայաստանից դուրս է: Մնացած 31-ը խիստ կենտրոնացած են. 8-ը՝ Վանա լճի շուրջը, 23-ը՝ Արարատյան դաշտում և նրա շրջա-

<sup>15</sup> Մանանդյանի բացատրությունը (Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Հ. Ա., Երևան, 1944, էջ 189) Համոյից Համարել չի կարելի:



կայքում: Ի՞նչ է Հետևում այստեղից: Արդյո՞ք այն, որ Արարատյան դաշտը մասամբ և Վանի շրջակայքը, ավելի ծանոթ էին խորհրդանշան, քան Հայաստանի մյուս, ստուգաբանված տեղանուններից զուրկ շրջանները: Այսպիսի եզրակացությունը Հապճեպ կլինի և Հակասում է այն փաստին, որ «Հայոց պատմություն» մեջ, բացի մեր 38 տեղանուններից, Հիշատակված են ևս շուրջ 120 տեղանուն, որոնցով բավականաչափ Հաղեցված են, բացի մեր նշած երկու շրջանից, նաև մյուս շրջանները:

Արդ, ինչո՞ւ խորհրդանշան Հավասար աչքով չի նայել նաև այդ շրջաններին և զրկել է ստուգաբանությունից նրանց տեղանունները, մանավանդ որ կան այնտեղ այդ նպատակին ծառայելիք նաև Համար շատ հարմարները, ինչպես օրինակ, Աժդանական, Աղթամար, Արարաղ (!), Բագրեանդ, Զարիշատ, Խրամ, Հաշտեանք, Մարանդ, Վայոց ձոր, Փայտակարան և այլն, և այլն: Անշուշտ, ստուգաբանական միջոցների պակասությունը չէ, որ ետ է պահել խորհրդանշան ընդգրկելուց իր համակարգում նաև դրանք, դրանց մի մասը, կամ ուրիշները, այլ նրա Հետապնդած Հատուկ նպատակները:

Տեղանունների նշված խմբերը ուշադրությունը գնեցին պարզվում է, որ խնդիրը իրենց՝ աշխարհագրական շրջանների մեջ չէ, այլ նրանց Հետ կապված մի այլ երևույթի: Ինչո՞ւ են աչքի ընկնում խորհրդանշան Պատմություն մեջ նշված երկու՝ Վանի և Արարատյան դաշտի շրջանները: Անշուշտ, առասպելների արտակարգ հարստությունը: Համոզվելու համար, որ ստուգաբանությունների նշված կուտակման պատճառը Հենց այդ է, որ դասավորում ենք դրանք մեկ այլ կտրվածքով, քան արված է մեր Հիմնական ցուցակում, այն է՝ ըստ առասպելների: Այդ դեպքում ստանում ենք հետևյալ պատկերը: 38 ստուգաբանված տեղանուններից 4-ը կապվում են Օլիմպիոսի պատմած՝ աստվածաշնչական Սեմի՝ Հայաստանի բնակեցման առաջին փուլին վերաբերող առասպելին (1, 6): Դրանք են.

- Սիմ (լեռ) - Սեմ
- Զարուանդ - Զրուան
- Տարօն - Տարբան
- Ցրօնք - Սեմի որդիներից բաժանման վայրը

Հաջորդ Հինգը կապված են Մար Աբաս Կատինայի պատմած՝ Հայկ Նահապետի՝ Հայաստանի բնակեցման երկրորդ փուլին վերաբերող առասպելին (11, 11): Դրանք են.

- Հայք (երկիր) - Հայկ
- Հայք (գաստակերտ) - Հայք (Հայեր)
- Հայոց ձոր - Հայք (Հայեր)
- Հարք - Հարք (Հայեր)
- Գերեզմանք - Բեյլի մահվան վայրը

Եվս երկուսը կապված են Արամի արշավանքների ավանդություն Հետ (1,14): Դրանք են.

- Արմէն, Արմէնիկք - Արամ
- Մաժաք - Մշակ

15-ը կապված են Արամանյակի և նրա սերունդների՝ Արարատյան դաշտի և նրա շրջակայքի բնակեցման առասպելի Հետ (1, 12): Դրանք են.

- Արաբան - Արամանյակ
- Արմալի - Արամայիս
- Երախ - Երաստ
- Շիրակ - Շարայ
- Մասիս - Ամասիս
- Փառախոտ - Փառոխ
- Յուրակերտ - Յուրակ
- Գեղ (լեռ) - Գեղամ
- Գեղարքունի (գաւառ) - Գեղամ
- Գեղարքունի (լիճ) - Գեղամ
- Գեղամի (դաստակերտ) - Գեղամ
- Գառնի - Գառնիկ
- Սիւնիք, Սիսական - Սիսակ
- Այրարատ - Արայ
- Աղուանք - «Աղու»

Մնացած 12-ից 5-ը կապված են Օլյուսպ քուրմի պատմած Երվանդ - Արտաշես պաշարի Հետ (11, 46): Դրանք են.

- Բագարան - Բագին
- Մարմետ - «մար ամատ»
- Մարաց մարդ - մար
- Երուանդավան - վանել
- Մնուրց - բաղմամբիվ և տարբեր կենդանիներ

Վերջին 7-ը չեն միավորվում որևէ պիտակի տակ: Դրանք են.

- Վայկունիք - Վայկուն
- Վանանդ - Վուսդ (Վինդ)
- Արշարունիք - Արշալի
- Մանեայ այրք - Մանի
- Բագաւան - Բագին
- Որթք - որթ
- Աշտիշատ - «յաշտից տեղից»

Այսպիսով, 38 ստուգաբանված տեղանունից 26-ը կապվում են խորհրդանշան մանրամասն շարադրած՝ Հայ ժողովրդի ծագման և տարածման առասպելափանդությունների Հետ: Այստեղ դժվար է միտում և նպատակ չտեսնել: Խորհրդանշան ցանկացել է այս, իրեն հատկապես սիրելի դրվագները, կարծես, նկարագրող և առավել շոշափելի, տեսանելի դարձնել, նրանց մեջ Հանդես եկող Սեմի՝ զեպի Տարոն, Հայկի՝ զեպի Հարք և Վանա լճի ավազանը, Արամանյակի՝ զեպի Արարատյան դաշտ և նրա սերունդներից, հատկապես Շարայի, Գեղամի,



Միակի երթուղիները, որոնք տանում են, Համապատասխանաբար, դեպի Շիրակ, Սևանի ավազանը, Մյունիք և Աղվանք: Վերջապես, Արամի Հաղթարչավը դեպի Կապադովկիա:

Գալով Արտաշեսի և նրա՝ Երվանդի դեմ մղած պայքարի ու Հաղթանակի պատմությունը, խորենացին, Հավանաբար, իր գնահատականների սանդղակում, ինչ-ինչ պատճառներով, այն դասել է մյուսների շարքը:

Հայագիտություն մեջ արձանագրված է, որ Մովսես խորենացու պահպանած այս առասպելը - սովանդությունները՝ գոնե երթուղիների իմաստով, իրենց Հաստատումն են գտնում իրերին ժամանակակից, այսինքն՝ մ. թ. ա. II Հազ. վերջին և I Հազ. առաջին դարերի սեպագրական՝ խեթական, ասորեստանյան, ուրարտական, այլև Հին Հունական և Հին պարսկական աղբյուրների մեջ<sup>16</sup>: Մովսես խորենացու մատուցած ստուգաբանություններն, այսպիսով, իրենց ժողովրդաստուգաբանական բնույթով Հանդերձ, կարծես լապտերայուններ շարելով, բավականաչափ Հստակեցնում են այդ երթուղիները, նպաստելով Հայերի և Հայերենի՝ լեռնաշխարհով մեկ տարածման ընդհանուր պատկերի վերարտադրմանը:

Ի եզրափակումն սույն աշխատության, անհրաժեշտ ենք Համարում անդրադառնալ խորենացու ստուգաբանական Համակարգին ևս մի տեսանկյունից:

Նախորդ շարադրանքից կարելի էք Համոզվել, թե որքան սերտորեն են կապված խորենացու ստուգաբանությունները իր իսկ պատմած առասպելների Հետ: Սակայն, խոսքս այստեղ լինելու է ոչ թե այդ կոնկրետ նյութական կապերի մասին, այլ վերաբերում է խորենացու ստեղծագործությունն ստուգաբանական և առասպելական ոլորտների ավելի բարձր մակարդակի փոխառնություններ, կարելի է ասել, նրանց Հարապատկանությունը, եթե ոչ նույնությունը:

խորենացու Հանդես բերած առասպելները երկփեղկ են: Փեղկերից մեկը բուն առասպելն է, որը շատ վաղ գույներով, Հաճախ մանրամասն, երբեմն էլ բառացի մեջբերումներով շարադրում է Պատմահայրը: Մյուս փեղղը առասպելի «ճշմարտեցված» տարբերակն է: Առասպելների «ճշմարտեցման» այդ երևույթը դեռևս 100 տարի առաջ դիտարկելու ու փայլուն բնութագրել է և «ճշմարտեցում» տերմինն էլ առաջարկել Մանուկ Աբեղյանը: Այն կայուն է Պատմահոր՝ իր իսկ շարադրած առասպելների գերբնական, «Հրաշքային», պարզապես նաև արաստվոր կողմերը, նրանց «այլաբանությունները» (խորենացու բառն է) բանականորեն մեկնելու, Հրաշքերծելու և այդպես մշակված տարբերակով ընթերցողին ներկայացնելու մեջ:

Օրինակները բազմաթիվ են և չափազանց Հանրահայտ, որպեսզի այստեղ դրանք կրկնելու անհրաժեշտություն լինի: Հիշեցնենք միայն Արտաշեսի, Սաթի-նիլի առասպելները: Միայն «ճշմարտեցման» մասին մեր ասածը շոշափելի դարձնելու Համար վերհիշենք մանուկ Սանատրուկ արքայի՝ ձյան տակից փրկվելու մի քանի էջ առաջ մեջբերված դեպքը, ուր առասպելում փրկվելն աստվածներից ուղարկված «նորահրաշ սպիտակ էակ» է, իսկ ըստ խորենացու «ճշմարտեցված» տարբերակի՝ պարզապես սպիտակ մի շուն:

Այսպես, ուրեմն, առասպելները խորենացու մոտ «երկփեղղ» են: Երկու

<sup>16</sup> Տե՛ս Գ. Ս ա ռ գ ս յ ա ն. Մովսես խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները - ՊՐՀ, 1992, N 2-3, էջ27-50:

փեղղերից մեկը, բուն առասպելը, իր ողջ կառուցվածքով, որպես միավոր վերցված է ժողովրդի բերանից, այնպես, ինչպես կա: Մյուս՝ «ճշմարտեցված» փեղղը խորենացու բանականության ծնունդն է, այն, որպես խնդրի լուծում փնտրված է ու գտնված: Բայց այդ երկու փեղղերը Հակադիր են, իրարամերժ: Նույն նյութի մասին մեկը մի կերպ է պատմում, մյուսը՝ բոլորովին այլ կերպ, «ճշմարտեցումը» մերժում, քայքայում է բուն առասպելը: Միևնույն ժամանակ Պատմահոր նպատակն առասպելը «ճշմարտեցնելիս» ժխտական, ավերիչ է ամենևին, այլ կառուցողական: արարիչ: Իր բանական մոտեցումներով խորենացին ցանկանում է ոչ թե ոչնչացնել առասպելը, այլ վերակառուցել, գտնել նրա թաքնված իմաստը, բացել «այլաբանությունը» և պիտանի դարձնել բուն պատմության շարադրանքի մեջ օդատգործելու Համար:

Եթե մենք այժմ խորենացիական առասպելը իր երկփեղղվածությամբ և դրանից ծագող հետևանքներով Համեմատենք խորենացիական ստուգաբանությունների Հետ, ապա դրանց մեջ նմանություն, զրեթե նույնություն կարձանագրենք:

Հիրավի, ստուգաբանությունները նույնպես երկփեղղ են: Փեղղերից մեկը ստուգաբանվող միավորն է, մյուսը՝ ստուգաբանողը: Դրանցից առաջինը վերցված է իրականությունից, աշխարհից, նաև առասպելից: Դա տոճմանուն է, անձնանուն կամ տեղանուն: Մյուսը, ստուգաբանողը, փնտրված է, գտնված որպես խնդրի լուծում, այսինքն՝ խորենացու բանականության արգասիք է, այն դեպքում, երբ մատուցված է «գրքից» պատրաստի վիճակում (այդ դեպքում էլ «գրքում» է փնտրված ու գտնված): Ստուգաբանությունների երկու փեղղերը, ինչպես և առասպելների փեղղերը, Հակադրություն են ներկայացնում և ակտիվ կողմը՝ ստուգաբանողը, որպես կանոն, քայքայում, մերժում է պասսիվ, ստուգաբանվող կողմին, ճիշտ և ճիշտ, ինչպես «ճշմարտեցումը»՝ բուն առասպելին, պարտադրելով նրան իրեն խորթ տեսք: Օրինակ, «արծուի ունի» ստուգաբանողը «Արծրունի» ստուգաբանվողին պարտադրում է լինել «Արծուկունի»: Ճիշտ է, խորենացին գործը չի Հասցնում մինչև այդօրինակ ձևափոխումները, քանի որ ստուգաբանվող տարրերը՝ տոճմանունները, անձնանուններն ու տեղանունները չափազանց Հաստատուն են և ձևափոխման անհնարակա, բայց որոշ փորձեր, այնուամենայնիվ, անում է, ինչպես տեսանք վերը<sup>17</sup>:

Միևնույն ժամանակ, խորենացու նպատակը՝ ստուգաբանելիս, ինչպես և առասպելը «ճշմարտեցնելիս», ամենևին ժխտական չէ, այլ կառուցողական, արարիչ: Նա ցանկանում է ոչ թե խեղել ստուգաբանվող միավորը (կամ առասպելը), այլ իմաստավորել, դյուրըմբռնելի և, ի վերջո, պիտանի դարձնել իր ստույգ պատմության մեջ ներմուծելու Համար:

Այսպիսով, դիտարկված երկու ստեղծագործական միջոցները՝ խորենացու կիրառմամբ, իրենց բնույթով ակնհայտ Հարապատկություն են ցուցաբերում միմյանց նկատմամբ, գրեթե նույնանում են:

Որպես այդ Հարապատկություն - նույնություն ցուցանիչ և խորհրդանիշ կարելի է ներկայացնել խորենացու կողմից առասպելների «ճշմարտեցման» մի

<sup>17</sup> Օրինակները վեր բերված են: «Երուանդական»՝ «Երուանդաւանի», «Մարաց մարզ»՝ «Մարանց մարզի», «Վահունի»՝ «Վահուունու», «Հաւունի»՝ «Հաւ(ե)ունու» փոխարեն:



դեպք, որը միևնույն ժամանակ, նրա առաջարկած ստուգաբանություններից մեկն է: Դրան մենք արդեն վերը Հանդիպել ենք, բայց արժե նորից մեջ բերել:

«Զայս կամելով երգել յուսասպեան՝ Դոմեա զումն ասեն եկեալ,- գրում է Խորենացին,- սր է ինքն կայր Դոմեախանոս. ոչ ինքն եկեալ այր, այլ զհրաման նորա և զգորս այլաբանելով յանուն նորա կոչեն» (II, 54):

Այստեղ Դոմեա - Դոմեախանոս զույգը միաժամանակ և՛ ստուգաբանություն է, և՛ «ճշմարտեցում»: Հատկանշական է նաև «այլաբանել» բառի օգտագործումը: Այդպիսի մի դեպք է նաև Արգտուան - Արգամ ստուգաբանություն - «ճշմարտեցումը»: Ասվածը չի նշանակում, թե Խորենացու ստուգաբանությունների և «ճշմարտեցումների» միջև ոչ մի տարբերություն չկա: Նրանք ունեն իրենց օրյեկտիվ առանձնահատկությունները թե՛ մասնակիցների տարբեր բնույթի և թե՛ մշակման մեթոդների մեջ: Բացի այդ, ամենացայտունը դրանց տված արդյունքների տարբերությունն է: Եթե Խորենացու՝ վառ գույներով շարադրած առասպելը նրա իսկ «ճշմարտեցուցիչ» մամլիչի տակով անցնելով դուրս է գալիս մեծ մասամբ նահանգած, աղքատացած, գույները խամրած տեսքով, որը, սակայն, նրա համար գերազանցիկ է, ապա ստուգաբանության դեպքում պատկերը ճիշտ հակառակն է: Ստուգաբանված անունը ոչ միայն իմաստավորվում է (Իհարիկ, Խորենացու ընկալմամբ), այլև, ասես, թե և առնում, լուռ ու մունջից դառնում խոսուն, նշանակալից, լույս է տալիս, հատկապես՝ տեղանունները: Օրինակ Սիմ լեռը՝ Սեմով ստուգաբանվելով, աստվածաշնչական շուք է ստանում, «Գերեզմանք»-ը, որպես Բելի նետահարման վայր դառնում է պատմական հուշարձան, Մաժաբը՝ Մշակ-ով ստուգաբանվելով ստանում է իր Հիմնադրման պատմությունը և այլն: Այդպես և՛ տոհմանունները, և՛ անձնանունները:

Սակայն, եթե առասպելի «գլուխաթափման» և ստուգաբանության «գլուխազարդման» երևույթը մեզ համար ակներև է, ապա Խորենացու աչքում այն գոյություն չի ունեցել: Նրա աբսոլուտիստական (գնահատաբանական) աստվածային մերից շատ է տարբերվում: Երկու այդ հակադիր արդյունքները նրա համար ունեն միևնույն արժեքը, միևնույն տարրությունը՝ երկուսն էլ «ճշմարիտ» են, երկուսն էլ հավաստի և պիտանի ներմուծվելու նրա ստույգ պատմության Հյուսիսի մեջ:

Մենք կիրառեցինք Մ. Աբեղյանի 100-ամյա պատմություն ունեցող «ճշմարտեցում» պատրաստի բնորոշումը, փաստորեն տարածելով այն, բացի առասպելներից, որոնց կապակցությամբ այն ներմուծված է, նաև ստուգաբանությունների վրա: Շարունակելով, մենք կարող ենք որոնել և գտնել «Հայոց պատմության» նաև այլ ոլորտներ, բացի երկու քննարկվածներից, որոնք ևս կարող են միավորվել այդ պիտանի ներքո և ծառայել, այսպիսով, Խորենացու ստեղծագործական գինաուցի ավելի խոշոր, ընդգրկուն միավորների բացահայտմանը:

Որպես այդպիսի ոլորտի նմուշ, կարելի է բերել այն իրավիճակը, երբ միևնույն իրողարձություն կամ երևույթի մասին Պատմահայրն ունեցել է տարբեր աղբյուրներից ծագող հակասական տեղեկություններ, որի առջև նա չի ընկրկել, այլ դիմել է «ճշմարտեցման» ուղուն: Իսկ, որպես դրա բազմաթիվ կոնկրետ օրինակներից մեկը, կարելի է ներկայացնել 40 տարի առաջ «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ» իմ հոդվածում Հրապարակված Հետևյալ զրվագը: Խորենացին պատմում է Տիգրան Միջինի՝ դեպի Պարսստին կատարած

արշավանքի, այնտեղից հրեա բնակչության, այդ թվում և քահանայապետ Հյուրկանոսի, գերեվարման և Հայաստանի քաղաքներում բնակեցման մասին: Խորենացու այս ծավալուն հատվածը գրեթե ամբողջությամբ կրկնում է Հովսեպոս Փրավիտի «Հրեական պատերազմի» համապատասխան հատվածը, բացի... արշավանքի մասնակիցների անուններից և գերեվարության պարագաներից: Հովսեպոսի մոտ հայերի փոխարեն գործում են պարթևները, և այն և, որ պիտավորն է, հրեից քահանայապետ Հյուրկանոսը գերեվարվում է ոչ թե Հայաստան, այլ... Բաբելոնիա:

Սակայն, ի հեռույն Հովսեպոսի, Փավստոս Բուզանդը կարճառոտ հարցով դում է, որ Տիգրանն է Հյուրկանոսին գերեվարել Հայաստան... (IV, 55):

Մենք արդեն տեսանք, թե ինչպես է լուծել խնդիրը Խորենացին: Հետևելով Փավստոսի հաղորդածին, նա Հովսեպոսի ամբողջ այդ դրվագը, իր մանրամասնություններով, շուտ է տվել հայերի վրա: Չմոտանանք, որ մեր խնդիրն այստեղ պատմական ճշմարտության բացահայտումը չէ ամենակին...<sup>15</sup>:

Բերված օրինակի մեջ պարզորոշ արտահայտվում է և «ճշմարտեցումը»: Ավելին: Նրան հատուկ են առասպելների և արտահայտությունների համար վերը նշված բոլոր հատկանիշները: Նախ, ներկայացված օրինակը «երկրեղի» է՝ կազմված երկու տարբեր աղբյուրների տվյալներից: Ապա, այդ տվյալները հակադիր են, իրարամերժ: Նույն նյութը նրանք տրամագծորեն տարբեր ձևով են արտացոլում: Բուզանդի ասածը մերժում, քայքայում է Հովսեպոսի արած պատմությունը: Միևնույն ժամանակ Խորենացին, Հովսեպոսի պատմածը Բուզանդով «ճշմարտեցնելիս», ունի ոչ թե ավերիչ, այլ արարիչ, կառուցողական նպատակ՝ դարձնել այն իր պատմության զրվագներից մեկը:

Ինչպես ակնարկվեց վերը, այս ոլորտից կարելի է և շատ ուրիշ օրինակներ բերել: Իսկ մեր կարծիքով, ավելի մանրազնին և լայն դատարկելով ամբողջ խնդիրը՝ կարելի կլինի այս նույն համակարգի մեջ ներգրավել Խորենացու պատմության նաև այլ ոլորտներ:

### ЭТИМОЛОГИЯ СОБСТВЕННЫХ ИМЕН В «ИСТОРИИ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

#### Резюме

В статье проводится системный анализ всех собственных имен, для которых Мовсес Хоренаци дает этимологии в своей «Истории Армении». Эти собственные имена - общим числом 84 - подразделяются на три группы: 1) патронимиконы, 2) личные имена, 3) топонимы. Изучение данного материала показывает, что Хоренаци широко применял метод «народной этимологии», который вполне характерен для

<sup>15</sup> Իսկ եթե դառնանք դրան, ապա Հ. Մանանդյանը, այնուհետև նաև մենք, փորձել ենք որսալ այս զրվագի մեջ պարունակող ստույգ-պատմական տարրը (տե՛ս Հ. Մ ա ն ո ս յ ա ն, Բնական տեսություն Հայ ժողովրդի պատմության, էջ 257.- «Բանբեր Մատենադարանի», 1956, N 9, էջ 31-36:







Հուլիական բնույթին, այն ճշմարտության տարր է պարունակում: Այն խորացնում ու լրացնում է Լ.Ջեքիյանը. «Արդարեւ,- գրում է նա,- խորհրդակցի երկր վերջ մը կպատմե, լավ եւս, վերջը Հայոց թագավորության, որուն կկապվի նաև վախճանը Ս.Գրիգոր Լուսավորչի Տունն կաթողիկոսական Հանրապետության: Այս վերջինս ունեցած է ժամանակակիցներուն Համար շատ ավելի սուր և տրամալին նշանակություն մը՝ քան ինչ որ կրնա ունենալ Հայ ներկա սերունդներուն Համար և կամ զոր կրնա վերագրել անոր զուտ բանական եզրերով, որևիցի պատմական վերլուծում: Թագավորությունը, Արշակունյաց Հարստությունը ի մասնավորի, խորհրդանիշն էր Հայոց միություն և մեծության, իսկ Լուսավորչի Տունը՝ երաշխիքը Հայ նվիրապետության «հաստատության», Հայոց կեղեցիվուն «անշարժության»:

«Այս կրկնակի վերջը, բայց հատկապես թագավորության վախճանը, Պատմահոր Համար կնեկակացան՝ խակ իր մեջ «բացարձակ» վերջ մը, վերջ մը՝ որ չի կրնար «սրբազրվիլ», վերջ մը՝ որով տուժածը չի կրնար վերաուսվիլ, վերաշահվիլ, վերստին համարվիլ: Բան մը վերջացած է հոն ընդմիջո՞ւ...»

Արժանին հատուցելով Հեղինակի՝ պատմականության սկզբունքի նրբին ըմբռնմանը, գտնում ենք, որ այսուհանդերձ ասավածը թեև ընդհուպ մոտեցնում է մեզ համոզիչ պատասխանին, բայց չի հասցնում նրան: Այն փաստարկը, որ ներկա սերունդների մոտեցմանը կամ պատմական վերլուծման արդյունքները չեն կարող լիովին գնահատել աղբյուրության այն աստիճանը, որ ունեցավ այդ «կրկնակի» կամ «բացարձակ» վերջը խորհրդակցության, այնուամենայնիվ ի վիճակի չէ համոզիչ կերպով ապացուցել, թե ինչպես Պատմահայրը, ինչքան էլ խորապես ցնցված ու ազդված լիներ, կարող էր այդպիսի դուշներով, որակումներով և մանավանդ ընկալված իր իսկ պատմության մեջ կամ այլուր չարձանադրված արհավիրքները ևս ներգրավելով, նկարագրել իր ժամանակի իրականությունը, ակներև Հակասության մեջ ընկնելով «Պատմության» շարադրանքի, էլ չհնք ասում, իր իսկ սեսածի հետ:

Առեղծվածի բանալին, իմ կարծիքով, այն հանգամանքն է, որ մենք Ողբի երկրորդ մասը պիտի դիտենք ոչ թե որպես նկարագրություն, այլ նախատեսում, կանխագուշակություն: Այդ դեպքում ամեն ինչ իր տեղն է ընկնում: Խորհրդակցին խորապես ազդված և ցնցված է այդ, Լ.Ջեքիյանի բառերով ասած, «կրկնակի վերջով», որը նրան նաև որպես «բացարձակ վերջ», մշտնջենական, անգառնալի վերջ էր ներկայանում, անշուշտ կարող էր նախատեսել Ողբի սարսափները, և այս արդեն ամենևին չի հակասում նրա «Պատմությանը»:

Հոգեկան վատ արամադրության մեջ է եղել: (Իրականում այս խոսքերը ոչ թե Հեղինակային են, այլ պատկանում են Օնեգինին): «Ողբի գրության ընթացքում,- շարունակում է Մալխասյանը,- երբ Հեղինակն այնպես սուր կերպով զգացել է Հայ ժողովրդի անխնայությունը և անխնայությունը զրկվելը, մեծ, անփոխարինելի ուսուցիչները կորուստը և իր անձնական գրկանքները, նա Համարվել է խոր, անփոփ վշտով, ընկել է Հուսահատության մեջ և այս զգացմունքների աղբյուրության տակ խոսացրել է իրական պակասություններն ու զարթոնքները...»: Մ ո վ ս ե ս ի ն ո ռ ե ն ա ց ի. Հայոց Պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ դոկտոր Ստ.Մալխասյանցի. Երևան, 1940, էջ 343, ծան. 358:

<sup>3</sup> Լ.Ջ ե ք ի յ ա ն. Նորից Մոլոսիսի խորհրդակցություն «Պատմության» մասին.- ՊԲՀ, 1993, N 1-2, էջ 31:

Այսպիսով, բացատրությունը հետևյալն է: Ողբի այդ երկրորդ մասը, որն սկսվում է «Վարդապետը տխմարը» բառերով և շարունակվում մինչև գրքի վերջը, ոչ այլ ինչ է, քան մարգարեություն, գուշակություն, և ոչ՝ կոնկրետ իրավիճակի նկարագրություն, ինչպես որ այն ընկալվել և ընկալվում է<sup>4</sup>:

«Քննարկենք Ողբի երկրորդ մասը՝ մեր Հայեցողիկոսով: Այն իր շարադրանքի ոճով կտրականապես տարբերվում է նրա առաջին մասից և, պետք է ասել, «Հայոց պատմության» ողջ շարադրանքի ոճից (կամ ոճերից, քանի որ խորհրդակցին բազմաժան է): Բավական է ասել, որ շարադրանքն այդտեղ, այսպես ասած, «արտաժամանակյա» է, չունի ժամանակ, ո՛չ անցյալ, ո՛չ ներկա և ո՛չ էլ ապառնի, և այդ՝ «Հայոց պատմության» քննական Հրատարակության նրան վերաբերող բոլոր 55 սողերում: Մի քանի օրինակ բերենք տարբեր բովանդակություն ունեցող տեղերից, սկսելով Հենց առաջին տողից:

«Վարդապետը տխմարը և ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ Աստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով...»

«Դատաւորը ամարդիւք, սուտք, խարոզք, կաշառաւուք, անընարողք իրաւանց...»

«Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առեալ Աստուծոյ, և տարեց փոփոխել զբնութիւնս իւրեանց: Գարուն երաշտացեալ, ամառն անձրևայտից, աշուն ձմեռնացեալ, ձմեռն աստղասաւոյց... երկրի անբերութիւնք պողոց և անաճելութիւնք կենդանեաց...»

«Ձի թագաւորը տիրեալք խիստք և չարաշարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիր... զերփունն տանց և յափշտակութիւն ստացուածոց... «ասումն քաղաքաց և ամրոցաց... աստուածապաշտութիւն մուսայեալ, և ակնկալութիւն գեհնի»:

Պետք է ասել, որ առկա թարգմանություններից (նկատի ունեմ անգլերենը՝ Ռ. Թոմսոնի, ֆրանսերենը՝ Ժ.-Պ. Մահիի, երկու աշխարհաբարը՝ Ն. Ստեփանեի և Ստ.Մալխասյանի, երկու ռուսերենը՝ Մ.Էմինի և Գ.Սարգսյանի) և ոչ մեկում Ողբի շարադրանքի այս «արտաժամանակյա» ձևը իր հետևողական և վերջավորված արտահայտությունը չի գտել: Այսպես, անգլերեն և ֆրանսերեն թարգ-

<sup>4</sup> Ն.Ալիկյանը վերը նշված հոդվածում, սահմանազատվելով այն Հեղինակներից, որոնք Ողբը համարում են «Հայոց պատմության» անբաժանելի մաս, գրում է. «Բայց և այնպես որոնք բարի Հայաբարձ մեթոդներ են Ողբին և համարած են զայն անբաժան մասն «Հայոց պատմության» նկատմամբ նաև ե. դարու առաջին կեսի պատկերի ցրացումը, Սահակի Մալխոսցի և անոնց Հակաթոռ կաթողիկոսների դեմքերը, տեսած են նաև 440-480թթ. չրճանի դեպքերի մասին մարգարեական ակնարկություններ» (էջ 11): Այստեղ հղման նիշ դնելով «ցրացումը» բառի վրա, Ն.Ալիկյանը ստղատակում Հիշատակում է երկու հոդված՝ Կ.Է. Պ ա ս մ ճ յ ա ն. Քննարկենք Ողբի շարադրանքը, պրակ Բ, Ստեփանյան, 1891, էջ 362-364, և Ն. Ռ. Քննարկենք Ողբի շարադրանքը, պրակ Բ, Ստեփանյան, 1888, էջ 21: Սրանցից առաջինը գտնում է, թե Ողբը գրված է «Պատմությունից առաջ և ապա կցված է նրան, երկրորդը՝ թե «Ողբը խորհրդակցության երկրի գրված նախքան զպատերազմն Վարդապետից»: Ավելացնենք նաև, որ ըստ վերջին Հեղինակի կարծիքի, խորհրդակցությունը «Պատմությունը» շարադրվել է 486-490թթ.: Թե ինչպես է վերագրում Ն.Ալիկյանը այս Հեղինակներին (թե՛ ուրիշ Հեղինակներին), թե նրանք Ողբի մեջ «տեսած են նաև 440-480թթ. չրճանի դեպքերու մասին մարգարեական ակնարկություններ», մեզ այնքան էլ հասկանալի չէ:



մանություններում քննարկվող հատվածը ծայրեծայր ներկայացված է մասամբ անցյալ և մասամբ՝ ներկա ժամանակներով: Հնարավոր է, որ այդ լեզուներով գծվար կամ անկարելի է հղել գտնել համարժեք թարգմանություն ձև:

Դայրվ հայերեն թարգմանություններին, անկասկած է, որ աշխարհաբարը լիովին հնարավորություն է տալիս համարժեքը գտնելուն, ըստ, այսուհանդերձ, թարգմանիչները չեղումներ են թույլ տվել, թեև տարբեր չափերով: Այսպես, Խ. Ստեփանյանի մոտ դրանք ընդամենը երկուսն են, և երկուսն էլ ունեն որոշ «հանգամանք մեղմացուցիչ հանցանաց»: Դրանք են.

Խորենացի. «Աշակերտը հեզք առ ուռումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախքան գտեսութիւնն աստուածաբանք» («արտաժամանակյա»):

Ստեփանի. «Աշակերտներն ուսանելու մեջ ծուլ, ուսուցանելու մեջ շտապող, որոնք ոչինչ տեսութիւն չիմացած արդեն աստվածաբաններ են» (ներկա):

Այստեղ թարգմանչին, ըստ երևույթին, շեղել է «որք» դերանունը, որը սակայն, Խորենացուն, ինչպես տեսնում ենք, չի խանգարել պահպանելու իր ընտրած ոճը:

Խորենացի. «Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս, հրամանս տալով անտանկիրս» («արտաժամանակյա»):

Ստեփանի. «Որովհետե տիրում են խիստ և չար թագավորներ, ծանր դժվարատար բռններ գնելով, անտանկիր հրամաններ տալով» (ներկա):

Այստեղ էլ թարգմանչին, հավանաբար, շեղել է «զի» նախդիրի առկայությունը, որը, դարձյալ, Խորենացուն չի խանգարել պահպանելու իր ոճը: Նշենք նաև, որ «զի» նախդիրն այստեղ, ինչպես այդ պատահում է երբեմն Խորենացու մոտ՝ նախադասության կամ պարբերության սկզբում, կոչված է գուտ ձևական կապ ստեղծելու նախորդ նախադասության կամ պարբերության հետ՝ և նույնիսկ կարող է չթարգմանվել, ինչպես տվյալ դեպքում այդ տեսնում ենք, օրինակ Թոմասի և էմիլի թարգմանություններում:

Հատովածի մնացած մասի թարգմանությունը ժամանակի առումով լիովին հարապատ է բնագրին:

Ստ. Մալխասյանը ևս իր թարգմանություն մեջ թույլ է տվել Ստեփանի մոտ առկա այս գույլ շեղումները և ավելացրել մի շարք ուրիշները: Դրանք հիմնականում կուտակված են Ողբի քննարկվող մասի վերջին պարբերության մեջ: Օրինակ.

Խորենացի. «Վերակացուք անհարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք» («արտաժամանակյա»):

Մալխասյան. «Կատավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են...» (ներկա):

Թեև ուսուց լեզուն, հայերենի նման, թույլ է տալիս թարգմանություն մեջ

<sup>5</sup> Հմտ. օրինակ՝ «Գիտելով իմ, եթէ ոչ ինչ ծածկի ի քումմէ թաղաւորութենէդ, այլ իբրև մտերմ քո՝ ավիլի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյ: Զի հրեաք, որ բնակեալ են ի գաւառս Պաղատինացուց՝ ժողովալ խաչեցին գժրիստոս...»: («Թուղթ Աբգարու առ Տիրիբիոս», 11, 34): Կամ Սեբասի մասին. «...զգոշ յամենայնի, և սուչութիւն յաղորտածոց ունէր ի մարտս առաւել քան զամենայն որ: Զի յիս այնչափ ատուժեանց՝ օգնական եղբօրն Սաթրիական յաշխարհն Արևաց հանդերձ գորու երթալ...» (11, 52):

պահպանել Խորենացու առաջադրած շարադրանքի այս յուրահաստով ոճը, սակայն Մ. էմիլը ևս թույլ է տվել նման շեղումներ:

Խորենացի. «Եւ բարձուան առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամոթոյ» («արտաժամանակյա»):

էմիլ. Все вообще лишены любви и стыда (ներկա):

Խորենացի. «Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս» («արտաժամանակյա»):

էմիլ. Цари царят жестокие, налагающие большие, тяжелые бремена... (ներկա):

Խորենացի «...հաւատ վաճառեալ ընդ սնոսի կենցաղոյս» («արտաժամանակյա»):

էմիլ. Вера продана за суетную жизнь (ներկա):

Խորենացի. «...աստուածապաշտութիւն մոռացեալ, և ականկալութիւն գեհենի» («արտաժամանակյա»):

էմիլ. Забыто служение богу и впереди - ад (ներկա):

Գ. Սարգսյանի ուսերին թարգմանության մեջ ևս կա մեկ նմանօրինակ շեղում, որին կանդորադառնա՞նք ստորև:

Արք. Մովսես Խորենացու Ողբի քննարկվող մասի շարադրանքն ըստ հեղինակի մտահղացման իսկապե՞ս «արտաժամանակյա» է, թե՞ այն ունի իր տրամաբանական ժամանակը: Անշուշտ, ճիշտ է վերջինը:

Խնդիրը պարզաբանելու համար դիմենք Ողբի մի այլ նախադասության, վերցրած նրա առաջին մասից: «Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք յարտաքուստ. արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»: Եթե այս նախադասությունից հանենք սկզբի «այժմ» բառը և վերջում՝ «և խորհրդականն չէ ի միջի...» և այլն, ապա կստացվի վերը քննարկվածին նման «արտաժամանակյա» մի շարադրանք: Բայց իր փաստական սեփականում այն ներկային է պատկանում:

Արք. եթե նույն նախադասության մեջ, մի կողմից, «այժմ»-ը փոխարինենք «եղին» կամ «լինեցին» բառերով, իսկ «չէ ի միջի»-ն՝ «չէր ի միջի» կամ «չիցէ ի միջի» դարձվածքով, ապա բերված նախադասությունը կստանա անցյալի կամ ապառնի իմաստ: Ուրեմն, «արտաժամանակյա» արտահայտությունների ժամանակը կախված է նրանց համատեքստից, այն բանից, թե ինչպես են ներածվում կամ (և) եզրափակվում նրանք: Այս օրինակից չվերլուծելով, փորձենք որոշել Ողբի երկրորդ մասի շարադրանքի ժամանակը: Այն որոշակի է դառնում մի շարք համագամանքների շնորհիվ, որոնցից սկզբում անդրադառնա՞նք հատվածը ներածող արտահայտություններին:

Հիշեցնենք, որ Ողբի առաջին մասն ամբողջությամբ նվիրված է, ինչպես և ազդարարում է գլխի վերնագիրը, հայոց թագավորության՝ Արշակունի սոհմից և հոգևոր հովվության՝ Լուսավորչի սոհմից վերանալու հետ կապված՝ հեղինակի ողբերգական ապրումների շարադրանքին: Հեղինակը դիտարկում է այդ իրողությունը ամենատարբեր կողմերից և յուրաքանչյուր անգամ հուսալքություն սպրում եղածի հետևանքների կապակցությամբ՝ թե՛ հայոց ազգի և թե՛ իր սեփական անձի առումով:

Եզրափակելով Ողբի այդ մասը, Խորենացին գրում է. «Եւ ոչ գիտեմ, եթէ



զիարդ յարմարեցից զողորհգութիւնս... գաշխարհիս եկեա՞լ աղեսս, եթէ  
զապագայիցն ակնկալութիւնս»: Այստեղ առաջին անգամ Ողբում Հնչում է  
աղետաբեր ապագայի կանխագուշակման պահը, որից հետո շարադրանքը շրջվում  
է դեպի այդ նոր ուղին: Հեղինակը ոգեկոչում է աստվածաշնչական ամենաերեւելի  
մարգարեներից մեկին. «Զարթի՛ր, Երեմիաս, զարթի՛ր և ողբա՛ Հանդերձ մար-  
գարէանալով որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա՛  
գլառնել Հովուաց տգիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յիսրայելին»:

«Ողբա՛ Հանդերձ մարգարէանալով», շեշտում է Խորենացին, այսինքն՝ ոչ  
թե սոսկ ողբս, այլ ինչպես պատշաճում է մարգարեին, երևելով առկա թշվա-  
ռությունից, գուշակիւր գալիք թշվառությունները: Այնուհետև Պատմահայրը  
լիովին ճշգրտում է իր Հայցը, ասելով՝ «գուշակեա գլառնել Հովուաց տգիտաց,  
որպէս երբեմն Զաքարիաս յիսրայելին»:

Իսկ ի՞նչ է գուշակել Զաքարիա մարգարեն Իսրայելին «տգետ Հովիւնների»  
վերաբերյալ, որը որպես օրինակ է բերում Պատմահայրը Երեմիային: Աստվա-  
ճաշնչում Զաքարիայի մարգարեութեան մեջ կարգում ենք. «...դի ահաւասիկ ես  
(Աստված-Գ.Ա.) յարուցանեմ Հովիւ տգէտ ի վերայ երկրի. զվատեալն ոչ յանձան-  
ձիցէ, և զցրուեալն ոչ խնդրիցէ, և զբեկեալն ոչ բժշկեացէ, և զողջն ոչ զարմանացէ.  
և զմիս ընտրանացն կերիցէ, և զոտս նոցա փշրեացէ» (Զաք. ԺԱ, 16):

«Հովիւ» բառը, բացի խաշնարածից, ունի, ինչպես հայտնի է, նաև  
փոխաբերական՝ դեկավարի, Հոբելոր և աշխարհիկ տարբեր մասշտաբի առաջնորդի  
(Աստուծոց և թագավորից սկսած մինչև վերակացու և քահանա) իմաստ, որը և  
այստեղ կիրառված է և շեշտված «տգետ» ածականով: Առաջին առումի դեպքում  
այն անտեղի կլիներ: Հասկանալի է, որ այստեղ Խորենացին, Հղբով Զաքարիայի  
գուշակութեանը, բառացիորեն չէ, որ հետևում է նրան, քանի որ խոսում է ոչ թե  
մեկ «տգետ Հովիւ» (ինչպես այնտեղ է), այլ մի շարք, բազմաթիվ, «տգետ  
Հովիւնների» գալստյան մասին, անշուշտ, ունենալով իր միտումը: Այլ միտումը ի  
Հայտ է գալիս Հնչց Հաջորդ տողից, երբ, մեր կարծիքով, սկսում են կոնկրետ  
թվարկվել գալիք «տգետ Հովիւները» արդեն ոչ թե Իսրայելի, այլ Հայաստանի  
Համար՝ վարդապետներ, կրոնավորներ, վիճակավորներ (եպիսկոպոսներ),  
գորականներ, իշխաններ, դատավորներ, սպա և թագավորներ, վերակացուներ,  
ինչպես և «նախքան գոհտութիւնն (այսինքն՝ տգետ ) աստուածաբանք» -  
աշակերտներ և «փախչողք ի ժառանգութիւնէ» ժողովրդականներ: Եվ այս բոլորը՝  
օժտված այնպիսի բնութագրումներով, որոնք ամենաբնդհանուր իմաստով  
սեղավորվում են Զաքարիայի «տգետ Հովիւն» տրված որակումների մեջ:

Այսպիսով, քննարկվող ներածական պարբերությունն մեջ Մովսես  
Խորենացին, մարգարեանալու կոչ սնելով Երեմիային և որպես օրինակ Հանդես  
բերելով Զաքարիայի գուշակութունը Իսրայելին, կարծես հանձն է առնում  
Երեմիայի դերը և իր բերանով գուշակություններ անում Հայաստանի ապագայի  
վերաբերյալ:

Այստեղից էլ պարզվում է այս «արտաժամանակյա» ամբողջ շարադրանքին  
վերագրելի ժամանակի Հարցը ու միևնույն ժամանակ Հաստատվում, որ այն ոչ  
թե սովա վիճակի, այլ գալիքի բնութագրում է, այսինքն՝ մարգարեություն:

Այժմ անհրաժեշտ է առանձին անդրադառնալ մարգարեութեան մի  
Հատվածի, որը բերվեց վերը՝ «արտաժամանակյա» նմուշների շարքում, սակայն

չքննարկվեց թարգմանությունների առումով, որովհետև Հասուկ գիտարկում է  
պահանջում:

Կրկնում ենք Հատվածը: «Եւ սպա յանդիմանութիւն այսոցիկ վի՛նչ, եթէ  
ոչ անտես առնել Աստուծոյ, և տարեաց փոփոխել զբնութիւնս իւրեանց: Գարուն  
երաշտացիալ, ամառն անձրևայոյց, աշուն ձմեռնացիալ, ձմեռն սաստկասա-  
ուոյց...»: Ինչպես տեսնում ենք, Պատմահայրն այստեղ ևս չի դավաճանել իր գու-  
շակութեան Համար որդեգրած «արտաժամանակյա» սերին:

Իսկ ինչպիսի՞ն են թարգմանությունները: Համեմատենք վերը Հիշատակված  
վեցը:

Մահե. «Or, quel indice nous confond de tous ces crimes, ci ce n'est que  
Dieu nous a abandonnés et que les éléments ont changé leur nature? Le printemps  
est devenu torride, l'été pluvieux, l'automne hivernal, l'hiver d'un froid intense...»

«Այսպես, ուրեմն, ի՞նչ ցուցանիչ է մեզ ապացուցում այս բոլոր մեղքերը,  
եթե ոչ այն, որ Աստված լքել է մեզ և որ՝ տարբեր փոխել են իրենց բնույթը:  
Գարունը դարձել է տոթային, ամառն՝ անձրևային, աշունը՝ ձմռան նման, ձմեռը՝  
սաստիկ ցուրտ...»:

Թոմասն. What then does this demonstrate, save that God has abandoned  
[us] and that the elements have changed their nature? Spring has become dry,  
summer vry rainy, autumn like winter, and winter has become very icy..?.

«Ի՞նչ է ապացուցում այս, բացի այն բանից, որ Աստված [մեզ] լքել է և որ՝  
տարբեր փոխել են իրենց բնույթը: Գարունը դարձել է չորային, ամառը խիստ  
անձրևային, աշունը՝ ձմռան նման, և ձմեռը՝ սաստիկ ցուրտ...»:

Մայիսայան. «Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ Աստված  
մեզ անտես է արել և տարբեր փոխել են իրենց բնությունը - դարունը՝ երաշտ,  
ամառը սաստիկ անձրևային, աշունը՝ ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ...»:

Ստեփանե. «Եվ հետո այս բոլորի փոխարին ի՞նչ է, եթե ոչ Աստուծ մեզ  
անտես անելը և տարբեր իրանց բնությունը փոխելը: Գարունը առանց անձրևի,  
ամառը խիստ անձրևներիով, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ սառած...»:

Эмин: “И следствием всего этого то, что Бог покинул нас и изме-  
нил природу стихий: весна сухая, лето дождливое, осень - ставшая  
зимой, зима суровая...”

«Եվ այս բոլորի հետևանքը այն է, որ Աստված լքել է մեզ և փոփոխել  
տարբեր բնույթը. դարունը չորային է...» և այլն:

Սարգսյան. “Что же служит пеней за все это, как не пренебрежение  
со стороны Бога и изменение стихиями своих свойств? Засушливая  
весна, дождливое лето, морозная осень, суровая зима...”

«Եվ ինչն է պատիժ ծառայում այս բոլորի Համար, եթե ոչ Աստուծ կողմից  
արհամարհվելը և տարբեր իրենց բնույթը փոխելը: Չորային գարուն, անձրևային  
ամառ...» և այլն:

Ակնբերաբար, այս թարգմանությունների մեջ երկու տարբեր իմաստային  
մոտեցում է նկատվում, որը գալիս է «յանդիմանութիւն» բառի մեկնաբանու-  
թյունից ու թարգմանությունից:

Թարգմանիչների առաջին եռյակը Հասկացել է այն որպես «ապացույց»,



որպիսի դեպքում ստացվում է հետևյալ իմաստը՝ մեր մեղքերն ապացուցում են, որ Աստված մեզ լքել է: Երկրորդ ելյակը հասկացել է այդ բառը որպես «Հետևանք, հատուցում, պատիժ», որպիսի դեպքում իմաստն այսպիսին է. մեղքերի հատուցումն այն է, որ Աստված մեզ լքել է:

«Ապացույց» իմաստը, բացի այլ ամենից, այստեղ անտրամաբանական է: Մեղքերն այնքան ցցուն են ներկայացված, որ որևէ ապացուցման կարիք չունեն: Տրամաբանական է հավառակը. Աստված մեզ լքել է մեղքերի պատճառով: Հենց այս իմաստն էլ ընկած է երկրորդ ելյակի թարգմանությունների հիմքում: ՆՀԲ-ը տալիս է «յանդիմանություն» բառի երկու հիմնական իմաստ, մի կողմից՝ «կշտամբուծիւն, խրատ» իրենց տարատեսակներով, մյուս կողմից՝ «ապացույց» իր տարբերակներով: Սրանցից երկրորդը բոլորովին խորթ է Մովսես Խորենացու բառագործածությունը: Եթե վերանանք վիճահարույց դեպքից, կիրառման մասցած դեպքերը (I,6,III,14,32) կշտամբելու, քննադատելու, խրատելու իմաստ են տալիս: Նույն պատկերն է «յանդիմանեն» բայի (II, 46, III, 31, 65) և «յանդիմանեայ» դերբայի (I, 17, II, 29, III, 38, 63) դեպքերում:

Գալով «յանդիման» հիմքի կիրառմանը, այն բոլոր դեպքերում նշանակում է «հանդեպ», «դիմաց», «դեմ դիմաց» (I, 29, III, 17, 39, 50, 65, 67):

Ահա, խնդրո առարկա դեպքը կապվում է հենց «հանդիմանություն», «խրատ» և այլն և ոչ՝ «ապացույց» իմաստի հետ: Մենք մեր թարգմանության մեջ էլի ենք այն ըմբռնումից, որն առկա է, ինչպես տեսանք, նաև Ստեփաննի և էմիլի թարգմանություններում:

Գննարկելով նախադասության բոլոր հիշատակած թարգմանողները թույլ են տվել նաև այլ շեղումներ բնագրից: Սրանցից մեկն էլ այն է, որ Խորենացու «արտաժամանակյա» ոճին նրանք քերականական ժամանակ են հաղորդել: Այս տեսակետից ամենաճշգրիտը, թեև ոչ անթերին Ստեփաննի և իմ թարգմանություններն են: Ստեփաննի մոտ թերությունը «փոխարենը ի՞նչ է» արտահայտության մեջ «է» օժանդակ բայի առկայությունն է, որով պարտադրվում է ներկա քերականական ժամանակը, և նույնը ինձ մոտ՝ что же служит пеней? - «Ի՞նչն է պատիժ ծառայում» արտահայտության մեջ: Ստեփաննի մոտ պիտի լիներ «և փոխարենն ի՞նչ» իսկ ինձ մոտ՝ какова же пеня? - «և ինչպիսի՞ պատիժ»:

Մյուս չորս թարգմանությունները շատ ավելի հեռու են բնագրից, ներկայացնելով նախադասությունը անցյալ կատարյալ ժամանակով՝ «աստված մեզ լքել է», այսինքն հաղորդելով ողջ նախադասությանը կատարվածի իմաստ, որը բնագրում բացակայում է:

Երկրորդ շեղումն առկա է, բացի իմ թարգմանությունից, բոլոր մյուսներում: Դա «մեզ» դերանվան առկայությունն է «Աստված մեզ լքել է (կամ «անտես է արել»)» արտահայտության մեջ, որը Խորենացու մոտ խալառ բացակայում է: Թոմասոն է միայն, որ «մեզ»-ը առել է անկյունավոր փակագծերի մեջ՝ [us], նշելով դրանով, որ այն բնագրում չկա:

Այս բոլոր դիտողությունները հաշվի առնելուց հետո քննարկվող նախադասության թարգմանությունը ստանում է բնագրային հետևյալ ոչ միայն «արտաժամանակյա», այլև վերացական տեսքը. «Եվ ապա այս բոլորի դիմաց (հանդիման, փոխարենն, հատուցումն, պատիժն) ի՞նչ (այսինքն՝) այսպիսի դեպքերում ի՞նչ է

լինում-Գ.Ս.), եթե ոչ Աստծու անտես անելը և տարբերի իրենց բնույթը փոխելը: Գարունը՝ երաշտ, ամառն անձրևային...» և այլն: Սա Հեղինակի եզրահանգումն է Հնարավորի կազմակերպմամբ, և ոչ՝ հաղորդում տեղի ունեցածի (կամ ունեցողի) մասին, այսինքն՝ լիովին համահունչ է գուշակության ժանրին:

Թարգմանության այս հանգուցային նախադասության բովանդակությունը իր հույժ հետաքրքրական արձարձումն է գտնում մեկ այլ Հեղինակի՝ Անանիոս Երբակացու գործերում: Նախ Հիչեցիները էմիլի թարգմանությունը. «Вот покинул нас и изменил природу стихий: весна сухая...» և այլն: Սա փաստորեն մեկնաբանություն է և ոչ թարգմանություն: Խորենացու մոտ ավանդ է. «...անտես անել Աստուծոյ և տարերց փոխել զբնութիւնս իւրեանց»: էմիլին այստեղ, թեև կամայաբար, բայց տրամաբանորեն ճիշտ ավելացրել է տարբերի փոփոխման մեխանիզմը, որը Խորենացու մոտ, իրեն հատուկ սեղմ ու խտացված ոճին համապատասխան, սղված է: Այդ մեխանիզմը, սակայն, մանրամասն բնութագրված է Անանիայի երկու գործում՝ «Յաղազս կենդանատեսակաց» և «Յաղազս որ ի մէջ երկնի և երկրի են շարժմունք և տեսութիւնք»:

Դրանցից առաջինում կարդում ենք. «Երկոտասանքեան սոքա (կենդանատեսակը-Գ.Ս.) շարժին չորիւք տարբերութեամբ՝ առ ի լինել միոյ տարերոք ժամանակի... և առնեն ջերմութիւն և ցրտութիւն, խոնաւութիւն և երաշտութիւն, և իշխեն փոխմանց օդոյ և ժամանակաց: Բայց եթէ Աստուածային ինչ հասանէ հրաման, փոփոխին տարերց բնութիւնք. թէ արեւոք յողորմածութիւն կամ ի խրատ՝ որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամառային ցրտութիւն և ձիւնաբերութիւն, և շնչումն սառնամանեաց՝ որ է արտաքոյ բնութեան ժամանակի, դիտելի նմա միայնոյ»<sup>6</sup>:

Տարբեր բնությունն, այսպիսով, փոխվում է Աստծո հրամանով ի բարեգործություն կամ ի պատիժ մարդկանց:

Անանիայի մյուս գործից իմանում ենք, թե ինչպիսի մարդկանց ի պատիժ են լինում բնության արհալիրքները՝ «այս ի վրէժխնդրութիւն անդաժմաց և ի խրատ այնոցիկ որ գահ և դերկիւղ Աբարչին չունին ի հոգիս իւրեանց»<sup>7</sup>:

Այս երկու մեջբերումները, նախ, առարկայորեն ցուցադրում են Խորենացու մոտ սոսկ ենթադրվող՝ Աստծո անտես անելու և տարբերի փոփոխման միջև եղած կապը և փոփոխման բուն մեխանիզմը («աստուածային հրաման»): Երկրորդ, նրանցով մեկ անգամ ևս իր հաստատումն է գտնում Խորենացու օգտագործած «յանդիմանություն» բառի մեր կիրառած «Հատուցում», «պատիժ» իմաստը, բանի որ հար և նման պարագաներում նրանցում առկա են վերջիններին համանիշները՝ «վրէժխնդրութիւն» և «խրատ» բառերը:

Այստեղ մենք չենք զբաղվի Խորենացու Ողբի և Երբակացու ավյալ գործերի աղբյուրադիտական կապի, հնարավոր ազդեցություն ուղղության խնդրով, գործը պատկերացնելով այնպես, որ տարբերի բնույթի փոփոխման թեման ո՛չ Խորենացու և ո՛չ էլ Երբակացու մենաշնորհն է եղել: Այն ընդունված էր վաղ քրիստոնեական

<sup>6</sup>Տե՛ս Անանիայի Երբակացու Համարողի Մատենագրութիւնք: Տեքստը մշակեց և հրատարակության համար պատրաստեց պրոֆ. Ա.Գ. Աբրահամյանը, Երևան, 1943, էջ 324:

<sup>7</sup>Ա ն ա ն ի ա Ե ի բ ա կ ա ց ի. Տիեզերագրութիւն և տոմար, աշխատությունը Այ. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 35:



գրականության մեջ, Հատկապես գուշակությունների բնագավառում<sup>8</sup>։ Բացի այդ, Համեմատելի Հատվածների նյութական, բառային նմանություններն էլ առանձնապես ցցուն չեն<sup>9</sup>։

Անցնենք այժմ մարդաբուության սարսափներով լի շարադրանքը եպրափա- կող նախադասությունը։ Խորենացին այսպես է գրել։ «Յորմէ (այսինքն՝ այդ սարսափներեց) պահեսցէ զմեզ Բրիստոս Աստուած, և զամենեսեան՝ ոյք երկրպա- գին նմա ճշմարտութեամբ»։ «Պահել» բայը, մտնավանդ իր ապառնի ձևով, ինքնին բավականաչափ պերճախոս է. այստեղ աղաչանք է ապահովել մի բանից, որը կարող է իրականանալ ըստ գուշակության, բայց կարող է և կանխվել՝ Աստոծ ողորմածությամբ։ Այսինքն՝ այս դիմումը, քննարկվող տեքստի վերը դիտարկված ներածության Հար և նման, բոլոր դեպքերում տեղափոխում է գործողությունը «արտոսժամանակյա» վիճակից՝ ապագա, այսինքն՝ գուշակության ոլորտը։

Միանգամայն նոր երանգ է ներմուծում սույն նախադասության երկրորդ մասը. «...և զամենեսեան՝ ոյք երկրպագին նմա ճշմարտութեամբ»։ Այսինքն, Պատմահոր աղաչանք - դիմումը բոլոր մարդկանց չի վերաբերում, այլ միայն բարե- պաշտներին։ Իսկ մնացածները։ Այստեղ այդ Հարցի պատասխանը չկա, բայց այն կա, ինչպես տեսանք, Անանիայի մոտ՝ վերը մեջ բերված Հատվածներից երկրորդում, որտեղ բնության արհաժիրքները սահմանվում են «ի վրէժխնդրու- թիւն անգգամաց և ի խրատ այնոցիկ որ զահ և զերկիւղ Արարչին չունին ի Հոգիս իւրեանց»։ Այս պահը տրամաբանորեն ենթադրվում է նաև Խորենացու մոտ։

Սա մի թեմա է, որ Հիմնովին և քանիցս շեշտված է Աստվածաշնչում՝ «Հով- Հաննես առաքյալի Հայտնության» («Ապոկալիպսիս»)՝<sup>10</sup> մեջ, որտեղ իր այլ արտա- Հայտնությունների կողքին, կարդում ենք. «Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա. Նորա ունին իշխանութիւն ուստի ի փայտէն կինաց և մտանել ընդ դրոնա քաղաքին (Նոր, զալիք Երուսաղեմի-Գ.Ս.)։ Այլ կցեն արտաքս շուռք, և դեղատուրք,

<sup>8</sup> Որպես օրինակ կարելի է ներկայացնել Հատվածներ երևելի եկեղեցական Հայերեց III դարում սարած կիպրիանոսի գուշակությունից։ “Зимую дождь не оживляет семян, лето не дает тепла. чтобы созреть плодам, Весна потеряла свое прежнее обаяние, Осень - свое плодородие” Ցավոք, մեր գրադարաններում չկարողացա գտնել կիպրիանոսի երկերի բնագրերը, և Հատվածները տրված են ըստ М. В о л о ш и н. Линки творчества.- Пророки и мстители, Л., 1988, с.189 գրքի։ Բանի որ Հեղինակը նշում է, որ ինքը ազատ թարգմանություն է արել բնագրից, ապա այդ «ազատությունը» չթանձրացնելու Համար ուսերենից Հայերեն չենք թարգմանում։ Շարունակությունը նույնպես շատ Հետաքրքրական է մեր թեմայի առումով։ “Дети рождаются лысыми... растёт безлюдие. Земля без пахарей... Нивы пустыньны. И в нравах тот же упадок. Нет больше невинности, нет справедливости или дружбы”. Հմտ. Խորենացու Ողբը. «Եւ բարձունս առ Հասարակ յամենեցունց սիրոյ և ամոթոյ... սիրելիք դաւաճանեալ... Հաւատ վաճառեալ ընդ սնոսի կենցաղը...» և այլն։ Տե՛ս և ստորև էջ 129, ծան. 13, եկեղեցական Հայր Լակտանցիոսի գուշակությունից բերված Հատվածը։

<sup>9</sup> Այսպես, Գր. Խալաթյանը չի էլ գուշակում, ինչպես որ սովորություն ունի. Անանիայի Հատվածը Խորենացու Համապատասխան Հատվածին որպես նրա աղբյուր, այլ բերում է այն սուսկ սողաատակում (Армянские Аршакиды в “Истории Армении” Моисея Хоренского, ч. II, Материалы, М., 1903, с.143. прим. 1), իսկ Ակիլոսյանը, գուշակելով Հանդերձ, նշում է, որ Անանիայի Հատվածը «Թերևս Հեռավոր աղբյուր միայն կնկատվի» (Խորենացու Համար) (նշվ. աչխ., էջ 27)։

<sup>10</sup> Լ. Ջեքիլյանը ևս նկատել է «Ողբին ներհայտորեն Հայտնաբանական (apocalyptic) շեշտերը», նշվ. աչխ., էջ 31։

սպանողք և կռապաշտք, և ամենեքեան որ սիրեն զստութիւն» (ԻԲ, 14-15)։

Ի մի բերելով խնդրի քննարկումը, կարող ենք արձանագրել, որ Մովսես Խորենացու Ողբի երկրորդ, եզրափակիչ մասը ոչ թե իր ժամանակի Հայ իրականության նկարագրությունն է, նույնիսկ խտացրած գույնիբով, այլ աստվածաշնչական մարդաբանի Երեմիայի ոգեշնչմամբ և Զաքարիայի օրինակով Պատմահոր բերանով արված մարդաբանություն - գուշակություն։

Այսպիսով, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մեջ կիրառված պատմողական, Հեռտորական, նկարագրական, ուղերձային, ներբողական, բանաս- տեղծական և այլ ժանրերին ավելանում է ևս մեկը՝ մարգարեականը։

Իր գուշակությունը շարադրելու Համար Պատմահայրը ընտրել է մի յուրա- Հատուկ, անսովոր «արտոսժամանակյա» ոճ, որը նրա շարադրանքը կարծես օգուժ կախված անկշռության վիճակում է պահում և արտակարգ ուժով տպավորություն գործում ընթերցողի վրա։ Իր բովանդակության այս նոր լուսաբանությամբ այն նոր Հիմք և ուղղություն է տալիս Խորենացու պատմափիլիսոփայական, գաղա- փարախոսական, Հասարակական, աստվածաբանական և ժամանակին Հատուկ՝ վախճանաբանական Հայացքների Հնարավոր Հետազոտություններին։

Հարց է ծագում, սակայն, թե ինչն է դրդել Խորենացուն Հանդես գալ նմանօրինակ գուշակությամբ։ Կարելի է ենթադրություն անել, թե սույն գուշակությունը իր պատմական Հիմքն է ունեցել «Հայոց պատմության» մեջ չընդգրկված, բայց Խորենացու ապրած 440-490 թթ. իրականության մեջ<sup>11</sup>, այսինքն՝ եղել է vaticinia ex eventu- արդեն ստիղ ունեցածի վրա Հենվող կեղծ գուշակություն։ Սակայն սա էլ առանձնապես Հենակետեր չունի այդ տաս- նամյակների պատմության մեջ, որոնք լի էին Պարսկաստանի դեմ ազգային- պատասխանական և գրադաշտականության դեմ կրոնական պայքարով, որի Հետքերը Ողբում Հազվիվ թե նշմարելի են։ Ուրեմն, ի՞նչն է դրդել, այնուամենայնիվ։

Նախ, նշենք, որ Պատմահայրը Հիմք է ունեցել այդպիսի գուշակություն անելու, որպիսի Հիմքը փայլուն ցուցադրում է Լ.Ջեքիլյանը վերը մեջ բերված Հատվածում, թեև ինքը, մեր կարծիքով, մի քիչ չափազանցելով, այն բավարար է Համարում նույնիսկ նկարագրություն անելու Համար<sup>12</sup>։ Այստեղից, Համե- նայնդեպս, Հետևում է, որ այդ Հիմքը միանգամայն բավարար է եղել գուշա- կություն անելու Համար։ (Այդ Հիմքը, Հիշեցնենք, Խորենացու կողմից անհա- մեմատ ավելի սուր ընկալումն էր «կրկնակի» վերջի՝ այսինքն՝ պետական և Հողերը իշխանությունների կորստյան, դրա ընկալումն էր որպես «բացարձակ» վերջի, ինչը մեր սերունդների կամ գիտական եզրահանգումների Համար Հնարավոր չէ, նկատի ստնելով մեր իրազեկությունը Հետագա պատմությունը)։

Իսկ ի՞նչ Հանգամանքներ են նպաստել կամ ավելի լավ է ասել՝ թիլադրել, որ Պատմահայրը իրացնի այդ Հիմքը, դիմի գուշակության, մարգարեություն։ Դրանք, իմ կարծիքով, երկուսն են։ Մեկը Պատմահոր ապրած ժամանակներին Հատուկ ավարտաբանական (վախճանաբանական) ուսումնքներն ու Հայացքներն էին, որոնք գուշակություններ էին ծնում խոր ճգնաժամ ապրող Հուսանական

<sup>11</sup> Հմտ. վերը, էջ 129, ծան. 4։

<sup>12</sup> Տե՛ս վերը, էջ 128։



կայսրության և մերձավոր երկրների մոտայուս կործանման վերաբերյալ<sup>13</sup>: Հայաստանը ևս դիտվում էր որպես այդ գործընթացի մասնակից և թագավորության ու հոգևոր իշխանության կորուստը ավելի քան արգարացնում էր այգավրի մոտեցումը:

Երկրորդը «Աստվածաշնչի» անուրանալի ազդեցությունն է Պատմահոր վրա, որը հատուկ ապացույցման կարիք չունի: Տվյալ դեպքում հատկանշական է Երեմիայի և Զաքարիայի՝ Հին կտակարանը եզրափակող մի ամբողջ շարք մարգարեություններից երկու երևելի Հեղինակների այդչափ ցցուն վկայակոչելու և իրեն օրինակ ծառայեցնելու փաստը<sup>14</sup>: Չի կարելի անչափող անել նաև Խորենացու մոտ պարզորոշ կերպով շոշափվող «Հովհաննես առաքյալի Հայտնության» («Ապոկալիպտիկա») այն գաղափարը, թե կիրկվին միայն բարեպաշտները:

Ինչպես Հին և Նոր կտակարաններն ավարտվում են մեկը՝ մարգարեությունների շարով, մյուսը՝ «Հայտնություն» դուշակություններ, այնպես էլ Պատմահայրը իր «Հայոց պատմությունն» ավարտել է Ողբի եզրափակիչ մասը կազմող դուշակություն-մարգարեություններով:

## “ПЛАЧ” МОВСЕСА ХОРЕНАЦИ В НОВОЙ ИНТЕРПРЕТАЦИИ

### Резюме

В литературе о “Плаче”, заключающем “Историю Армении” Мовсеса Хоренаци, отмечается несоответствие содержания его второй части как самой “Истории”, так и действительности V в., когда она была написана. Предложенные объяснения неубедительны. Исследование текста автором показало, что эта часть “Плача” - не *описание* социаль-

<sup>13</sup> Վերը մեջբերված՝ կիրկիանոսի դուշակությանը (էջ 136, ծան. 8), որը Հենց այդ ոլորտին էր պատկանում, ավելացնենք եկեղեցական երևելի Հայրերից ևս մեկի՝ Լախտանցիոսի (250 - մոտ. 325թթ.) դուշակությունից հատվածներ, դարձյալ, նույն պատճառով, ուսանողներին թգովով: “Мир подойдет к концу. Зло царит в мире... Меч пройдет по миру и пожнет жатву. Имя Рима будет стерто с лица земли... И придут времена ужаса. И не будет таких, кому мила жизнь. Города будут разрушены до самого основания огнем и мечом, землетрясениями, наводнениями... Земля не даст плодов своих человеку... Животные станут умирать”. М. Волошин. Указ. соч., с 140. Հմմտ. սրանք Խորենացու Ողբի Հետ. «Ջրոց առաելուն անօրուս և նուազելն անհնարասր. երկրի անբերութիւնք պտղոց և անանելութիւնք կենդանեաց, այլ և սասանմունք և դրրդմունք... առումն բաղաբաց և քանդումն ամրոցաց. աւերումն աւանաց և հրդեհումն շինուածոց, սովք անբավք և Հիւանդութիւնք և մահք բազմօրինակք...»: Սրանք ժամանակին հատուկ դուշակությունների ընդունված ձևակերպումներ են:

<sup>14</sup> Չմոռանանք Հիշատակել այստեղ առկա ևս մի «մարգարեական» վկայակոչում (ավելի ճիշտ՝ դրեթե բառացի մեջբերում), այս անգամ աստվածաշնչական Եսայի մարգարեից, որի «Ոչ գոյ խաղաղութիւն ամպարչոտաց՝ սոսէ տէր» դարձվածքը (Ես., 57, 21) Պատմահայրը ներկայացնում է այսպես. «ըստ այնմ եթէ չիք խաղաղութիւն ամբարչոտաց»: Հետաքրքրական է նշել, որ քննարկվող տեքստում սա միակ նախադասությունն է ներկա բերականական ժամանակով, և այն, մեջբերում վրեժով, էլ ավելի ցցուն է դարձնում մնացած շարադրանքի «արտաժամանակյա» բնույթը:

ных и стихийных бедствий, постигших страну, а *пророчество*. Тому свидетельство само ее содержание, оригинальная “вневременная” форма ее изложения, указания предвещающего и заключающего ее абзацев и другие обстоятельства. Пророчество выражает фрустрацию, вызванную у Мовсеса Хоренаци утратой царской власти Аршакидами и духовной власти - родом Григория Просветителя, что представлялось автору подлинной гибелью Армении. Оно написано под влиянием эсхатологических идей времени, порожденных упадком Римской империи, а также серии пророчеств, завершающих Ветхий завет, и Апокалипсиса, завершающего Новый завет.

## THE NEW INTERPRETATION OF LAMENT OF MOVSESE KHORENATSI

### Summary

The literature on “Lament”, completing the “History of Armenia” of Movses Khorenatsi mentions about a discrepancy of the contents of its second part to both the “History” and the Vth century’s reality, when it was written. The suggested explanations are unconvincing. The investigation of the text by the author showed, that this part of “Lament” isn’t a description of social and elemental disasters of the land, but it’s a prophecy. It’s own matter, the original “out of time form of its statement, the indications of preliminary and final paragraphs and other circumstances witness to it. The prophecy has expressed the frustration, evoked at Movses Khorenatsi by the loss of reign power with Arshakids and spiritual power-with kin of Gregory Illuminator, which seemed to the author to be a genuine destruction of Armenia. It was written under the influence of eschatological ideas of time, raised with the decline of Roman Empire and the series of prophecies, completing the Old Testament as well as “Apocalypsis”, completing the New Testament.



## ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

### ՊԱՏՄԱՀԱՅՐ ՀԵՐՈՂՈՏՈՍԸ

#### 1. ՀԵՐՈՂՈՏՈՍԻ ԿՅԱՆԸ

Հին Հունաստանի մշակույթի գործիչների կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները խիստ սուղ են, ի տարբերություն ռազմական-քաղաքական գործիչների մասին տեղեկությունների: Հերոդոտոսը ևս բացառություն չէր կազմում: Սուկ մի քանի հիշատակություն ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ, համեմված նրանց սեփական կարծիքներով ու եզրահանգումներով. եղածն այս է: Այդ տվյալները որոշ դեպքերում ավելի ստուգություն են ձեռք բերում, եթե հաստատվում են Հերոդոտոսի գործի այս կամ այն հատվածի բովանդակությամբ:

Առկա տվյալների համաձայն Հերոդոտոսը ծնվել է Փոքր Ասիայի Հունական Հայկիստանս քաղաքում մ.թ.ա. 484թ.: Մասնակցել է քաղաքին տիրած բռնակալի դեմ ծավալված պայքարին ու ստիպված եղել լքելու հայրենիքը: Ապրել է Սամոս կղզում, այնուհետև՝ կարճ ժամանակ, կրկին հայրենիքում, իսկ մ.թ.ա. 443թ. Պերսիկոսի նախաձեռնությամբ Իտալիայի Հոդի վրա հունական մի նոր գաղութի՝ Թուրիայի կազմակերպման ուղղությամբ եռամսհուն գործունեություն ծավալել ու ապրիներ ապրել, զուցե և մահացել այնտեղ. մ.թ.ա. 430 և 425 թթ. միջև:

Հիմք կա ենթադրելու, որ նրա «Պատմության» ներածական նախադասություն սկիզբը՝ «Հերոդոտոս Հայկիստանսեցին ժողովեց պատմությունն այս...» նախապես ունեցել է հետևյալ տեսքը. «Հերոդոտոս Թուրիացին ժողովեց պատմությունն այս...», քանի որ այդպես են մեջ բերում այն Արիստոտելսը և մի քանի այլ հին հեղինակներ:

Կյանքի թուրիական հատվածը, ուրեմն, շատ նշանակալից է եղել Հերոդոտոսի համար, հավանական է, որ նա այնտեղ է ստեղծել իր «Պատմությունը»:

Մեզ հասած այս կենսագրական տեղեկություններում ակնհերևաբար պակասում է երկու կարևորագույն հանդամանք, որոնք վճռական նշանակություն ունեն նրա երկը ճիշտ ընկալելու և արժեքավորելու համար: Դրանք են Հերոդոտոսի կապը Հելլադայի խոշորագույն քաղաքական և մշակութային կենտրոն Աթենքի հետ և նրա բազմաթիվ ու հետափոր ճանապարհորդությունները: Երկուսի մասին էլ իմանում ենք Հիմնականում իր «Պատմության» այնպիսի հատվածներից, ուր նա ականատեսի տեղյակություն է դրսևորում Աթենքի և, ընդհանրապես, Ատտիկայի, ինչպես և Հունաստանից հեռու գտնվող մի շարք երկրների նկատմամբ:

Աթենքի հասարակության հետ Հերոդոտոսի ունեցած սերտ կապի մասին է ակնարկում Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանություն մեջ (II, 212) պահպանված, մ.թ.ա. 445թ. թվագրված մի տեղեկություն, ըստ որի «Երդոտոսայ յԱթենս զիրս ընթերցեալ՝ պատուեցաւ» («Հերոդոտոսը կարգալով Աթենքում իր ստեղծագործությունները՝ պատվի արժանացավ»):

Պուտարքոսը իր հերթին գրում է, թե Հերոդոտոսը աթենացիներից ստացել է 10 տաղանդ արժեքով պատվավոր մի նվեր: Սրանք լրացվում են, բացի պատմագրի՝ Աթենքի ու նրա շրջակայքի հետ լավ ծանոթություն հանգամանքից, նաև այն անդրադարձումներով, որ նկատել են հետազոտողները մի կողմից Հերոդոտոսի «Պատմության», մյուս կողմից նրա աթենացի ժամանակակիցների պատմաբան Թուկիդիդեսի, ողբերգակ Սոֆոկլեսի և այլ հեղինակների գործերի միջև: Այս բոլորով փաստարկվում է Հերոդոտոսի՝ Աթենքում երկար ապրիներ, հավանաբար Վր. 40-ական թվականներին, ապրելու և գործելու հանգամանքը, իսկ վերջինս էլ բացատրում է նրա շեշտված աթենասիրությունը, որին դեռ կանդորատունանք:

Հունաստանի քաղաքներից, բացի Սամոսից և էգեականի այլ կղզիներից, Հերոդոտոսը հավանաբար ապրել է Դելփիում, այցելել Հյուսիսում ընկած Մակեդոնիա, Թրակիա ու Հյուսիսային-մերձսևծովյան հունական Օլբիա գաղութը, իր հայրենի Հայկիստանսի հարող փոքրասիական մի շարք հունաբնակ քաղաքներ: Թուրիայում ապրելով, նա այցելել է Սիկիլիայի Սիրակուզա քաղաքը:

Հույնի համար առավել հազվադեպ երևույթ էին Հերոդոտոսի կատարած աֆրիկյան և ասիական ճանապարհորդությունները: Դրանք հավաստվում են հեղինակի՝ ականատեսի դերում հանդես գալու մասին հիշատակություններով, նկարագրությունների ճշմարտաբանությամբ: Նա շրջել է Աֆրիկայի երկրներից Եգիպտոսում և Լիբիայում, իսկ Ասիայում՝ Ատրիքում, Փյունիկիայում, Ատրիստանում, Բաբելոնում, Պարսկաստանում: Այդ ուղևորությունները տեղի են ունեցել, հավանաբար, մ.թ.ա. 455 և 446թթ. միջև:

Ճանապարհորդությունների նպատակը պարզ չէ, բայց արդյունքն ակնբախ է. այցելած երկրների մասին Հերոդոտոսը հայտնում է առաջնակարգ, հաճախ եզակի, տեղեկություններ, որոնց մի մասն էլ վերաբերում է մեր և հարևան ժողովուրդների պատմությունը:

#### 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԵՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՐՈՂՈՏՈՍԸ

Պատմագրությունը, այն իմաստով, որը մենք վերագրում ենք այդ հասկացությունը, ծնունդ է առել հին Հունաստանում մ.թ.ա. VI - V դդ.: Հին Արևելքի քաղաքակրթությունները՝ եգիպտականը իր հիերոգլիֆ բազմահարուստ դպրությունը, սեպագրականը՝ իր շումերական, բաբելոնաստուրական, իտալիական, ուրարտական, իսթակական ու հին պարսկական ճյուղավորումներով, մնացել են առանձին իրադարձությունների կամ միատարր երևույթների շարանների արձանագրման մակարդակի վրա:

Առաջին հույն պատմիչների համար հնուց ի վեր կիրառվում է «լրդոգրություններ», այն է՝ «լրդոսը (բանը, խոսքը) գրի առնողներ» տերմինը: Դրանց առանձնահատկությունների թվին են պատկանել մեծ մասամբ նյութի ժամանակագրական և տարածքային ընդգրկման համեմատական սահմանափակությունը (մի քաղաքի, մի երկրի, մի տոհմի վերաբերող տարբեր նյութերի շարադրանք), պատմական դեպքերի նկարագրությունից զրկաբանական, աշխարհագրական և ազգագրական բնույթի շեղումները, առասպելների պարզունակ-







բանություններ» երկն այսպես է սկսել. «Ես գրել եմ այն, ինչ ինձ ճշմարտացի է թվում, որովհետև Հույների բազմաթիվ պատմածները ծիծաղի են արժանիք»։ ասել է, թե Հեղինայի իր լսած-կարգացածից զրի է աճում միայն իրեն հավաստի թվացող մասը: Հերոդոտոսը, աղբյուրների նկատմամբ քննադատաբար պատմադրված լինելով հանդերձ, միանգամայն այլ, անհամեմատ ավելի լայն ու տրամադան մտնեցում է ցույցաբերում աղբյուրներից ստացած նյութին ընթերցողին մատուցելու ինչպես: Նա գրում է. «Ես պարտավոր եմ հաղորդելու այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավասար, իհարկե, ես պարտավոր չեմ: Այս սկզբունքին ես կհետևեմ իմ ամբողջ պատմության մեջ» (VII, 152):

Այստեղից բխում է ոչ միայն այն, որ պատմագիրը չի թաքցնում իրեն հասած տեղեկությունների հարստությունն ու պարտադրում ընթերցողին բավարարվել իր կատարած ընտրություններ, այլև զետեղեցում, որ իրեն անհավատալի թվացող նյութը կարող է մեկ ուրիշին վստահելի և արժեքավոր ներկայանալ: Ուստի նա նույնիսկ հաճախակի մեջ է բերում նույն իրադարձության մասին իրեն հասած հաղորդումներից երբեմն իրարամերժ տարբերակներ, նշելով իր նախընտրած տարբերակը: Այսպիսի մի դեպքից հետո, օրինակ, նա գրում է. «Այս պատմությունն ամենահավանականն է, բայց քանի որ կա նաև պակաս հավանական պատմությունը, այդ ևս պետք է ասվի» (III, 9): Հարգանքն ընթերցողի նկատմամբ, անշուշտ, պատիվ է բերում պատմագրին:

Հերոդոտոսը անհրաժեշտ է համարում նաև հաճախակի հաղորդել, թե ինչ ճանապարհով են հասել իրեն այս կամ այն տեղեկությունները, դրանով ևս հնարավորություն տալով ընթերցողին ինքնուրույն դատելու նրանց վստահելիությունն աստիճանի մասին: Նա այդ մասնավորապես կիրառում է օտար երկրների մասին պատմելիս: Այսպես, նա գրում է. «Մինչև այստեղ այն, ինչ պատմեցի, իմ սեփական եզրակացություններն են, հիմնված անձամբ իմ տեսածի և հավաքած տեղեկությունների հիման վրա: Այսուհետև կպատմեմ այն, ինչ լսել եմ Եգիպտոսի պատմությունից, ավելացնելով նաև իմ տեսածները» (II, 99): Մի այլ տեղ կարդում ենք. «Իմ հետազոտությունները ես ավելի ծավալեցի, ինչքա իբրև ականատես գնալով մինչև Եգիպտոսի բազաբը, իսկ այնտեղից հետո արդեն հարցնելով ու լսելով» (II, 29):

Պետք է, սակայն, կարծել, թե պատմագիրը թղթին է հանձնել անխտիր այն ամենը, ինչ իմացել ու լսել է. երբ նա լիովին համոզված է որևէ խնդրում, ապա այլևս տարբերակների ներկայացմանը չի դիմում:

Արդ, մի՞չտ է արդյոք Հերոդոտոսը հարապատրեհ հաղորդում իր աղբյուրներից ստացածը: Ընդհանուր պատասխանն, անշուշտ, դրական լինելով, չի կարելի մոռացություն տալ, սակայն որ պատմագիրն ունեցել է իր, այն էլ զորեղ, անձնական ու քաղաքական համակրանքներն ու հակակրանքները (տե՛ս ստորև), որոնք իրենց կնիքն են դրել դեպքերի ու դեմքերի գնահատման վրա, ուսմանց փուլից ոչ լրիվ ըստ արժանիության փոստաբանելու կամ արժարացնելու, մյուսներին, ընդհակառակը, մեղադրելու ու պարսավելու իմաստով: Բայց սա միանգամայն բնական է:

Եթե վերանանք բնական այս կողմից, ապա Հերոդոտոսի «Պատմությունը» վերին աստիճանի արժանահավաստ է թե՛ այն իմաստով, որ նա հմտորեն է ընտրել իր աղբյուրները, այսինքն՝ դիմել է այնպիսիներին, որոնցից ավելի հավանություն

կար ստանալ գործերի ճշմարտացի պատերը, և թե՛ այն, որ նա տղ աղբյուրները հարազատորեն է վերարտադրել:

Նոր շրջանի պատմագրությունը, դեգերելով Հերոդոտոսի նկատմամբ վստահության և անվստահություն միջև, այսօր հակվել է դեպի առավելը:

Մեզ, բնականաբար, շատ են հետաքրքրում Հերոդոտոսի տվյալները Հայաստանի և Հայերի մասին, որոնց կանգաղապանքը առանձին: Դրանք Արևելքի երկրների մասին «Պատմություն» պարունակած հարուստ տեղեկությունների մասն են կազմում: Անցյալ դարի կեսերից սկսված և հակադասական հնարավորական նյութ հանդես բերած պեղումներից առաջ, Հին Արևելքի երկրների մասին հիմնական տեղեկությունները դալիս էին, Աստվածաշնչի կողքին, Հերոդոտոսի «Պատմությունից»: Պեղումների հետևանքով հայտնաբերված քաղաքներն ու տաճարները, նրանցում գտնված՝ արվեստի ու կենցաղի անթիվ առարկաները և բազմահազար զբաղվող հուշարձաններն ու վավերագրերը Հերոդոտոսի պատմածներից շատ բան հերքեցին, նրանցում շատ բան ճշգրտեցին, բայց և շատ բան էլ հաստատեցին ու լրացրին, հակադասական չափով բարձրացնելով նրա, որպես ճշմարտապատում պատմագրի, հեղինակությունը: Պարզվեց, օրինակ, որ այն, ինչի մասին նա պատմում է որպես ավանատես, որպես կանոն հավաստի է: Այդպիսին է Եգիպտոսի և Բաբելոնի վերաբերյալ նրա պատմածը: Է՛լ ավելի մեծ հավաստիություն ու ճշգրտություն են ցուցաբերում նրա տված տեղեկությունները պարսիկների ու պարսից հակադասավալ տերություն մասին, տերություն, որի մասն է կազմել Հայաստանը Հերոդոտոսի օրոք:

Այս հանգամանքն, անշուշտ, Հերոդոտոսի ձեռքի տակ պարսկական գործերն արտացոլող առաջնակարգ աղբյուրների առկայություն է: Հետագոտոսներն այստեղ, բացի պատմաբանի՝ դեպի պարսկական քաղաք էլլքասան կատարած ճանապարհորդությունն և տպավորությունները, առանձնացնում են երեք տարի աղբյուրներ: Առաջին՝ շունաստանում հանգրվան գտած պարսից ավազանու իրազեկ ներկայացուցչիների հաղորդումները (օրինակ, հայտնի զորավար Մեգաբիզոսի որդի Ջուպյուրոսի), երկրորդ, Պարսկաստանում հանգրվանած Հույն գործիչների (օրինակ՝ հույնական թեմիատոկեսի) հետադարձների հաղորդումները: Վերջապես, պարսկական տերության արքայական դիվանատան կողմից երկրի ծայրերն առաքվող պաշտոնական վավերագրերի պատճենները, որոնք այնուհետև թարգմանվում էին տեղական լեզուներով:

Այս վերջին երևույթը ամենից լավ հաստատվում է Դարեհ 1-ի հայտնի Բեհիստունյան եռալեզու արձանագրությունից սկսված և օրինակով: Նախ, Դարեհն ինքն է հայտնում, թե հրամայել է արտադրել այն կավի աղյուսակների և կաշվե փաթեթների վրա, այսինքն, համապատասխանաբար՝ ակկադերեն և արամեերեն լեզուներով, և ուղարկել ըստ երկրները: Սրա նյութական ապացույցն էլ սուկա է. գտնված են այդ արձանագրություն առանձին հատվածները պարունակող թե՛ ակկադերեն գրված կավի աղյուսակներ և թե՛ արամեերեն գրված կաշու փաթեթների հմուշներ: Ի դեպ, նշենք այն հանրահայտ փաստը, որ պարսից տերության արքանի դիվանատան ու նրա մասնաճյուղերի գործնական, ինչպես և ժամանակի միջազգային լեզուն հենց արամեերենն էր: Երկրորդ, Հերոդոտոսը գարմանալի սկստ ծանոթություն է ցուցաբերում նշված արձանագրության առանձին մասերի բովանդակությանը: Այն դրսևորվում է ոչ միայն այուժների ու գործող



անձանց անունները Հարստատ վերարտադրմամբ (օրինակ՝ Դարեհի գահակալման դրամատիկ պատմություն, ընդհուպ մինչև նրա գործակիցների անունները՝ Վինդաֆառնա, Ուտանա, Գաուրբուրնա, Վիդառնա, Բաբարուխա, Արդամանիշ՝ Բեհնաուդեյան արձանագրության մեջ և, համապատասխանաբար, Ինտաֆեռնես, Օտանես, Գորբուլուա, Հյուդառնես, Մեգարիգոս և Ասպաթինես՝ Հերոդոտոսի մոտ, տարբերվում է միայն վերջին անունը), այլև նույնիսկ ոճական որոշ արտահայտությունները նույնությունները:

Միշտ չէ, սակայն, որ նմանություններն այսբան հստակ են դրսևորվում: Հետադրուտդներին, օրինակ, շատ դժվարություններ են պատճառում Հերոդոտոսի մոտ Հանդես եկող՝ Աբեմենյան տերությունն ստորաբաժանումների՝ աստրապուլությունները ու նրանցից գանձվող արքունի Հարկերի թվարկման (III, 90-96) և Բեհնաուդեյան արձանագրության նմանօրինակ (սակայն առանց Հարկերի հիշատակման) թվարկման առնչության խնդիրները: Հարցն այն է, որ այդ երկու թվարկումները միջև կան և ոչքի զարնող ընդհանրություններ և էական տարբերություններ: Նմանությունները, բնականաբար, խոսում են Հերոդոտոսի՝ արքունի արձանագրություններին ծանոթ լինելու օգտին՝ վերը նշված ուղիներով: Տարբերությունները վկայում են իր թվարկման համար նրա ունեցած լրացուցիչ աղբյուրների մասին: Ինչ աղբյուրներ էին դրանք: Մասամբ դարձյալ պաշտոնական պարսկական (ուրիշ ի՞նչ աղբյուրներում կարող էին գտնվել յուրաքանչյուր աստրապուլությունից գանձվող Հարկերի չափերը), բայց ավելի մանրամասն, մասամբ էլ՝ այլ (այսինքն, ինչպես նշվեց, Հունաստանում ապաստանած պարսիկների, Պարսկաստանում ապրած հույների, լուսավորությունների պատմածները և այլն) աղբյուրներ:

Այս բոլորը ցույց են տալիս, որ Հերոդոտոսն իր նկարագրություններն անելիս երբեք չի բավարարվել մեկ աղբյուրի տվյալներին շրջանակներով, այլ սինթեզել է մի քանի իրեն մատչելի բոլոր նյութերը՝ երբեմն նշելով աղբյուրները, երբեմն՝ ոչ:

Ինչպես կեսնենք ստորև, այս պրոբլեմները հաճում են նաև Հերոդոտոսի՝ Հայաստանի և Հայերի մասին մատուցած տվյալների հետազոտողի առջև:

4. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ԱՇԽԱՐՀԱՅԱԳՐԸ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Ժամանակի ողուն համաձայն, Հերոդոտոսի վերաբերմունքը բնութայն և հասարակության երևույթներին, այսինքն՝ նրա աշխարհայացքն ընդգրկում է, մի կողմից, առողջ դատողության ու թալես Միլետցու օրերից ձևավորված տարերային մասերիալիզմի և, մյուս կողմից, հնագույն ժամանակներից եկող դեցապալատության միջև ընկած գիտակցության լայն սպեկտրը: Հերոդոտոսը որևէ հստակ, յուրօրինակ փեխտոփայական հայացքներ չի դրսևորել, այլ առաջնորդվել է ընդունված տեսակետներով: «Պատմության» մեջ առասպելներ ներկայացնելիս, նա լուսավորությունների օրինակով որպես կանոն ջանացել է հրաշալիքների դրանք, «ճշմարտել» ու ներկայացնել պարզունակ ռացիոնալիզմի ոգով՝ որպես այլաբանորեն արտահայտված սովորական կենսական պատկերներ, որոշ դեպքերում, սակայն, առասպելը ուժի մեջ թողնելով և կամ անվերապահ հավատ ընծայելով

Հունական այլևայլ գուշակների, հատկապես դելֆյան գուշակի կանխատու-թյուններին:

Աստվածները խանդոտ ու նախանձոտ են մարդու և նրա գործունեության նկատմամբ. բավական է մարդկանցից մեկն անցնի Հաջողությունների կամ արարքների իր համար սահմանված չափը, որ աստվածները նրանից վրեժխնդիր լինեն, գրկեն ամեն ինչից, ընդհուպ մինչև կյանքից: Այս է Հերոդոտոսի հավատը՝ իր ժամանակակիցների հավատին համընթաց:

Բայր ժողովուրդների վրա, համոզված է պատմագիրը, իշխում են միևնույն աստվածները: Գրեթե բոլոր հունական աստվածներին նա գտնում է նաև այլ երկրներում, սակնք, Եգիպտոսում, ու Հաճախ նախապատվություն տալիս այդ երկրներին՝ այս կամ այն աստծու պաշտամունքը հույների կողմից նրանցից փոխ առած համարելով:

Մարդիկ, պատմական գործիչները, ըստ Հերոդոտոսի, ծագում են աստվածներից կամ առասպելական Հերոսներից: Պատմության շարժիչ ուժը, մեծ իրադարձությունների պատճառները մարդկանց կրքերն են՝ սերը և ատելությունը, վիրավորանքը և վրեժխնդրությունը: Արդարության և անարդարության մոտիվը ևս պատմական կարևոր գործոն է նրա աչքում: Բախտի, ճակատագրի գաղափարը, կանխաբանությունները իրականացման անխուսափելիությունը ծայրեիծայր տոգորում են նրա պատկերացումները պատմության ընթացքի մասին: Այս իմաստով Հերոդոտոսը շատ հեռու է իր կրոնից ժամանակակից թուրքիզիսից, որի ներդրումը համաշխարհային պատմագրության մեջ իր ժամանակի համար կամարերկայես գարմանակի՝ պատմական խնդիրներին խոր սեպիտատական մոտեցումն էր:

Ինչպես նշվեց արդեն տարբեր ժողովուրդների վրա իշխող աստվածների կապակցություններ, Հերոդոտոսը ամենևին հակված չէ գերադասելու Հունականը՝ ոչ հունականից, հակադրելու այն բարբարոսականին («բարբարոսը» նրա բերանում նշանակում է պարզապես «ոչ հույն») առանց որևէ քամահարկան երանգի), ինչպես այդ սովորական դարձավ հաջորդ դարաշրջանում՝ ստրկատիրության ծագմանը համընթաց (ստրուկները գերազանցապես բարբարոսական ծագում ունեին): Ընդհակառակն, համեմատելիս նա հաճախ նախապատվությունը (հնություն, իմաստություն, քաջություն, օրենքներ, բարքեր և այլ խնդիրներում) տալիս է արևելքի ժողովուրդներին՝ եգիպտացիներին, բաբելոնացիներին, պարսիկներին:

Հավասարապես և Հերոդոտոսին օտար են համահունական զգացումները: Հայրենասեր է արդյոք նա: Անշուշտ: Բայց նրա հայրենասիրությունը համահունական բնույթ է կրում երկու կարևոր պատճառով: Առաջին, որ հնում գոյություն չի ունեցել համահունական հայրենիք, այլ եղել են շուրջ երկու Հայրյուր պոլիսներ՝ քաղաք-պետություններ, որոնք էլ հանդես են եկել որպես համապատասխան քաղաքացիների հայրենիքներ: Բացի այդ, եղել են պոլիսների դաշնակցություններ, այս կամ այն աչքի ընկնող պոլիսի հեգեմոնիայի ներքո: Այս երևույթը որոշ երազագաղտում է տվել Հայրենասիրական զգացումներին, սակայն ոչ հաստատուն, ինչպես որ հեղհեղուկ էին նաև այդ դաշնակցությունները: Երկրորդ՝ դարի առաջին կեսի հունա-պարսկական պատերազմների պատմությունը Հերոդոտոսը շարադրել է ոչ թե պատերազմների ժամանակ, երբ համընդհանուր՝ Պարսկաստանի կողմից նվաճելու վտանգը այսպես թե այնպես միախորել էր քաղաք



- պետությունների մեծ մասի ջանքերը, այլ դարի վերջին երրորդում ծավալված ներհունական՝ պոստպոստիանյան պատերազմների նախօրյակին և, թիրևս սկզբնավորման պահերին: Իսկ այդ ժամանակն արմատապես տարբերվում էր նախորդից և բնութագրվում երկու հակամարտ ճամբարներում՝ Աթենականում և Լակոնականում (Սպարտայի) ընդգրկված քաղաք-պետությունների փոխադարձ ծայրահեղ ատելությունը, որն ավելի ուժղին էր և մահացու, քան նախորդ շրջանում պարսիկ նվաճողների դեմ առաջացած ատելությունը: Այժմ միջհունական թշնամությունը որոշ դեպքերում փոխարկվում էր նաև պարսկասիրության, որի աստան էր Հակասակոբը ճամբարի ուժերի դեմ Պարսկաստանից ակնկալվող օգնությունը:

Այս խնդրում Հերոդոտոսն ունեւր իր Հստակ կողմնորոշումը՝ նա Աթենքի ջատագով էր, Հեռեւարար՝ Հակասպարտայական: Սակայն այս ընդհանուր գրույթը կրթման - երբեմն տեղի է ապլիս առանձին բացառությունների առջև, Հանդամանք, որ Հիմնականում կապված էր Հերոդոտոսի կենսագրություն իրադարձությունների հետ:

Այսպես, նա մեծազույն սիրով էր լցված իր Հայրենի Հայրկանոսա քաղաքի նկատմամբ, առիթը էր կորցնում արտահայտելու այդ սերը: Մինչդեռ Հայրկանոսար իր բնակչության կազմով զորիական քաղաք էր, ինչպես Սպարտան, և ոչ Հոնիական, ինչպես Աթենքը: Ստորև կտեսնենք, որ Հայրկանոսասի նկատմամբ սերը որոշ վերապահությունների է Հանդեպում նույնիսկ Հերոդոտոսի Հակալիոնականության մեջ:

Ի դեպ, Պարսկաստանի նկատմամբ պատմագրի որոշակի թուլությունը նույնպես նրա Հայրկանոսացի լինելուց է գալիս: Այս քաղաքը պարսից թագավորի իշխանության տակ գտնված փոքրասիական հունական քաղաքներից էր: Հերոդոտոսը ծնվել ու մեծացել էր այդտեղ, ընտիացել ու Համակերպվել պարսկական տիրապետության միջավայրին, մերվել ու գուցե նույնիսկ կապվել այդ իրավիճակի հետ:

Այսպես, կարելի է նկատել, որ Հունա-պարսկական պատերազմներին որպես առիթ ծառայած՝ 499թ. փոքրասիական հունական (Հոնիական) քաղաքների՝ Միլետ քաղաքի ղեկավարությունը, պարսից տիրակալության դեմ բարձրացրած պատմաբանությունը Հերոդոտոսի Համակրանքին չի արժանանում. Հպատակները պիտի ճանաչեն իրենց տիրոջը: Պարսիկները, պարսից արքան պատմագրի աչքում թշնամի են դառնում լուկ այն պահից, երբ, այսպես ասած, չափն անցնում են, ձգտում իրենց օրինական տիրություններից՝ փոքրասիական հունական քաղաքներից գատ զավթել նաև ելլողական Հունաստանը:

Հերոդոտոսը որոշակիորեն Համակրում է նաև Սամոս կղզի - քաղաք - պետությունը, որտեղ նա երկար տարիներ է անցկացրել և շատ մերձավորներ ձեռք բերել: Պատմագիրն աշխատում է մեղմացնել կամ արդարացնել պատերազմի ժամանակ սամոսցիների թուլյ տված մեղքերը:

Առեղծվածային բնույթ է կրում Հերոդոտոսի անհատնում սերն ու Համակրանքը Դելփի քաղաքի ու նրա աշխարհահռչակ՝ Ապոլոնի տաճարի ու սրա գուշակի նկատմամբ, եթե Հաշվի առնենք սրանց թշնամական դիրքը Աթենքի Հանդեպ և անցած պատերազմների ընթացքում գրուերած պարսկասիրությունը: Երևում է՝ այստեղ ևս նրա կենսական կապերը շատ զորեղ են գտնվել:

Սակայն ամենաուժեղ ու նվիրական զգացումները Հերոդոտոսին կապում են, անշուշտ, Աթենքի հետ: Աթենքում Հերոդոտոսը շփվել է խոշորագույն բարձրակարգ գրծիչ Պերիկլեսի ու նրա շրջապատի հետ, որն ընդգրկում էր Հունական դասական մշակույթի ծաղկման այդ ժամանակի խոշորագույն Հանճարեղ ներկայացուցիչներին՝ Ֆիդիաս, Սոփոկլես, փիլիսոփա Անաքսագորաս և ուրիշներ: Հերոդոտոսը, Համանաբար, եղել է այդ «Պերիկլեսյան խմբի» անդամ: Համենայն դեպս, նա իր «Պատմությունում» աթենական «ուկերարի» անբաժան մասն է կադմում: Նա Հանդես է գալիս որպես Աթենքի ու նրա կազմած ճամբարի ջատագով, Աթենքը Հայտարարում Հունաստանի փրկիչ: Պելոպոնեսյան պատերազմների նախօրեին, քաղաքական մթնոլորտի շփացման պայմաններում, Հերոդոտոսը գրկ է. «Այժմ ես ստիպված եմ բացահայտ ասել իմ կարծիքը, որը շատերին տհաճ կարող է լինել: Եթե աթենացիները, սարսափելով վերահաս փոսնդից, լքեն իրենց քաղաքը (ի դեպ, այդ էր Հորդորում կատարել դերիյան գուշակը՝ Գ.Ս.) կամ Հանճմովին Քսերքսեսին, Հելլադան կՀպատակվեր պարսիկներին: Ուտի և եթե մարդ սաի, թե աթենացիները եղան Հելլադայի փրկիչները, ճամբարության դեմ մեղանչած չի լինի: Երբ նրանք նախընտրեցին Հելլադայի պագաությունը, ապա դեռևս պարսիկների կողմը չանցած բոլոր Հելլենների մեջ նրանք դիմադրելու արիություն արթնացրին և աստվածների օգնությունը ետ քշեցին արքային» (VII, 139):

Քաղաքական գրդապատճառներից ծնված Հակակրանքը Հերոդոտոսի մոտ արտահայտվում է առաջին Հերթին Աթենքի երկու երդվյալ թշնամիների նկատմամբ, այն է՝ Կորնթոսի, որ աթենացիները Համար բախտորոշ դեր խաղացող ծովային առևտրի բնագավառում նրանց ամենահզոր ախոյանն էր, և Ատտիկայի անմիջական հարևան Թեբի, որն անընդհատ ասպատակություններով Հուուց ի վեր ավարի ու ավերի է ենթարկել Աթենքը:

Գալով Աթենքի Հիմնական քաղաքական ախոյան Սպարտային (Լակեդեմոն, Լակոնիկա), Հերոդոտոսի կողմից սպասվելիք թշնամական անվերապահ դիրքորոշման մեջ որոշ երկվություն է նկատվում: Մի կողմից նա պարսավանքի է ենթարկում սպարտացիներին՝ նրանց ժամանակակից գրծերը, մյուս կողմից Հարդանք է ցուցաբերում նրանց անցյալի, օրենքների ու բարքերի նկատմամբ և, իհարկե, անվերապահորեն բարձր է գնահատում Սպարտայի արքա Լեոնիդասի և 300 սպարտացիների սխրանքը Թերմոպյուլյան կիրճում:

Հերոդոտոսի քաղաքական այս կողմնորոշումների մեջ իր դերն ունի, անշուշտ, նաև Համապատասխան պոլիսները Հասարակարգի խնդրը: Դժվար է պատմագրին վերադրել Հուլյների Հայտնի քաղաքական կառավարման երեք ձևերից (դեմոկրատիա, օլիգարխիա, միապետություն) որևէ մեկի ջատագովի դերը: Նա, այո՞, դեմ է բունատիրությունը (տիրանիա), բայց օրինական, ավանդական իշխանության ձևերը նա Հարդում է: Նա ներկայացնում է երեք պարսիկ գրծիչներին՝ Դարեհի, Օտանեսի և Մեգարթիսի վեճը, որում առաջինը պաշտպանում է միապետության գաղափարը, մյուս երկուսը՝ Համապատասխանարքայի դեմոկրատիայի և օլիգարխիայի սկզբունքները: Իհարկե, վեճի միջավայրը շինծու է, արտահայտվում են զուտ հունական տեսակետներ: Սակայն կարևորն այդ չէ, այլ այն, որ թեև վերջում Օտանեսը (դեմոկրատիայի պաշտպանը) Համարվում է պարտված, բայց ընթերցողն այդ կարակցությունը չի Հանգում, երեքի կողմից



էլ զորեղ փաստարկներ են բերվում, և մնում է մտածել, որ Հերոդոտոսը լավ է համարում այն վարչակարգը, որն ավելի ավանդական է ու սովորական ավյալ երկրի համար: Աթենքի համար դա, անշուշտ, դեմոկրատիան է և, որպես աթենասեր, Հերոդոտոսն իր մի շարք ասույթներում հսկվում է չափավոր դեմոկրատիայի կողմը, պաշտպանելով իրավահավասարության սկզբունքը, ազատության գաղափարը և այլն:

5. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԵՎԸ

Հերոդոտոսից պահպանվել է միայն մեկ ստեղծագործություն՝ «Պատմություններ»: Սույ հասած տեքստը բաղկացած է ինը գրքից, որոնք վերնագրված են ինը մուսանների անուններով, սկսած պատմության մուսա Կլիոյից: Այս բաժանումը և անվանումները, սակայն, հեղինակինը չեն, այլ իրականացված են հետագայում, Ալեքսանդրիայի դիոնականների կողմից: Թեև ի՞նչ է եղել Հերոդոտոսի տված բաժանումը՝ մեզ հայտնի չէ: Պետք է ենթադրել, սակայն, որ բաժանումը եղել է և երկի ենթաբաժինները կոչվել են նույն բառով, որով հեղինակն անվանում է իր ողջ գործը՝ «լուսա» («բան», «խոսք»): Այսպես, նա հիշատակում է իր Եգիպտական լուսոր (այսինքն՝ «Պատմություն» Եգիպտոսի նկարագրությունը նվիրված հատվածը), Ատրիստանյան լուսոր (որ մեզ չի հասել) և այլն:

«Պատմություն» հիմնական բովանդակությունը, ինչպես արդեն նշվել է, մ.թ.ա. V դարի առաջին կեսի հունա-պարսկական պատերազմների նկարագրությունն է, սակայն դրան նախորդում է մի սովոր, գործի կեսը զբաղեցնող, ներածական մաս (I - IV գրքերն ամբողջությամբ և V գրքի 1-29 պարագրաֆները), որտեղ հեղինակը կուսակալ է հսկայական նյութ տարբեր երկրների ու ժողովուրդների պատմության, աշխարհագրության ու ազգագրական նկարագրի վերաբերյալ:

Այս տարաբնույթ նյութը միավորվում է հունապարսկական պատերազմների պատմական հիմքերն ու պատճառները պարզաբանելուն հատկացված մի հենքով: Այդ հենքը հետո է օրյեկտիվ հիմքերի ու պատճառների բացահայտումից, և ինչպես վերը նշվեց, հյուսված է մարդկային կրքերի, մեղքի ու վրեժխնդրության, ճակատագրի անխոտտիելության և այլ նմանօրինակ մտավիճակներից: Բայց այն էլ ի հայտ է գալիս բավականաչափ հազվադեպ ու ներկայանում որպես նախապես հավաքված հարուստ, բայց խայտաբղետ նյութի՝ հեղինակի կողմից կազմակերպման, միավորման մի փորձ, որը, սակայն, այդպես էլ չի հանգեցրել նյութի այդ բազմազանության մեջ իրական օրգանական կապ կամ ամբողջություն ստեղծելուն:

Ներածական մասի բովանդակությունը հետևյալն է: Սկզբնական մի քանի պարագրաֆներ, որոնցում շարադրված է Հերոդոտոսի նպատակը, հաջորդում է Լիդիա երկրին նվիրված լուսոր, II գրքը գրեթե ամբողջությամբ կազմում է Եգիպտոսի լուսորը, III գրքում շարադրված է Սամոս կղզու պատմությունը, IV գրքը նվիրված է սկյութական լուսորին, այստեղ են նաև Կիրենայի լուսորը և Լիբիայի լուսոր: V գրքի սկզբնական երեք տասնյակ պարունակում են Թրակիայի լուսորը: Պարսկաստանի լուսորն ավելի ծավալուն է. սկսվելով I գրքից՝ այն շարունակվում

է մինչև ներածական մասի վերջը, ընդմիջվելով թվարկված լուսորներով: Այն տարածվում է, այնուհետև, ըստ հույների, մինչև VII դարը ներառյալ:

«Պատմություն» երկրորդ, հիմնական, հունա-պարսկական պատերազմների պատմությունն անող մասն սկսվում է V գրքի 30-րդ պարագրաֆից և շարունակվում մինչև աշխատության վերջը՝ IX գրքի 122-րդ պարագրաֆը: Այստեղ շարադրանքը անհամեմատ ավելի սլացիկ ու հետևողական է և քայլ առ քայլ նկարագրում է պատերազմական գործողություններն ու նրանց հետ կապված իրադարձությունները: Այստեղ ևս կան մի քանի, Սպարտայի և Աթենքի պատմությունը նվիրված, շեղումներ, բայց դրանք քիչ են և կարճատև, համեմատած ներածական մասի լուսորների հետ:

Հերոդոտոսի «Պատմությունը», ամենայն հավանականությամբ, անավարտ է մնացել: Վերջին նախադասություններն ամենևին նման չեն այսպիսի մի երկրի եղրափակմանը: Մահ է, հավանաբար, որ ընդհատել է պատմահոր աշխատանքը:

Հերոդոտոսի «Պատմությունը» շատ հեռու է միապաղաղ շարադրվածից: Այն, այսպես ասած, բազմաոճ է, նույնիսկ՝ բազմաժանր: Պատմական իրադարձությունների չոր ու հակառակ նկարագրությունների կողքին այստեղ հանդիպում ենք գեղարվեստական փայլուն ոճով գրված նովելների՝ հյուսված այլևայլ պատմական անձնավորությունների շուրջը, հրաշապատումների, տարբեր ժողովուրդների բարքերի ու սովորույթների հյուսված նկարագրությունների, աշխարհագրական գեոլոգիայի: Իրար հաջորդում են նկարագրական, պատմողական և խոսակցական ոճերը:

Հերոդոտոսի լեզուն հունարենի հոնիական բարբառն է, որն այդ ժամանակները տարածում էր գտել որպես զբաղված լեզու: Եվ «Պատմությունն» ինքը կարող է համարվել հունական գեղարվեստական արձակի առաջին խոշոր կտավը:

Արդեն անցյալ դարից սկսած, հետազոտողները զուգահեռներ են անցկացնում Հերոդոտոսի պատմողական ոճի և հունական դասական քանդակագործության միջև: Դիտվել են, օրինակ, այնպիսի նմանություններ, ինչպես աստվածների քանդակները V դարում ներկայացվում էին նախորդ չրքանի արխայիկ, ստատիկ ձևերով, մինչդեռ կենդանիները, մարդիկ, առավելապես երիտասարդները՝ չարժուն ու կենսական, կենդանի ձևերով, այդպես էլ Հերոդոտոսի մոտ աստվածներն ու Հին ժամանակների հերոսները մոտմոտանալով ու ծանրաշարժ են, իսկ իր ժամանակի գործող անձինք՝ եռանդուն ու ճկուն:

Վերջին տասնամյակներում նմանություններ են հայտնաբերվել Հերոդոտոսի՝ իրադարձությունների որևէ ցիկլի շարադրանքի և հունական սաճարների եռանկյունի ճակտոններին քանդակված տեսարանների միջև: Երկու դեպքում էլ կենտրոնը զբաղեցնում է հիմնական իրադարձությունը կամ կերպարանքը, իսկ նրանից հետո ու առաջ, իսկ ճակտոններին՝ աջ և ձախ, դասավորված են նվազող ծավալներով կամ բարձրություններով երկրորդական, երրորդական իրադարձություններն ու կերպարանքները: Արդյոք գիտակցված է եղել Հերոդոտոսի կողմից նման կոմպոզիցիան, թե՞ այն ինքնաբերաբար է առաջացել նրա մոտ՝ իշխող ճաշակների, նորմերի ու մտայնության արժեքային հարթության ներքո՝ զժվար է ասել:

Բոլոր դեպքերում Հերոդոտոսի երկի գեղարվեստական արժեքությունը ընթերցողի վրա, ինչպես հնում, այնպես էլ այսօր, շատ խորն է:



6. ՀԵՐՈՂՈՏՈՍԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԳԻՐ

Հերոդոտոսն, անշուշտ, առաջնակարգ գրող է, սակայն նրա «Պատմություն» մասին խոսելիս առաջին Հերթին պետք է անդրադառնալ գրքի պատմագրական արժեքին, որ բառացիորեն անդերազնահատուկ է: Պետք է տարբերել այդ արժեքի երկու կողմը: Մեկը պատմագրի հագորդած հսկայածավալ ու կարեորագույն նյութն է՝ Հին աշխարհի երկրների ու ժողովուրդների մասին, մյուսը՝ նրա «Պատմություն» դերը որպես համաշխարհային պատմագրություն ու պատմագիտության ակունքի, որի համար նա կոչվել է «Պատմահայր»: Հերոդոտոսն այդ գիտությունն սկզբունքների, այն է՝ պատմական աղբյուրների տվյալների պատշի ընդգրկման, համադրման ու սինթեզման հիմնադիրն ու մշակողը, պատմական պրոցեսի պատճառային-հետևանքային հաջորդակցության հայտնաբերողն ու ցուցաբերողն է, թող որ այդ պրոցեսի շարժիչ ուժը ներկայանում է նրա մոտ մարդկային կրքերի ու ճակատագրի քամահուրերի տեսքով: Հետագա պատմագրությունը կարճատև այդ կողմը, նախապես, սակայն, որդեգրելով սկզբունքները:

Նմանապես նա հիմնադիրն է պատմական աշխարհագրության ու ազգագրության, որոնց ծիլերը, ծագելով նրա «Պատմությունից», հետագայում ծաղկեցին ու վերածնեցին առանձին, թեև օժանդակ, պատմական գիտությունների:

Հերոդոտոսը սանդղակ է մի գործ, որին լիովին պատշաճում է նրա կրասեր ժամանակակից, նրբակից շատ տարբեր, բայց նույնքան հանճարեղ պատմագիր Թուկիդիդեսի «Հավերժություն պատույթ» - որակումը, որը Թուկիդիդեսը կիրառել է իր սեփական գործի նկատմամբ, այն էլ ի հակադրումն Հերոդոտոսի «Պատմություն»: Իրար ժամանակակից գործիչները կարող են թերազնահատել միմյանց, սա հաճախակի հանդիպող երևույթ է, բայց երկու և կես հազարամյակի հեռուներից դիտելով՝ երկուսի գործերն էլ արժանի են երևում այդ պարտավորեցնող բնութագրմանը, իսկ Հերոդոտոսի երկը ներկայանում է նաև որպես մարդկային քաղաքակրթության իրական հիմնաքարերից մեկը:

7. ՀԵՐՈՂՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հերոդոտոսի «Պատմությունը» տեղեկություններ է պահպանել նաև Հին Հայաստանի և Հայերի մասին, որոնք թեև մեծաքանակ չեն, բայց հույժ կարևոր են: Այդ տեղեկությունների առանձնակի արժեքն այն է, որ դրանք հունական պատմագրության էջերից մեզ հասած հնագույն տեղեկություններն են մեր երկրի մասին, և որ դրանք պահպանվել են ոչ թե մի այլ պատմիչի, այլ պատմահայր Հերոդոտոսի երկում:

Հետազոտողներն ամենից ավելի ուշադրություն են նվիրել Հայերի մասին Հերոդոտոսի այն հաղորդմանը (V, 73), ըստ որի նրանք «փոյուզակա կերպահանքներ» են (Φρυγῶν ἄποικοι), որից կարելի էր բխեցնել, իբր Հայերը ծագում են փոյուզիացիներից: Գիտության այսօրվա տվյալները այսօրիսի կերակարգությունը չեն արդարացնում, այսինքն՝ պարզ է, որ Հայերը երբեք

փոյուզիացիները մասը չեն կազմել: Մյուս կողմից, Հերոդոտոսի այս ցուցումը վաղուց ի վեր կենարոնացրել է հետազոտողները ուշադրությունը հայոց լիզվի և փոյուզիացիներից պահպանված տարբերի համադրման վրա, որը և բերել է այն կարծիքի, որ երկու այդ լեզուներն ազգակից են և թրակերների հետ կապվել են հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղերից մեկը՝ թրակափոյուզահայկական ճյուղը: Այս եզրակացությունը կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի կազմավորման պրոբլեմի լուծման գործում: Ի դեպ, Հերոդոտոսի սույն ցուցումը այս կամ այն բնույթի իր գուգահեռներն ունի նաև ուրիշ հույն հեղինակների գործերում:

Պատմահայր մնացած հաղորդումները կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից մեկը վերաբերում է Հայաստանի տարածքին, նրա սահմանների բնութագրմանը, իսկ երկրորդը որոշ պատկերացում է տալիս երկրի կյանքի մասին: Դիտարկենք նախ երկրորդ խմբի տվյալները:

Հերոդոտոսի ամենածավալուն հաղորդումը Հայաստանի մասին վերաբերում է բաբելոնացի առևտրականների ճանապարհորդություններին մեր երկիրը (I, 194): Պատմագիրը սրակում է այդ տեղեկությունը որպես Բաբելոնում իր լածներից ամենագրամանավուն: Առևտրականները, պատմում է նա, Հայաստանում ուղևոր ճյուղեր են կտրում, նավերի կմախքներ կառուցում և պատում դրանք մորթիներով: Նավերը կտրած և են, վահանի տեսքով, տարբեր չափերի, մինչև 160 տոննա (5000 տաղանդ) տարողություն ունեցող: Հասակին հարը լցնելով ու բառնալով գլխավորապես փյունիկյան սափորների (կարելի է հասկանալ նաև՝ կարմիր սափորների) մեջ լցրած վիտոլ, նրանք վարում են նավերը դեպի (Եփրատի, որի ակունքները, ըստ Հերոդոտոսի մի այլ հաղորդման, գտնվում են Հայաստանում) հոսանքն ի վրա: Յուրաքանչյուր նավի վրա լինում է մեկ կամ մի քանի ավանակ: Բաբելոնում տարանքը, ճյուղերն ու հարը վաճառելուց հետո մորթիները բառնում են այդ ավանակներին և վերադառնում Հայաստան (հոսանքն ի վեր նավարկելն անհնարին էր), որտեղ կրկին նավեր են սարքում և նորից բեռնավորված դնում Բաբելոն:

Հերոդոտոսը եղել է Բաբելոնում, նրա պատմածը կասկածի ենթակա չէ: Առաջին եզրակացությունը, որ կարելի է հանել այս հաղորդումից, այն է, որ Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Պատմագիրը հիշատակում է միայն բաբելոնացի առևտրականներին, բայց դրանով ամենևին չի բացառվում հայ առևտրականների կողմից այդ ուղիներն օգտագործելու հանգամանքը: Ընդամին երթևեկությունը կատարվել է ոչ միայն գետի հոսանքով, այլև ցամաքով, ավանակների քարավաններով: Նավերի կառուցման համար օգտագործվող նյութեր, եթե բառացիորեն հասկանանք պատմագրին, ամբողջությամբ հայթայթվել է Հայաստանում և՛ ուղևոր ճյուղերը, և՛ մորթիները, և՛ հարը: Այստեղ են ձեռք բերվել նաև ավանակները: Որպես առևտրի հիմնական առարկա (ցավոք ոչ հիմնականների մասին նա լուր է)՝ Հերոդոտոսը հիշատակում է գինին: Որոշ տարակուսանքի տեղ է տալիս «փյունիկյան» սափորների հիշատակումը, բայց հավանաբար խոսքն այստեղ կամ «փյունիկյան» ձև ունեցող սնդիկների, կամ պարզապես կարմիր սափորների մասին է, որոնք ևս արտադրվում էին Հայաստանում: Գրատի ծանրաբեռնումը կավանդությունով իրեն չէր արդարացնի:



Հայաստանից արտահանվող բոլոր ապրանքների՝ տեղում արտադրվելու մասին մենք, Հերոդոտոսի այս ցուցումներից բացի, ունենք նաև այլ վկայություններ, թե՛ գրավոր աղբյուրների և թե՛ իրերի, հնագիտական նյութերի: Այսպես, Հերոդոտոսի ճանապարհորդություններից կես դար հետո Հույն պատմագիր Քսենոփոնը, որն անցել է Հայաստանով մ. թ. ա. 401- 400 թթ., իր «Անաբասիսում» խոսում է Հայկական գինիների, նրանց մի քանի տեսակների գոյության ու բարձր որակի մասին: Պաշտոնավի են Հնագույն ժամանակներից բազմատեսակ ու բազմանպատակ խեցանոթների Հազարավոր նմուշներ, որոնք վկայում են զարգացած խեցեգործության մասին:

Քսենոփոնի, նրանից հետո՝ Ստրաբոնի երկերում, իսկ նրանցից շատ առաջ՝ ստրեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրություններում Հարուստ ավայրներ են պահպանվել Հայաստանում ձիաբուծություն և տեղական ձիերի բարձր որակի ու համարման մասին: Այդ ավայրները հաստատվում են պեղածո նյութերով, ըստ որում վերջիններս վկայում են նաև ավանակների օգտագործման մասին: Ինչ վերաբերում է բաբելոնացի առևտրականների օգտագործած մորթուն (պատմագիրը չի մասնավորեցնում, մա՞նր, թե՞ խոշոր եղջերավոր անասուններից էր դա ստացվում), ապա Հերոդոտոսը մի այլ կապակցությամբ (V, 49) հիշատակում է, որ Հայերը «ստատո հոտեր ունեն», մի բան, որ նույնպես հաստատված է այլ գրավոր աղբյուրներով, ինչպես և Հնագիտական նյութերով:

Որ Հայաստանի միջով իրքը անցել են առևտրական բանակ ճանապարհներ, կրկին հաստատում է Հերոդոտոսը՝ Փոքր Ասիայից Պարսկաստան տանող հռչակավոր «Քաղաքավարական ճանապարհը» նկարագրելիս (V, 52): Այդ ճանապարհն ունեցել է վարչական, ռազմական ու առևտրական մեծ նշանակություն: Այն հիմնականում արաՀաստակված էր, և նրա ամբողջ երկայնքով ձգվում էին օթևանկայանները՝ կառուցված ճանապարհորդների հանգստյան և ճանապարհի անվտանգության համար: Այդ ճանապարհի մի խոշոր հատվածը՝ շուրջ 340 կմ (ըստ Հերոդոտոսի՝ 56, 5 փարսախ. փարսախը Հավասար է մոտավորապես 6 կմ, այն է՝ մեկ ժամվա ճանապարհ), որի վրա կառուցված էր 15 օթևանկայան, ըստ Հերոդոտոսի, անցել է Հայաստանի տարածքով: Այն ձգվում էր արևմուտքից արևելք՝ Հայաստանի Հարավային գոտում, Եփրատի արևմտյան կեռմանի դետանցից սկսած և շարունակվելով Տիգրիսի վերին հոսանքի երկայնությամբ: Բնականաբար, այն մեծ դեր է խաղացել Հայաստանի անտեսական կյանքում: Իզուր է՛, որ նրա հենց այդ հատվածին Հարող Հարավարևմտյան շրջաններն էին, մասնավորապես Մոփղը, որ մյուս շրջանների հետ համեմատած՝ անտեսապես առավել զարգացած վիճակում թևակոխեցին հաջորդ՝ հելլենիստական ժամանակաշրջանը:

Վերը քննարկված վկայությունը՝ Եփրատի վրայով առևտրական երթևեկության մասին, մի այլ հարց էլ է հարուցում, եթե Հայաստանից Բաբելոն գինի էր արտահանվում, ապա ի՞նչ ապրանքներ էին ներմուծվում Բաբելոնից Հայաստան: Չէ՞ որ առևտրականները չէին կարող դատարկածուն երթևեկել: Բաբելոն, իհարկե, շատ ապրանքներ էր արտադրում՝ արծաթ, ձեթ, Հացաստարի, գործվածքեղեն և այլն: Սրանց մասին Հերոդոտոսը լուռ է, բայց կարելի է ենթադրել, որ մորթիների հետ մեկտեղ ավանակների քարավանները բեռնված էին նաև այլ ապրանքներով: Սակայն առևտրականների՝ Հայաստանից ներմուծվող

ապրանքների այնտեղ տարվող հիմնական համարժեքը, հաշվի առնելով գրաստների ծանրաբեռնվածությունը մորթիներով, պետք է որ արժամթիվ լիներ:

Այդ եզրակացությունն է հանգեցնում Հերոդոտոսի մի այլ հարցում: Պարսկական տերություն 20 ստորաբաժանումները՝ սատրապությունները, թվարկելիս նա նշում է յուրաքանչյուրից արքային տրվող հարկի քանակը՝ արծաթի տաղանդներով (տաղանդը Հավասար է մոտավորապես 30 կգ): Ահա, Հայաստանի մասին կարդում ենք (III, 93). «Պակտյունիներից, արմեններից և հարևան երկրներից՝ մինչև Եփեսոսյան Պոնտոսը (Սև ծովը - Գ. Ս.) ստացվում էր 400 տաղանդ: Սա տասներեքերորդ շրջանն է»: Տարեկան շուրջ 12 տոննա արծաթի հսկայական գումար է, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ նրա ծանրությունը ընկնում էր ոչ միայն Հայերի վրա, այլև հարևան որոշ երկրների, որովհետև սրանց մեջ թվով, տարածքով և կարողությամբ, ինչպես երևում է նույն Հերոդոտոսի այլ հաղորդումներից, գերակշռում էին Հայերը: Պետք է հաշվի առնել նաև, որ Հայերի մի այլ, արևելյան հատվածը, ինչպես կուսանենք, երկու այլ ժողովուրդների հետ կազմելով տերություն XVIII սատրապությունը, վճարում էր արքային ևս 200 տաղանդ (վեց տոննա) արծաթ: Այդ ամբողջ արծաթը, վճարվելու համար, պետք է առկա լիներ, և դրա աղբյուրներից մեկն էր, ահա, Բաբելոնի հետ Հայաստանի միջազգային առևտուրն էր:

Հանրագումարի բերելով Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին ավայրների այս խումբը, տեսնում ենք, որ Հայաստանը ներկայանում է որպես Հարուստ, զարգացած դյուղատնտեսություն, առևտրական արտաքին կապեր ու ապրանքային տնտեսության որոշակի մակարդակ ունեցող երկիր: Նախորդ, ուրարտական շրջանի զարգացումն, ուրեմն, տվել էր իր դրական ու կայուն արդյունքները: Մարապտրական տիրապետությունը ևս, որի տակ ընկավ Հայաստանը մ.թ.ա. VI դարում, չէր արգելակել նրա առաջընթացը, դուցի նույնիսկ որոշ իմաստով (միջազգային կապերի ամրապնդման և այլն), խթանել էր նրա որոշ կողմերը: Հայկական Հասարակությունը, որ միավորում էր արդեն կազմավորված ժողովրդին, բուռն զարգացում էր ապրում դասակարգա-առաջացման, սոցիալական բեռնացման, ստրկատիրական հասարակարգի վերընթաց շարժման ուղղությամբ, երևույթներ, որոնք հաջորդ՝ հելլենիստական դարաշրջանում պետք է հանգեցնեին հայկական պետության հզոր վերելքին, նրա միջազգային նշանակության աննախընթաց աճին ու նրա շուրջը մեծ տերության առաջացմանը:

Այժմ դիտարկենք Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին հաղորդած տեղեկությունների մի այլ՝ տարածքային կողմը: Ինչպե՞ս է որոշում պատմահայրը Հայաստանի սահմանները մ.թ.ա. V դարի առաջին կեսի դրությամբ: Մանրամասն թվարկելով Փոքր Ասիայի կենտրոնական մասում գտնվող Հայիս գետի հոսանքին հարող երկրները, նա նշում է, որ այդ գետն իր ակունքն ունի Հայկական լեռներում: Հայիսի ակունքների տեղանքը գտնվում է հետագայի Փոքր Հայքի տարածքում: Հետագայի, որովհետև Հերոդոտոսն ակնհերևաբար Փոքր Հայքի մասին տեղեկություն հունի: Այդ տարածքը նրա ոչատիերացմամբ բուն Հայաստանի մեջ է մտնում: Սա շատ կարևոր է Փոքր Հայք և Մեծ Հայք հասկացությունների ստացման ժամանակը ճշտելու համար: Փոքր Հայքին անձանթ է, ըստ երևույթին, նաև Քսենոփոնը մ.թ.ա. V և IV դդ. սահմանադրված: Հնագույն տեղեկություններն այդ երկրամասի վերաբերյալ պատկանում են Պոլիբիոսին (մ.թ.ա. II դ.), որը



հիշատակում է Փոքր Հայքը՝ Միհրդատ սատրապի իշխանության ներքո և հավաղրում այն «Հայաստանի մեծ մասին», որի տիրակալն էր Արտաշեսը (Արտաշես I-ը): Այլիլի ուշ շրջանի հեղինակները՝ Ստրաբոնը, Ռուփոսը, Փոքր Հայքի գոյությունը հասցնում են մինչև մ.թ.ա. III և IV դդ.<sup>1</sup> ընդհուպ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակը, հրե ըստ Ռուփոսի, Փոքր և Մեծ Հայքերի ոսպմանը հասնելը Դարեհ III -ի գործերի կազմում կալվում էին Գավգամելայի ճակատամարտում (331 թ. մ.թ.ա.) Ալեքսանդր Մակեդոնացու դեմ: Փոքր Հայքի անջատումն ու Մեծ և Փոքր Հայքերի առաջացումն, ուրեմն, հավանաբար, պետք է թվադրել մ.թ.ա. IV դարի առաջին կեսով: Մինչ այդ, Հերոդոտոսի ժամանակ, դրանք միավորված են եղել մեկ՝ Հայաստան (Արմենիա) երկրի մեջ, որի հյուսիսարևմտյան սահմաններն, ահա, ընդգրկել են Հայկիսի ակունքները:

Հաջորդ երկու հաղորդումները պատկերացում են տալիս Հայաստանի հարավարևմտյան, հարավային ու հարավարևելյան եզրերի մասին: Դրանք (V, 49 և V, 52) գրեթե իրար կրկնում ու հաստատում են, բայց երկրորդը (V, 52) ավելի մանրամասն է: Այստեղ որպես Հայաստանի արևմտյան հարևան նշված է Կիլիկիան (որն այն ժամանակ ավելի լայնատարած էր, քան հետագայում, և ձգվում էր դեպի հյուսիս), և երկու երկրների սահման է համարվում «նավարկելի Եփրատ գետը»: Ետո հասակ ցուցում է: Հտրավային սահմանը պատմագիրն առնչում է Տիգրիս գետի վերին հոսանքի հետ, որն այդ հատվածում ձգվում է արևմուտքից արևելք, իսկ Հայաստանի հարավարևելյան հարևան համարում է Մատինների երկիրը, որը զբաղեցնում էր Ուրմիա լճի ավազանը: Բացի այդ, Հերոդոտոսն այդ տեղերով անցնող «Թագավորական ճանապարհի» նկարագրության կապակցությամբ նշում է Հայաստանի տարածքի ճշգրիտ երկարությունը՝ Եփրատի գետանցից մինչև Մատինների սահմանը՝ փարսախներով: Ինչպես սովից, այդ տարածությունը հավասար է շուրջ 340 կմ (56,5 փարսախ): Տեղադրելով այն քարտեզի վրա՝ պարզում ենք, որ Հայաստանի և Մատինների երկրի սահմանագրված, ըստ Հերոդոտոսի, գտնվել է Վանա լճից դեպի հարավ ընկած՝ Տիգրիսի վտակ Բոհատոսի վրա, այն գետի, որը Կենտրոնիս անվան տակ որպես Հայաստանի հարավային սահման (Կարդուխների երկրի հետ) նշում է նաև Քսենոփոնն իր «Անաբասիսում»<sup>1</sup>:

Այսպիսով, Հայաստանի արևմտյան ու հարավային սահմանները, ինչպես պատկերացնում էր Հերոդոտոսը, բավականաչափ հստակ են գծագրվում: Նույնը չի կարելի ասել արևելյան և հյուսիսային սահմանների մասին: Պատմագիրն այս կապակցությամբ ուղղակի ցուցումներ չունի, մնում է դիմել նրա կողմնակի տվյալներին: Դրանք գտնում ենք Արեմնյան տերության XVIII սատրապության նրա տված ընտելավորման մեջ, որին մասամբ արդեն ծանոթացել ենք: Այստեղ (V, 94) կարդում ենք, որ «Մատինների, սասպելյների և ալարոզների համար սահմանված էր 200 տաղանդ հարկ: Սա սասնուլիերորդ շրջանն է»: Ինչպե՞ս են

<sup>1</sup> Ցավոք, Հերոդոտոսի այս կարևորագույն հաղորդման (V, 20) վերջին հատվածը անաղարտ չի պահպանվել: Այստեղ նրա հիշատակած «երկու նույնանուն գետերի» անունը մեզ հասած բնագրում բացակայում է: Հետազոտողներն այն փրակակցում են «Ջարատ», որպես երկու գետեր նկատի ունենալով Մեծ Զավր և Փոքր Զավր: Առև Հերոդոտոսի, դրանցից առաջինի ակունքը գտնվում է Հայաստանում: Հնարավոր է, սակայն, որ խոսքն այստեղ իրականում Բոհատոսու-Կենտրոնիսի ակունքներին է վերաբերում:

տեղադրվում քարտեզի վրա այդ ժողովուրդների զբաղեցրած տարածքները: Մատինների, ինչպես ասվեց, ընակվում էին Ուրմիա լճի ավազանում, սասպելյները՝ ըստ երևույթի, քարթվելալեզու ցեղեր՝ Սև ծովի հարավարևելյան անկյունի միթակայքում՝ Ճորոխի ավազանում: Ալարոզներն, ուրեմն, պետք է ապրելիս լինեին զբանց արանքում՝ Վանա լճի արևելքում և Արաքսի հովտում: Ալարոզներ կոչվող ցեղերի մասին գոյություն ունի ընդամենը երկու վկայություն, երկուսն էլ պատկանում են Հերոդոտոսին: Մեկը խնդրո առարկա վկայությունն է, մյուսին կանդրադառնանք ստորև: Գիտություն մեջ ալարոզ ցեղանվանը տրվել է միայն մեկ մեկնաբանություն: Նրանք նույնացվել են ուրարտացիների հետ. համընկնում են թե՛ նրանց անվանումը, թե՛ գրաված տարածքը:

Այս տվյալներով որոշվում են Հերոդոտոսի պատկերացումները Հայաստանի, միաժամանակ նաև XIII սատրապության արևելյան ու հյուսիսային սահմանների մասին. դրանք կազմում էին մի գիծ, որ ձգվում էր Վանա լճի մերձակայքից դեպի հյուսիս-արևմուտք՝ Սև ծովի հարավարևելյան անկյունը: Նույն գիծը կազմում էր XVIII սատրապության հարավարևմտյան սահմանը: Այդ սատրապությունը պետք է որ նշված գծի վրա հեցած եռանկյունու տեսք ունենար, որի երրորդ անկյունը տեղադրվում էր Կուրի միջին հոսանքի հովտի ինչ-որ մի կետում:

Գիտություն մեջ բավական արմատավորված է այն կարծիքը, թե XVIII սատրապությունը ևս ունեցել է հայ ընակչություն, գուցե նույնիսկ գերակշիռ չափով: Որտեղի՞ց է ծագում այդ կարծիքը, եթե XVIII սատրապությունը հիշատակում է միայն Հերոդոտոսը և հիշատակում է ընակչության այն կազմով, որ նշեցինք վերը, այսինքն՝ առանց հայերի: Բանն այն է, որ Արեմնյան թագավորների եռալեզու արձանագրություններում, սկսած Դարեհ I -ի հայտնի Բեհիստունյան արձանագրությունից, տերությունը կազմող երկրամաս-սատրապությունների թվում հիշատակվում է պարսկական տարբերակում Արմինա (Արմենիա), իսկ բաբելոնյան (սկիզբներին) տարբերակում՝ Ուրաշուտ<sup>2</sup> (Ուրարտու) կոչվող երկիրը, որի տարածքը ընկնում է, ըստ Բեհիստունյան արձանագրության, Մաղա (Մոլդա, Մարաստան) և Կատպատոկա (Կատպոլիկա) երկրների միջև, այսինքն՝ լիովին համապատասխանում է Ուրարտու պետության տարածքին, որն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը, այն է՝ Հերոդոտոսի հիշատակած XIII և XVIII սատրապությունները, կամ դրանց գերակշռող մասերը:

Այսպիսով, Հերոդոտոսի տվյալները, որոնք XVIII սատրապության մեջ հայերին չեն հիշատակում, որոշակի հակասություն մեջ են ավելի վաղ շրջանի իրավիճակն արտահայտող Բեհիստունյան արձանագրության տվյալների հետ: Մեզ, սակայն, այդ հակասությունը սոսկ թվացող է երևում և, որոշակի մեկնաբանություն ստանալով, կարող է վերանայ: Ինչպե՞ս լուծման բանալին, մեր կարծիքով, թաքնված է Հերոդոտոսի աղբյուրների տարաբնույթ նկարագրի մեջ:

Արդեն նշվել է, որ պատմագրի դիտելիքները հակայածավալ պարսից տերության մասին անվել են մի քանի աղբյուրներից: Այստեղ, հետևելով մեր նպատակին, կբաժանենք դրանք երկու խմբի՝ տերության արքայական գլավանատան ու նրա տեղական մասնաճյուղերի պաշտոնական վավերագրերի և բոլոր

<sup>2</sup> «Ուրարտու» անվանման «Ուրաշուտ» ձևը սկիզբներին բաբելոնյան բարբառի հնչյունական առանձնահատկություններից է բխում:



մնացյալ աղբյուրների: Մեզ արդեն Հայտնի է; որ Հերոդոտոսը բավական ծանոթութիւն է ունեցել առաջին խմբի աղբյուրների հետ որպէս պարսից արքայի տիրապետութեան տակ գտնվող Հայկիստան քաղաքի բնակիչ, որտեղ, ի թիւփ այլ փոքրատեղիներ հռոմէական քաղաքների, չըջանաւորութեան մեջ էին պաշտոնական վավերագրերը՝ զիմանատան գործնական լեզու և ժամանակի միջազգային լեզու արամեերենով գրված օրինակներից հունարենի փոխարկում պիտակում:

Բեհիստունյան արձանագրութեան արամեերեն տարբերակի Եզիպտոսի Ելիփանտինե քաղաքում գտնված մի պատատիկ, բարեբախտաբար, վերաբերում է Հենց Հայաստանի՝ Դարեհի դեմ սպաստամբութեան հետ կապված իրադարձութիւններին:

Նախապես նշենք, որ արձանագրութեան արձանագրութիւնները Համապատասխանաբար երեք՝ պարսկական, էլամական և բաբելոնական գրչական դարձումների, երեք տարբեր ավանդութիւնների և մշակութիւնների ծնունդ Հանդիսացող գրիչների արտադրանք են: Նրանց երեք տարբերակներն, այդ պատճառով, լրիվ նույնական չեն. ամեն մեկին հատուկ են իրենց առանձնահատկութիւնները, որոնք արտահայտվում են արձանագրութեան բաժինների տարբեր Համապատասխանութիւններով, որոշ մանրամասների առկայութեամբ կամ բացակայութեամբ, օժանոտիկայի տարբերութեամբ և այլն: Վերջինիս օրինակը մենք արդեն ունենք. պարսկերեն տեքստի «Արմինայի» զիմաց բաբելոնեերենը տալիս է արդեն վերապրուկ դարձած «Ուրարտու» անունը՝ Համաձայն սասորաբաբելոնական դարձութեան հինավուրց քարայր ավանդութիւնների: Ապարամբած Արմինա-Ուրարտուի դեմ մղված պայքարի նկարագրութեան մեջ պարսկական տեքստը, օրինակ, չի տալիս սպանված թշնամիների քանակը, իսկ բաբելոնականը պարունակում է այդ թվերը և այլն:

Ահա, արամեերեն տարբերակը, որ չկա վիմագիր արձանագրութեան մեջ, բայց գոյութիւն է ունեցել գրված կաշվե փաթեթների վրա և Հատվածաբար Հասել է մեզ, սերտ Հարապատութիւն է ցուցաբերում ոչ թե պարսկերեն, այլ Հենց բաբելոնեերեն բնագրի հետ, ներկայանում որպէս բաբելոնական դարձութեան ավանդութիւն մերձ մի ավանդութիւն արտադրանք, մի բան, որ բնական կիթիւս, կիթե Հաշի առնենք երկու ժողովուրդների՝ արամեացիների և բաբելոնացիների դարավոր պատմութեան ավանդութեան շփումները ու նրանց՝ սեմական լեզվախմբին պատկանող լեզուների սերտ ազդակցութիւնը: Այսպէս, արամեերեն տեքստում ևս կան սպանված թշնամիների թվերը և «Արմինայի» փոխարեն առկա է «Ուրարտու» անունը՝ արամեերեն դարձութեան հատուկ տառային անձայնավոր (՚րէ գրութեամբ, որը ձայնավորներով օժտելով, կարելի է կարգաւ Արարատ, Ուրարտու, Արարտու և այլ ձևերով):

Ահա, նման մի արամեերեն բնագրից արված հունարեն թարգմանութեան մեջ՝ ἑρτ -ը տվել է հունական «ալարտ», ἄλαροδιδος ձևը, որը բազմաթիվ լեզուներում տարածված առաջին Ե-ի հետադարձ տարնմանեցման արդյունք է: Այս ձևն էլ, բնութանաբար, որգեգրել է Հերոդոտոսը:

Այսպիսով, պատմագիրը, ունենալով Հայաստանի արևմտյան մասի վերաբերյալ քիչ թե շատ մանրամասն տեղեկութիւններ, ստացված իր Հարցուփորձից, պարսիկների և հույների պատմածներից, լոգոգրափոսների

գրառումներից, ի վիճակի է եղել ներկայացնել նրա սահմանները, ժողովրդի ծագումը, զբաղմունքները և այլն: Արևելյան մասի վերաբերյալ այդ աղբյուրները լուրջ են, և Հերոդոտոսը նույնիսկ չի իմացել, թե Հայաստանը (Արմենիան) տարածվում է նաև այդ հողերում: Դրանց մասին նա տեղեկացել է միայն պարսկական պաշտոնական վավերագրերից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձևով կոչվել է Ուրարտու: Այսպէս է պատահել, որ նա Արևելյան Հայաստանը բնակեցրել է արարողներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ Հայերն են ապրել, ինչպէս այդ բխում է Բեհիստունյան արձանագրութեան մեջ այդ տարածքը Արմինա անվանելու փաստից: Ուրարտացիներն այդ ժամանակ այլևս գոյութիւն չունեին, նրանք Հայացել էին: Ուստի Հերոդոտոսի այս Հատվածում հիշատակված ալարտոգների տակ միանշանակ պետք է Հասկանալ Հայերին և վերը մեջ բերված Հատվածը (V, 94) Հատկանալ այսպէս. «Մատիենների, սասպեյրների և արմենների վրա սահմանված էր 200 տաղանդ Հարկ: Սա տանութեբորդ շըջանն է»:

Այսպիսով մասին Հերոդոտոսի երկրորդ և վերջին հիշատակութիւնը արվում է Հունաստան արշավող Քսերքսես թագաւորի՝ իր բանակին արված զորատեսի կապակցութեամբ, երբ պատմագիրը մի քանի էջի վրա մեկ-մեկ թվարկում է, թե ինչ ցեղերից ու ժողովուրդներից էր բաղկացած այդ բանակը: «Այսպիսիք էր և սասպեյրները, - ասում է պատմագիրը, - արշավում էին կոլխերի նման գիւնդները» (VII, 79): Որտեղից են վերցված այս երկար ու բարակ թվարկումը և այս կանխրեստ ցուցումը: Հերոդոտոսը չի թաքցնում այդ: «Թագաւորը, - գրում է նա, - ուզումակեց նստած, անցնելով յուրաքանչյուր ազգութեան բոլոր ջոկատներին առաջով, Հարցնում էր նրանց անունները, իսկ զբաղմունքը գրում էին» (VII, 100):

Այստեղ ևս Հերոդոտոսի տեղեկութիւնները գալիս են թագաւորական զինանատան վարչական վավերագրերից, ուստի և նույն պատճառով, ինչպէս վերը՝ արարողների տակ այստեղ էլ պետք է Հասկանալ Հայերին: Ճիշտ է, նույն թվարկման մեջ Հերոդոտոսը հիշատակում է նաև արմեններին՝ փոյուզիացիների հետ միասին (VII, 73), սակայն այստեղ ևս, ինչպէս սասորապութիւնների ցանկում, մենք գործ ունենք տարբեր աղբյուրների տվյալների սինթեզման, չերտավորման հետ (տե՛ս վերը, էջ 574 և հաջ.):

Հերոդոտոսի հիշատակած այսպիսիներին Հայերով փոխարինելու դադար փարն իր Հաստատումն է գտնում ոչ միայն Բեհիստունյան արձանագրութեան, այլև Քսենոփանի Հայորդած տեղեկութիւններում: Հերոդոտոսից ընդամենը մի քանի տասնամյակ անց սարած ու Հայաստանն էլ անձայն այցելած Քսենոփոնը իր «Անաբասիսում» խոսում է, մի կողմից, ընդհանրապէս Հայաստանի, մյուս կողմից, առանձին՝ Արևմտյան Հայաստանի մասին: Վերջինիս արևելյան սահմանները նա այսպէս է որոշում. Հարավում՝ Տեղեբոս գետը (IV, 4, 3-4), որը կամ Արածանու վերին Հոսանքն է (Յ. Մարկվարտ), կամ նրա Հարավային Մեղ փտակը (Ս. Երեմյան)՝ Վանա լճից արևմուտք, Հյուսիսում՝ փոսիանների և Հոպիերիոնները (Հերոդոտոսի հիշատակած սասպեյրները) երկրները (VII, 8, 25), այսինքն՝ Հայկական Բասենը՝ Արաքսի հովտում և Սպերը՝ Ճորոխի ավազանում: Ուրբ՛ջ խոսքով ասած, այս սահմանագիծը մոտավորապէս Համընկնում է Հերոդոտոսի նկարագրած XIII և XVIII սասորապութիւնների սահմանին, որը, ինչպէս հիշում



ենք, նույնպես սկսվում էր Վանա լճի շրջակայքում և ընթանում դեպի Սև ծովի հարավարևելյան անկյունը, այսինքն՝ Ճորոխի հովիտը: Քսենոփոնի պատմածից պարզ է, թե Հայաստանը և Արևմտյան Հայաստանը իր օրոք արդյոք առանձին վարչատարածքային միավորներ՞ը էին Աքեմենյան տերության կազմում, թե՞ Արևմտյան Հայաստանը ամբողջ Հայաստանի սոսի մի մասն էր: Գուցե նույնիսկ երկրորդն ավելի հավանական թվա, քանի որ հեղինակը Հայաստանի վարչապետին անվանում է սատրապ, իսկ Արևմտյան Հայաստանի վարչապետին՝ միայն հյուպարքոս: Հարցի այս կամ այն լուծումը, սակայն, ներկա դեպքում նշանակություն չունի, կարևորն այն է, որ Քսենոփոնի աչքում վերոհիշյալ սահմանագծից դեպի արևելք տարածվող երկիրը (այսինքն՝ փաստորեն Հերոդոտոսի նշած XVIII սատրապությունը) ևս Հայաստանն էր, գուցե նույնիսկ բուն Հայաստանը:

Այսպիսով, Քսենոփոնի հաղորդած փաստերն ամբապնդում են Հերոդոտոսի հիշատակած ալարոդներին հայերով փոխարինելու անխուսափելիությունը, այսինքն, որոշակիորեն ուղղում կամ լրացնում են պատմաճոր՝ XVIII սատրապություն մասին հաղորդման տվյալներից մեկը:

Միաժամանակ, սակայն, այդ փաստերը հաստատում են հաղորդման էությունը, քանի որ ցույց են տալիս, որ պարսկական արձանագրությունների Արմինա-Ուրարտու և միավորի ներսում այնուամենայնիվ դրույթություն է ունեցել Վանա լճից դեպի Սև ծովը ձգվող մի սահմանագիծ, որը մերթ անտեղի է (օրինակ, հիշյալ արձանագրություններում), մերթ չեղյալ է (Հերոդոտոսի XIII և XVIII սատրապությունների սահմանագիծը), մերթ սոսի նշվել (Քսենոփոնի՝ Հայաստանի և Արևմտյան Հայաստանի սահմանագիծը) և հավանաբար ունեցել է նախորդ պարաշրջաններից եկող պատմական հիմքեր:

Իր հերթին, XIII և XVIII սատրապությունների մասին հաղորդման արդարացումը էական դեր է խաղում սատրապությունների ողջ ցանկի արժանահավաստության հաստատման գործում: Իսկ քանի որ այդ ցանկը «Պատմություն» կարևորագույն հատվածներից է, ապա դրանով էական ներդրում է արվում ընդհանրապես պատմաճոր պահպանած տեղեկությունների արժեքավորման բնագավառը:

**ՔՍԵՆՈՓՈՆԻ ԿՅՆՆԷՐ ԵՎ ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

«ԱՆԱԲԱՍԻՍ»

«Ատտրիկյան մեղու». այդպես է բնութագրել պատմական ավանդությունը Հույն պատմագիր և զրոյ Քսենոփոնին նրա ընտիր հոնարենի համար, համեմատելով այն մեղվի ախորժալի բզզոցի հետ: Նոսքը սակայն ավելի խոր իմաստ ունի, քան թվում է, հենց նրանով, որ Քսենոփոնը բնորոշում է ստացել ըստ իր երկերի լեզվի և ոչ ըստ նրանց բովանդակության: Հիրավի, նրա գաղափարաբանությունը՝ իր բնագրվանման կամ խորությունը, նրա հույզերը՝ իրենց թափով ու բանությունը՝ իր բնագրվանման կամ խորությունը, նրա հույզերը՝ իրենց թափով ու բանությունը չեն կարող մրցել ժամանակի մի շարք այլ մտավորական գործիչների գործությանը հին կարող մրցել ժամանակի մի շարք այլ մտավորական գործիչների պատվով: Անշուշտ, իր դարաշրջանի առանձնահատկությունների զարմանալի ցայտուն անդրադարձմամբ իր անձի և իր զրվածքների մեջ:

Հունական ստրկատիրական հասարակության այն դարաշրջանը, որ տվել է պատմագիրներին հիշված երևելի շարքը և դրանց կողքին նույնքան ու ավելի փայլուն դեմքեր, հանճարների մի ամբողջ շարան փլիխոսփայություն ու դրականություն, ճարտարապետության ու քանդակագործության, ռազմի ու քաղաքականության և այլ սասպարեզներում, դեմքեր, որոնք Հունական քաղաքականության հատկություններն ու մշակութային հասցրին այնպիսի աննախընթաց բարձունքների, որ այն իր խորը դրոշմը թողնեց մարդկության զարգացման ողջ հետագա ընթացքի վրա և իր որոշ կողմերով չզերազանցված մնաց, այդ դարաշրջանը կոչում են ստրաբոն «դասական շրջան»:

Այն ընդգրկում է հիմնականում մ.թ.ա. V դարը.

V դարի քաղաքական պատմության բովանդակությունն են կազմում երկու երկարածից պատերազմներ, տվելի ճիշտ՝ պատերազմաշարեր, Հունա-պարսկականը՝ 500-449թթ. և Պելոպոնեսյանը՝ 431-404թթ., նրանց միջև ընկած շուրջ երկու տասնամյակ տևողությամբ խաղաղ մի ժամանակահատվածով:

Հունա-պարսկական պատերազմաշարը առանձին քաղաք-պետությունների կամ պրոնների բաժանված փոքրածավալ Հույն ժողովրդի ազատագրական ու պաշտպանական պայքարն էր հին արևելյան մի պետության՝ Աքեմենյանների հակադեմոկրատիկ տերության դեմ: Պայքարը ծայր առավ արևմտյան Փոքր Ասիայի հինավուրց Հունական քաղաքների՝ Աքեմենյան Պարսկաստանի լծից ազատագրման խնդրի կապակցությամբ, շարունակվեց պարսկական արքաներ Դարեհ I Վշտասպանի և նրա որդի ու հաջորդ Քսերքսեսի ամենի զորաբանակների և Վշտասպանի և նրա որդի ու հաջորդ Քսերքսեսի ամենի զորաբանակների արշավանքներով դեպի բուն Հունաստան և ավարտվեց Հույների փայլուն հաղթանակով, որի նվաճման առանձին հանրահուշակ զբաղվածք են Մարաթոնի, Թերմոպլիսի, Սալամինի և այլ ճակատամարտերը:

Հույները հաղթանակը պարսկական տերության նկատմամբ նրանց հասարակարգի գեմոկրատիայի հաղթանակն ու նրա առավելությունների



գրականությանն էր Հին արևելյան տիպի դեպոսիտայի՝ միապետական կարգերի ամենատարածված և ևս չհասնող մեկի հանդեպ:

Պատերազմի ընթացքում և հաղթանակի հետևանքով առանձնապես բարձր վերելք ապրեց Հունական քաղաք-պետություններից Աթենքը, իր շուրջը ստեղծելով պոլիսների մի խոշոր միավորում, որը պատմության մեջ է մտել «Աթենական ծովային միություն» կամ «Աթենական Արքե» անուններով: Սա, իհարկե, ֆեդերացիա էր և ոչ պետություն, սակայն, այնուհանդերձ, Աթենքի ղեկավար և մյուս քաղաք-պետությունների ստորագրած դերը խիստ շեշտված էր, և գործը հասնում էր Աթենքի կողմից սրանց անխնայ ու բացարձակ շահագործման:

Աթենքում այդ ժամանակաշրջանում հանդես է գալիս Հունական քաղաքական խոշորագույն գործիչներից մեկը՝ Պերիկլեսը, որի օրոք բացի ռազմականից ու քաղաքականից, Աթենքն ապրում է նաև կուլտուրական գերազույժ ծաղկման փուլ: ստեղծվում է Աթենքի Ակրոպոլիսի ճարտարապետական հուշարձանները՝ իր թագն ու պատեր կազմող Պարթենոն տաճարով, որի վրա աշխատել է նաև հանճարեղ Ֆիդիասը, գործում են էսքիլոսի արժանավոր շարունակողներ Մոլոկլեսն ու Եվրիպիդեսը և այլ հանճարներ, որոնց թիվը պարմանայի շատ է մի վաղ Ժողովրդի և համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար:

Բարձր զարգացման են հասնում նաև Հունաստանի բազմաթիվ այլ պոլիսներ, և այս ծաղկման հիմնական հանգրվանը պետք է տեսնել կրկին նրանց հասարակարգի՝ դեմոկրատիայի մեջ:

«Դեմոկրատիան», սակայն, որ նշանակում է «ժողովրդի տիրապետություն», այլալ դեպքում պայմանական տերմին է, որով կարելի է բնութագրել ողջ Հունաստանի քաղաք-պետությունների կամ պոլիսների կազմը՝ այն Հին արևելյան դեպոսիտային հակադրելիս միտյն: Իրականում դեմոկրատիան հատուկ էր Հունական պոլիսների մի թևին, որ ղլխավորում էր Աթենքը, մյուս թևին բնորոշ լինելով արիստոկրատիան կամ օլիգարխիան, և այդ թևերը այնքան էին հակադիր, որ պոլիսի բախվելն միմյանց հետ մի նոր պատերազմում, նախորդել լարվածությունը գերազանցող համառությունը ու դժամությունը:

Բայց նույնիսկ այդ դեմոկրատիան այն չէր, ինչ մենք ենք հասկանում բառիս սակ, քանի որ դա ստրկատիրական դեմոկրատիա էր. նրա սահմաններից ամբողջովին դուրս էր մնում համապատասխան պոլիսների բնակչության մի ստվար, երբեմն գերակշռող մասը, ի դեմս սարքունիկի և կիսակալայի արտադրողների: Դեմոկրատիայի պատշգամբից օգտվում էին միայն քաղաքային համայնքների անդամները՝ այլալ պոլիսի լիիրավ քաղաքացիները, որոնց թիվը սահմանափակ էր, և որոնք միավորված էին համայնքի մեջ հենց որպես ստրկատերեր՝ իրական և կամ պոտենցիալ:

Հունական քաղաք-պետությունների մյուս՝ Սպարտայի գլխավորած թևի հասարակարգի համար բնորոշ էր, ինչպես ասվեց, արիստոկրատիան կամ օլիգարխիան: Այս պետություններում իշխանության ղեկը դանդաղ էր արդեն ոչ թե համայնքի բոլոր անդամների, այլ, ինչպես ցույց են տալիս համապատասխան տերմինները, նրանցից «ազնվագույնների», «քչերի» և ձեռքում, ազատների մնացած մասը պետական գործերից արտագաղթված և նույնիսկ «քչերի» շահագործման առարկա դարձած լինելով:

Եվ ահա, երբ երկու հակադիր թևերի միասնական ջանքերով պարսկական

լծի վտանգը վերացված էր, Հերթը հասավ նրանց փոխադարձ Հակասությունների ու թշնամությունների գրականությանը: Պատերազմը, որ ստացավ Պելոպոնեսյան անունը, իհարկե, մղվում էր տարբեր պետությունների միջև, և նրա հիմքում ընկած էին նաև մի շարք տնտեսական պատճառներ, սակայն, իրականում, վերը նշված պարագաների շնորհիվ դա միաժամանակ քաղաքացիական պատերազմ էր, և դրանով են բացատրվում նրա որոշ առանձնահատկությունները: Նկատի ունենք պատերազմի կողմերի տարբեր սոցիալական շերտերի՝ պատերազմի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը: Այս կետը կարևոր է Քսենոֆոնի կենսագրության որոշ էջեր և նրա աշխարհայացքի որոշ կողմեր ճիշտ ըմբռնելու համար: Մինչդեռ լակոնական (այսինքն՝ Սպարտայի) վերջինը կաշվում էր նաև Լակոնիկե կամ Լակեդեմոն) ճամբարի քաղաքներում ապրող՝ դեմոկրատական հայացքների տեր քաղաքացիները համարում էին հակառակորդ՝ աթենական ճամբարին և նույնիսկ հաղթանակ ցանկանում նրան ու գործում դրա օգտին, Աթենքի շուրջը համախմբված պոլիսների օլիգարխիա դավանող քաղաքացիները, ընդհակառակն, Սպարտայի հաղթանակն էին տեսնում և նույնիսկ ձգտում դուրսցնել այն:

Պատերազմը շատ դժամարեն էր վարվում և ուղեկցվում էր Հելլենների կողմից Հելլենական իսկ քաղաքների բնակչության գերեվարմամբ և ստրկացմամբ, ամբողջ ծաղկուն շրջանների ամայացմամբ: Այն սկզբից ընթանում էր փոփոխական հաջողություններով, նույնիսկ Աթենքի որոշ գերակշռություններ, բայց հետագայում կշեռքի նժարը թեքվեց Սպարտայի կողմը, և վերջինը հաղթանակ ձեռք բերեց, դառնալով Հելլենական աշխարհի հեգեմոն՝ Աթենքի փոխարեն: Լակեդեմոնի իշխանությունը անհամեմատ ավելի խիստ ու դժամ էր, հանգամանք, որ արտահայտվել է նաև Քսենոֆոնի «Անաբասիսի» համապատասխան դրսևանքում, հակառակ Հեղինոսի լակոնոսիս լինելուն:

Այսուհանդերձ, պեղծություննայն պատերազմների բուն հետևանքները ավելի ընդգրկուն էին, քան մի ճամբարի հաղթանակը մյուսի նկատմամբ: Մնանկացան գաղափարախոսությունները երկու ճամբարների էլ, թե՛ պարտվածի և թե՛ հաղթողի: Դրա հիմքն էր իր՝ պոլիսի, քաղաք-պետության, որպես ներփակ ու ինքնաբերական պետականության ձևի, խոր ճգնաժամը, որը իր Հերթին արդյունք էր հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, նրանց մեջ կատարված որոշակի տեղաշարժերի: Որպես դրանցից մեկը կարելի է նշել դասական պոլիսի ռազմական ու քաղաքական հզորության պատվանդանը կազմող միջին հողատեր քաղաքացիների շերտի քայքայումը, շերտ, որը հասարակության բնեռացման համընթաց տարբերակներում էր մասամբ խոշոր, իսկ Հիմնականում մանր հողատերերի և չբավորության մեջ, իր հետ տանելով պոլիսի նախկին ունակությունը՝ պահպանվելու որպես ստվերի պետություն և միայնակ, ստանց արտաքին ուժի օգնություն, սանձահարելու իր ստրուկներին և ընդհանրապես շահագործվողներին:

Իրազմաքաղաքական միավորումների ստեղծման այն ձգտումը, որ ի հայտ եկավ Հունական աշխարհում դեռևս V դարում, պոլիսի ճգնաժամի ցուցանիշներից մեկն էր: Չէ՞ որ դրանց առաջացման մեջ արտահայտվում էր ոչ միայն մի պոլիսի ձգտումը իշխել մյուսների վրա, այլև մյուսները ձգտումը արտաքին հենարան գտնել իր գոյությունը պահպանելու համար: Եվ ահա Պելոպոնեսյան պատերազմներից հետո կրկին ու կրկին այդպիսի միավորումներ են ստեղծվում,



որոնցից առանձնապես նշելի են Աթենական երկրորդ ծովային միությունը, մանավանդ Բեռլինյան միությունը, որը իր կարճ գոյությունը ընթացքում խոշոր Հաջողությունների հասավ, և ուրիշները:

Սակայն այսօրինակ միավորումները ի վիճակի չէին արմատապես դարմանելու Հասարակությանը Համակած ճգնաժամը: Օրակարգի էր միադեմությունների ստեղծումը, և որպես դրա նախանշան, առաջ էին քաշվում, բարձր գերբերի հասնում և աստվածներին պատշաճ ու փառաբանության արժանանում և առանձին ուժեղ անհատներ, որոնց իշխանությունը սկսում էր հետզհետե փոխարինել կոլեկտիվը՝ լինի դա արևմտեկրասիայի թե քեմեդարտիայի հիմունքներով կազմված կոլեկտիվ, իշխանությունը: Ահա Հասարակության գորգացման այս տեղեկացի ուժով է, որ առաջ է մղվում հունական պոլիսների հյուսիսային Հարեան Մակեդոնիան: Ալեքսանդր Մակեդոնացու հոր՝ Փիլիպպոսի օրոք նա այնքան հզոր է գտնվում, որ կարողանում է իրեն ենթարկել գրեթե բոլոր հունական քաղաք-պետությունները: Այս նորաստեղծ միավորված պետությունն էր, որ իբրև բուժանցք դործի դրեց Ալեքսանդրը, նվաճելով նոր ուժերով այն ժամանակ Հայտնի ողջ Արևելքը: Այսպես փրա հասավ հեղինակության դարաշրջանը, սակայն նրա արմատները, ինչպես տեսանք, խորը թաղված էին նախորդ հեղինակական դարաշրջանի ընդգրկում:

\*\*\*

Հուլյն առաջին պատմիչներն են Համարվում VI դարում մ. թ. ա. ստեղծադրած սկսած լոգոգրափները, որոնք, ի տարբերություն Հոմերոսի, Հեսիոդոսի և մարդկության պատմության երևույթները չափաձոյով ու ի միջի այլոց շարադրած ուրիշ գրողների, անցել են արձակի, գատեղով պատմական ժանրը մյուսներից՝ դրանով հիմք ծառայելով Հունական դասական պատմագրությանը: Լոգոգրափներից խոշորագույնն էր Հեկատոս Միլետացին (VI դարի երկրորդ կես - V դարի սկիզբ), որը իր գործերը նվիրել է մարդկության առաջացման խնդրին և աշխարհի նկարագրմանը: Ի դեպ, Հուլյն մատենագրության մեջ նա Հայաստանը հիշատակող առաջին հեղինակն է: Լոգոգրափների երկերը գեղուս լի են առապելաբանություններով, սակայն արդեն ձգտում կա տարագատել առապելաբան տարրերը պատմական հիմք ենթադրող տարրերից:

Նրանց նվաճումները ժառանգել ու քարգայցրել է Հերոդոտը (չուրջ 490 - չուրջ 430 թթ. մ. թ. ա.), որին ավանդությունը պարգևել է «Պատմահայր» պատվանշանով: Իր «Պատմություն» թե՛ ընդգրկմամբ ու կառուցվածքով, թե՛ պատմական աղբյուրներին ու իրողություններին մոտեցմամբ և թե՛ վերջապես, շարադրանքի ոճով նա Հիրոսի «պատմագրություն» կոչված երևույթի հիմնադիրն է: Նրա երկի զլխավոր թեման հունա-պարսկական պատերազմներն են, բայց շարադրանքը նա սկսում է շատ ավելի վաղ շրջաններից, նպատակ ունենալով ոչ միայն բացահայտել այդ իրադարձության խոր պատմական արմատներն ու պատճառները, այլև տալ իրեն Հայտնի բոլոր երկրներին հնարավորին չափ մանրամասն ու հավաստի նկարագրություն ու պատմությունը, դրա համար օգտագործելով իր տեսածը, լսածը և կարգացածը: Նրա մոտ արդեն առկա են աղբյուրների նկատմամբ քննական մոտեցումն ու ուսցիտնայիվը, որոնք և, այսպիսով, գտնում են հունական պատմագրության հատկանշական դժեր:

Հաջորդ խոշոր պատմագիրը, որի գործով Հուլյն դասական պատմությունը Հասնում է իր գագաթնակետին, Թուկիդիդեսն է (V դարի երկրորդ կես): Սա իր երկը նվիրել է Պելոպոնեսյան պատերազմների պատմությանը: Թուկիդիդեսին բնորոշ է օգտագործված աղբյուրների շատ լայն շրջանակը, որը ներառում է ընդհանուր Հնագիտական պեղումներից Հայտնաբերված նյութերը, ինչպես և վիմագրական նյութերը: Նրա օգտագործած վիմական արձանագրությունների մեզ հասած նմուշներից երևում է, թե որքան Հարազատորեն ու ճշգրտորեն է նա վերարտադրել իր աղբյուրների տվյալները: Միևնույն ժամանակ նա խոր քննադատական վերաբերմունք է դրսևորում իր աղբյուրների նկատմամբ, դասակարգելով դրանք ըստ հավաստիության աստիճանի: Թուկիդիդեսը երբեք չի բավարարվել պատմական իրողությունը նկարագրելով, այլ միշտ ձգտել է բացատրել այն, ըստ որում տվել է ոչ թե դիցարանական, այլ միշտ նյութական, առանձին ղեպերում նույնիսկ անասագիտական մեկնաբանություն (Հանգամանք, որ նշել է Մարքսը):

Թուկիդիդեսի «Պատմությունը», որը Հեղինակը մտադիր է եղել հասցնել մինչև Պելոպոնեսյան պատերազմների վերջը, մնացել է անավարտ, նույնիսկ ընդհատված մի մտքի շարադրանքի մեջտեղում: Այս Հանգամանքը օգտագործել է Քսենոփոնը, սկսելով իր «Հունական պատմությունը» Հենց այդ կետից՝ «Նրանից մի քանի օր անց...» բառերով ներածվող նախադասությամբ: Մրանով նա թերևս ցանկացել է Հաջորդակցական կապ հաստատել իր և Թուկիդիդեսի միջև ու ներկայանալ որպես նրա գործի շարունակող: Մինք կտեսնենք, սակայն, որ Քսենոփոնը էպսիս տարբեր է իր նախորդից:

\*\*\*

Քսենոփոնի կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները Հարուստ չեն: Վեճեր կան նրա ծննդյան թվականի մասին իսկ: Ուսումնասիրողների մի մասը այն պնդում է 444 թվականից առաջ, երևելով 424թ. տեղի ունեցած մի ճակատամարտի և 422թ. մի խնջույքի նրա մասնակցած լինելու մասին մեզ հասած տեղեկություններից և ուրիշ Հանգամանքներից: Մյուս մասը նրա ծննդյան ժամանակը ենթադրում է չուրջ 430-ին, հիմք ընդունելով նրա հիշատակումը իր մասին «Անաբասիսում» 401թ. դեպքերի կապակցությամբ որպես երիտասարդի ու մի քանի այլ պարագաներ. այս վերջին տեսակետը ավելի լայն տարածում ունի, և նրանով առաջնորդվելով է, որ սույն 1970թ. նշվել է Քսենոփոնի ծննդյան 2400-ամյակը:

Իր կյանքի սկզբնական շրջանը (մինչև 401թ.) Քսենոփոնը անց է կացրել ծննդավայրում, Աթենքում: Քսենոփոնի աշխարհայացքի արևմտեկրաստական բնույթը, նրա գրվածքներում ի Հայտ եկող բազմազան դեմոկրատները հոգի նպատակահարմար չահագործման, ձխավարժության, չներով որսի և այլ խնդիրների շուրջը, եզրակացնել են տալիս, թե նա ծագում է աթենական ունևոր, գույցի և Հարուստ Հոգատիրական ընտանիքից: Նման եզրակացությունը կատարելապես համապատասխանում է այն միակ հաստատուն փաստը, որ Հայտնի է Քսենոփոնի կյանքի այս ժամանակաշրջանի մասին, այն է, թե նա աշակերտել է Սոկրատեսին: Սոկրատեսը, ինչպես Հայտնի է, իրեն շրջապատում էր ազնվական ծագում ունեցող երիտասարդությամբ և դաստիարակում նրանց իր փիլիսոփայության ոգով, որը



բազմաբանական ուղղվածությունը բացարձակ-օլիգարխիական շլինելով Հանդերձ, շատ հետո էր դեմոկրատական երանգից: Այս Հողի վրա է, ի դեպ, որ Հետագայում տեղի ունեցավ Սոխրատոսի բախումը Աթենքի իշխանությունների հետ, որոնք և նրան մահվան դատապարտեցին:

Մի տեղեկություն էլ կա այս շրջանի մասին, իբր Քսենոփոնը որոշ ժամանակ դեմոկրատ մեջ է եղել Բիոտոփայտում և այնտեղ ունեկողը Պրոդիկոս փիլիսոփային: Բայց սա վիճելի է նույն պատճառով, ինչ որ 424 և 422 թվականներին վերաբերող վերը նշված տեղեկությունները:

401թ. Քսենոփոնը իր բարեկամ Պրոքսենոսից, որ ծառայում էր փոքրասիական հողերի պարսիական սատրապ, պարսից արքայից արքայից Աքեմենյան կյուրոսի մոտ (այսպես կոչված կյուրոս կրտսեր), հրավեր է ստանում մեկնել Փոքր Ասիա, Սարգես քաղաքը, կյուրոսին ներկայացվելու նպատակով: Քսենոփոնը որոշում է գնալ և ճարպկորեն շրջանցում է նույնիսկ այն խոչընդոտները, որ կարող էին նրա առջև հարուցել... աստվածները. Սոկրատեսից խորհուրդ ստանալով նախապես հարցում անել Գեդիյան պատգամախոսին իր գնալ-չգնալու մասին, նա այնպես է ձևակերպում հարցումը, որ բացատրում է բացասական պատասխանը: Այս քայլը ցույց է տալիս, որ Քսենոփոնն իր արխատկրատական, ուրեմն և լակոնասիական, Հայացքներով իրեն լավ էլ էր զգում Հայրենի Աթենքում և գործունեություն ավելի նպաստավոր բնավայր էր փնտրում: Գուցես նաև գծոված էր իշխանությունների հետ, հատկապես այն բանից հետո, երբ Սպարտայի՝ իր հաղթանակից հետո Աթենքում հաստատված կարգերը՝ «Երեսնի բռնատիրությունը», տապալվել էին:

Ինչևիցե, այդ քայլը վճռական դեր խաղաց նրա կյանքի հետագա ուղու ընտրությունն առումով: Ներկայանալով կյուրոսին և ընդունվելով նրա բարեկամների շարքը, Քսենոփոնը մասնակցում է նրա ձեռնարկված ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան: կյուրոսի նպատակն էր տապալել իր եղբորը՝ Արտաքսերքսես 11-ին և տիրանալ նրա գահին: Արշավանքը անհաջողությամբ է ավարտվում, կյուրոսն ընկնում է Կունաքսայի վճռական ճակատամարտում, ուր նրա տասնհազարանոց վարձկան հունական զորաբանակը, որի մեջ էր նաև Քսենոփոնը, թեև նույն ճակատամարտի ժամանակ իր զբաղեցրած թևում հաղթանակ է տանում, բայց և այնպես ստիպված է լինում բռնել հեռավոր երկրից դեպի Հայրենիք նահանջի ուղին: «Անարատիս», որից էլ իմանում ենք այս բոլորը, վկայություններ է նվիրվում է այս նահանջի նկարագրությունը: Այդ դժվարին պահին Քսենոփոնն իրեն զբաղեցրած է որպես բանիմաց, խիզախ և տոկոս վորահրամանատար և նպաստում 10.000 հույն մարտիկների վերադարձին Հունիա:

Սրանից հետո նա որպես վարձկան զորքի հրամանատար պատերազմում է նախապես Թրակիայի թագավոր Սեթեսի դրոշի ներքո, իսկ այնուհետև, 396-394 թթ., ծառայում Սպարտայի բասիլևս Ագեսիլասի մոտ, որը պարսիկների դեմ ռազմական գործողություններ էր ծավալել Փոքր Ասիայում: Այս վերջին քայլը անշուշտ, ավելի ևս սրեց Քսենոփոնի հարաբերությունները Աթենքի դեկավորների հետ: Իսկ երբ նա Ագեսիլասի հետ միասին վերադարձավ Հունաստան և մասնակցեց Թեբեի և Աթենքի ու Սպարտայի դաշնակցության միջև ծագած նոր պատերազմին և նույնիսկ լակոնական զորքերի շարքերում մարտնչեց իր հայրենիքի դեմ Կորոնայի ճակատամարտում (394 թ.), աթենացիները դատավճիռ

կայացրին նրա նկատմամբ, Հայտարարելով նրան ցմահ վտարանդի: Սպարտան, ընդհակառակը, երախտահատույց եղավ Քսենոփոնին, հատկացնելով նրան 387 թվականին Պելոպոնեսում Սիլլուս բնակավայրի մոտ մի տուն և Հողամաս, որտեղ և Քսենոփոնը անցկացրեց շուրջ 17 տարի, գրելով այստեղ իր երկերի հիմնական մասը, այդ թվում և «Անաբասիսը», և զբաղվելով իր սրտին մոտիկ գյուղատնտեսություններով:

371թ. Պելոպոնեսում նոր ռազմական գործողությունների ծավալման կապակցությամբ Քսենոփոնը իր ընտանիքի հետ տեղափոխվում է Կորնթոս: Քիչ անց Սպարտան և Աթենքը դաշինք են կնքում՝ ուղղված վտանգավոր չափով Հզորացած Թեբեի դեմ, որի զորավարն էր հույակավոր էպամինոնդասը: Քսենոփոնի երկու որդիները՝ Գրիլլոսը, որ իր պապի անունն էր կրում, և Դիոտորը մասնակցում են այդ պատերազմին: Գրիլլոսն ընկնում է Հերոտական մահով 362 թվականին Մանտինեայի ճակատամարտում: Այս նոր իրադրության մեջ Քսենոփոնի վերաբերյալ Աթենքում կայացած դատավճիռը չեղյալ է հայտարարվում, նա դադարում է վտարանդի լինելուց և հնարավորություն ստանում վերադառնալ Հայրենի քաղաք:

Քսենոփոնը, սակայն, այդպես էլ չիրագործեց այդ հնարավորությունը, մնաց Կորնթոսում և կյանքի վերջին տարիները նվիրեց գրական գործունեության շարունակմանը: Այստեղ էլ նա մահացավ շուրջ 356թ., հասնելով խոր ծերություն հասակի:

\*\*\*

Քսենոփոնը ռազմազան շահագրգռությունների տեղ հեղինակ է եղել: Բացի պատմական գործերից, նա գրել է բարոյախոսական, տնտեսագիտական, գյուղատնտեսական, ռազմական, քաղաքական և նույնիսկ որսորդական բովանդակությամբ երկեր: Այդ բոլորը միավորվում է նրա աշխարհայեցողությամբ, որը ցայտուն կերպով ի հայտ է եկել նաև նրա պրակտիկ գործունեության մեջ: Նա ոչ միայն գրել է իր արխատկրատական, լակոնասիական Հայացքների համեմատ, այլև գործել, ուստի և փաստորեն հասել է իր հայրենի Աթենքի նկատմամբ դավաճանության (հորջորջում, որ մասամբ մեղմանում է Սպարտայի և Աթենքի միջև մղված պատերազմների վերը նշված քաղաքացիական բնույթի շնորհիվ):

Լակոնական իրականությունը նրան գրավում է իր օլիգարխիական հասարակարգով, այլև իր պահպանողականությամբ, այն պարագայով, որ, ինչպես համոզված էր Քսենոփոնը, Սպարտայում ավելի հավասարեմ էին նախնիների ազնիվ ավանդներին, ավելի էին պահպանել հելլենական հիմնարկը խիստ ոգին: Լակոնական մանկավարժությունը, նրա կարծիքով, ինչպես և ընդհանրապես լակոնացիները աշխարհըբեռնումը ավելի սերտ էին կապակցված կյանքի պրակտիկ խնդիրներին, քան Աթենքիները, ուր իբր չափազանց շատ էին տարվում վերացական ու տեսական խնդիրներով, զանց առնելով կենսական գործերը: Գործնականությունը, պրակտիկայի հետ սերտ կապը, ըստ Քսենոփոնի, մարդու ամենանախընտրելի բարեմասնությունն է, որը հավասարապես կարևոր է թեև սոսկ մի տանտիրոջ ու հողատիրոջ համար, իր տան ու տնտեսության գործերը կազմակերպելիս, և թե քաղաքական կամ ռազմական ղեկավարի ու թագավորի համար,



իր գործի կամ քաղաքի և կամ լայնատարած իր երկրի գործերը անօրինակիս: Տեսական գիտելիքների ձեռքբերումը նա անհրաժեշտ է համարում սոսկ այն չափով, որ չափով նրանք պիտանի և կիրառելի են առօրյա կյանքում: Այսպես, Սոկրատեսի բերանով նա հայտնում է այն միտքը, թե երկրաչափությունը պիտի յուրացնել այնքան, որ մարդ կարողանա անհրաժեշտ զեպքում ընդունել, հանձնել, բաժանել Հողամասը, մնացածը ավելորդ է:

Փիլիսոփայությունը ևս, իր խորքերով, հիմնականում խորթ է մնացել Քսենոփոնին, չնայած նա բախական երկար ժամանակ եղել է Սոկրատեսի աշակերտների շարքում: Սոկրատեսից նա ընկալել է գլխավորապես նրա իմացություն արտաքին տրամաբանական կողմը, դրույթի ապացուցման ճարտարությունը, որը և փայլուն կիրառել է իր երկերում: Սրա օգնությամբ նա հաճախ հիմնավորում է իր՝ Սոկրատեսի փիլիսոփայության հետ առնչությունը չունեցող դրույթները:

Քսենոփոնի աշխարհայացքը հատկապես պարզորոշ դրսևորվել է նրա այն ստեղծագործություններում, որոնք ընդունված է միավորել «սոկրատական» անվան տակ: Դրանք են. «Հուշեր Սոկրատեսի մասին», «Սոկրատեսի արդարական դերում հանդես է գալիս Սոկրատեսը, սակայն դա Քսենոփոնյան Սոկրատես է, պրակտիկ օգտակար գործունեություն Նատագով, կենսական խնդիրների լուծման պատրաստի դեղատոմսեր բաժանող մի անձնավորություն, որը ըստ մեծի մասի հարդորում է հեղինակի տեսակետը, և ոչ այն նրբին ու ներհուճ փիլիսոփան, որպիսին հասնում է Սոկրատեսը Պլատոնի տրամախոսություններում: Սոկրատեսը Քսենոփոնի երկերում իր կարծիքն է հայտնում ընտանեկան կյանքի, բարեկամների ընտրություն և սրանց հետ վարվելակերպի, հասարակական աշխատանքի, մարդու ֆիզիկական ու մտավոր զարգացման, սիրտ, անտեսություն, մարդկանց ղեկավարելու արվեստի և բազմաթիվ այլ խնդիրների կապակցությամբ, ամենուրեք արտահայտելով սահմանափակ ու պահպանողական սգու տեր ամբակլուս տանտիրոջ տեսակետներ:

Քսենոփոնի լսկոնասիրական հակումները առանձնապես ցցուն հանդես են գալիս նրա «Ագեսիլաոս» ներբողի և «Լակիդեմոնացիների պետությունը» դարձյալ Նատագովական բնույթ կրող ստեղծագործության մեջ, թեև նրանք այս կամ այն չափով առկա են ուրիշ գործերում ևս, ի դեպ՝ ամենից քիչ «Անաբասիսում»: Հալանական է, որ հակումները նրա կյանքի վերջին տարիներին, հատկապես կորնթոսյան շրջանում, որոշ տեղատվություն են ապրել: Քսենոփոնը կարծես տեսնում է, վերջապես, թե Սպարտան իր երազած իդեալական պետությանը չէ, թե նախնիների ավանդները ամենևին այն չափով չէ, որ այնտեղ հարվում ու կիրառվում են, ինչպես ինքը կարծում էր, թե բարքերի անկումը, ընչաքաղցությունն ու ազատությունը ամենևին ավթնացիների մենաշնորհը չեն, այլ հատուկ են նաև լակոնացիներին, որ լրիվ չափով ի հայտ եկավ, երբ սրանք դարձան հելլենական աշխարհի հեգեմոն: Այս փոփոխությունները իրենց արտացոլումն են գտել նրա «Հունական պատմություն» ու շրջանում գրված եզրափակիչ բաժիններում, նույն ժամանակ ստեղծված «Եկամուտների մասին» գրվածքում, ուր խոսքը Աթենքի տնտեսական գործերի բարեկալման մասին է, և «Հիերոն» (դատողություններ բռնապետության՝ տիրանիայի մասին) գործի մեջ:

Քսենոփոնի գրչին են պատկանում նաև «Հեծելություն մասին»,

«Հեծելազորի պետի մասին» և «Շներով որսի մասին» ստեղծագործությունները՝ որոնց մեջ դրսևորվում են նրա բաղմազան գիտելիքները համապատասխան բնագավառներում:

Քսենոփոնի ստեղծագործությունների կարևորագույն խումբն են կազմում նրա պատմական գրվածքները՝ «Հունական պատմությունը» և «Անաբասիս»՝ որոնց որոշ վերապահություններ կարելի է կցել նաև նրա «Կյուբոպեդիան» («Կյուբոսի դաստիարակությունը»):

Վերջինը որքան պատմական գործ է, այնքան էլ, դուցե և ավելի, բարոյաբուժական-քաղաքական, և այս հաճախ հիմք է ծառայել որոշ հետազոտողների համար այն իսպառ վստախելու Քսենոփոնի պատմական երկերի շարքից: Թվում է, սակայն, թե սա չափազանց է: Ճիշտ կլինի բնորոշել այն որպես պատմաքաղաքական վեպ, ըստ որում՝ իր տեսակի մեջ առաջինը համաշխարհային գրականության մեջ և լավագույններից մեկը, որպիսի գնահատական վաստակում է իր դեղաբլիսատական արժանիքներով, կենդանի կերպարների այն շարանով, որ կարողանում է ստեղծել Քսենոփոնի հմուտ գրիչը:

Այս ստեղծագործության մեջ խոսքը պարսկական թագավոր Կյուբոս Մեծի մասին է, որը հիմնադրեց Աքեմենյանների աշխարհակալությունը՝ առաջին անգամ պատմության մեջ մի պետության ծածկի տակ միավորելով ողջ Առաջավոր Ասիան: Քսենոփոնը իր վեպում ձգտում է պատասխանել այն հարցին, թե ինչպիսի՞ դաստիարակություն ու պատրաստություն պետք է ստանա գործիչը, որպիսով հաջողացնի գրուս բերել այդպիսի մի բարդ ձեռնարկություն, կամ, ավելի լայն, ինչպիսի՞ պատրաստություն ու հատկություններ պիտի ունենա իդեալական միապետը, որպիսին նա տեսնում է հանձին Կյուբոսի, կամ թեբևս որպիսին նա ուզում է ցույց տալ Կյուբոսի՝ իր ստեղծած կերպարի մեջ: Նրա պատասխանը, բացի վերջ նշված՝ ղեկավարին անհրաժեշտ գործնական հատկություններից, անձի գերագույն կատարելագործման մեջ է. առաջնորդը պետք է կատարելագործի իր ունակություններն ու կարողությունները այն աստիճան, որպեսզի ամեն ինչով գերազանցի մյուսներին: Այդ դեպքում բոլորը համոզված ու սիրահոծաբ կենթարկվեն ու կհետևեն նրան:

«Կյուբոպեդիայի» մեջ արտացոլվել է Քսենոփոնի քաղաքական նոր կողմնորոշումը հօգուտ միապետության, որը նա սկսում է գերադասել և՛ դեմոկրատիայից, և՛ օլիգարխիայից, և՛ բռնապետությունից (տիրանիա), սրանց անկալունությունը հակադրելով միապետության կայունությունը: Նման կողմնորոշումը և սրա հետ լծորդված՝ ուժեղ անհասանելի այն իդեալականացումը, որի մեկից ավելի օրինակները գտնում ենք Քսենոփոնի ստեղծագործություններում՝ Կյուբոս Մեծ, Ագեսիլաոս, Կյուբոս Կրտսեր և այլք, իսկապես որ նրան դարձնում են հելլենիզմի գաղափարախոսական նախակարագետ: Իսկ քիչ հետո կհամոզվենք, որ նա այստեղ ևս չմնաց սոսկ տեսաբան, այլ անձամբ մասնակցեց հելլենիստական դարաշրջանի նաև գործնական նախապատրաստմանը, հելլենիզմից դեռևս յոթ տասնյակ տարի առաջ:

«Կյուբոպեդիայի» զուտ պատմապիտանական արժեքը մակերևույթի վրա չէ, այն թուքնված է վիպական-գեղարվեստական ճողի տակ, ուստի և հաճախ վրիպիլ ու վրիպում է ուսումնասիրողների աչքից: Նրա հիմքն է, մեր կարծիքով, այն անկասկածելի պարագան, որ Քսենոփոնը գրել է Պարսկաստանի պատմությունը:



Արքեպիսկոպոսների տիրապետության սկզբնավորման մասին ոչ թե հեռավոր հեռու, ինչ-որ օտար միջավայրից բազմաթիվ ձեռքերի միջնորդությամբ իրեն հասած աղտոտ լուրերի հիման վրա, այլ որպես մարդ, որ անձնապես շփվել է Արքեպիսկոպոսի տոհմի ամենապայքան շառավիղներից մեկի՝ Կյուրոս Կրտսերի ու նրա շրջապատի հետ և եղել է Պարսկաստանում: Որքան էլ վիպական տեսք ունենա նրա գրածը, այս հանգամանքները և նրանց շնորհիվ Քսենոփոնի ձեռք բերած կենսական ու կոնկրետ պատկերացումները պարսկական միջավայրի մասին պիտի նրան մոտ պահեն բուն պատմական եթե ոչ իրողությունը, գոնե ոգուն: Չպետք է կասկածել, որ «Կյուրոպեդիան» պատմաբանի աչքով վերլուծելով՝ հնարավոր է դուրս կորզել նրանից պատմական տվյալներ:

Մենք ցանկացանք հատկապես շեշտել այն հանգամանքը, նկատի ունենալով «Կյուրոպեդիայի» այն բավական ծավալուն բաժինը, որ վերաբերում է Հայաստանին (Արմինիային): Այստեղ 6-րդ դարի կեսերին տնչված հանդես են գալիս հայկական թագավորությունը, հայոց թագավորը, նրա որդիներ Տիգրանը (որ ներկայանում է որպես Կյուրոսի բարեկամ և որակից) և Սաբարիսը, նրա գորավար էմբասար, տեղեկություններ են տրվում հայկական գրքի՝ սյրուծիի և հետևակի բանակության մասին, արքունի հարստությունների մասին և այլն, հայերի փոխհարաբերությունների մասին Մարաստանի (Մեդիա) և այլ հարևան երկրների ու ժողովուրդների հետ:

Որքան արժանաչափաբարձր կա այս տվյալների մեջ: Նորագույն կարծիքները դրական են: Նախ և առաջ Հայաստանը ևս այն երկրների շարքում է, որտեղ անձամբ եղել է «Կյուրոպեդիայի» հեղինակը. Կյուրոս Կրտսերի արշավանքի ձախուղումից հետո նա երկար ճանապարհ է կտրել Հայաստանի վրայով, որի մասին մանրամասն պատմում է «Անաբասիտում»: Ուրեմն այն, ինչ վերնաավից Պարսկաստանի մասին, վերաբերում է նաև Հայաստանին: Բայց կա նրա հաղորդածի արժեքի երկրորդ երաշխիքը ևս: Մովսես Խորենացին, կրկին մ.թ.ա. VI դարի կապակցությամբ, պատմում է հայոց թագավորության, սրա արքաներ Երվանդ Սակավակացիի ու նրա որդի Տիգրանի մասին, վերջինիս Կյուրոսի հետ դաշնակից լինելու և Մարական պետության հետ բախման մասին: Խորենացու պատմածը դուրս բերել Քսենոփոնի ասածից հնարավոր չէ նմանությունների կողքին էական տարբերությունների առկայության պատճառով: Ուստի մնում է ենթադրել, թե դրանք պատմական միևնույն իրականության այլազան արտացոլումներն են: «Կյուրոպեդիան», այսպիսով, հայ ընթերցողի համար, իր ընդհանուր արժանիքների հետ մեկտեղ, ունի նաև առանձնահատուկ նշանակություն:

Քսենոփոնի երկերի մեջ իր կարևոր տեղն ունի նրա «Հունական պատմությունը»: Սկսվում է այն 410 թվականից, այնտեղից, ուր ընդհատվում է, ինչպես նշվեց, Թուկիդիդեսի «Պատմությունը», և հասցվում մինչև 362թ.: Մասնորոնեայի ճակատամարտը: Այն, այսպիսով, ծայրեծայր վերաբերում է իրադարձությունների, որոնց ժամանակակիցը, հաճախ ակնհաստես ու մասնակիցն է եղել Քսենոփոնը: Այս հանգամանքը «Հունական պատմությունը» որոշակի չափով հուշերի ընդլայն է հաղորդում, այստեղից բխող բոլոր հետևանքներով: Մի կողմից, ժամանակակիցի ու ակնհաստեսի զիրքը մեծապես բարձրացնում է Քսենոփոնի հաղորդածի արժեքը, մյուս կողմից, սակայն, գործուն մասնակից լինելու հանգամանքը

որոշակի սուբյեկտիվ երանդ է տալիս նրա մերձեցմանը պատմական իրողություններին: Վերջինս ի հայտ է գալիս առանձին իրերի ոչ այնքան սխալ, որքան միակողմանի մեկնաբանմամբ: Սպարտայի համար որոշ աննպաստ հանգամանքներ Քսենոփոնը պարզապես լուռության է մատնում, ուրիշ դեպքերի մասին ստեղծում իր ցանկացած սպավորությունը, ուշադրությունը կենտրոնացնելով. խնդրի էություն փոխարեն, երկրորդական մանրամասների վրա և այլն: Այս բոլոր բացերով հանդերձ «Հունական պատմությունը», շարադրված լինելով Քսենոփոնի նման իրազեկ ու հմուտ հեղինակի կողմից, Հունաստանի հիշյալ ժամանակաշրջանի պատմության կարևորագույն ու ամենամանրամասն սկզբնաղբյուրն է:

\*\*\*

«Անաբասիտ» (Հայ գրականության մեջ՝ «Նահանջ բերում») կարող է համարվել Քսենոփոնի գլուխգործոցը թե՛ իր անզուգական արժեքով որպես պատմական սկզբնաղբյուր և թե՛ իր հոյակապ գրական-գեղարվեստական արժանիքներով:

Առաջին հայացքից «Անաբասիտ» մեջ պատմված իրադարձությունը աննշան է իր մասշտաբներով: Հիրավի, մի բյուր (տասը հազար) հույն վարձկան զինվորներ մասնակցում են պարսկական տերության մեջ տեղի ունեցող հերթական ապստամբությանը, արշավում դեպի Պարսկաստան՝ դահի հավակնորդի առաջնորդությամբ, և նրա վախճանից հետո թշնամի երկրի միջով նահանջում դեպի հայրենիք: Սակայն այս աննշան իրադարձությունը հսկայական արժանաբար գտավ անտիկ աշխարհում և մտավ օրինակելի սխրանքների դասական շարքը: Դեռևս մ.թ.ա. 36թ. Հռոմեական դրոսավար Մարկոս Անտոնիոսը, իր պարթևական արշավանքի ձախուղումից հետո թշնամի երկրի միջով նահանջելիս, ծանր բուպեններին բացականչում էր. «Օ՛ր, Բյուր»: Սակայն վերագրել Բյուրի արշավի ու նահանջի այս հռչակը Քսենոփոնի գրչի գործությանը՝ կնշանակիր բացահայտել ճշմարտության մի կողմը միայն: Մեզ հայտնի է, որ անկախ Քսենոփոնից, այդ նույն իրադարձությանն են անդրադարձել և ուրիշ հեղինակներ: Այսպես, դրա մասին իր երկում պատմել է հույն հեղինակ Քսենոփոնը, որն այդ ժամանակ գտնվելիս է եղել հսկայական պարսից թագավորի ճամբարում, որպես արքայի անձնական բժիշկ: Այդ արշավանքի պատմությունը գրել է նաև ոմն Սոփիենտոս, որը հավանաբար «Անաբասիտում» նկարագրված Սոփիենտոս Ստիմփալացին է, Բյուրի ստրատեգիաներից մեկը: Սրա գործը մեզ չի հասել: Ենթադրում են, որ մ.թ.ա. I դարի հեղինակ Դիոդոր Սիկիլիացու «Գրադարանում» պահպանված՝ Բյուրի արշավանքի բավական հանգամանակից նկարագրությունը (XIV, 19-31, 37) հիմնված է հենց Սոփիենտոսի գործի վրա: Եթե այս ենթադրությունը չափաբարանա, ապա կպարզվի, որ գյուղություն է ունեցել Բյուրի արշավանքի նաև մի չորրորդ պատմություն, որից օգտվել է Դիոդորը:

Իրադարձություններ, ուրեմն, գտնվել է հույն հասարակության ուշադրության կենտրոնում անկախ Քսենոփոնի գրածից: Ինչո՞ւ: Կարճ ասած, սա առավել դեպքն էր, երբ հունական մի զորքանակ այդչափ կտրվում էր իր հայրենիքից և ընդհանրապես իր հարազատ տարերքից՝ ծովից, հեռանում ցամաքի խորքը ու այն էլ գնում հասնում պարսկական պետության սիրտը և այնտեղ մարտի մեջ



Հաջողությունը չափվում պարսից արքայից արքայի հսկայական ուժերի հետ: Սա ոչ միայն սոսկ սիրահան էր, այլև հույների վաղեմի բաղձանքների իրականացման փորձ՝ ուսանելի կարգով արչափել այն թշնամու Հողը, տիրանալ այն թշնամու հարստություններին, որը իր հսկայական բանակներով մի ժամանակ հեղեղել էր հույների երկիրը: Նման ծրագրեր, ինչպես իմանում ենք հույական մատենագրությունից, փայտափայլ են V դարում, բայց նրանց իրականացման փորձերի մեջ Բյուրի արչավը առաջինն էր:

Էլ այլևի իմաստ է ստանում այս իրադարձությունը, երբ այն դիտում ենք Հաջորդ դարաշրջանի՝ հիլլենիզմի տեսանկյունով: Հիրավի, քաղաք-պետությունների միավորման տեղեկացը, որ հիլլենիզմի նախանշաններից էր, ունի ոչ միայն պոլիսի ներքին ճգնաժամի հաղթահարման իմաստ, որը մենք վերը Հատկապես շեշտեցինք, այլև ստրկատիրական ամեն մի Հասարակություն անտարբեղի հասկանելի կազմով՝ արտաքին նվաճումների, հարստությունների թափանցի, մանավանդ գերեզմարությունների առավել մեծ չափով իրականացման նպատակ: Եվ ահա հիլլեն Հասարակությունը փորձով Համոզվեց, որ ինքը սկզբունքորեն ի վիճակի է կատարել այդպիսի վիթխարի մի գործ՝ նվաճել Աքեմենյան Հողը ու անասան թվացող տերությունը: Եվ դրանից հետո նման ծրագրերն ու փորձերը չդադարեցին, մինչև որ չպատկվեցին կատարյալ Հաջողությունը արդեն Ալեքսանդր Մակեդոնացու օրոք: Այսպես, Բյուրի արչավները, ինչպես ջրի կաթիլի մեջ, արտացոլվել է մի ամբողջ մեծ ու կարևորագույն դարաշրջանի ամենահատկանշական տեղեկանքներից մեկը:

Քսենոփոնի ստեղծագործության բոլոր ուսումնասիրողները նշում են, որ «Անարսիս» գրելու նրա դրդապատճառներից մեկն է եղել ինքնափառաբանումը. թիրևս նրա բաղձանքն է եղել իր նկարագրած ուժեղ անձնավորությունների վերոհիշյալ ցանկի մեջ ներմուծել իր սեփական կերպարը ևս: Այդ ձգտումը սպառնացվում է և այն հանգամանքով, որ Քսենոփոնը իր գրչին այս ուղղությունը սպասուկություն և պատմածին՝ ավելի կշիռ տալու նպատակով «Անարսիսը» հրատարակել է ուրիշ անվամբ (ոմն Թեմիստոկենես Միրակուսացու, որ Հայտնի է գոյություն ունեցե՞լ է, թե՞ ոչ) և իր մասին պատմածի քանակով ու ողով: Քսենոփոն Աթենացին, որ դեպի Պարսկաստան արչավները ընթացքում դեռևս ստվերում է գտնվում, առաջին պլան է դուրս բերվում իսկույնեթ, իր կուսաբանի ճակատամարտից և լավագույն գործավարների խորագի սպանությունից հետո հույներն ընկնում են ծանր ու անելանելի թվացող կացություն մեջ և հուզական անկում ապրում: Քսենոփոնը, աստվածների ներշնչմամբ, հորդոր է կարողանում գլխավորներին, վստահություն ներշնչում նրանց իրենց ուժերի նկատմամբ և, ընտրվելով սորատեգոսների շարքը, փաստորեն ստանձնում է Բյուրի զեկավարությունը: Հետագա ողջ նահանջի ընթացքում զորքի բոլոր Հաջողությունները կապակցվում են Քսենոփոնի նախաձեռնություն, իմաստություն ու եռանդի հետ, սնահաջողությունները՝ ի հեճուկս նրա կատարած գործողությունների հետ: Նույն ուղղությունը են ներգործում նաև Քսենոփոն Հեղինակի կողմից Քսենոփոն սորատեգոսի բերանը դրած բազմաթիվ ու երկարաշունչ ճառերը, այնպես որ Բյուրի վերագրածը Հունիա ընթերցողը սկսում է ընկալել որպես հիմնականում Քսենոփոնի ջանքերի արդյունք: Անշուշտ, սա չափազանցություն պիտի Համարել, մանավանդ որ, սահնք, Դիոգորի մոտ պահպանված Համապատասխան

պատմվածքում Քսենոփոնի անունն իսկ Հիշատակված չէ: Այս հանգամանքը ընդունակ էր սովիթ ձգելու ողջ «Անարսիս» արժանահավատություն վրա, և եղել են հետազոտողներ, որոնք սուրբ են տվել այդ կարծիքին:

Սակայն երկի մանրագնին ուսումնասիրությունը ի վերջո հանգեցրել է այն միահամուռ տեսակետին, որ Հակառակ Քսենոփոնի իր սեփական դերի գերազանահատման՝ «Անարսիսի» պատմական կտավը ոչ միայն ճշմարտացի, այլև վերին աստիճանի ճշգրիտ է դուրս գալիս այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է լինում ստուգել նրա տվյալները: Քսենոփոնը եկել են այն եզրակացություն, որ Քսենոփոնը արչավները ողջ ընթացքում օրագրի է վարել, որը և օգտագործել է հետագայում «Անարսիսը» շարադրելիս: Օրագրի գոյություն փաստի անկասկածելի ապացույց է, օրինակ, այն հանգամանքը, որ Քսենոփոնը իր երկում նշում է ոչ միայն կատարված անցումների թիվը, այլև դրանցից յուրաքանչյուրի երկարությունը, մեծ մասամբ պարակալուն փարսիսներով (փարսասնդ), այն տեղերում, երբ ընթացել են պարակալուն պետական (արքունի) ճանապարհների երկարությունը և դրանց վրա պարբերաբար դասավորված կայանները թույլ են տվել ճշգրտորեն նշել անցած արածությունը: Մյուս դեպքերում մոտավոր ձևով ասպարեզներով և կամ ճանապարհի վրա ծախսած ժամանակով: Ոչ պակաս ցցուն կերպով են ցուցադրում Քսենոփոնի շարադրանքի ճշմարտապատում լինելը նաև Արևելքում նրա տեսածի նկարագրությունները:

Պետք է շեշտել, որ «Անարսիսի», որպես պատմական աղբյուրի, արժեքը սուղին հերթին խարսխված է ահա ուզամերթի ընթացքում նրա հեղինակի տեսածի ու լրատի արձանագրման վրա, որը, իհարկե, իր նմանը չունի հույն գրականության մեջ: Քսենոփոնը Կյուրոսի հետ արչավիկյան անցել է ողջ Փոքր Ասիան և Հյուսիսային Միջագետքը, տեսել բազմաթիվ երկրներ, քաղաքներ ու քնակավայրեր և տեղեկություններ է հաղորդում այս ամենի մասին, ինչպես և պարսիկների բարձր ոլորտներում, որտեղ նա անցնում-դառնում էր, տիրող բարքերի ու սովորությունների մասին: Սակայն առանձնապես և, կասեինք, եզակի կարևորություն է ձեռք բերում նրա պատմածը այն պահից, երբ սկսվում է Բյուրի նահանջը անձանտի ու թշնամի երկրների միջով: Հույները կտրում-անցնում են Հայկական լեռնաշխարհը հարավից Հյուսիս-արևմուտք, Վանա լճից հարավ ընկած Կարբուկների երկրից, բուն Հայաստանի և «Արևմտյան» Հայաստանի վրայով դեպի Սև ծովի ափերը ու այնուհետև ընթանում նրա հարավային ափի երկայնքով: Այդ ընթացքում նրանք ծանոթանում են տանյակ ցեղերի ու ժողովուրդների հետ, որոնցից շատերը մինչ այդ հույներին Հայտնի էին լավագույն դեպքում սոսկ անուններով:

Եթե նախապես հույները պարակալուն գորքի կազմում էին արչավում, որպիսի հանգամանքը նրանց մասամբ մեկուսացնում էր այցելած երկրների բուն միջավայրից, սպա այժմ՝ միայնակ, թողնված բախտի քմահաճույքին, ենթակա անսպասելի ու անձանտի վտանգների: Այս ավելի է սրում նրանց ուշադրությունն ու դիտողականությունը Համապատասխան երկրների ու նրանց բնակչության նկատմամբ: Վերջինի հետ նրանք անընդհատ ձգտում են անմիջական չփում հաստատել, փորձում լեզու գտնել, հնարավորին չափ առանց բախումների անցնելու Համար իրենց ճանապարհը: Օգտագործում են հանգամանք համար նրանց կացարանները, սնվում նրանց սննդով, օգտվում նրանց հագուստից, տեսնում



նրանց զբաղմունքները, բարբերը, Հարաբերությունները, ճանապարհի առաջ-  
նորդներ ընտրում նրանցից և նման ուղիներով հսկայական իմֆորմացիա ստանում  
նրանց կյանքի մասին:

Երջանիկ պատահականությունները հույն գործարանական գտնվել է Քսենո-  
փոնի վաղյուն պատրաստությունը, շահագրգռումները և գրիչը ունեցող անձը,  
որը ներծծել է այս բոլոր սպափորությունները և Հարազատորեն Հանձնել թղթին:  
Հասկանալի է, թե որքան անգերազանահատելի նշանակություն ունի այդ համապա-  
տասխան ցեղերի ու ժողովուրդների պատմության համար: Այն շատ վառ ցու-  
ցադրվում է Հատկապես Հայաստանի մասին Քսենոփոնի Հաղորդածով, որի հիման  
վրա իր լուսաբանումն է ստանում Հայ ժողովրդի պատմության մի ամբողջ դա-  
րաշրջան, որը այլապես մուժ կանար:

Որպես պատմական աղբյուրի՝ «Անաբասիս» մի այլ արժանիքն է հունա-  
կան գործի պատմության որոշ էջերի վառ լուսաբանումը: Քսենոփոնը մի դարա-  
շրջանում է ապրել, երբ սկսվում է վարձկան գործի նշանակությունը վերելքը ժամա-  
նակի քաղաքական ու ռազմական խնդիրները լուծման մեջ, բայց երբ վարձ-  
կանություն ծախսե հոգեբանությունը դեռևս չէր քայքայել հելլենական գործի  
հինավուրց ազնիվ ավանդները: Բյուրը, փաստորեն, մի շարժումն պոլիս են ներկա-  
յացնում, բախտի քննահանգրով նետված օտար ցեղերի ու բնություն անհրապույր  
զիրկը, և հետաքրքրականն այն է, որ հակառակ բոլոր արհավիրքներին, նրանք  
պահպանում են իրենց կենսակերպը ու նկարագիրը: Մեծագույն վարպետությունը  
և, իհարկե, միանգամայն վավերագրորեն պատմում է Քսենոփոնը, թե ինչպիսի  
կյանքով է ապրում իր հայրենիքից հարյուրավոր մղոններ հեռացած Հելլադայի  
այս փշուրը:

Ահա պոլիսի գերագույն ղեկավար օրգանին՝ ժողովրդական Հավաքին  
փոխարինող դիմադրության Հավաքը, որ դուրսբերվում է ամեն անգամ արշավանքի  
հետ կապված սկզբունքային հարցերը լուծելիս, և որում ամենավերջին գինվորը  
իրավական տեսակետից հավասար է ստրատեգոսին ու կարող է քննադատել նրա  
և յուրաքանչյուր այլ անձնավորության գործողությունները և իր առաջարկները  
մտցնել, որոնք կրնան վերջին կամ կմերժվեն Հավաքի ձայների մեծամասնությամբ:  
Իհարկե սա սկզբունքն է միայն, իսկ իրականություն մեջ իրեն խիստ զգացնել է  
տալիս իշխանություն, ծագման, ունեցվածքի և այլ տեսակի տարբերություններից  
բխող հեղինակության տարբերությունը: Ելույթները հաճախ միտումնավոր են  
ու ղեմադրվել, Հավաքի վճիռները որոշ դեպքերում՝ անխոհեմ: Բայց ընդհանուր  
առմամբ այս դեմոկրատական արարողությունը ցույց է տալիս, թե որն է  
թշնամիներին ու արհավիրքներին այս մի բուռ հելլենների դիմադրելու կարողու-  
թյան աղբյուրը: այն, որ յուրաքանչյուրը նրանցից իրեն ազատ քաղաքացի,  
ինքնուրույն անձ է գլուխ և գործում է դիտակցաբար: Սրանով, սակայն, ամենևին  
չի բացառվում գինվորական խիստ կարգապահությունը, առանց որի հելլեններին  
փրկություն չէր լինի:

Այս կոլեկտիվը, շարժումն պոլիսը երբեք չի մոռանում հայրենիքում մոր  
կաթի հետ ներծծված այն գրագույնը, որ հելլեններն իրենց բնությունը հակադիր  
են ոչ հելլեններին՝ բարբարոսներին, գերազանց են նրանցից իրենց ազատությունը,  
իրենց հոգևոր ու նույնիսկ մարմնական ուժերով: Բանավ-պոլիսը լրիվ պահպանում  
է նաև իր ստրկատիրական էությունը: Թշնամու երկիրն ասպատակելիս

հելլենները, բացի իրենց անհրաժեշտ պարենից և այլ կենսամիջոցներից, ստանում  
են նաև բնակչությունը, այն Հարմար դեպքում վաճառելու և կամ առանձին աչքի  
ընկնող ստրուկներին իրենց հետ հայրենիք վերցնելու նպատակով: Իրենք էլ լավ  
հասկանում են, որ իրերի դժբախտ ընթացքի դեպքում կարող են, ազատ  
քաղաքացիներ լինելով հանդերձ, ստրկացվել, նույնիսկ եղբայր-հելլենների կողմից:  
Այսպիսի մի դեպք՝ 400 դիմադրների ստրկացումը, նկարագրված է «Անա-  
բասիսում»:

Հելլենների հետ արշավանքի մեջ են նաև նրանց աստվածները, որոնց հետ  
ամեն օր շփվում են զոհաբերությունների ու Հարցումների միջոցով: Ոչ մի կարևոր  
քայլ չեն ձեռնարկում Քսենոփոնը կամ մյուս ստրատեգոսները, դորքին թե  
սեփական անձին վերաբերող, մինչև պահապանված կենդանու փոքրատիքի  
հետազոտման հիման վրա գուշակը չհայտնի աստվածների կամքը: Չուհարար  
կենսաբանության համար կենդանի հայթայթելու նպատակով հույները ստրատաստ  
էին ծախել իրենց վերջին միջոցները: Մոռացությունը չէին տալիս նրանք նաև  
իրենց մարմնամարդկական ավանդական մրցումները: Հագրվահաղ Հայկական  
լեռնաշխարհից դուրս պրծած, դեռ հոգնած ու հյուժված, առաջին իսկ  
հնարավորության դեպքում նրանք կազմակերպում են այդպիսի մրցումներ և  
ամբողջ հոգով տրվում դրանց:

Նման հանախորդի վրա ամենևին տարօրինակ չի հնչում այն գաղափարը,  
որը մի քանի անգամ այս կամ այն առիթով արծարծվում է «Անաբասիսում» և  
անցնում իր՝ Քսենոփոնի մոքով. արդյոք ճիշտ չի՞ լինի, փոխանակ հայրենիք  
վերադառնալու, որտեղ հայտնի չէ, թե ինչ է սպասում յուրաքանչյուրին, ընտրել  
որևէ ծովամերձ հարմարավետ վայր և մի նոր պոլիս հիմնադրել: Ու թեև այդ  
միտքը մերժվում է, բայց հեշտությունը կարելի է պատկերացնել, թե որքան դյուրին  
կարող էր այն իրականանալ:

Եվ, վերջապես, «Անաբասիսը» աչքի է ընկնում թե՛ Քսենոփոնի ստեղծա-  
գործությունների և թե՛ ողջ հունական գրականության մեջ իր բարձր գրական-  
գեղարվեստական արժանիքներով, որոնք գնահատվել են դեռևս հնրի կողմից և  
որոնք հաճույք են պատճառում այսօրվա ընթերցողին ևս:

«Անաբասիսը» այս առումով դիտելիս հիշենք, որ այն գեղարվեստական  
ծանրին չի պատկանում, և հեղինակը խիստ սահմանափակված է եղել գեղարվես-  
տական միջոցների կիրառման խնդրում: Քսենոփոնը զարմանք է պատճառում  
սուղ և գուշակ միջոցներով հիանալի արդյունքի հասնելու իր ունակությունը: Պատ-  
մական անձնավորությունների կերպարները և իրադարձությունների նկարա-  
գրությունները մրցում են իրար հետ արտահայտչականությունը և ներգործման  
աստիճանով:

Սովորաբար առաջին հերթին մատնացույց են անում այն տեղը, որտեղ  
ներկայացված են Բյուրի դավադրաբար սպանված երեք զորահրամանատարներ՝  
կենաբոսի, Պրոքսենոսի և Մինոնի բնութագրի-դիմանկարները: Սրանք, հիրավի,  
սպավորիչ են: Սեղմ տողերով ոչ միայն զմայրված է երեք միանգամայն տարբեր  
անձնավորություն, իրենց թույլ ու ուժեղ, դուրեկան ու համակրելի կողմերով,  
իրենց դաղավարներով ու ձգտումներով, կյանքի նկատմամբ ունեցած պահանջ-  
ներով ու շրջապատի հանդեպ վերաբերմունքով և այլն, այլև նկարագրերը հասց-  
ված են սոցիալական ընդհանրացումների աստիճանի, որով երեք դիմադրականների



տիպական կերպարները բնութագրում են իրենց ծնած հասարակությունը:

Այս հատվածները, սակայն (ինչպես և քիչ ավելի վաղ տրված՝ Կյուրոս Կրտսերի հմայիչ գլխնակարր), որոնք մահախոսականների բնույթ են կրում, ամենինիս գրական «չեղումներ» չեն շարագրանքի բուն նյութից. նրանք Հիմնավորված են և նախապատրաստված նախորդ շարադրանքով: Նախքան դրանց հասնելը, ընթերցողին ինքը, հիշյալ անձերի արածի ու ասածի հիման վրա, Քսենոփոնի դրչի գեղարվեստական գործվածք, արդեն ստեղծում է իր մեջ նրանց կերպարների մոտավորապես նույն նկարագիրը, որն այնուհետև ստանում է Հեղինակից՝ ավելի ճշգրիտ ու նրբին կերտվածքով: Սա է, ի դեպ, այդ բնութագրումների ներգործական ուժի մի էական ակունքը: Նրանք նախորդ շարադրանքի հանրագումարներն են մահվան խաղած դժի տակ:

Այս ատում ենք նուև շեշտելու համար, որ բազմաթիվ այլ, նման սեղմ բնութագրումներից զուրկ անձնավորություններ ևս հասնում են «Անաբասիսի» էջերից, որպես ցցում ու բնորոշ կերպարներ: Եթե շարունակենք հույն գորավարների պատկերաշարը, ապա կարելի է հիշատակել Քսենոփոնի ընկերակից լակեդեմոնացի իսկրիստոփան, որի բնորոշ գծերը նրա միջակ, տաղանդից զուրկ ամուր պրոֆեսիոնալիզմն ու կենսափորձն են, կամ դիավաժարար հանդես եկող Կոլոստադասին: Վերջինիս գործողությունները Քսենոփոնը նկարագրում է ամենայն լրջությամբ, բայց ընթերցողի ականջին այն հնչում է որպես կծու ծաղր հեղինական գորավարների ևս մի «սարստեսակի» նկատմամբ, որի ներկայացուցչին էրը, հակառակ իրենց ճնշին կարողություններին, կաշվից դուրս են գալիս՝ որսալու իրենց բախորդ վարձկանությունն սկստոր ջրերում: Սոցիալական ընդհանրացումը այստեղ ևս, ինչպես այլ դեպքերում, առկա է:

Մի շարք «բարբարոսների» կերպարներ ևս՝ Տիստափեոնեսի, Արիալոսի և ուրիշների, շատ տարվորիչ են: Հատկապես Սևթիսինը, խորամանկ, բայց կարճամտ, իշխելու ծարավի, բայց անարի, թագավորություն նվաճել ձգտող, բայց միջոցներ խնայող, իրեն իսկ ծառայող մարդկանցից երկնչող թրակիական սրբալիկի, որը կատարյալ հակապոսիերն է մի այլ «բարբարոսի»՝ հզոր ու լայնախոհ Կյուրոս Կրտսերի:

Ոչ պակաս դիտվել ու հմայիչ են արշավանքի տեսարանների, ռազմական գործողությունների, առանձին ընդհարումների, առօրյա դեպքերի, խնջույքների նկարագրությունները, որոնց մեջ չի գտնվի պատահական, իմաստային վիցքից զուրկ բառ, և որոնք ընթերցողին համար գրեթե տեսողական էֆեկտ են ստեղծում և ներմուծում նրան նկարագրվող իրականության բուն մթնոլորտը:

Անկարելի է, ի վերջո, կրկին չհիշատակել Քսենոփոնի լեզուն, որին հենքի տված բնութագրումից մենք սկսեցինք սույն հուղվածը: Այն հիրավի օրինակելի է համարվում իր քերականական հավասարակշռությամբ և հանգիստ արտահայտչականությամբ: Պատահական չէ, որ ավանդաբար հենց Քսենոփոնից և հատկապես «Անաբասիսից» են սկսում նոր ժամանակներում Հունարենի ուսուցումը:

«Անաբասիսի» ներկա հայերեն թարգմանությունը հարազատորեն է վերարտադրում բնագրի ձևն ու ոգին և արժեքավոր ներդրում է բազմադարյան հակայական նվաճումների ունեցող և հատկապես հույն գրականությունից նմուշներով հարուստ հայ թարգմանական գրականության գանձարանը:

### ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԳՈՆՑԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՅԸ

Նիկողայոս Ագոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության ուսերեն ընագրի հրատարակությունը (Ս.Պետկերբուրգ, 1908) բոլորեց երեք քառորդ դարը: Հարկավ, նրա հայերեն թարգմանությունը և հրատարակման խնդիրը հասունացած էր և կարող էր լուծվել նաև տասնամյակների տակ: Սակայն այսօր էլ այն ոչ միայն ուշացած չէ, այլև ուշացած չէր լինի, եթե հրատարակվեր ևս տասնամյակների անց: Համաշխարհային պատմագիտության մեջ քիչ հետազոտություններ են, որ ժամանակի այսպիսի քննություն են բռնել. պատմական հետազոտությունները մեծ մասամբ սակավակյաց են:

Խոսքս գործնական գիտական նշանակության, և ոչ սոսկ «գիտական ժառանգություն» կոչված երևույթի մասին է, որը գլխավորապես վերաբերում է սոսկ իր ժամանակի գիտության մակարդակին լավ համապատասխանող գործերին: Ագոնցի երկը եթե իր որոշ մասերով կարող է դասվել «գիտական ժառանգության» շարքը, ապա հիմնականում, կարելի է ասել նույնիսկ՝ ամբողջությամբ վերցրած, այն տակավին թաքմ է: Թաքմ է ոչ միայն մեղանում դեռևս չգերազանցված՝ պատմաբանասիրական վերլուծությունների իր մեթոդիկայով, ոչ միայն հիմնական ու հարակից այն եզրակացություններով, որոնք առայժմ անասան են մնում մեր պատմագիտության մեջ, այլև մի շարք այնպիսի խոշոր ենթաբաժիններով, որոնցում նվաճվածից հետագա հայ պատմագրությունը որևէ էական քայլ չի արել տակավին, և որոնք, այսպիսով, մնում են գիտության վերջին խոսք:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»-ը ընթերցելուց Հետո նրա վրա ետադարձ հայացք ձգելով, գալիս ես այն եզրակացության, որ այդ խորագիրը հեղինակի՝ իր և իր գործի նկատմամբ ունեցած ծայրահեղ պահանջությունն արդյունք է: Հիրավի, մենագրության բովանդակությունը անչափ ավելի լայն է, իրականում երկը ներկայացնում է Հայաստանի ներքին՝ սոցիալ-քաղաքական գործացման պատմությունը՝ սկզբներից, այսինքն՝ ժողովրդի կազմավորման շրջանից մինչև մ.թ. 7-րդ դար, և այն էլ առաջին անգամ շարադրված այդպիսի պատմությունը: Համոզվելու համար բավական է դիտարկել երկը կազմող երեք դրվագները, որոնք են «Արևմտյան Հայաստանը», «Արևելյան Հայաստանը», «Նախաբարության ծագումը», հակառակ հերթականությամբ: Մենք այստեղ այդպես էլ կվարվենք, սկսելով մեր տեսությունը գերբը եզրագիտող «Նախաբարության ծագումը» դրվագից, որը հենց ծայր է առնում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման խնդրից:

Ն. Ագոնցը այն ժամանակի ի վիճակի էլ էր շատ տեղ նվիրել նշված խնդրին, որովհետև առկա պատմական և լեզվական սակավ նյութը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէր, և տակավին հրապարակի վրա չէին սեպագրական՝ իսթական, ասուրական և ուրարտական արձանագրությունների հարուստ նյութերը: Հետագայում, 30-ական թթ., այդ նյութերը դասնալու էին Ն. Ագոնցի ուսումնասիրման անմիջական առարկան, նա իր վերջին մենագրության մեջ ստեղծելու



էր մի ծախսուհի, փաստական նյութերով հազեցած պատկեր<sup>1</sup>: Սակայն նախնական պարագաներում էլ Ադոնցը կանգնած է եղել ճիշտ ու մինչև օրս դործուն այն տեսակետի վրա, որ նախ, հայ ժողովուրդը առաջացել է, կազմավորվել է իր հետագա պատմության զարգացման բնավայրում՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, և երկրորդ, որ այն կազմավորվել է մի շարք, բազմաթիվ, էթնիկական բաղադրատարրերից, որոնց մեծ մասը տեղաբնակ էին, մի մասն էլ՝ եկվոր (էջ 439): Այստեղ հարկ չկա խորանալու այդ տարրերին Ադոնցի տված կոնկրետ բնութագրումների մեջ, քանի որ դրանք կրում են ժամանակի կնիքը և այսօր հնացած են: Կարևոր է շեշտել նրա ընդհանուր-տեսական մտածյման մնացուցումները:

Հայաստանի ներքին՝ սոցիալ-քաղաքական զարգացումը ժողովրդի կազմավորման դարերից մինչև հայ մատենագրության տվյալներով լուսավորված ժամանակի սկիզբը՝ 4-րդ դարը, վեր հանելու համար Ն. Ադոնցի ձեռքի սակ եղել են դեպքերին ժամանակակից օտար աղբյուրների ընդամենը երկու՝ Քսենոփոնի (մ.թ.ա. 5-4 դդ.) «Անարատիսի» և Պլինիոս Ավագի (մ.թ. 1-ին դ.) «Բնական պատմության» պարունակած հիմնական վկայությունները: Հետևելով դրանց, այդ մեծ ժամանակաշրջանը նա բաժանում է երկու փուլի:

Առաջին փուլը Ն. Ադոնցը անվանում է «կոմարբունների» (դյուլապետներ) շրջան, օգտագործելով Քսենոփոնի այցելած հայկական դյուլի ավագի գեղջավագի համար «Անարատիսում» կիրառված հունական տերմինը: Գյուլդի նկարագրության մեջ Ն. Ադոնցը տեսնում է տոհմային հարաբերությունների հարազատ պատկերը. «Այդ բոլորը,- գրում է նա,- Հանդիսանում են ոչ այլ ինչ, քան տոհմային համակցության ձևի հատկանիշներ» (էջ 434): Այդ փուլը Ն. Ադոնցն անվանում է նաև «Տիգրանյան» շրջան՝ նկատի ունենալով մ.թ.ա. 6-րդ դարի հայոց Տիգրան Երվանդյան թագավորին ու նրա հետնորդներին:

Երկրորդ փուլը ստանում է «ստրատեգոսների» շրջան անվանումը ըստ Պլինիոս Ավագի՝ Հայաստանը 120 ստրատեգիաների բաժանված լինելու մասին հաղորդման: Ստրատեգիաների մեջ Ադոնցը տեսնում է ֆեոդալական իշխանությունների, ստրատեգոսների մեջ՝ ֆեոդալ իշխաններ. «Հիմք կա ստրատեգիաները համարել տիրակալական իշխանություններ (владельческие княжества) թեկուզև նրանց զարգացման սկզբնական շրջանում» (էջ 435): Այս փուլը Ն. Ադոնցը անվանում է նաև «Արշակունյաց» շրջան և իր խնդիրն է համարում «բացահայտել պատմական այն պրոցեսի էությունը, որը «կոմարբուններին» հանդեպից «ստրատեգոսներին» կամ այլ կերպ՝ տոհմային շրջանը՝ ֆեոդալականի» (նույն տեղում):

Ադոնցը իրավացիորեն գտնում է, որ միայն Հայաստանի ներքին պատմությանը անմիջականորեն վերաբերող առկա խիստ սակավ նյութերի հիման վրա հնարավոր չէ ներթափանցել հիշյալ պրոցեսի էության մեջ: Բայց դրա համար նա տեսնում է երկու այլ կարևոր հենարան: Դրանցից մեկը հարևան երկրներից ծագող համապատասխան, բայց ավելի հարուստ նյութերը և դրանց հիման վրա կառույց-

<sup>1</sup> Հրատարակված է ետմահու, 1945թ.: N. Adontz, Histoire d'Arménie. Les origines du X-e siècle au VI-e (Av. J. C.), Paris, 1945; Հայերեն թարգմանությունը՝ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն: Արևմտքները՝ 10-6-րդ դդ. մ.թ.ա., Երևան, 1972:

ված տեսություններն են: «Անհրաժեշտ է,- գրում է Ն. Ադոնցը,- որևէ մի դեկավար կոնցիպցիոն<...>: Որպեսզի այդ կոնցիպցիոն լինի գիտականորեն ընդունելի, այն պետք է դուրս բերվի այնպիսի պատմական միջավայրից, որում շփվել են հայերը» (էջ 432): Այդ միջավայրը նա գտնում է իրանական աշխարհում:

Երկրորդ հենարանը Ադոնցը գտնում է բուն հայկական, թեև հետագոսովոյ շրջանի համեմատությունում ուշ ժամանակից մեզ հասած նյութերի, այն է՝ մ.թ. 5-րդ և հաջորդ դարերի հայ մատենագրական աղբյուրների մատուցած տվյալների մեջ, որոնք պետք է որ պահպանած լինեն անցյալի վերհուշերը, մանավանդ տերմինաբանության բնագավառում:

Կիրառելով այս երկու լծակները ի լրումն «կոմարբունների» և «ստրատեգիաների» մասին հիմնական տեղեկությունների, Ն. Ադոնցը գալիս է այն եզրակացության, որ Արտաշեսի և Զարեհի (մ.թ.ա. 2-րդ դարի առաջին կես) «ժամանակին է վերաբերում տոհմային կարգերի փլուզման սկիզբը և սոցիալական նոր հարաբերությունների առաջացումը: Հեղաշրջման էությունը կայանում էր սոցիալական զանգվածի շերտավորման և դասայնության սկզբունքի առաջացման մեջ. տոհմերի գլուխները կամ պետերը հետզհետե դառնում են անվանի մարդիկ՝ իշխանավորներ, և այդպիսով դրվում է ապագա տոհմական իշխանությունների սկիզբը: Այս փոխակերպումն սկսվում է այն պահից սկսած, երբ տոհմի ավագի կոչումը դառնում է ժառանգական <...>: Այս ճանապարհով հասարակական այն օրգանիզմը, որ առաջ միատարր ու իրավահավասար էր, բաժանվում է երկու սոցիալապես անհավասար մասերի՝ թիվով փոքր մասը, որ ծագում է տոհմագիտից, իշխում է, իսկ մեծամասնությունը՝ հպատակվում» (էջ 451): «Տոհմային հարաբերությունների քայքայումը,- շարունակում է Ադոնցը,- որն ուղեկցվում է դասայնության առաջացմամբ ի դեմս իշխանավորների, ապագայի տիրակալ-իշխանների, ավարտվում է Տիգրան Մեծի փոթորակից դարաշրջանում» (էջ 455):

Հայ հասարակության զարգացման հարող նշանաձուրը, ըստ Ադոնցի, հայ Արշակունիների առաջին ներկայացուցիչ Տրդատ 1-ի օրոք Հայաստանում «120 ստրատեգիաների ձևավորումն է, որ կարելի է համարել Հայաստանի հասարակական-քաղաքական աճի պատմության նոր իրավիճակի սկիզբը» (էջ 474):

Իբրև ժամանակակից հատուկ մեկնաբանության կարիք չունեն: Ադոնցը առաջինն է հայ պատմագրության մեջ, որ այսպիսի խորություններ վեր է հանել հայ հասարակության շարժումը նախադասակարգային հասարակությունից դեպի դասակարգային, կամ իր ըմբռնմամբ և տերմինաբանությամբ՝ «դասային» հասարակություն:

Ադոնցի ներդրումը Հին Հայաստանի սոցիալական հարաբերությունների զարգացման ուսումնասիրության մեջ ճիշտ գնահատելու համար պետք է ընդունել, որ նրա ողջ մենագրությունում հենց այս դրվագն է, որից հետագայի հայ պատմագիտությունը ամենից ավելի է հեռացել: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ վերջինս, նախ, զարգացել է այլ՝ մեթոդաբանության հիմքի վրա, և երկրորդ՝ պինվել է հայ հնագիտության հայթայթած այնպիսի նյութական աղբյուրներով, որոնց մասին Ադոնցի ժամանակ նույնիսկ երապել չէր կարելի: Վեր է հանվել ու առանձնացվել Հին Հայաստանի պատմության մի ամբողջ դարաշրջան, որը մենք բնորոշում ենք որպես ստրկատիրական, համենայն դեպս այն ո՛չ նախնադարյան



է, ո՛չ էլ ֆեոդալական, այլ տեղավորվում է նրանց միջև, ընդգրկելով գրեթե հազարամյա մի ժամանակահատված: Վեր են հանվել այդ դարաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները<sup>2</sup>:

Իհարկե, այս պատկերացումները բավական հեռու են Ն. Աղոնցի տեսակետից, սակայն անկասկած հենց նրա բուն ուղղությունն էր, որ շարունակվելով Հ. Մանասյանի գործերում և բեղմնավորվելով նորօրյա պատմագրություն որդիդքած տեսություններ, հանգեցրեց այդ արդյունքին<sup>3</sup>:

Դատնարով մենագրություն հաջորդ գրվագներին՝ Հայկական ֆեոդալիզմի ծավալուն և խորունկ ուսումնասիրությունը, Աղոնցին գտնում ենք միանգամայն այլ պայմաններում՝ զինված գործի համար անհրաժեշտ առկա բոլոր նյութերով, և բնական է, որ այստեղ առավել վառ է հանդես գալիս նրա հետազոտական արտակարգ տաղանդի փայլը:

Իրացնելով վաղ միջնադարյան Հայ մատենագրություն, հատկապես պատմագրության հարուստ տվյալները և դիտարկելով դրանք իր ժամանակ էտալոնային համարված՝ արևմտաեվրոպական (Հիմնականում՝ ֆրանսիական) ֆեոդալական հասարակարգի հետ սխառնատիկ ախպարանական համագրություն մեջ<sup>4</sup>, Ն. Աղոնցը տվի է Հայկական վաղ ֆեոդալիզմին հատուկ նախարարական տիրույթի դասական սահմանումը:

«Իրենց գրությունները, գրում է նա, տերիտորիալ միավորները համարվում էին հալխասար և կազմում էին առևտուր, որի գլուխ կանգնած էր տերը կամ տանուտերը ու կոչվում էր տանուտերություն կամ նախարարություն: Յուրա-

<sup>2</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հատ. 1, Երևան, 1971, ուր հանրագումարի են բերված Հին Հայաստանի պատմության բնագավառում Հայ պատմագիտության ձեռք բերած նվաճումները:

<sup>3</sup> Ուշագրություն արժանի է այն հանգամանքը, որ սովետահայ պատմագիտության՝ Հին Հայաստանի ներքին պատմության վերհանման օժանդակ միջոցները ևս իրենց ակունքն ունեն Ն. Աղոնցի հետազոտական մեթոդիկայի մեջ: Լայնորեն և արդյունավետ կիրառվել է նախ, Հին Հայաստանին հարևան, ժամանակակից ու պատմական նույն օրինաչափություններով զարգացած երկրներից ծագող նյութը՝ Համանմանեցման (անալոգիայի) կարգով, ըստ որում, Աղոնցի ընտրած «Իրանական աշխարհին» դումարվել են Հին և Հելլենիստական Արևելքի ուրիշ Հասարակությունների տվյալները: Երկրորդ, ավելի մեծ մասշտաբով ու խորությամբ է օգտագործվել Հայ վաղ միջնադարյան մատենագրություն՝ Հին Հայաստանի վերաբերելի նյութը, հատկապես՝ տերմինաբանությունը: Ըստ որում, եթե Աղոնցի մոտ այդ նյութը, կրելով, բնականաբար, ֆեոդալական հասարակության կնիքը, ճնշող դեր է կատարել Հայաստանի նախաֆեոդալական հասարակարգը ևս որպես ֆեոդալական ընկալելու իմաստով, ապա այժմ, հնագիտական և այլ արդյունքի կուտակման պարագաներում, այն մեծ հաջողությամբ ծառայում է Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգերի բուն էություն հարազատ վերաբնութայնումը:

<sup>4</sup> Այդ համագրությունը, որն ընդօրինակել ու շարունակել է Հ. Մանասյանը, ոչինչ այլ բան չի նշանակում, քան Հեղինակների փաստարկներից մեկը, թե Հիրավի Հայաստանում ևս գործ ունենք ֆեոդալիզմի հետ: Արևմտաեվրոպական (ֆրանսիական) ֆեոդալիզմն այստեղ ծառայեցնում է սուկ որպես էտալոնային մոդել, այնպես, ինչպես մինչև վերջին ժամանակներս որպես այդպիսին էին ծառայեցնում Հունական և Հռոմեական հասարակությունները՝ սարկապիտական կարգերի համար: Պատմագիտությունն արդեն ադապտացվել է ֆեոդալիզմի առկայության և սպասարգվում է ստրկատիրական հասարակարգի առկայության այդօրինակ ապացույցների անհրաժեշտությունից:

բանչյուր տանուտերություն ներկայացնում էր մի ներիակ միջավայր, օժտված պետական իրավասություններով: Նրանք ունեին դատավարչական անկախություն և գերագույն իշխանություն այլ աստիճաններ: Տանուտերությունները յուրտեսական մասն պետություններ էին, որոնց գլուխ կանգնած իշխանները՝ արքայիկներ, փոքրիկ թագավորներ: Յուրաքանչյուրի իրավասություն սահմանները de facto կախված էին Հզորության այն աստիճանից, որ նրանք ունեին տվյալ պահին: Պատմիչները հաճախ Հիշատակում են մեծ տերերին՝ մեծամեծ ավազանուն, և սարբերում ավազ տանուտերերին կամ նախարարներին կրտսերներից, ելնելով, ըստ երևույթին, նրանց համեմատական Հզորությունից: Տանուտերության ընդհանուր դրությունը պայմանավորված էր իշխանների և թագավորների ուժերի առկա հարաբերությունը և զբաղեցրվում էր մերթ կենտրոնաձիգ, մերթ կենտրոնախույս ձգտումների գերակշռությամբ:

Հնարավոր դեպքերում թագավորները չէին վարանում բունագրավելու զահի նկատմամբ մեղանչած իշխանների կարվածքները» (էջ 505)<sup>5</sup>:

Բնականաբար, սույն լիարժեք իրավաքաղաքական բնույթի սահմանմանը պակասում է սոցիալ-տնտեսական տարրը՝ ֆեոդալիզմը ոչ մարքսիստ պատմաբանին ներկայանում էր սոսկ իր քաղաքական (իշխանության մասնատվածություն, էջ 507) և իրավական (սոցիալական նվիրապետություն, վասալականություն) կողմերով: Այդպես էլ արտագրական հարաբերությունները Աղոնցի մոտ փոխարինված են Հողային սեփականության հարցերով: Զննելով նախարարական Հայաստանին հատուկ սոցիալական նվիրապետության աստիճանները՝ վերից վար, սկսելով արքայից և մանրամասն ծանրանալով նախարարական և սեպհական աստիճանների վրա, պատմաբանը, ի վերջո, հասնում է գլուխկան ընկալվածքային և նշում, որ «գրավոր հուշարձանները որոշակիորեն տարբերում են գլուխգրությունը ազատներից, սակայն նրանց փոխհարաբերությունների և տերերից ունեցած հողային բնույթի կախվածության մասին համարյա թե ոչինչ չեն ասում» (էջ 534): Գլուխգրության վիճակին վերաբերող հաջորդ էջերում Աղոնցը իր ուշագրությունը Հիմնականում սեռում է հարկերի, տուրքերի ու պարհակների խնդրի վրա: Սակայն Հեղինակը գլուխգրության վիճակի կարևորագույն հարցը բնավ չի լքել ուսումնասիրության այս մակարդակի վրա, այլ հանգամանորեն ու խորն անդրադարձել է դրան հետադարձ, հատուկ աշխատություն մեջ, որն անվանել է «Հին Հայ իրականությունը»<sup>6</sup>: Ֆրոնտիսական ֆեոդալական Հասարակությունների հետ Հայ վաղ միջնադարյան իրականության համագրումը Աղոնցն այստեղ լրացնում է Հռոմեական իշխանության տակ գտնված 4-րդ դարի Փոքր Ասիային հատուկ հողային հարաբերություններին դիմելով: Դրանց լույսի ներքո Հեղինակը հստակորեն տարբերակում է նաև Հայաստանում թագավորական

<sup>5</sup> Ն. Աղոնցի գործը այս բնագավառում շարունակել ու զարգացրել է Հ. Մանասյանը իր «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (Երևան, 1934) արժեքավոր մենագրության մեջ, որտեղ նա մանրամասն հետազոտության է ենթարկել նախարարությունների հարաբերությունը թագավորական իշխանության հետ, նախարարությունների ներքին կազմակերպությունը, ազատների, Հոգևորականության, շինականների ու ռասիկների, ինչպես նաև քաղաքային բնակչության՝ արհեստավորների ու սարուկների վիճակը:

<sup>6</sup> Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 157-205:



կամ պետական հողերը՝ «կալվածատիրական» (մասնավոր սեփականատիրական-Գ.Ս.) հողերից և Համապատասխանաբար գանազանում նաև այդ հողերի վրա աշխատող հողագործների երկու խմբերի վիճակը, երկրորդ խմբի հողագործներին Համեմատելով փոքրասիական կոլոնների հետ: Նա ավելի հեռու է գնում, առանձնացնելով «կալվածատիրական» հողերի երկու կարգ՝ Հարկված և Հարկերից ազատ, որոնք իրենց հերթին ենթադրում են կոլոնատիպ հողագործների երկու տարբերակ:

Արդարև, պատմաբանն այստեղ խոշոր քայլ է անում դեպի արտադրական Հարաբերությունների սկզբունքի ըմբռնումը:

Ն. Ադոնցի հետազոտական մտքի թռիչքը իր բարձրակետին է հասնում «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության երկրորդ, միջին գրվազում: Սրա խորագիրն է «Արևելյան Հայաստանը», որի տակ հասկացվում է 387թ. բաժանումից հետո Հայաստանի՝ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ անցած մասը: Իրականում, սակայն, այստեղ Ադոնցի տեսադաշտում է նաև ամբողջ Բ-րդ դարը, այսինքն՝ ողջ Հայաստանը ու նրա սոցիալ-քաղաքական վիճակը:

Իր ընդգրկումով, նյութերի սպասիչ օգտագործմամբ և պատմաբանա-սիրական վերլուծության նրբության տեսակետից Հայագիտության մեջ չգերազանցված նմուշ է տալիս Ն. Ադոնցը «Նախարարությունների քանակական վերլուծությունը» գլխում: Նրա խնդիրն էր պարզել վաղ միջնադարում գոյություն ունեցած և պարծած նախարարական տների քանակական և անվանական կազմը, նրանցից յուրաքանչյուրի խազացած դերի ու նշանակության Համեմատական չափն ու աստիճանը, նրանց պիտրակայան հորոլությունը և դրանով պայմանավորված՝ Հայաստանի ռազմական կարողության սահմանները, և այդ բոլորը, ըստ Հնարավորության, երկու կարվածքով՝ և՛ Արշակունիների օրոք, և՛ մարզպանության ժամանակ:

Այդ նպատակով առկա աղբյուրները Ադոնցը բաժանել է երեք խմբի. ա) վաղ միջնադարյան պատմիչներ (բացառյալ Խորենացին) և եկեղեցական ժողովների տվյալներ, բ) Գահնամակ և Զորանամակ, գ) Մովսես Խորենացու տվյալները, և իր վերլուծությունը տարել է դրանց քննական Համեմատությունները: Առաջին խմբի աղբյուրները ավել են նրան նախարարությունների թվական կազմի ու կարգի կենդանի պատկերը, այդպիսինի բոլոր առավելություններով ու թերություններով Հանդերձ, որ գոյություն է ունեցել 4-7-րդ դդ., իսկ երկրորդ խմբի աղբյուրները՝ դրա իրավական արտացոլումը: Սակայն Գահնամակն ու Զորանամակը մեզ են հասել ամենևին էլ ոչ որպես վավերագրեր, այլ որպես բազմիցս արտագրված ու խմբադրված գրական հուշարձաններ: Եվ Ադոնցը ենթադրում է դրանք նախապես ամենամանրակրկիտ Հմտագույն աղբյուրագիտական բնույթի, որի բովանդակում ճշգրտված ու զտված տեքստերն են միայն, որ նա գործի է դնում իր Համեմատությունները կատարելու համար:

Վերջապես այդ աշխատանքի արդյունքը Ն. Ադոնցը համագրում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդես եկող՝ նախարարությունների համակարգի հետ, որը ստեղծվել է Պատմահորը մատչելի բոլոր Հնարավոր աղբյուրների տվյալների միահյուսման միջոցով: Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը նշում է. «Ներկայումս «Հայոց պատմությունը» Հանդիսանում է Հայ Հին դարու-

թյան հուշարձանների տարիքը և ընդհանրապես նշանակությունը որոշելու փորձաքար» (էջ 292):

Ն. Ադոնցի վեր հանած՝ 4-7-րդ դդ., այսինքն՝ նախարարության ծագման շրջանի այս Համայնապատկերը մինչև օրս ուժի մեջ է և Հաղիվ թի էական սրբագրումների ենթարկվել<sup>74</sup>:

Ն. Ադոնցն այնուհետև ձեռնամուխ է լինում այդ Համայնապատկերին նաև տարածական տեսք տալու, քարտեզի վրա այն տեղադրելու խնդրին («Նախարարությունների տերիտորիալ վերլուծությունը» գլուխը): Այստեղ առավել դժվարին, բայց և, ըստ երևույթին, Ադոնցի Համար առավել զբաղվիչ է եղել նախարարական տների դարգացման և նրանց տիրույթների շարժման պրոցեսի հետազոտությունը: Նախարարական տիրույթները քարացած միավորներ չեն եղել. դարերի ու տասնամյակների ընթացքում դրանք ուժացել կամ տրոհվել, միավորվել ու տեղաշարժվել են, մի մասին տիրող տոհմերը իսպառ վերացել են պատմության ասպարեզից, դրանց տեղը զբաղվել են նորածին նախարարական տներ: Ահա այս խոյ-սաքղես ու պատմական առումով նշանակալից պատկերն է, որն իր ներքին օրինաչափություններով ու պատճառներով Հանդերձ, վեր է հանել Ն. Ադոնցը իրեն հատուկ Հմտությամբ, ցուցաբերելով նույնպիսի վարպետություն պատմական աշխարհագրության բնագավառում, որպիսին նրան հատուկ է պատմություն և բանասիրության մարզերում, և իր ստացած արդյունքը դարձնելով Հայկական ֆեոդալիզմի ուսումնասիրման անկյունաքարերից մեկը:

